զէնչ ինչ սլլ լիցի ծաղրագոյն. (փիկ՝ Կան շքի:)

Բ. Վրանի մը միազանկ կամ երկազանկ ածականներ, ինչպէս են սուրբ, մծ, փոքր, հին, քարէ, շար, եւայլն, որոնք նախադաս եղած ատեն գրեթէ միշտ կը համաձայնին. — միայն յոգնակի ուղղականին ու նախգրիւ հոլովներուն մէջ չեն համաձայնիր:

Նախանձ կալցուք քարեայ փորձոց եւ առաքինասեր վարուց: Բարէ փորձեք փորձելու եւ առաքինի վարձ առնելու ջանք ընել: Խայր ամէլ իլէ Փաղիլէթիլ հարեքէթէ գայրէթ իմիզ օլուն:

Սեղեւկիոս հնազանդեցոյց զՊարթեւս մեծապատե-
րօզմա: — Մեծապատեւ հազիւ հաւանեցուցին
զԹագաւորն: — Կարճամիտք է փոքունց իւր-
տակին: — Աստուած ընդ փոքուն համբերութեան
զօրեւեացն պարգեւէ զպսակս:

Այսպէս ալ՝ Սրբոյ Հոգւոյն. Կաթն արեւ. է փոքուն
Կաթն, եւայլն: Նոյնպէս անեղական բառերէ յառաջ
ածականը եզակի մնալով կը համաձայնի. եւ կ'ըսուի՝
Բացաւ երեսօտ տեսանել: Ընդ այնք իրեւոց: Նովն կա-
պան: — Մեծապատեւ տարան զՆերսէս ի բանակն
արքունի: (Տես նաեւ վարը՝ Գ. Զ. Յօդ. Ա.)

Գ. Հետադաս ածականը, ինչպէս (երես 30)
տեսանք, իւր գոյականին հետ կը համաձայնի ու մէկ-
տեղ կը հոլովի: Բայց կը գտնուի նաեւ չհամաձայնած:
Բազումք ի սրբոց խոսքէ լայրենի շատանային. (փխկ՝
լայրենեօտ) Բրիտոս խոսմիք երեսօրեայ զբանու-
թիւն մահու ելոյծ: — Առաջի կացին փոքն յո-
րայեան: — Մերկացաւ զփառս հոյրենի:

Արտունի (Թագաւորական) ածականը գրեթէ
միշտ անհամաձայն կը մնայ, եւ կ'ըսուի՝ Տանն արտունի,
զօրէնս արտունի, հրամանաւ արտունի:

Դ. Երբեմն միեւնոյն գոյականի երկու երեք
նախադաս ածական որ ըլլայ՝ առաջին կամ վերջին.

* Եւս մասնակաւ ածանցեալ ածականներն անհոլով են.
միայն քանի մը հատը կը հոլովի, ինչպէս Մաթիոնեան,
նիւոյ: Դարձեալ կը հոլովին տարիք ցուցնողները՝ եր-
կեան, մեծ, մեծից, երկու տարւան. երեքան, երեք
տարւան. եւնաբան, քունաբան, հարեւոյս:

ածականը գոյականին հետ կը համաձայնի, մնացածն անփոփոխ կը թողուի:

Ի պիտոյ եւ ի սնտի խօսից մերժեալիք, զի անտի ծնանին կռիւք: — Քովի եւ փառաւոր թագաւորի: — Մեծօրէնք եւ պատուական աւետիք: — Աքան- շէլագործ, սուրբ, մեծ յարութեանն վայելէն փառք:

Ե. Երբ որ ածականները շատ են՝ նախդիրն ա- մէնուն վրայ ալ կը կրկնուի:

Ի յիմար եւ յանխրատ խնդրոց ծնանին կռիւք: — Ի բարի եւ յաղնուական ազգէ ես դու: — Եցոյց Աստուած զարեգականն զօրութիւն՝ զկենդանարարն եւ զուսաւորիչ: — Ջնախանձայոյզ զվրէժխնդիր զօրինացն:

Զ. Երբեմն պարզապէս վայելութեան համար նախդիրն ամէն մասերուն (ածականներուն եւ գոյա- կանին) վրայ կը կրկնուի:

Ճաշակել ի սնկոյ իմէքէ ի մահաբերէ: Մեռցընող րնի՛ ճը ուրի: Մուզի՛ պիր Ֆիտանտան եէմէք: — Եւ ես ի նոյն ի նմանավիշտ յերկիր անկայ: — Եր- կղբին թագաւորքն ի պարսիկ ի հողոյն ի վերայ ճե- մէին:

Է. Երբ ածականին ու գոյականին մէջ ուրիշ մասն բանի մանէ*, նախդիրը կրնայ երկուքին վրայ ալ գրուիլ:

Աբէլ ի հարազաթէն սպանանի յեղթօրէն: Աբէլ ի-բ հարազաթ եղթօրէն իը սպաննո-ի: Աբէլ քէնտի էօզ զարտաշընտան էօլտիւ:

Ոչինչ արժանի մահու կամ կապանաց ունէր մնաս Պաւ- ղոս: — Ո՛ւր մեր վարժարանք ի Ռոֆա-սրական պա- տրաստեալ հրամանաց:

Ը. Երբեմն ունիւն վերջաւորած կամ անոնց զօ- րութիւնն ունեցող գոյականներուն սեռականն ածա- կանի տեղ կը գործածուի:

Դատեալ զըբ մահու իայտարա-ի-ն-ն: Խայտարա-ի

* Ընտիր նախիք ածականն ու գոյականը իրստ քիչ տեղ իրարմէ կը բաժնեն:

Տահով Տեղը Տեղընել: Բեզալեթի էօրեմ էլէ պիր
քիմնէյի գաթլ էթմէք:

Խօսեւ բանս դարձուիտան. (դառն խօսքեր): — Այդ
իսկ ծաղու է. (ծաղրական է): — Գործ ինչ յարու-
նեան, կամ Գործ շարունակեան գործել: — Գործք
Քարունեան, կամ Քարեայ. (բարի գործք):

Թ. Սան գոյական անուններ՝ որ անականի տեղ
ալ կը բանին. ինչպէս նաեւ կան անուններ՝ որ թէ՛
գոյական են եւ թէ՛ անական:*

Ձիւնչ քան զայն ծաղր կայցէ: Անի՛ ծաղրական է՞նչ
կայ: — Հայաստան զնդին լինէր յաղթութիւն: Ա-
պրեստոսք է հօր Քոյ գեհնեոյ անտի: Մովսէս Չուր
բխեցոյց յապառա՛ծ վիմէ: Ի չափ եւ ի պայճան ի տունս
բնակել. (փիլի՛ չափաւոր): Մատուցանել պատկասիքս:

Այսպէս կ'ըսուի նաեւ՝ ի գոյայ տիոց. Գազան ցան-
կութիւն. (փոխանակ՝ գոյայական, Գազանական.) աման
ծափ. բան սուր. ի վեր ժամանակս. կը՛ր հաւասար.
չայ՛ հասարակ. հայաստան ժողովորդք, Հայաստան աշ-
խարհ. (փիլի՛ Հայաստանեայ կամ եայց.) Հրեաստան
երկիր. Փիւնիկաստան գաւառաց. — երեք եղբիւնները
կրնան բացայայտիչ ալ համարուիլ:

Ժ. Սան անոր հակառակ՝ անականներ ալ՝ որոնք
յօդ առնելով որոշ գոյականի մը նշանակութիւն կը
օտանան. ինչպէս. Աստուածականն, Բա՛սականն, Յա՛նգի-
նականն՝ կը նշանակեն Աստուած. դժոխականն, գժոխք.
Սասանականն, (հին աստեղի) Պարսից թագաւորը:

ՅՕԴՈՒԱԾ Գ.

ԱԾԱԿԱՆՆԵՐՈՒ ԽՆԴՐԱՌՈՒԹԻՒՆԸ

Անականներն իրենց նշանակութեան համեմատ
այլեւայլ հոլով խնդիր կ'առնուն. այսինքն՝ սեռական,
տրական, բացառական եւ գործիական:

* Անականի տեղ գործածուած գոյականներէն ոմանք
բազմատական ձեւ ալ կ'առնուն. եւ կ'ըսուի՝ Եւս Գա-
զանագոյն գեւ: Բան զամենայն գազան Գազանագոյն. ինչ-
պէս նաեւ՝ Արի-ձագոյն քան զգազանս:

1. Մնուսիան խնդիր ստափանի:

Ա. Սեռական խնդիր առնողներն աւելի Բայա-
ծականներն են, այսինքն որոնք որ ոչ, իչ, եւ ընդու-
նեւ լուծեան ոյժ ունին. ինչպէս, Պարզեւատու Քարեաց.
գուշակ զճարտարութեան. վերաւորք սրոյ, եւ այլն: Ասոնց
վրայ տես վարը՝ Բայանուանց մէջ:

Բ. Վարձեալ վերջահոլով տրականի տեղ սե-
ռական կամ ստացական ալ կրնայ դրուիլ՝ իբրեւ յատ-
կացուցիչ գոյական. ինչպէս.

Ամենայն երէ զնմանին* ի-բ սիրէ: Ամէն անասուն իրեն
նմանը իբ սիրէ: Հէր հայվան քէնտի մէնէնտինի սէվէր:
Երանի որ ոչ ծառայեաց անարժանի ի-բում. (փխկ՝
ինտեան.***) աճկ. փնտիքն լայքէ օլճայանա: — Ինքնին
չրջի խնդրել զարժանաւորս ի-բ: — Չուկն զի-բ
համազգիսն անխտիր ուտէ:

Այսպէս ալ՝ Օգնական է նա կամ նորա. պաշա-
պան էր ինչ կամ իժ. գերեկից իժ. հասակակիցք ժը-
խաչակից եղել նորա. արժանաւորաց ի-բոց. նմանեաց
ի-բոց: Դու մարդ հաւատար իժ եւ ծանօթ իժ:

Սեռականի սեռական խնդրոյն վրայ աւ գիտնա-
լու է: Երբ որ երկուքը բայով մ'իրարու կապուած
չեն՝ հասարակօրէն սեռական կամ ստացական կը դրուի
փոխանակ տրականի. եւ այն ատեն սեռականը սեռա-
կանին յատկացեալն է. այսպէս. Յանցաւոր օրինացն:
Պարտապան մի քի-բ Կանտարոյ: Տեսանեմ հեծեալ մի
ուղբոս, եւ հեծեալ մի իշոյ: — Տաց զքեզ ի ձեռս
մնասակարացն Կոց. (քեզի չարիք ընողներուն):

Սեռական եւ տրական խնդրոց տարբերութիւնը
տես (Թիւ 2.) տրականի օրինակներուն մէջ:

* Նման եւ նմանի զոյգ բառերէն՝ առաջինը սովորաբար
իժ, ինիժ, ամենի բայերով կը գործածուի անհոլով, եւ
կամ տրականով մը. Չիչ նման, եւ այլն. իսկ հոլովուածն
ու իբրեւ յատկացեալ գործածուածն է՝ Նմանի, նման-
այ, (նմանայ) նմանեաց, նմանիս: Աւն նմանայ Կեղ:

** Ինտեան, փնտեանց շատ գործածական չէ ընտիր գրաբարի
մէջ, եւ անոր տեղ ուրիշ գործածուած կը տրուի խօսքին:
Ցես նաեւ էր. 197:

2. Տրական խնդիր ստականի :

Ա. Տրական խնդիր առնող ածականներէն ոմանք վերջահոլով, ոմանք ի նախդրիւ եւ ոմանք առ նախդրիւ տրական կ'ուզեն : Կան ալ որ երկու երեք տեսակ խնդիր կ'առնուն :

Բ. Միեւնոյն ածականին խնդիրը շատ անգամ կը զանազանի՝ մարդու կամ իրի ու գործքի անուն եւ կամ աներեւոյթ՝ ըլլալուն համեմատ. ինչպէս յաջորդ օրինակներէն կը տեսնուի :

Նման են մանկաբայ. (տղոյ իը նմանն. չօճուղա պէնզէրէր) : Ոչինչ նման է նմա կամ հանգոյն, ոչ համեմատ եւ ոչ հաւասար : Հանգոյն երեմիայի քորքոսոյն : Մահկանացու հանգոյն օմնեցոն : Հանգոյն փել լինիցին : Հանգոյն մօրոյ, ըմպելոյ, մահո : — Ծնաւ իւր ** հանգունակ : — Արդիւնքն՝ քանիցն գտան հանգունաւորք : — Ոչ գտանի գեղեցիկ համեմատ սմա : — Չիք դք զոյդ ոյն՝ : — Լինել հաւասար հրեշտակոյ : Հասարակորդս մեղ արարեր զդոսա : Եղիտ զնոսա իւր ** արժանիս : Արժանի ողջունն : Արժանի զարմանալոյ : Եւ ոչ լիողելոյ արժանի : — Արժանի ըսո Աստուծոյ : Արժանի ըսո որքեքրոն լինան կեալ : Արժանաւոր ըսո քանիցն ասացելոյ : — Չեմ արգեւք արժանի հաճոյնել զորգեակս իմ : Չեմ արժանի փու * առ քեզ : — Եւ ոչ զանձն արժանի համարեցայ առ քեզ փալոյ :

[զւարն : Կարող էր մերժել զւարն : — Ոչ էր կարող մերժելոյ Գողանային բաւական իւրեանց ** . (իւրեց օգտելու փ) : Բաւական *** օմնայնի. կամ Առ օմնայն ինչ բաւական : Առ ոյս ո՞ բաւական իցէ : — Ոչ եմք բաւական իորհել ինչ :

Բազում ի՞նչ խեղամուտ եղիցին : Գիտակ իսկ ես ա-

* Հոլովուած աներեւոյթն՝ իբրեւ գոյական խնդիր է. իսկ անհոլովը՝ երբեմն իբրեւ բայ գրուած կ'ըլլայ՝ եւ երբեմն իբրեւ գոյական :

** Իւր, իւրեանց արական հոլով. տես երես 44 :

*** Առ նշանակէ հերիք, եւ միանգամայն խորշ :

Տիեռայն ինքրոց: Ճանապարհին տեղեակ եմ: Հմուտ որսոյ, պարտերաշէի:

Այսպէս նաեւ վերջահոլով տրականով՝ հաճոյ, ախորժական, ահասոր, իջորդ, հազորդ, եւ ուրիշ շատ ածականներ, որ աշխարհաբար ու աճկ. լեզուաց մէջ ալ նոյնպէս տրական խնդիր կ'առնուն:

Պիտանի տեառն իւրում: Ոչ ի՞նչ պիտանացու: Երբեմն անպիտան էր +եզ, բայց արդ +եզ եւ ինչ պիտանի: — Պիտանի ի գործ: Բարկութիւն՝ ի սպանախն պիտանացու է: Աստահ ի դաշինան: Աստահ եմ յայդ: Աստահ ես յանին +ս: — Յայն ապատտան՝ եկի առ ձեզ: Ի մարդ, յինտեան ապատտան: Ամենայն ինչ ցօն ապատտան է. (մեր ձեռքն է:) Կազմ (պատրաստ) ի գործ: Ես ի քանջանն պատրաստ եմ: Պատրաստ եմ ի տեառնել: — Պատրաստ եմ եւ ի մահ երկաւ: — Ես ոչ միայն կողելոյ՝ այլ եւ տեառնելոյ պատրաստ եմ: Էին կութք պատրաստ հնչելոյ: Պատրաստ է սիրտ իմ առ +եզ: Առ տիեռայն ինչ պատրաստ:

Նախանձընդէմ էին նմա: — Աին նախանձընդէմ առ տեառն ինչ:

Պարտ չարեաց. պարտ մեղաց. (պարտաւոր, յանցաւոր:) Պարտ արեան էր Մանէ. կամ Պարտական արեան: Մահոս պարտական լիցի: Պարտապան եղեցի մեղաց: Պարտաւոր լիցի գեհննի՝ կամ ի գեհնն հրոյն: — Չայն որ պարտն իցէ քանջելոյ՝ տանջեցեր:

Հրէից ինչ չեմ փնասակար. (յանցաւոր չեմ.) — եւ ոչ ի յայտ փնասակար եմ: — Առ +եզ կարի յանցաւոր եմ: Նա առ Աստուած մեղաւոր է:

Անխիղճ միտս ունել առ Աստուած եւ առ մարդիկ. (անարար ինչն ունեմաւ:)

Միամիտ կալ առ տեառն. (հաստատելի՛մ ըլլաւ:)

Ընդհանրապէս՝ մեկու մը հետ վարձանէ, գիծմանէ, կերպ ցուցնող ածականներն առ նախդիր կ'առնուն. ինչպէս են՝ Գլխած, +ողջը, ինսոք, աղախոսաոր, անշնորհ, Գմարդի, եւ այլն. եւ կ'ըսուի՝ Բաղըր առ տեառն:

նե-եան.* Եւ Քարեբարն տմարդի. երախտաւորք առ ազնն. կամ նաեւ՝ Ապախտաւորք ընդ երօթիպատարան:

Երբեմն ալ վերջահոլով արական. Որ չար է ի-րո՛ւմ անյինն՝ ո՛ւմ լիցի բարի:

Գ. Եթէ խնդիրն աներեւոյթ է կամ բայանուն՝ երբեմն առ, առ ի նախդրիւ, եւ երբեմն պարզ ի նախդրիւ արական կ'առնու:

Գժուարին առ ի մանալ են բանքն: Երկաթ՝ ցուրտ առ ի շրջափել: Բաժակ խրատուցն առ ճաշափել դառն է, եւ առ թօղիլ օգտակար է: — Բարի էր ծառն ի կերակուր, եւ գեղեցիկ ի տեսանել: Տես երես 133, Արագ առ ի լսել, ծանր առ ի քարկանալ:

Դ. Այս ածականներուն հակառակներն ալ ընդհանրապէս նոյն խնդրառութիւնն ունին, մանաւանդ առ մասնկաւ ածանցեալները, ինչպէս, անման, անարժան, անհոգ, անկազմ, եւ այլն. Անպարտական մահոռ: Անման են այլոց: Չախորժական մոտոց մարդկան: — Նաւահանդիստ դժպատեհ առ (ի) յիջել:

Բայց կան՝ որ իրենց նշանակութեանը զօրութեամբ բացառական խնդիր կ'առնուն. ինչպէս. Անպարտ եմ յարեմ. Թակոյկ անպակաս ի գինոյ: Անընտանի են չարիք ի բնութեմէ Արարչին:

3. Բացառական խնդիր ածականի:

Ա. Ընդհանրապէս հեռու, զար, փարթեբ, եւ դարձեալ՝ զանեցող, զերթ, ազար, եւ ասոնց նման նշանակութեամբ ածականները բացառական հոլով խնդիր կ'առնուն:

Ոչ ինչ ընդհատ են ի մանկոյ. (տղոցմե փարթեբ քն): Աարուքն զատ են ի միտանց: Ջատ եւ յատուկ** է նա ի յեմ: Գազանք այլակերպք ի միտանց: Չիք տեղի թափուր յԱօրո՞ւծոյ: Քաղաք աւերակ ի

* Երբոյցից սնով՝ քաղցր է վերոյ ամենեցուն: Ի վերոյ տառապելոյ երկայնամիտ լեր:

** Յարուկ հին գրաբար լեզուաւ կը նշանակէ զարուծ, փնով:

Տարգլանէ: Անզաւակ յազդէ տոմօք եղեր: Անզաւակ
յարո՝ ճանկանէ: Սուրբ եմ՝ յարեմէ ամենեցուն:
Տարագիր է դրախտին, յարտայոթնէն, է հայրենեաց:
Մի դք անմասն լիցի յորտիտութիւնէս մերմէ:

Ան մասնկաւ ածանցեալներուն վրայ տես նաեւ
վարը Բայանուանց մէջ:

Բ. Բացառական կը գրուի դարձեալ՝ այս քանի
մէջ կամ՝ այն կողմէն կամ՝ այս նկատմամբ ցուցնելու
համար, եւ մանաւանդ ազդէ եւ որդիտութիւն: Այս խըն-
դրաւութիւնը դրաբարի յատուկ է, որ աշխարհարար
հասարակօրէն գործիականով կը թարգմանուի:

Ի տիտց մանուկ* (դարձուց): Ի տիտց հասակակիցք:
Ի հոսց թեթեւ: Որ թոյլն է ի հոսց: Տկար յորից:
Կաղ յերկոց որից: Յերկոցունց յերոց յաջողակ:
Յուլոց վնասեալ. (տճկ. կեօղտ՝ սոգոթ): Հոռվմայե-
ցիք յազդէ: Գովսիթէոս յազդէ հրեայ: Մարգոց
վատանշանաց յազդէ:

Ասէ աղուէան. ձայն դոյ ի քեզ կարի քաջ, ով ազ-
ուաւ, բայց ի հոսց պակաս ես:

Բայց ասոր տեղ աւելի սովորական է գործիական
խնդիր, որ հիմայ կը տեսնենք, (Թիւ 4.) կամ նաեւ
բարդեալ ածական մը. ինչպէս, պակասութիւն, լուրջութիւն,
վարագիտի, եւ այլն:

4. Գործիական խնդիր անսխալ:

Ա. Գործիական հոլով խնդիր կ'առնուն լեցուն,
կուրք եւ նման նշանակութեամբ ածականները:

Տուի լի խնդի**: Տուն լի ամենայն բարութեամբ:
Հոծ բաղձամբոյ լիութեամբ: Լի եմ ուրախութեամբ,
առաւելեալ եմ միջխարութեամբ:

Բայց նաեւ ասոր հակառակ՝ զուրկ, զունեցող
նշանակութեամբ ածականները գործիական խնդիր ալ

* Այս կորդէ խնդիր չեն՝ զոր ի ձեռք. կաղ յարույնի մօր՝
իւրոյ. Թրկ ի մօրէ, եւ այլն:

** Եթէ ըսուէր խնդի լի տէ՛ղ՝ ըսել կ'ըլլար տո՛ւտ ղ ղ լի-
ցուն իտանի. — տես երես 247 ի տէ՛ղ. լի ըսուիտ:

կ'առնուն, ինչպէս են իւրօր, ծարաւի, եւայլն. տես զարը Թիւ 5:

Բ. Յարկոսթիւն, որդիսոսթիւն, ոչք կամ ցեղ ցուցընելու համար, որ բացառական խնդրոյն մէջ տեսանք, (Թիւ 3.) աւելի յաճախ գործիական կը գրուի: Հաջմ որիւն: Մանուէլ որիւն ցաւած էր: Չօրաւոր էր էրոյն: Մի լինիք աղայք Տօտ, կամ որչայոսիք: Բարոյն-տ նախանձաւ. յանդուզն լիչոսաւ. Ժպիրհ, լիրք երեւօտ, կամ Տօտ: Սկիւթիանոս ոմն տաճիկ փոհմաւ:

Էր Յուսիկ տոսրքտ մանուկ, փթօտ առոյդ, եւ բարձր հասակաւ, եւ ինչո՞վ երեսոց պանչելի:

Մինչեւ այստեղ ըսուածները յաջորդ օրինակներուն մէջ մէկանց կը տեսնուին: Էր Վարազդաս՝ մանուկ յաոսրց*, կորովի յեւօտ, քաջ սրփեւ, եւ ի Տօտոց թեթեւ, Տանկաբարոյ, որչայահանձար: — Վարազկէս ոմն՝ մար յազիէ, առաքինի արսթիւսթիւ եւ լաւ սրփեւ Ժոսթիւսթի՝ զօրաւար էր Մարաց:

5. Այլուայլ խնդրով ստուկաններ:

Ա. Արկու երեք կերպ խնդրառութիւն ունին հետեւեալ ամականները, ինչպէս օրինակները կը ցուցընեն:

Օճն իմաստութիւն ունի, բայց խօսելն եւեթ պակաս է նմա: — Մի ինչ պակաս է ի Գին: Ամն երկուս պակաս ի Գարսանի. (Գարսանի երկուս պակաս):

Կարօտ է օգնականութեան, հանձարոյ, եւայլն: — Բազում ուղեւորք եւ յայրմանէ իսկ կարօտ են: Յերեւոսոց Գոց ոչ կարօտ եղէ. (չըրկոսեցոյ): Ոչ նիազ ի ինքնութեան եւ ոչ կարօտ յիմաստութիւն, ** — Մեք նոտօ կարօտ եմք եւ ոչ նորա մեթ: Հոցիւ կարօտ:

* Չ'ըսուի նաեւ առանց նախորդի՝ Յայ-աոսրց, երեւոսոսրց, հին-աոսրց, եւայլն. բայց տանք իրեւ մէկ (արթ) բառ կը գործածուին. Հին-աոսրցն նաեւ. յերասոսրցն գարձաւ յամուսնութիւն:

** Նիազ եւ իւրօր նոյնանշան են, եւ բացառական իրենգրով՝ զարի կը նշանակեն:

- Կարօս օրնականութեամբ: — Քիչ տեղ է նախգրիւ. 2էր կարօս է պարարտիս նոցա: Ծարաւի արեան: — Միմեանց մահու եւ արեամբ ծարաւի են: Ծարաւի եմ տեւ, կամ առ տեղ: Վատահ ես յանջն Կո: — Վատահ են կապանստ ի մոզդ:

Այլեւայլ խնդրոց օրինակ կրնայ ըլլալ յաջորդ խօսքը. Ծոյլ է, եւ կարօս է ընդունելութեան, եւ ապաժաման է զքրութեան, եւ ազգաբնութեամբ առաւելեալ:

Բ. Ածականներու խնդրառութիւնն ընդհանրապէս իրենց բային խնդրառութեան հետ սերտ կապակցութիւն ունի. այսինքն ածականն եւ իւր բայը հասարակօրէն միեւնոյն հոլովը կ'ուզեն:

Բայ:

Ածական:

Երկնչի է փառանկ: Ծառայ աներկիւղ է փառանկ

[որ եմք: իւրմէ: Աներկիւղ յամենայն շարք:

Յայն իմն միտել սով-Մէտեւ յօժար է քարերարութեան: Նմանեացի նմա: Նման նմա լինելոց եմք:

Անզաւակիցիմ է յեւջ: Անզաւակ յարս մանկանէ:

Կարօտացալքեմ է: Կարօտ ողորմութեան: Կարօտ եմ րօտիմ գերեզմանէ: Կարօտ յերոմ գրչութեան: Կարօտ յերօտելոյն է գրչոյ: Կարօտ հացի եւ րօտիմ յերովտ ազնիւտ: Զբով:

Աւասիկ երկու օրինակ ալ՝ ուր միեւնոյն խօսքին մէջ թէ բայը եւ թէ ածականը կրկին խնդրառութիւն ունին. Որպէս անջն Կո՝ այնպէս կարօտացիս նովա: — Ոչ այն որ քաղմտ կարօտ իցէ՝ այլ որ չիցէն իմտ կարօտ:

6. Ածականներու Բաղդաստոնութեան չափը:

Ա. Բաղդաստական ածականներուն խնդիրն երկու կերպով դիտելու է. — մէյ մ'իբրեւ Ածականի խնդիր, եւ մէյ մ'իբրեւ Բաղդաստութեան խնդիր:

1. Իբրեւ ածական՝ բաղդաստականներուն խնդրառութիւնն իրենց դրականին խնդրառութեան հետ նոյն է. ինչպէս. Հեռի է նոցանէ, եւ Հեռազոյն է նոցանէ: Մէտ է չարիս, եւ Միտազոյն է չարիս:

2. Իբրեւ բազդատական՝ տեսանք նախ (երես 256, 257.) որ Կան նախագրութեամբ Հայցական կ'առնուն կամ յորն. սեռական, եւ այլն: Եւ գարձեալ՝

Բ. Ինչպէ՛ գտել, որչա՛ գտիս կամ յորտե՛ կամ Երբ Հարցումն ու անոր պատասխանը (որ Բազդատութեան շարին է,) հասարակօրէն գործիական, եւ երբեմն անորոշ հայցական կը գրուի:

Յիրաւունս սպիտակացեալ են նախ հերքս, զի քաղոս՝ առաջի՛ երեց են՝ դոնեայ հնիփոսան՝ ամո՛քան զմուրուս. (Ճաղերս Տերութե՛ շար՝ քանի՛ քաննուհինի՛ քարի՛ առել թեր են:) Քառասուն ժող պակաս արբի. (Կառասնին ժի՛ պակաս:) Մի՛ ո՛ւ ամա՛ պակաս քան զխոսուն: Արց առաջի յառաջ քան զլատիկն: Երէ՛տ ամո՛տ յառաջ քան զկուլթո՞:

Ա՛ս երէ՛տ պակաս ի քառասնէ: Սա՛կա ինչ պակաս քան զամն չորեքասասան: Նորա ոչ ինչ սակաւագոյնք քան զքսանեւչորս բիւրս սպառազինաց: Փո՛ւր ինչ խոնարհ քան զհրեշտակս: Ոչ ինչ կարի հեռի ի տանէն: Չայդ ամենայն արարի, արդ զնչն Ես պակաս իցեմ: Չնչն աւելի իցեն քան զմոգս:

* Ասոց քով կրնային գրուիլ նաեւ այս գործիականները. Ի՛- ի՛-տ առաւել իցէք, ապաքէն Ես ոչ ի՛-տ: Որչ՛ պակաս գառաք քան զայլս: Բազ՛, քաղոս՛ ի՛-տ, եւ այլն. որ կը նշանակեն՝ ինչ՛ առել ի՛, ինչ՛ քանի՛ ժող պակաս քաննուհինի, եւ այլն. բայց ասոնք ճշդիւ քաղաքութեան շարին չեն ցուցնէր, եւ աւելի կը վերաբերին վերը (եր. 287) բերուած օրինակներուն կարգին՝ Բարոյի-տ նախանձոս. կորովի յորտ: Ինչպէս նաեւ այս խօսքին մէջ՝ Աստուած ոչ ի՛-տ անքառ ժրո՛ւ պարտամօք. — անտար (կարօտ) ամականին խնդիրն է՝ Ժրո՛ւ պարտամօք. իսկ ոչ ի՛-տ ըսել է՝ Ես ոչ ժի՛ Եսարտամօք կամ ամեն-ին. (տես Մակրայակերպք, երես 163):

Այսպէս ալ այլեւայլ առամօք՝ Այոց իսրհրոց՝ — առ ինչա՛ անոր մասն եւ գուշակ լինէր: Աստուած եմ ի յեւ — Տերմօք:

Եւ գարձեալ՝ կրնայ ամական անուանց քով (երբեմն իբրեւ խնդիր, շատ անգամ խնդրէն զատ) ներգոյական (կամ գործիական) հարով մ'ըլլալ, որն որ մասնական խօսքն ամբողջացնող խնդիր բնութեան է՝ քան ամականին պահանջած խնդիրը. ինչպէս. Որ ի քոտոն անիրաւ է եւ ի քաղին անիրաւ է: Յօրարին շեղէք հաւատարմիք: Նախանձաւոր ի քարի. ի քոյն մի վեհերտար. յոմնայնի գգասու:

Ածականներու (ինչպէս նաեւ շատ բայերու) խնդրառութեան եւ այլեւայլ հոլով խնդիրներու ըստ օրինի գործածութեան վրայ որոշ կանոններ չի կրնար սահմանուիլ, եւ կը որովուի հին ընտիր գրոց յաճախ եւ մտադիր ընթերցանութեամբ:

Գ Լ Ո Ւ Խ Ա.

ՄԱՄՆԱԿԱՆ ԵՒ ՀԱՐՑԱԿԱՆ ԱՆՈՒԱՆՑ ՎՄԱՅ

Մասնական անուանց եւ հարցականներուն իրենց գոյականին հետ համաձայնութիւնն Ա մտին մէջ (երես 39—41) գրեցինք. եւ տեսանք որ ասոնք թէ գոյականի քով իբրեւ ածական կը գրուին, եւ թէ բայի քով իբրեւ գոյական, (անուն բայի կամ բայի խնդիր): Հոս կը մնայ խօսիլ նախ ասոնց Գործածութեան եւ երկրորդ խնդրառութեան վրայ:

Յ Օ Գ Ո Ւ Ա Ծ Թ Ա.

ՄԱՄՆԱԿԱՆ ԵՒ ՀԱՐՑԱԿԱՆ ԱՆՈՒԱՆՑ ԱՅԼԵԻԱՅԼ ԳՈՐԾԱԾՈՒԹԻՒՆԸ

Ա. Մասնական անուններն իրենց գոյականէն կամ բայէն թէ յառաջ եւ թէ ետք կրնան գրուիլ. իսկ հարցականները միշտ նախադաս կը գրուին:

Բ. Ո՞նք եւ ո՞ր, ի՞նչ եւ ի՞նչ՝ թէպէտ միշտ անանուն եւ անյայտ կերպով մարդ մը կամ քան մը կը նշանակեն, սակայն թէ նշանակութեան եւ թէ գործածութեան կողմանէ արաջինները ո՞նք եւ ի՞նչ՝ կը տարբերին երկրորդներէն որ են ո՞ր եւ ի՞նչ: — Ինչպէս հիմայ կը տեսնենք:

Բայց այստեղ նախ գիտնալու է՝ թէ Գրականագիտական հաստատուած կ'ըսուին այս ձեւ որոշ խօսքերը, Է, Անի, Անիք, Ինչ, Ինչք, որոնց հակառակն են անոնք

որ թէու թեամբ, պայմանով, կարծիք, յոյս, բաղ-
ձանք, եւ այլն յայտնելով կ'ըսուին, ինչպէս, ի՞նչ է-
ցի, որպէս զէ եղցի, հաս- ինչն, ի՛նչն, ի՛նչն, ի՛նչն,
նոյն ինչն, որ ինչ էրն, եւ նմանները: — Յայտնի
են Հասարականն եւ ժիտակն, ինչպէս նաեւ Հորո-
խն խօսքը:

Գ. 'Աշանակութեան կողմանէ՝ ո՞նի եւ ի՞նչ մաս-
նաւոր մարդ կամ իր կը ցուցընեն՝ բաւական որոշ կեր-
պով, եւ դրականապէս զրցուած հաստատական խօսքե-
րու մէջ կը գործածուին. ինչպէս. Եկն ո՞նի եւ պատ-
մեաց: Եւ ո՞նի ի նոցանէ արտաքս: Այր ո՞նի էր անդ:
Ուր ո՞նի ետ հինգ, եւ ուր ո՞նի երկու: — Այլք այլ ի՞նչ
աղաղակէին: Է՛ ի՞նչ զորո-նիւն. (կայ զորո-նիւն ղը):

Էր ո՞նի հիւանդ Ղազարոս. Ղազար անստա՞ք թէ՛ն ի՛նչ
հիւանդ: Նստեր ո՞նի երէրասարդ ի վերայ պատուհա-
նին: — Այլ ի՞նչ ընդ ամին տեսանէ աստ: — Ո՞նի
նախորդ զկին իւր կապեաց զվայրենի ինչ գազա-
նաց, եւ արձակեաց ընդ լերինս: — Աղաչէր զԹի-
սուս ո՞նի փարիսեցի: — Սի՞ն ո՞նի որ կոչի Պետրոս՝
մտեալ է առ Սի՞նն ինչ ուր խաղախորդի: Էին ու-
ր ո՞նի Սի՛նեայ՝ հրէի քահանայի եւ թի՛ն որդիք: —
Ազի՞նս ո՞նի անուն՝ էր քահանայապետ լեալ: — Ո՞նի
մերձեցաւ յիս: — Է՛ ո՞նի որ փոփոխէ զնոսա:

Իսկ ո՞ր եւ ինչ ընդհանուր եւ անորոշ նշանա-
կութեամբ կը գործածուին՝ գլխաւորաբար թէական,
հարցական եւ բացասական խօսքերու մէջ. ինչպէս.
Եկն ո՞ր կամիցի. ո՞ր ո՞ր ի՞նչն. ո՞ր ուր ո՞ր ի՞նչն. ի՛նչն ո՞ր
աստ. ոչ ո՞ր ետես. թէ ո՞ր լուիցէ. որ ո՞ր, որպէ՞ն ո՞ր. որ-
պէս ո՞ր զի շինիցէ տուն: — Եւ ասոնց տեղ ո՞նի չի գրուի:
Նոյնպէս ալ՝ Եկն իցէ ինչ ուր ուր. որ ինչ իմ է.
որ ինչ յայնցանէ. է՛ ինչ այդր. ի՛նչն աստ. ոչ ինչ
ունիմք. թէ ինչ ասիցէք. եւ այլն: — Եւ ասոնց տեղ ի՞նչ
չի գրուի:

Եթէ ուր ուր գործն այրեցի՝ տուժեցի: — Յորժամ
իցէ ո՞ր ուր ուր թշնամի: — Եթէ ո՞ր երբեք հեղ-
գայցէ: — Եթէ ո՞ր ծառայ ի քէն հրաման առեալ,
եւ այլն: — Երբ ինչ ո՞ր եւ համարձակիցի՝ համարձա-

կիմ եւ ես: — Ձի գտնէ հասցէ ուժեղ ի նոցանէ: — Ակն ունէի թէ ու արտմեցի ընդ իս, եւ ոչ ու էր: — Տուք զինէն պատասխանի, եթէ զեզն ուրուտ առք, կամ զէշ ուրուտ վարեցի, կամ յաղթահարեցի զոտ ի ձէնջ, կամ թէ զրկեցի ինչ զոտ. եւ ասեն. ոչ մեղար մեղ, եւ ոչ աւեր ի ձեռաց ուրուտ եւ ոչ ինչ: — Մի թէ ու յիշխանացն հաւատաց ի նա: — ՉԱստուած ուրուտ երբեք չիք տեսալ: — Չէր հնար ուժեղ անցանել ընդ այն: — Անմեղի ուժեղ գեւք մեղանչել ոչ կարեն:

Այս ո՞ն եւ ու մասնականներուն զանազանութիւնն իմանալու է եզակի թուոյն վրայ. վասնզի յոգնակին երկուքին ալ հասարակ է*:

Իսկ ի՞նչ եւ ինչ մասնականներուն զանազանութիւնն իմանալու է ուղղականին եւ նախդրիւ հոլովներուն վրայ. վասնզի վերջահոլովներն երկուքին ալ հասարակ են:

Գ. Բայց ո՞ն ըսելու տեղ կրնայ ըսուիլ նաեւ՝ Ասաց ու ջիս. ասաց ու ուրեւ, (փիսկ՝ ո՞ն ուրեւն.) եւ աւելի գործածական է ինչ քան ի՞նչ. զորօրինակ, Ունիմ ինչ առ իս. (տո՞ն քան մ'աւնիմ) էր ինչ ընդ նմա՝ աւտի զամենայն արար: Կանեփուկն թուփ ինչ է:

Ասոնց նշանակութիւնը մասնաւորելու համար պէտք է նախադաս ածական մ'աւելցընել. Այն ու. այս ու. իւրպքանչիւր ու. ամենայն ու. ամենայն ինչ. քանի ինչ. — ուր գարձեալ ո՞ն, ի՞նչ չի դրուիր:

Գ. Եթէ ի՞նչ, ինչ, ո՞ն, ու աւնող գոյականն ուրիշ ածական մ'ալ հետն ունի, այս մասնականները գոյականին եւ ածականին մէջտեղը կը գրուին:

Ժողովել իրի- ինչ քողոմ եւ դնել ի վերայ խարուկի. (տճ. ոչի զօք շալը թօփ էրիդ անիշին ի-անի-նէ փօմփ:) — Չափնայն ինչ զնա ուր գործիցի՝ գիտէ Աստուած:

* Կը գտնուի ընտիր գրուածոց մէջ նաեւ յոգն. նախընթաց ածականով. Յորժամ զիւրեանց աշխարհն աւնուցուն՝ որդի-նք ու լինիցին: Եթէ արգահաստողք ու լեալ էին:

Այս ձեւով են հետեւեալներն ալ .

Այլ ինչ պարտիրան : Տան ինչ նշանաւոր : Ոչ սա-
կա ինչ խաղաղութիւն : Օրար ինչ իրտ : Ծանր ինչ
քան : Բան ինչ ինքնա : — Մեծ իմն անուն փառաց :
Օրարորդ իմն գեց պատմիչ լինել : Այլապէ իմն իրտ
լինին : Ի նիւթոյ իմեքէ աւելնիերակացե աւնել ինչ :
— Այր ոմն ժեթարան . առն ուրումն ժեթարան :
Ջոյլս ոմանս կապեալս : Պատմել զս ինչ արատնիւ-
թիւնս . (քու սա կամ նա բարու թիւններդ :)

Նոյնպէս ժ բառը՝ մանաւանդ երբ որ իբրեւ մաս-
նական անուն աւնուած է՝ Գործ մի քարէ գործեաց
դա : Բան մի համարոյ : Ծնունդ մի նոր :

Ջ . Որ եւ ինչ՝ իբրեւ գոյական՝ երբեմն եզակի
ձեւով յողնակիի տեղ կը գործածուին^{**} . եւ կ'ըսուի՝
Ուր երկուսն ու ի միասին իցեն^{***} : Եթէ ի մասորանս ու
ի ներքս իցեն : Եթէ այնպէսիտ ու ոչ գտանիցին,
եւայլն : — Երկուսն ինչ են որ բազում աւնեն զմեզս .
(Տեղեքը ինչ շարքընն) : Երկուսն ինչ ատեաց անձն իմ :
Ոչ ինչ ուսուցիտ :

Ի . Որ եւ ինչ գոյականներէն յառաջ գրուած
որ բառը մասնական կամ հարցական ածական է . որ

* Մի իբրեւ թուական անուն շատ անգամ իւր գոյակա-
նէն յառաջ կը գրուի . բայց իբրեւ մասնական անուն՝
միշտ յետագաս է, սն, ին, ինչ մասնականներուն պէս :
Այր ժ էր ի քաղաքին : իբրեւ մասնական անուն՝ սե-
ռականը փոք է սովորաբար . իսկ փոյ հասարակորէն
թուական անուն է, մանաւանդ երբ որ իւր գոյականին
նախագաս ըլլայ . Միոյ մարդոյ . փոյ հօր որդիք : Միոյ
դուրսի մանկունք . զի քան բարբառեալ խօսին :

** Միայն մէկ երկու տեղ կայ յոգն . գործածուած . Երե-
նուս ասեմ : Նոյնպէս քիչ տեղ կը գտնուի եզակի ինչ,
(քան, շէյ) իբրեւ հասարակ գոյական հոլովուած . պս-
պէս . Ինչ ինչ յայլնի լէ հնար գնալ :

Քիչ մ'աւելի յանախեալ է ինչ փ' ուղղական եւ ան-
որը հայցական . ինչ փ չար : ինչ փ նոր եւ չքնաղ
ցուցանել . (նոր ու չտեսնուած բան մ'երեւցընել) :

*** Ըստ ցանցառ կը գտնուի նաեւ այս ձեւով յողնակի .
Ի սոցի հարկէ չգիտեմ զտ լտիճանիւ . (սով նշու-
թիւնն մասնակի չի՞ գիտիք) : Եթէ ունիցիս զտ այլ
սորոսած՝ մեռանիցիս . (Ինչ ուրիշ սորոսածիք մ'ա-
նկառ) : Լեալ իցեն արդեօք մարդի ու երբեմն . (ան-
չաւր եղած պիտ ըլլան երբեմն Գրեմի ղե մարդի) : Ո՞ր
առ ումք ինչ նեղեցին զնոսա :

«+, (ով որ.) ոչ ինչ, (ինչ որ.) ոչ ինչ, (որ բանը.) — իսկ ետք գրուածը յարաբերական դերանուն է. (եթէ)

«+ որ, (մէկն որ.) ինչ որ, (այն բանն որ.)»*

Որ «+ ի բանտի իցէ: Որ ինչ ելանէ ընդ բերան: Ձոր ինչ յարարածոց ասիցեն չար: — Տեսանիցես զո՞ր ի բանտի իցէ: Ինչ որ ելանէ ընդ շրթունս իմ: Գնեա ինչ որ պիտոյ իցէ: Ածէ զնոսա յինչ յոր կամի: Այստեղ գոյական են «+ եւ ինչ:

Ը. Ինչոց շատ անգամ որ ինչ, ոչ ինչ, ոչ «+ ածական ալ կ'ըլլան գոյականի մը քով: Որ ինչ չարէ՛ր յերուսաղէմ գործէին: Ոչինչ զնոս է: Ոչինչ է իտիբ: Ոչ «+ ծառայ կարէ երկուց տերանց ծառայել:

Թ. Ի՞նչ, ինչ եւ «+ խօսքի սկիզբ չեն գրուիր. ինչպէս բերուած օրինակներէն կը տեսնուի: (Տես մանաւանդ. Թիւ ԺԲ:)

Ժ. Ոչինչ, թի ինչ, եթէ իրենց բայէն կամ գոյականէն ետք մնան նախադաս եւ մ'ալ կ'ուզեն: Այսպէս նաեւ ոչ ուրեք, ոչ ուսուրեք, թի ուրեք, եւ այլն:

Եղեւ նմա չար եւ ոչ ինչ: — Առակ եւ ոչ մի ինչ ասես: — Մի գտցէ զինի իւր եւ թի ինչ. (եր. 175:)

ԺԱ. Ի՞նչ եւ ինչ շատ անգամ յետադաս կամ միջադաս ալ ըլլալով անհոլով՝ եւ անփոփոխ կը մնան: Փոփոք ի՞նչ հաւանեցուցանես զիս. (փխկ՝ փոփոք ինչ): Բնիկ մը դեռ չը համոզցընես: Պիբ ճիւղի դանտըրը յօր սուն պէնի:

Ի նի-նոյ ինչ որ առաջի կայր՝ արար զամենայն, որպէս յերկաթոյն զմանգաղ: — Ընդ պատեմիւք ի՞նչ մտանել ասեն լուսնի: — Եթէ ի սահմանելոյ ինչ հրամանէ (կամ ըստ սահմանելոյ ինչ հրամանի) իրքն գործիցին, չէ պարտ դատաւորաց սպանանել զմար-

* Իսկ աշխարհաբար ինչ որ, ով որ, որն որ, երբ որ եւ այլն բազմաթիւութեանց մէջ՝ որ բառն սչ մասնական է կամ հարցական, եւ ոչ յարաբերական, այլ պարզապէս շարժական. — գրաբարէն բոլորովին տարբեր. — որն որ գրաբարի մէջ երբեմն եւ կը թարգմանուի, (տես եր. 175.) եւ երբեմն բոլորովին զանց առնուելով կ'ըսուի՝ Ձեռն ինքեանք կամին՝ առնեն. (փխկ. զոր ինչ:)

դասպանն: — Յորժամ շողն ընդ երգ մտանիցէ՝
 հողամաղք թ՞ն երեւին ի շողն. (շամանդաներ ղ չը
 որսնոսին:) — Օտարացոցիչ թ՞ն բերես ի լսելիս
 մեր: — Եւ որ այլ եւս այսպիսի ինչ իցեն:

Ասոնք յոգնակի գոյականի քով՝ ըսած ենք
 (եր. 39.) թէ միշտ անփոփոխ են:

ԺԲ. Շատ անգամ ինչ մասնականն իւր գոյա-
 կանէն կամ բայէն յառաջ կը դրուի. բայց այն ատեն
 հարկ է որ ուրիշ բառ մը ինչէն ալ յառաջ դրուած ըլլայ:
 Աւելք ինչ կերպիւ՞ր աստ. (հոս ոտիւք + մոտիք): —
 Եթէ տաց ինչ քեզ իրա՞ր ոչ անասս ինձ. — Լըւ-
 ար ինչ քան՝ մեղցի ի քեզ. (այսինքն՝ կերպիւ՞ր ինչ,
 իրա՞ր ինչ, քան ինչ): — Մի ինչ գործեր ընդ անձն
 քո չար: — Եթէ չիցէ ինչ ուրուք գործ բարձ գոր-
 ծեալ, չիք ինչ այնուհետեւ միջնարոսիւն ի միջի:
 — Եթէ իցէ ինչ յառնն զնա, — Եթէ ունիցին
 ինչ ընդ ումէք քան՝ յատեան երթիցեն: — Են
 ինչ ցառ որ վասն մեղաց լինին: — Ոչ եւս դք իչ-
 խէր ինչ հարցանել զնա: — Որ արժանի գանի ինչ
 գործիցէ՝ արբցէ գան:

ԺԳ. Որ ոտ, որ ինչ, ոչ ինչ, մի ինչ, եւայլն յաճախ
 իրարմէ կամ իրենց գոյականէն կը զատուին՝ վայելու-
 թեան համար: Նոյնպէս նաեւ՝ եթէ ոտ, յորժամ ոտ, եւայլն:

Որ ուտիցէ ոտ ի սմանէ՝ մի մեռանիցի. (փխկ՝ որ ոտ
 ուտիցէ:) Ասի կերպը չի տեսիր: Պունտան եէյ-
 էն էօլմէզ: — Որ կամիցի ոտ դատել: — Որ ընդ
 անբաւ ինչ ոտ ուրէք կայցէ. (փխկ՝ որ ոտ ընդ անբաւ
 ինչ կայցէ ուրէք. անքառ որչ ղ կեցողը:) — Ձոր
 գործէ ինչ դք՝ ոչ ինքն նոյն է, որպէս յորժամ
 բրուտն անօթս գործիցէ: — Եւ ոչ եւս ոտ իշխէր
 ինչ հարցանել զնա: — Մի՛ եւս ոտ ի քէն պտուղ
 կերիցէ: — Ոչ այնպէս ինչ կարէ առանց նենգու-
 թեան առնել զմտան՝ որպէս...: Ոչ այնչափ ինչ
 օգնէ յանցաւորին, որչափ... (փխկ՝ ոչ ինչ այն-
 պէս. ոչ ինչ այնչափ:) — Որ համարիցի ոտ ինչ
 պիղծ՝ նմա է պիղծ: — Ձոր ունիցի դք ինչ՝ հրա-

մայէ ընկե՛նուէ: — Որ՛ս՛մ ինչ զք եւ հասանիցէ քա-
րեաց* . (Ինչ քարէ՛տ որ Տելչ Յեւո՛ք քերէ:)

Ենէ՛ բարիս ինչ ո՛ր առնէ՛ երախտիս մարթե՛ն հա-
տուցանել: — Թե՛ քարիւ ո՛ր վէր ի գլուխ առեալ
ի քո ծուռկս դիմէր, մի թէ՛ մի՛ւս եւս** քարիւ
հարկանէ՛իր զնա: — Թե՛ ի մեռելոց ո՛ր յարիցէ: —
Յոր՛ժամ մեղաւոր ո՛ր իցէ. եւայլն:

ԺԴ. Ղարաբարի յատուկ է՝ միայն զարդու եւ
վայելչութեան համար խօսքին մէջ մասնական բառ
մ'աւելցընել, մանաւանդ ուրիշ մասնականի քով:
Այս մասնականներն են՝ ի՞նչ, ինչ, երբեմն նաեւ ո՞նք եւ
ո՛ր. եւ դարձեալ ուրե՞նք, ուստե՞նք, ուրե՛տ, ուստե՛տ տե-
ղական անորոշ մակբայները, որոնք թէ՛ գոյականներու
եւ թէ՛ մակբայներու վրայ կ'աւելցուին:

Ձ՞ ուստե՛տ ասեն զինէն թէ՛ իցեմ. (տճկ. 45՞ րէր
րէյօրլար դէնէ՛մ իչն:) — Որպէս ո՛ր ուստե՛տ ի պուե-
տիկոսաց ասաց զճշմարիտն: — Հրեայք զկու-
տութեան եւ ոչ յանուրջս ուրե՛տ զանուն ածէին
զմտաւ: — Ի կողմն մի ուրե՛տ ծովակալք տիրեցին:
— Ոչ եւս զո՛ր ուրե՛տ տեսին: — Ծառայ ուրե՞նք ի
տերանց փախուցեալ: — Եւ ոչ մի ինչ ֆնաս չա-
րութեան*** ի մէջ բերէին: — Ոչ կարէր անդ եւ
ոչ մի ինչ զօրութիւն առնել: — Առակ եւ ոչ մի
ինչ ասես: — Եւ ես փոքր մի ինչ պարծեցայց: —
Այրն նորա չէ ինչ ծեր. (չաք ծեր չէ:)

Այսպէս ալ՝ Ասէ իսկ ո՞նք ուրե՞նք. վկայեաց ո՛ր
ուրե՛տ: Գարձեալ՝ Անդ ուրե՞նք, աստ ուրե՞նք, երբեմն
ուրե՞նք. տես եր. 162:

ԺԵ. Ի՞նչ երբեմն իբրեւ զարդ՝ եւ երբեմն խօս-
քին զօրութիւնը մեղմելու կամ չափաւորելու համար

* Ինչպէս ածականներու Գլխոյն մէջ ըսինք, (եր. 259.)
նոյն կերպով ալ անեզական գոյականներուն եզակի մաս-
նական կամ թուական ածական կը արուի. այսպէս. Էին
իւստ՛ մի բարեկացւոց: Երկու աղայցեն ի մի՛ երկունս:
Վասն փոյ յանցանաց: Որ՛ս՛մ ինչ քարեաց: Դէյ ինչ՛

** Հոս մակբայ է փոս Խոս, եւ կը նշանակէ մի մ'աւ
գործեալ. (պիր տաՀա:)

*** Վնաս չարօթեան կամ պարզապէս Քնաս՝ շատ անգամ կ'
նշանակէ յանցանք. եւ Քնասութիւն կը նշանակէ յանցաւոր

կ'աւելցուի՝ իՔր ՚նէ, կերպով յը, կեա յը նշանակելով:
Այսպէս նաեւ ուրիշ:

Որ ճոխութեամբն ի՞նչ հրաման տայր Նարուկոդոն-
սոր՝ յանկարծակի անհետ յաչաց կորնչէր*: — Այ-
նու ի՞նչ ածէ զնոսա ի հաւան. (անով զիբեռնի կը հա-
նեցնէ): — Այսու ի՞նչ մեծարոյ երեւին: — Մտա-
գիւր ի՞նչ անսայիք անմտացն: — Ե՛ւս ի՞նչ մեծա-
մեծս խօսէին: — Ահեղ ի՞նչ է տեղիս այս: — Ահա-
գին ի՞նչ է հրոյն նախանձ: — Յայնժամ ի՞նչ աւելի
չկը ուրախութիւն՝ յորժամ ի մեղան ուրախ լինի-
ցին: — Չի՞ թշնամի ի՞նչ եղէ ձեզ:

ԺԶ. Ինչ զարգու համար կ'աւելցուի՝ թէական,
հարցական, եւ բացասական խօսքերու մէջ:

Թէակ.) Եթէ հնար ինչ իցէ ձեզ՝ ընդ ամենայն մարդ-
կան զնաղաղութիւն կալլիք: Եթէ կորելի է՝ ահն
ճարգոս հեթ խաղաղութիւնն ունեցե՛ք: Էյէր գապիլ
իսէ՛ հէր քէս իլէ պարըլըզ օլուն: — Եթէ կարող
ինչ ես՝ օգնեա մեզ: — Թէ եւ յանիրաւի ինչ յան-
գիմանիցիս՝ համբեր: — Եթէ կարող ինչ ոք էր՝
նախ իւր տեղիս առնէր. (իւր՝ տրական):

Հրցի.) Միթէ գու մեծ ինչ ոք իցես քան զհայրն մեր:
Գու՛ն մեր հորհն մեծ միջն ես: — Մի թէ անիրաւ
ինչ է Աստուած. քաւ լիցի: — Եթէ ես ինչ յան-
ձնէ իմմէ խօսիցիմ: — Մի թէ պահապան ինչ էի
ես եղբորն իմոյ: — Մի թէ յԱստուծոյ ինչ վրի-
պեցուցի զձեզ, կամ ձերում իշխանութեամն ինչ
ցանկացայ: — Չօրէ՛նան ինչ խափանեմք: — Տես
որչափ ինչ՝ գանձիցեն անձանց զհուրն: — Ո՛րչափ
ինչ՝ փղբ բանն ունէր զօրութիւն բաղում: **

Բցսի.) Ոչ եթէ յանձնէ ինչ եկի, այլ նա առաքեաց
զիս. (կէ ՚նէ ես իզմէ եկայ): — Ոչ այժմ ինչ կոչեցի
զքեզ: — Ոչ եթէ զհոգմս ինչ կոծելով. — ոչ
եթէ յամթ ինչ առնելով զձեզ, այլ. . . : —

* Պատմական սնոյ մէջ շատ անգամ անկատար ժամանակ
կը գրուի կատարեալի տեղ. ինչպէս այստեղ իտիւր կը
նշանակէ իտիւր:

** Աւերջին երկու օրինակներուն մէջ մակրոյ է որչափ:

Ջայս ոչ եթէ վայրապար ինչ ասացի, եւ ոչ ըստ առաւելութեան ինչ բանից: — Անկցին բիւրք ընդ աջմէ քուսէ, եւ առ քեզ ինչ ոչ մերձեացին: — Այնմ ինչ դք ոչ անսաց: — Ոչ ի տաճարն եւ ոչ ի կայսր ինչ մնասակար եմ: — Շնորհք նորա ընդու նայն ինչ ոչ եղեն: — Իբրեւ ոչ եթէ զիմ ինչ արգարութիւն ունիցիմ, այլ. .: — Ոչ զի նմա ինչ մնաս առնէին, այլ. .: — Ոչ՝ եթէ չուտեմք պակասեմք ինչ, եւ ոչ՝ եթէ ուտեմք առաւելումք ինչ: — Ոչ ի գործ ինչ արկաք զիշխանութիւնս զայս, զի մի խափան ինչ լինիցիմք աւետարանին: — Մի ինչ երանի տայցես նոցա: — Ջայն մի ինչ ասիցես՝ թէ ես գործ գործեմ: — Չեմ ինչ անսալոց: — Եթէ վասն սաստիկ ցաւոցն չկարիցէ գալ՝ ընդ այնր չեն ինչ բանք. (անոր խօսք չկայ. ըստ որեյեճէ՜ եօգ.)

Շատ սովորական են՝ Եթէ հնար ինչ էր. Եթէ մարթ ինչ իցէ. Թէ այնպէս ինչ էր: Մարթ ինչ իցէ. էր ինչ ի դէպ: Ոչ ինչ զանգիտեմ. ոչ ինչ ամաչեցից. ոչ ինչ յօգուտ լինիցին. մի ինչ խիթար. մի ինչ բնաւ զանգիտել. մի ինչ հարեւանցի անցցուք. չէ ինչ պիտոյ, կամ՝ ոչ ինչ է պիտոյ ասել զայդ. առանց ինչ՝ խղճելոյ. ոչ ինչ կարի հեռի. ոչ ինչ կրտսեր ես յիշխանս. եւ այլն:

Այս ինչ եւ իմ թարմատար բառերուն զօրութեանն հասնելու համար լաւ է որ զասոնք իբրեւ յետադաս մակբայ ըմբռնենք, ինչպէս է ինչ յետադասը, որն որ ասոնց հակառակ՝ սաստկացընելու կը ծառայէ. (տես եր. 160:)

ԺԷ. Անհոլով ինչ՝ իբրեւ մասնական անուն զարդու համար կ'աւելցուի դարձեալ իւր վերջահոլովներուն քովը, մանաւանդ երբ ոչ, մի, կամ մի, երկու, ոչ, չափ, եւ այլն բառերուն հետ կից ըլլան: Այս ոճն ալ շատ յաճախեալ է:

Եւ ոչ միոյ ինչ իրի՜ պէտք էին մեզ քննութեան: Ե-

* Կ'ըսուի նաեւ հոլոված՝ բայց միւտ նախագաս. Առանց իրի՜ խղճելոյ. (առանց խիղճ ընելու.) Առանց իրի՜ զբաղելոյ. (անյապաղ.)

ու մէկ տնտեսեան յը պէտք ունէին: Հիշ պիր թէ՛ թ-
թիշին լիւզրւմու եօղաւու պիզէ: — Ասան այլ էրէ՛
էնչ յանցանաց:՝ — Չէր էնչ էօ՛ք (կամ ոչէնչ էօ՛ք
էր) պիտանացու: — Ար միով է-է՛ք էնչ գթիցէ՛ եղեւ
ամենայն օրինացն պարտապան: — Աչէնչ է-է՛ք պա-
կաս իցեմ՝:

ԺԸ. Իսկ յոգնակի թուոյն մէջ էր՝ գոյականը
կը գործածուի՝ նախընթաց էնչ յաւելուածով. այս-
պէս. էնչ էր, էնչ էր:՝** Այս էնչէն յառաջ ալ հար-
կաւ ուրիշ բառ մը գտնուելու է, ինչպէս.

Ձի առանց կամայն Աստուծոյ գործին էնչ էր՝ լի-
նին չար: — Շատ էնչ էր՝ են՝ յորում օգուտ են
նոքա: — Բազում էնչ էր՝ աշխատ առնէր***: —
Մի էնչ յերոց հրաժարեսցուք. (փխկ՝ մի յէօէտէ:)

Երբեմն այս նախընթաց էնչ զարդը կը գտնուի
հոլոված ալ: Են ազգմունք ինչ բնականք՝ որովք հան-
դերձելոց էրէ՛ք էրոց ազգ լինի անասնոց. (փխկ՝ հան-
դերձելոց էնչ իրաց:)

ԺԹ. Դրբեմն մի թուականին տեղ եւ մանաւանդ
ձօք պիղոսանէ, ձօք ժամանակ ու մերչաւոր ինչ ցուցընե-
լու համար կը գրուին ուրե՛ծ, ուրե՛ք՝ ներգոյ. եւ տրա-
կան նշանակութեամբ, եւ ոստրե՛ծ, ոստրե՛ք՝ բցու. նշա-
նակութեամբ: Ամ թէ ըսենք՝ այս տեղական անորոշ
մակբայները (եր. 162.) իբրեւ մասնական անուն կը
բանին տեղոյ եւ ժամանակի անուանց վրայ:

Դատաւոր մի էր է՛ք տղտի ուրե՛ծ. (փխկ՝ է՛ք տղտի
ժոսմ:՝) — Ընդ քաղաքի գոսուն ուրե՛ծ ի բերդն
մտանէին. (ձօք ուրե՛ք ժը:՝) — Ի շէն ուրե՛ք է՛ջա-
նել: — Ի պիղոս իւրե՛ք կալ յաղօթս: — Յանկեան
ուրե՛ք. եւ այլն: — Ձթազաւորութիւնն յայլ ազգ
ուրե՛ք փոխել յերկրին արեւելից: — Աչ աւ ուրե՛ք
ուրե՛ք հրեշտակս արձակէր. (դեպոսաներ իսուրեց:)

* Տես երես 276, առաջին Երան:

** Չատ է էր էնչ, էրոց էնչ՝ ըստ կանոնի, (եր. 39.) Ի շէն
աք է ձենջ՝ եթէ էր էնչ իցեն՝ դատել առաջի անիրաւ-
աց. (եթէ բաներ մ՝ ըլլան:) Աչ կարեմ առնել էր էնչ:

*** Տես եր. 273, Ե թուոյն վերջին օրինակները:

— Ջհարի-բաթինի-ո՛ւ ուրե՛ն էր Աբրահամ, եւ եղեւ
 Տայր ազգաց բազմաց: — Մօր ուրե՛ն ամօք երեք-
 Տարիւրովք յետոյ: — Ի Գաթիբո՛ւ իյո ուրե՛ն վրի-
 պեաց չողաւ. (Գաթիբոյ իղմիրը քնաց իբրաւ:) Ջտասն
 ազգաց ամն յերկոսց հազարաց ուրե՛ն թիւ ժողովէ.
 (Կասն ցեղի Կարիներն երկոս հազար Կարոս) կ'ամփոփէ:)
 Մինչդեռ զվեցհարիւր եւ զտասասն ամա ուրե՛ն էին:

Ինչպէս մինչեւ այստեղ գրուած օրինակներէն կը
 տեսնուի, այս մասնական տնտեսներն ու յիշեալ մաս-
 նական մակրայներն Անորոշ յօդ կրնան համարուիլ. —
 որուն վրայ տես յաջորդ Գլխին մէջ:

Սասնական անուանց գործածութեան մասին
 հետեւեալներն ալ միտք առնելու է:

Ի. Անորոշ հայցական չեն գրուիր ո՞ն, ո՞ւ, ո՞ւ-
 նայն, իւրոտանչիւր, անչիւր, միտանց, իրերաց, այս
 անուն մասնականները եւ ո՞, ո՞վ հարցականները: Բայց
 յոգն. ո՞նտ ունի անորոշ հայցական, Աբս ո՞նտ: Կո-
 չեաց երկոս ո՞նտ յաշակերտացն: Իսկ ինչ, զինչ եւ
 ի՞նչ երբեք չ նախդիր չեն առնուր:

Մարդանիոս ոմն. ոմն Սիմոն. Տիւրանեայ ուրումն.
 ուրումն Սկեւեայ քահանայի. հանդերձ Տերտիւ-
 ղեալ ոմամբ*:

ԻԱ. Ո՞ն շատ անգամ յատուկ անուան մը վրայ
 կ'իյնայ. ինչպէս.

Յզեա եւ կոչեա զՍիմոն զոն, որ կոչի Պետրոս. նա
 մտեալ է առ Սիմոնի ումե՛ն խաղախորդի, (կամ՝ ա-
 ումե՛ն Սիմոնի խաղախորդի:) — Ասէին թէ զոն
 Աբրահամար արգելեալ իցէ գիւաց: — Են սորա
 Հրեայ՝ ի Մանուեայ ումե՛ն: — Ի Սասանայ ումե՛ն:

Այն ատեն անունն երբեմն առանց չ նախդրի
 կը մնայ, եւ ոն կ'առնու զնախդիրը. (տես նաեւ երես
 226, Գ Ժան:)

* Նաեւ գերանուան վրայ ինկած. Հրաման հասեալ ու-
 ին ոն Աբրահամիչո՞ւ, որ ի մեծն Հռոմոյ:

Գոմեր զո՞ն ասեն եկեալ: Գոմեր անուն մէլը չ'ըսեն ի՛նչ եկեր է: — Հոռո՞ անուն զո՞ն կին արովացի ասեն լինե՛լ կին Լատինայ արքայի՞*:

ԻԲ. Գլրականապէս ըսուած խօսքի մէջ (եր. 270.) — այսինքն առանց հարցական կամ թէական կամ բացասական ըլլալու, — կը գործածուի մի ո՞ր նշանակելով մի՛նչ հոգի, (պի՛ր քիշի):

Ըստ սօնի արձակեր նոցա դատաւորն զմի ո՞ր զիտ-դեա՛լ՝ զոր ինքեանք խնդրէին. (ո՞նչ. հէր եօրթուտա պի՛ր քիշի իթլագ էտէր իտի:) — Ընթանալ ամենեքին ընթանան յասպարիզին, այլ մի ո՞ր առնու զյաղթութեանն:

ԻԳ. Շատ անգամ սման՝ մասնականին տեղ՝ կամ անոր հետ՝ կը գործածուին կէստ, այլ՝ յօդով կամ առանց յօդի:

Աստեղք ամենեքեան գնայունք են, կէստն յամրագնացք եւ կէստն արագագնացք: — Ձկէս գլխովայր կախէին, զկէսոց խորտակէին զկողս եւ զսովերս. եւ զկէս ի ցուրտ եւ ի պարզ ընկենուին՝ մինչեւ պրկէին մարմինք նոցա եւ մեռանէին: — Արար Աստուած զգազանսն եւ զճճիս՝ զկէսն ի պէտս, եւ զկէսն ի զարդ, եւ զկէսն զարհուրեցուցիչս մարդոյն: — Ոմն զՅովհաննէս մկրտիչ ասէ, եւ այլ զԵղիա, եւ կէստ զԵրեմիա: — Քրթմնջիւն էր զՅիսուսէ ի ժողովուրդսն. կէստն ասէին՝ բարւոք է, այլն ասէին՝ ոչ:

ԻԴ. Մի՞տանց մասնականին տեղ երբեմն կըրկնութեամբ մի կը գործածուի. այսպէս. Ասէին մի ցո՞մ. (փխկ՝ ցո՞մեանս:) Մի՛ ի մի՞յ վերայ հասանէին վիշաքն: — Մի՛ է մի՞ջէ առնու զլոյսն. (փխկ՝ է մի՞տանց առնուն:)

* Անուն զպտկանն յասուկ անուան մը հետ մէկտեղ իբրեւ վերագիր (կամ անկանի պէս) կ'ըլլայ այր, կն եւ այլն բառերուն, եւ երբեմն օն մասնականին: Այր մի Մարթիսո անուն: Աին ոմն անուն Գոմորի: Աղբատ ոմն անուն Ղապարո: — Արշաւեքին ի քաղաք մի ամուր Եփրոն անուն: — Ջրսան ոմն անուն էր. (Ջրսան անուն մէլը էր:) — Էր ոմն թագաւոր Ատաթ անուն:

Այսպէս եւս՝ Մի ըստ Ռեզե. Օ զժոյ կնի, (Իբրոս երեւի) — Ասոնք առանց յօգի կը դրուին:

ԻԵ. Իւրտանչիւր, անչիւր եւ մէն Օ՝ Թէ գոյական ըլլան եւ Թէ ածական՝ ըսինք (եր. 38.) Թէ անհոլով կը մնան. ասոնց ուղղականը սեռականի եւ տրականի տեղ կը բանի*

Սեռ.) Նստաւ իւրտանչիւր ի վերայ նոցա. (անոնց ամէն մէկուն զրոյ: — Իւրաքանչիւր ոգւոց զանչիւր մարմին զգեցեալ**): — Մարմինք իւրտանչիւր:

Տր.) Ողջոյն տուր սիրելեաց իմոց իւրտանչիւր՝ յանուանէ: Սիրելիներոս ամէն մէկուն՝ անսունգը քարեւըրէ: Սէվկիւլիւլէրիմին հէր պիրինէ իսմի իլէ սէլամ էլլէ: — Բաժանէ Տէր իւրտանչիւր որպէս եւ կամի. (այսինքն՝ իւրտանչիւր ումտի): — Հրամայեաց Գրիգորիոս՝ մէն Օ իւրտանչիւր արկղագործ երկաթազամ տապան գործել. (ամէն մէկուն մէյ մէյ անդոսի):

Այսպէս նաեւ՝ Աւն իւրտանչիւր. ընդ իւրտանչիւր ումեք. յիւրտանչիւր ումեքէ, եւայլն:

ԻԶ. Ըստ անգամ իւրտանչիւր ստացական ածական է, եւ կը ցուցընէ ամէն մէկուն իրինը. — այսինքն՝ շատ անգամ որ իւրտանչիւր բառն անուռն բայի է կամ խնդիր սեռի, իրմէ ետքն ստացական գերանուռն մը զօրութեամբ կ'իմացուի. ինչպէս.

* Ստորին գրաբարի մէջ շատ յաճախեալ է հոլովածը՝ իւրտանչիւրոյ, իւրում, վերոյ:

** Տես վարը ԻԶ. իւրտանչիւր եւ անչիւր ստացական: Իրերոց եւ անչիւր (կամ անչիւր) մասնականները մինակ չեն գործածուիր ըստ ընտիր նախնեաց, այլ առաջինը միտանչի հետ, եւ երկրորդն իւրտանչիւր բառին հետ. այսպէս. կամի Աստուած՝ զի միտանչի օգնիցեմք, յիրերոց յօգուս գտանիցիմք. (այսինքն՝ յիւրոց իրերոց): — Զսպականիչն միտանչի՝ արար օգտակարս իրերոց: — Պատահեցին միտանչի եղջերուք, եւ տեսին զերեսս իրերոց: Պարզեւել իրերոց խոստանային բանիւք, եւ ծածուկ հնարիւք գողանալ ի միտանչի: — Զմիտանչի իրերոց տալ: Ներել միտանչի, շնորհել իրերոց:

կամի Աստուած՝ զի յիւրտանչիւր գործոց անչիւր հանգեւք երեւեսցին. — Ամենքեան իւրտանչիւր զանչիւր զանարդանաց զրէժս պահանջին: — Իւրտանչիւր ոք ժողովեալ բերէք ի առնս անչիւր:

Նոքա յերտանկիւր բանակս սփռեցան. (այսինքն՝ իւրաքանչիւր ոք ի բանակ էր, կամ յերեանց բանակս) — Արձակէր զնոսա յերտանկիւր տունս: (այսինքն՝ զիւրաքանչիւր յերեանց տունս) — Լսէին յերտանկիւր լեզուս խօսել նոցա, եւ ասէին, զի ամրդ լսեմք մէք յերտանկիւր բարբառս մեր: — Իւրաքանչիւր յանձնիւր կողմանս բաժանեալ էին:

Աերջին օրինակին մէջ յերտանկիւր անուն բայի է, իսկ անձնիւր՝ ստացական անական:

ՅՕԴՈՒԱԾ Բ.

ՄԱՍՆԱԿԱՆ ԵՒ ՀԱՐՑԱԿԱՆ ԱՆՈՒՆՆԵՐԸ

ԽՆԴՐԱՌՈՒԹԻՒՆԸ

Ա. Մանական եւ Հարցական անունները բացառական ինդիք կ'ուզեն:

Իւրաքանչիւր ոք է յենջ ընկերին հաճոյ լիցի վասն շինութեան: Չեղէ մէն մէն ընկերին հաճոյ ըլլալ շինութեան որպէս համար: Սիզտէն հէր պիրի էյի իպրէթ իչին այագտաշընա մագպուլ օլտուն:

Ո՞ ոք է մահիմնացոսացո ունիցի կեանս անտրտումս: — Ոչ ոք է մարդիանէ բաւական է անձին իւրում: — Են ինչ գազանք, յորոջ կիտոցն եւ մորիքն արտաքոյ ընտելութեան մարդկան են: — Ծանիր ինչ է րոջ ընչից առ իս, եւ առցես: — Ծածկել ի քէն իմիք է նոցանէ՝ չառնում յանձն:

Կամ իրարմէ զատուած. Նոքա ոչինչ իմացան յասոցելոցն: — Մի՛ ու պարծեսցի ի մարդիանէ:

Ասոնց պէս նաեւ թուականները. Երկուք յաշիբերոցն. հինգն է նոցանէ: — Մի մի է նոցանէ բաւական էր զամենեսին սատակել. (անոնց ամէն մէկը) — Ես եւ ոչ զմի ինչ յայոցանէ արկի ի գործ: — Ելին չորք եղջիւրք, եւ ի միջէ է նոցանէ եւ եղջիւր մի հզոր:

Եթէ հետերնին բացառական խնդրէն զատ գոյական մ'ալ ունին՝ այսպէս կը դասուորին:

Ո՞ր ուրուտ է ձէնջ եռն անկանիցի ի խորխորատ, եւ ոչ հանիցէ զնա: — Յո՞ւ է ձէնջ հայր՝ խնդրիցէ որդի իւր ձուկն: — Բազում դործս բարիս ցուցի ձեզ. վասն որոջ Կործոյ ի նոցանէ՝ քարկոծ առնէք զիս: — Ո՞ման է նոցանէ արէ կիւպրացիք:

Բ. Վիճ անգամ յոգն. սեռական կը դրուի. Մտանել ի տուն ուրումն իշտանոցն Փարիսեցւոց: — Ի վերայ միոյ իբանց: Ել նա ի մի նաւոցն. ի մի Կաթանոցն*:

Աւելի յաճախ՝ մեծ թուական անուանց յոգն. սեռական խնդիր կը տրուի: Հազար մի հեծելոց. հազարաց ճարդիան. ի քառասուն բիւրս ամաց. բիւրուց բիւրս ճարդիան. (Թիւրաոր ճարդի.) եւայլն:

Գ. Վոյնպէս հասարակ ածականներն ալ, երբ որ մասնական անուան պէս կը բանին, յոգն. բացառական խնդիր կ'ուզեն:

Մեծն է յէնջ եղիցի ձեր սպասուոր: Մեջբնէդ թե՛ յեր ծառան ըլլայ: Իշինիզտէն պէզիւլիւնիւզ:

Բազումք յադաբաց եւ հաց իսկ ոչ ունին: — Յուովք այն են ի ճարդիանէ՝ որ զեղխութեամբք զիւրեանց կեանս ապականեալ՝ զաւուրսն կարծեն:

Այսպէս ալ կ'ըսուի՝ Պակասամիտք յերկրասարդաց. հմուտք է թշուոց. առաջինն է ճարդիանէ:

Դ. Երբեմն ալ յոգնակի սեռական կը դրուի. բայց այն ատեն ածականին ալ սովորաբար յոգնակի է:

Վաղարշակայ միաբանեալ զքաջս Հայոց, խաղայ ի վերայ Մակեդոնացւոց: Վաղարշոյ Հայերոսն Կաթիլք թափանելով, Մախերանոցոց իբայ կ'երկայ: Վաղարշակ Իրմէնիւրին խիտէրինի թօփ էտիպ՝ Մաքետունարըն իւզէրինէ եիւրիւր:

Մուրուսթիւնն գիւաց խաբեաց զդեցապաշտս Հայոց: — Յերբ ոչ առնուք ի միտ զմեծամեծս հրամանացն: — Յընտիրս շիբաց մերոց թաղեա զմեռեալս քո:

* Վերջին երկուքը կրնան մեկուիլ՝ երկու է դրբուրն մէկը զեղան, այսպէս. Ի մի քաղաքացն. Ի մի նաւուցն:

Տես նաեւ երես 187, Թիւ 3:

Այսպէս ալ՝ Յետինք ոչխորացն. զվնասակարս խորոց: Գրաբարի յատուկ ոճով մը կ'ըսուի նաեւ եզակի՝ Զփայտակերտ ապարանից. զշինանիստ Կաղապարն. առ բազմամբոխ ժողովրդոց. զբազմակոյտ դիականն* (այսինքն՝ զխորակերտ ապարանս. զշինանիստ Կաղապար, եւ այլն): Այս եզակին շատ յաճախեալ չէ. աւելի բնական է յոգնակի, Կոորակորեզդ ջուրց, եւ այլն:

Բայց երբեմն այն ածականը գոյականօրէն դըրուած յատկացեալ մըն է. ինչպէս. Կոչեւ զքահանայապետան եւ զխառնուս Հրէիցն:

Ամենեօն բառը խնդիր չ'առնուր, այլ մէկտեղ կը հոլովի, եթէ նախադաս է՝ նախդիրը կրկնուելով. Ամենեքին նոքա. դուք ամենեքին. աշակերտքն ամենեքին. ամենեցուն նոցա. զամենեսեան զնոսա. զամենեսեան զմեզ. յամենեսին ի ձեզ. զգոսա ամենեսին. ընդ ձեզ ընդ ամենեսեան. եւ այլն:

Ասոր նման՝ նաեւ թուականները, երբ դերանունան վրայ ինկած ըլլան. բայց ասոնց նախդիրն ազատ է. Կնոքա ութուտասանքն. զնոսա երկուտասանեսին:

Ո՛չ Կասն սոքա սրբեցան, իսկ արդ ինձնքն ուր են. (սոսնէ Կասը հոգի): — Ես ետու հրամանն՝ եփանաւսն զնոսա ի մի գուր փողոտել:

Ե. Շատ անգամ բայի քով մինակ բացառական հոլով մը՝ բանին մէջ մտը կը ցուցնէ. (ինչպէս նաեւ աշխարհաբար եւ տճկ. լեզուաց մէջ):

Տուք մեզ յիւզոյր յերօ: Ձեր եղէն Կոտէ մեզ: Սիզին եաղտան զէրին պիզէ. (այսինքն՝ եղին մէկ մասը): — Առաքեցից առ ձեզ առաքեալս, եւ ի նոցանէ սպանանիցէք: — Ա՛ռ Յակովբ ի Կորանց տեղւոյն եւ եղ ընդ սնարս իւր, եւ ննջեաց: — Հեթաւնոպր եւ ի յիւնց աստուածացուցին: — Թեթեւացի

* Ասկէ են նաեւ Կաղապարն եւ Կաղապարն յօգեալ ածականները. Կաղապարն սեզն Յրդատ: Սիզն Կաղապարն, զի զուր հպարտանաս: Ասոնց առաջինը նաեւ Կոյոր նշանակելու յատկացած է իբրեւ գոյական անուն. Բողբ կայեալ առ Կաղապարն: Կաղապարն յանդիմանու թիւն. (Կայսեր առջեւն ելլել):

ի մէջ՝ ի հարկաց անոր հօր քոյ: — Եկն առ իս յեղ-
բարցն իմոց. (այսինքն՝ մի սն յեղբ:))

Այսպէս նաեւ՝ Աերար ի նմանէ. արբէք ի դժանէ-
ոչ թողլիք ի նմանէ առ վաղիւ:

ՅՅԳՈՒՆԹ Գ.

ՄԱՍՆԱԿԱՆ ԵՒ ՀԱՐՑԱԿԱՆ ԱՆՈՒՆՆԵՑ ՅՕԴԱՌՈՒԹԻՒՆԸ

Ա. Բնդհանրապէս մասնական եւ հարցական
անուններն եթէ՛ մինակ մնան եւ եթէ՛ գոյական մ'ու-
նենան՝ առանց յօդի կը գործածուին, այսինքն «, դ,
ն յօդերը չեն առնուր»:

Բ. Յօդ առնողներն են՝ այլ եւ միս: Իսկ ամ-
նայն առանձին գիտելիք ունի:

Գ. Ամենայն բառը եթէ՛ գոյական է՝ կը նշանակէ
ամէն քան, ամէն մարդ. իսկ եթէ՛ ածական է՝ կը նշա-
նակէ մէյ մը ամէն, (հէր, հէփ,) մէյ մ'ալ քուր,
(պիւթիւն):

1. Ամենայն գոյականը կրնայ յօդ առնուլ ուղղա-
կան եւ նախդիրւ հոլովներուն մէջ. բայց աւելի վայե-
լուչ է անյօդ գործածել:

Ամենայն ի հողոյ եղև, եւ ամենայն ի հող գառնայ:
— Որ զամենայն արար՝ Աստուած է: — Տուք ողոր-
մութիւն, եւ ահա ամենայն ձեր սուրբ է. (յեր ամէն
քանք): — Ամենայն որ գայ առ իս. ամենայն որ լսէ.
յամենայնէ որ լսիցէ. եւ այլն:

* Ար գտնուին կարգէ գուրս ըսուածներ՝ ուր հարկ եղած
է յօդով որոշել, ինչպէս այս օրինակներուս մէջ.
Ստուեր իրիք ոչ հեռանայ յիմեմ. (իր թէ՛ յիմեմ
յանմանէ.) բանի մը շուքն այն մի քանին չի հեռանար:
— Ասաց, գամենայն ինչ կերիլիք. եւ յամենայնին իմեմ
մի ինչ եւ միսն է. (փիկ՝ յամենայն յիմեմ.) եւ այն
«ամենայն ինչ», ըստին միլիմ մէկ բանն ալ միսն է:

Այս կանոնով են տօնային, ըստ տօնային մակ-
բայակերպները. (եր. 163):

2. Ափնայն ամականը՝ եթէ տօն նշանակէ՝
անորոշ է, եւ եզակիի մէջ ինքն ալ իւր գոյականն ալ
միշտ անյօդ են*. իսկ յոգնակիի մէջ՝ երբ որոշեալ է՝
կրնայ գոյականը յօդ ալ առնուլ:

Ափնայն փոռն կազմի յուսէ կազմի: Ափն փոռն ինչ շն-
նոսի որօք որ ինչ շննոսի: — Մի զամենայն ճարք մու-
ծաներ ի տուն քո: — Մարդիկ ամենայն հող են եւ
մոխիր: — Յամենայն փեղես. յամենայն հոսաց, եւ-
այլն: իսկ որոշեալ յոգն. Չամենայն զշայրսն ընու:
Ափնայն ճարքիկն երկրին. ամենայն հախաւորդքսն
ձեր. իւրսն ամենայն, ** եւայլն:

3. Ափնայն ամականը՝ երբ քուր նշանակէ՝ որո-
շեալ է, եւ իւր գոյականն եզակի կը դրուի եւ յօդ
կ'առնու:

Քահանայապետքն եւ ամենայն արեանն խնդրէին սուտ
վկայութիւն զՅիսուսէ: — Աղաղակեաց ամենայն
ժողովորդն: — Չամենայն քիչերս աշխատ եղեաք.
(Քուր քիչերս աշխատեցանս:): — Ափնայն զամին Յա-
կոբեան: — Մովսիսի առեալ զարիւն ցլուցն եւ նո-
խազացն՝ զամենայն ժողովրդեամբն սրսկեաց:

Այսպէս նաեւ՝ Ամենայն տունդ, (քուր փոռն.)
ամենայն քաղաքն, կամ քաղաքս ամենայն. զամենայն
զկարասին, ամենայն կահիւն: Բայց անյօդ կրնայ
մնալ՝ երբ գոյականն ստացականով մ'որոշեալ է կամ
յատուկ անուն է. ինչպէս. Ամենայն փոռն քո. զա-
մենայն զարտօսի իւր. ամենայն իւրայել: (Տես յաջորդ
է Գլխոյն մէջ:)

* Եբրայական ոճով՝ բացասական կամ արդեալական բայի
հետ ամենայն կը նշանակէ եւ ոչ թի, (հիչ պիւր:) Մի
խօսել զամենայն ստութիւն: Ափնայն բան ազեղ ի բե-
րանոյ ձերմ մի ելքէ: Ոչ արդարանայ առաջի Տեառն
ամենայն կենդանի: Լեր կայտառ, եւ ամենայն հիւան-
դութիւն ոչ պատահեցէ քեզ: — Այս ոճը սուրբ
Գրոց մէջ բաւական յաճախեալ է:

** Յոգնակիի մէջ յետողաս ամենայնին վերջահօլորդներն
ամիսիսն բառով կը ձեւանան. այսպէս, Չօրքն ամե-
նայն, զօրքն ամենայն. — զօրքն ամիսեցան:

Գ. Մին՝ երբ որ մի մե (ի նոցանէ) ըսելու տեղ կը գործածուի, շատ անգամ՝ յօդ ալ կ'առնու. այսպէս. Երկու պարտապանք էին. մինն պարտէր հինգհարիւր գահեկան, եւ միւսն յիսուն: Մինք ի ձէնջ սատանայ է:

Եթէ հոլովել պէտք ըլլայ՝ մի թուականը կը գործածուի՝ յօդով կամ անյօդ. ինչպէս՝ Միո՛մ կամ միո՛մ յերեցունցն. միո՛մք ի ձէնջ. ի միջէ ի նոցանէն, եւայլն:

Պարբար հայերէնի մասնական անուանցն անսխալ եւ վայելուչ գործածութիւնը շարագրութեան արուեստին էական մասերէն է. մեկը բազմաթիւ գիտելեաց մէջէն միայն գլխաւորներն ու կարեւորները նշանակեցինք, քնացածին համար ուսանողաց յանձնելով ընտիր մատենից յաճախ եւ ուշադիր ընթերցումն:

Գ Լ Ո Ւ Խ Է.

ԳԻՄՈՐՈՇ ՅՕԳԵՐՈՒ ՎՐԱՅ

Հայերէն լեզուի յօդերուն վրայ երկու գլխաւոր բան կայ գիտելու. 1. Յօդերուն զօրութիւնը կամ նշանակութիւնը, եւ ըստ այսմ անոնց համաձայնութիւնն ու գործածութիւնը. 2. Երբ եւ ուր յօդ դրուին ու չդրուին:

ՅՕԳՈՒԸ Ը.

ՅՕԳԵՐՈՒ ՆՇԱՆԱԿՈՒԹԻՒՆՆ ՈՒ ՀԱՄԱԶԱՅՆՈՒԹԻՒՆԸ

1. Անոռանց յօդառոյթիւն:

Ա. Պիմնորշ «, դ, ն յօդերը գերանուանց արմատներն են, ինչպէս ըսած ենք. (եր. 42.) սակայն յօդերուն գլխաւոր պաշտօնն է՝ գոյականի մը որոշ

եւ ոչ անորոշ ըլլալը ցուցընել՝ երեք դէմքի համեմատ: Ասոր համար է որ կը կոչուին Գիմարոշ, պսիւքն դէմք որոշող:

Բ. Գոյական անունը խօսքի մէջ կրնայ մէյ մը Ռքոյեալ ըլլալ՝ այս կամ այն ծանօթ բանը ցուցընելով. մէյ մ'ալ ըլլալ Անորոշ՝ առանց ցուցընելու թէ ո՞րն է: Զորօրինակ որոշեալ է՝ Մանուհի ծնաւ. եւ անորոշ է՝ Մանուհի ծնաւ. նոյնպէս անորոշ է աշխարհաբար՝ Իշխանի պէս. եւ որոշեալ՝ Իշխանին պէս*:

Գրաբարն յատուկ Անորոշ յօդ չունի. այլ կամ լոկ անունն առանց յօդի կը գրուի իւր բային քով. եւ կամ իբրեւ անորոշ յօդ ի՞նչ, ինչ, ո՞ն, ո՞, մի** կ'աւելցուի՝ մարդ կամ իր ցուցընելուն համեմատ. ինչպէս նաեւ անորոշ մտկբայները՝ ուրե՞ն, ուսո՞ր, եւայլն, որ նախընթաց Գլխոյն մէջ տեսանք:

Աշխարհաբար հայերէնի որոշիչ յօդն առ հասարակ ն (կամ ը) գիրն է միակերպ: Բայց

Գ. Գրաբար հայերէնն երեք այլեւայլ յօդերով կը ցուցընէ որոշեալը՝ երեք գերանունական գէմքերու համեմատ: — Եթէ որոշիչ (գիմարոշ) յօդերը դէմքերուն համեմատ չըլլան՝ գրաբար սխալ կ'ըլլայ:

1. Ս յօդ կը գրուի որոշուելու բառին վրայ՝ երբ նոյն բառն առաջին դէմքի (խօսողին) հետ յարաբերութիւն ունի, զորօրինակ թէ անոր մօտ է, կամ թէ անոր բրածն ու ըսածն է, եւայլն:

2. Դ յօդ կը գրուի՝ երբ որոշուելու բառն երկրորդ դէմքի (լսողին) հետ նոյն յարաբերութիւններն ունի:

* Յանկերէն լեզուն միայն սեռական եւ հայցական հոլովներուն մէջ ունի որոշեալ ձեւը: Աւզգականին որոշ կամ անորոշ ըլլալը հասարակօրէն շեշտէն կ'իմացուի. զորօրինակ, անորոշ ուզգական է՝ ե՛լ եբէլէ՛լ, (առն փէր է.) եւ որոշեալ է՝ ե՛լ եբէլէ՛լ, (առնը փէր է:) Իսկ միւս անկ. հոլովները չեն կրնար որոշեան ու անորոշ զանազանել:

** Ըսած ենք (եր. 246, Բ ծան.) թէ երբեք եղակի անորոշ ախօգ անունն մ'ետքը լռելեայն կ'իմացուի Գ: Այսպէս ալ՝ Եկն այր ի լեռնէն Եփրատի. Եմնու Լաւորի առ Գաւիթ. Եղեւ ինգիր յաշակերտացն Եովհաննու ընդ չրի. պսիւքն՝ այր Գ, մարգարէ ո՞ն, ընդ ու՞րե՞ն չրի:

3. Ն յօդ կը գրուի՝ երբ որոշուելու բառն երբորդ գէմքի (ոչ առաջնոյն եւ ոչ երկրորդին) հետ նոյն յարաբերութիւններն ունի:

Գարձեալ՝ հիմնական ժամանակը ցուցնելու համար * եւ որ կը գրուի, իսկ անցած կամ դալի ժամանակ կը նշանակուի ն յօդով. այսպէս. Որպէս սպաներն երէկ զԵգիպտոսցին: — (Բայի վրայ գիմարոշ յօդ գրուած՝ այս Յօդուածին ետքերը կը տեսնենք:)

Օրինակները տես ասկէ մինչեւ այս Գլխոյս վերջը:

Աւասիկ անորոշն ու որոշեալը (կամ անյօդն ու յօդովը) յաջորդ օրինակին մէջ: Էր ամբօի յոյժ ի տեղուջն. եւ ասեն ցՅիսուս, տեսանեն զի ամբօիդ նեղէ զքեզ. եւ ել ամբօին ի բաց: Ուր անորոշ է ամբօի, (մեծ բազմութիւն մը.) իսկ ամբօիդ եւ ամբօին՝ որոշեալ են. որ աշխարհաբար հաւատարմապէս կ'ըսուի՝ Բաշտօնօնն զքեզ կը նեղէ. — Բաշտօնօնն ելաւ դուրս:

Ե. Յուցական դերանուանց գոյականին յօդը պէտք է որ նոյն դերանուանց դէմքին ճշգիւ համաձայնի*. Ի լերինս յայտիկ: — Զի՞նչ է բանդ այդ. զի՞նչ են վէրքդ այդտիկ. զդոյն ինքն զԳրիգորդ: — Յաւուրսն յայտոիկ. մարդոյն այնիկ. եւայլն**:

Զ. Իսկ ստացական դերանուանց գոյականին յօդը՝ 1. երբեմն կը համաձայնի, 2. երբեմն ն կը գրուի՝ երբ որ ներկայ տեղոյ կամ ժամանակի կապուած չէ. եւ 3. շատ անգամ բոլորովին կը զեղչուի***: 1. Հեզութիւնդ յեր յայտնի լիցի ամենայն մարդկան: 2. Եր հեզութիւնն ասին մարդոս յայտիկ ըլլայ: — Եղի-

* Եւ ոչ Թէ մեր սովորական աշխարհաբարին նման՝ Այս սկիւն տաս այդ մարդուն:

** Յայտնի է որ այստեղ յետագաս ցուցականին վրայ է խօսքը. վասնզի նախագաս ցուցականին գոյականը քիչ անգամ յօդ կ'առնու. Յայտ՝ ժամուս. զայս տեղիս ի բաց քակեմք: Ինչպէս նաեւ յետագասի քով անյօդ գոյական՝ բացառութիւն է. Յօրի յայտմանէ: Եր. 47 եւ 198:

*** Բայց եթէ ստացականին հետ յետագաս ցուցական դերանունն ալ գտնուի, այն ասան յօդը հարկաւ ստացականին հետ համաձայնելու է ըստ Ե կանոնին: Օրո՛ իմ այս նշանաւոր է: Եկն որդիդ քո այդ: Իշխանութիւնդ

- ցի կրկին ուզիք + ի վերայ իմ: Ի + ու՛մ ականդ գե-
րան կայ: **Ոչ վասն + խօսիցդ հաւատամք: — Ձեր
վաթարութիւնս յո՞ տարայց: Կոր են Տր իրք²:**
2. **Յայտնի լինին փառքն յեր ընդ ամենայն երկիր: Ձեր
փառք քուր աշխարհի + յայտնի ըլլայ: — Ձեր սէրն
եկեալ հանդիցէ առ մեզ: — Մի բարիքն + ի հար-
կէ լինիցին: Ձբանն ի՞մ պահեցին:**
3. **Խնդրուած + յեր յայտնի լինին առ Աստուած: Ձեր
ինդերներն Աստուծոյ առջեւ յայտնի ըլլան: — Եղ-
բայր + եկեալ է:**

Է. Իւայց յօգն ուրիշ գէմքի հետ կը համաձայ-
նի՝ երբ որ ստացեալը (ունեցուածք) ստացողէն դուրս
կամ հետու է տեղով կամ ժամանակով: Տուր ի բաց
զորդեակդ ի՞մ: Հանէ Գուր զառիս (որ քու քովդ է):
Թէ մեղեցես որդւոյդ ի՞մ, սպանից եւ ես զորդիդ
քո. (երկուքն ալ քու քովդ են:) — Գուսարն +
մեռաւ. (ոչ հոս քու քովդ:) — Խորտակեցաւ նաւն
+ . (նոյնպէս:) Աւերեցին զքաղաքն Տր՝ մինչ ի Տ-
րու՛մ աշխարհին էպք. (ոչ հոս եւ ոչ հիմայ:) — Ի՞մ
որդին լուսաւոր է. (որ քովս չէ:) Ի՞մ գալուստն նպաստ
լինիցի. ձեզ. (ոչ հիմայ՝ այլ երբ որ գամ:) — Ձի՞մ
մարդարէք զրկիցե՞մ. (զքեզ կամ զգա:)

Իսկ եթէ մօտ է՝ հարկաւ համաձայնելու է: Տուք
մեզ յիւղոյդ յերձե, զի աս հա շիջանին լապտերքս Տր:

ներ այդ: Ձթնամբն իմ զանիկ անէք այս: — Բիչ
անգամ այս դեպքիս մէջ անյօդ կը մայ. Եղբայր քո
այս մեռեալ էր:

* Եթէ ստացական դերանունը նախագաս է՝ սովորաբար
զոյականն առանց յօգի չի թողուիր:

Ս եւ որ յօգով նախագաս ստացական կամ նախա-
գաս անական անսովոր է հին հայկաբանութեան. ինչ-
պէս են՝ իմ որդեակ, մորոյս տոհմի. զքոյդ պարգեւս.
ձերք անուութիւն. ձերու՞մ պաշտաման. մարդկային
բնութիւն, եւ այլն. — որոնք որչափ խորթ են ըստ ըն-
տիր նախնեաց՝ նոյնչափ սիրական ու սովորական եղած
են միջին եւ նոր ժամանակներու:

Նոյնպէս միջին ժամանակներու յատուկ են գիմարոշ
յօգերու անշահ եւ անկանոն գործածութիւնք. Առնես
զքոյդ պատարագն. զայդ պիտու խրատն. զան կե-
բակուրք. յայսպիսի կանայսն. այնպիսեացս. որքանի՞ն
այս. եւ այլն:

— Հեղցի Կ արիւնդ. Թափել զոս աստմուռնոց. աւազորդիդ Կ. յարդարանայլս մերո՛ճ այժմօրիկ:

Այլ յանձնուի դաստառաց՝ հոս եւ զարը փակագծեալ համառօտ մեկնութեանց պարզարանութիւնն ընել՝ ըստ աւանդեալ կանոնաց:

Մի՛նչեւ այստեղ աւանդուած կանոններուն համեմատ կ'ըսուի՝

Ջրհորս խոր է. հորը խորունկ է (հոս սաքիս ասով):
Քոյրդ իմ միայն եթող զին. Կոյրս (որ քու քոզդ է):
Հայրն քո հասուցե է քեզ. (զոր հոս չենք տեսներ):
Լոյսդ որ ի քեզ է՝ խաւար է. լոյսն որ ունի՛ս՝ խաւար է:
Ընթեռնուցու թուղթդ*. կարգացոսի (իմ) նաճին (որ
մեր քոզն է): [նենքս]

Արտաքին մարդս մեր ազականի. (զոր ահա կը տեսու
Այլ ներքին մարդն մեր նորդի. (զոր հիմայ չենք
տեսներ):

Ձի՛նչ զործեն ի շաբաթուս. (այսօր) շաբաթն օրով:
Ի շաբաթուս հանդարտեցին. (այն օր) շաբաթն օրը
հանգիստ ըրին:

Ձի՛ կայք աստ զօրս ցերեկ. (այսօրուան) քուր ցօրեկը:
Ձօրն ցերեկ յայն ծախէք. (ամէն ատեն) քուր ցօրեկն
անով կ'անցընէ: [նեցանս]:

Չամենայն գիշերս աշխատ եղեալք. քուր գիշերս յոգ-
Չգիշերն ամենայն քնով յագեցաւ. քուր գիշերը խաւար
ինացաւ:

Ցարաժամեալ է օրս. (հիմայ) օրն երբէնուն եղած է:
Երեկոյացեալ էր ժամն. (այն օրն) երբէնուն եղած էր:

Ասոնք եւ յաջորդ օրինակները կը ցուցնեն թէ
յօգերը գերանուան անդ դրուած չեն:

Արկէք յաջակողմն նաւիդ զուռկանդ. (հոս խօսողը
նաւէն դուրս է): Ասոնք նախն աջ դին նեպեցէ:

* Ինչ որ մէկու մը խրկուած է՝ յօգ եւ դերանուն կամ ուրիշ ցուցական բառ հարկաւ Բ գեմբի կ'ուզէ՝ այն մէկուն հետ խօսուած ատեն. եւ անկէ ետեւ կ'ըսուի՝ Թուղթդ իմ. գրեցի մեզ ի թղթի այդ. ողջնդ իմն մեռն է: Չայրդ զոր յղեցի առ քեզ. ընկալ զդ իբրև զնս: Մեզ զԳրեգորդ՝ զոր ասուք անել առ մեզ՝ հովիւ կացուղիք:

Այդ գայլըն սաղընա աթըն: — Չուկն տանիմք ի նաւիս, եւ ի նոցանէ է հասոք: Եթէ գգրա միան ի նաւիս՝ գուք սպրել ոչ կարէք. (խօսողը նաւին մէջ): — Գուրքոք փակեալ են. (կ'ըսուի գրան դուրսը կամ մօտ կեցողին): — Ո՛քաղպը արեանց, որոյ քննեցիք սրտոք. (սրտն ըբոծ որսը պէտի՛ Իննուփ): — Մինչ գեա լուծանէին զյաւանակն, ասեն տեաղըն նորա. զի՞ լուծանէք զյաւանակոք: — Յօ զխաշնոք տանիք՝ եւ զհովիւս տարայք:

Սխալ կ'ըլլար՝ եթէ մեր սովորական աշխարհաբարին հետեւելով ըսէինք՝ Արկէք զուռկանն. զուրքն փակեալ են. որոյ սրտն. ընթեռնուցու թուղթն իմ. լուծանէք զյաւանակն: Սոյնպէս միտ դիր մինչեւ յօգերու Գլխոյս վերջը բերուած օրինակներուն:

Այս գրաբարի յօդերը պարզապէս որոշիչ յօդ են, ինչպէս ըսինք՝ դէմքերու համեմատ, ըստ իմաստին պահանջելուն. եւ ասոնց աշխարհաբարն առ հասարակ ն (կամ ք) յօդով է*: Ուստի պէտք չէ բռնազբօսելով մեկնել ցուցականաւ կամ ստացականաւ, իբր թէ Ձրհորս այս խոր է. այդ քոյր իմ. այդք նաւի. զայդ ուռկան. լոյս Կ որ ի քեզ է. եւայլն. եւ աշխարհաբար թարգմանել՝ Այս հորը. սա քոյրք. այդ նաւին. ուր բուրոովին աւելորդ են դերանունները:

Դիտելի է որ ընդհանրի վերաբերեալ եւ առականոր կամ վնասկան խօսքերու եւ մանաւանդ պատմութեանց մէջ առհասարակ գործածուածը ն յօգն է բնականապէս. զորօրինակ. Ազքատն մեծարի վասն հանճարոյ իւրոյ: Ի կարօտելոյն մի գարձուցաներ զակն: Ընկէց զարծաթն ի տանարին եւ զնաց: Աստուած ոչ պնչափ ատեայ զյանցաւորն եւ զմզաւորն, որչափ զիրքն եւ զանամթն: Եկեալ իցէ օր Տեառն՝ մեծն եւ երեւելին. — ուր պատճառ չկայ առաջին կամ երկրորդ դէմքի մերձեցընելու: Եւ հա-

* Քանի մը դէպքի մէջ աշխարհաբար ալ սովորութիւն է գրաբարի նմանութեամբ ըսել՝ Մարգո սկար է. կեանքս անցաւոր է. աշխարհիս ունայնութիւնք. այս կողմն, եւայլն. բայց սա ընդհանուր կանոն չէ:

մմանաբար՝ ցանցաւ են - եւ զ որոշիչ յօդ գրուելու գէղքերը. ինչպէս՝ Այս Յովհաննէս՝ մեծ - եւ առաջինը: Աստուած՝ մեծ զ եւ սրանչելի: — Եւ յօդին այս յաճախագոյն գործածութիւնը կարծել տուած է՝ թէ գրաբարի ընդհանուր որոշիչ յօդն ըլլայ Ն գիրն, իսկ - եւ զ՝ գերանուանց փոխանակիչներն ըլլան. եւ սոյն ըմբռնմանէ յառաջ եկած են աշխարհաբար անճիշտ թարգմանութիւններ, եւ գրաբար գրուածոց մէջ յօդերու անճահ կիրառութիւն:

Կարելւոր է գիտնալ՝ որ օտար լեզուէ թարգմանող քաջ նախնիք պարզապէս որոշիչ յօդ գտած են բնագրին մէջ, եւ ոչ ցուցական կամ ստացական գերանուն. եւ իրենք հայերէն լեզուին սգւոյն համեմատ վայելապէս գրած են ըստ տեղւոյն - կամ զ կամ Ն յօդերն որ ուրիշ լեզուները չունին:

Գրաբարի մեծ առաւելութիւններէն է՝ անորոշ բառը յօգով (գրով մը) որոշելուն հետ՝ միանգամայն անոր գէմքը, գիրքն ու ժամանակն որոշել:

Այս է երեք յօդերուն ընդհանուր նշանակութիւնն եւ սովորական գործածութիւնը. սակայն ասոնք երբեմն նաեւ գերանուանց տեղ գործածուած պիտի տեսնենք վարը:

Ը. Արք խօզքին մէջ երկու այլեւայլ գէմքեր ըլլան, դիմորոշ յօդը նախապատիւ գէմքին հետ կը համաձայնի. (ինչպէս անուն բայիներու համար ըսուեցաւ. երես 212, Զ.) այսպէս. Ի միտին է ի՞մ եւ Կոհրամանս. (Ի՞մ հրամանս ու Կոհրամանդ մի՞ է, հաւատար է:) — Գոհ - եւ որդիքն Իսրայէլի՝ ելեալքդ յԵդիպտոսէ:

Թ. Վարաբար դիմորոշ յօդերն որ զլիսաւորաբար որոշիչ յօդ են, ինչպէս մինչեւ այստեղ տեսանք, երկրորդական գործածութիւն ու նշանակութիւն ալ ունին. այսինքն, նոյն յօդերն երբեմն նաեւ են գերանունական Էական յօդ, Յուցական յօդ եւ Ստացական յօդ:

Փ. Այս էական, ցուցական եւ ստացական յօդերն՝ երբեմն իրենց գերանունանցը հետ, եւ երբեմն

մինակ կը գործածուին դերանուանց տեղ. ինչպէս. Եմք ընդ յարկաւս ընդ այսոսի, կամ լոկ՝ Եմք ընդ յարկաւս:

ԺԱ. 1. Պիմերոշ յօդ՝ էական դերանուան հետ: Եւ հովիւս մեղայ, դոս * ոչխարքդ զի գործեցին: Յճկ. Պէն չօպան՝ խաթա էթտիմ, պունլար՝ գոյունլար՝ նէ՞ էթտի: — Եւ լուացի զոսս ձեր՝ տերս եւ վարդապետս: — Օգնեա՛ ինչ միայնուան, որ ոչ ունիմ ինձ օգնական. եւ սաց փառս Ինչ ճշմարտիդ Աստուծոյ: — Եկն տու իս առ թշնամիս: — Հաճոյ թուեցաւ Ինչ միարան ժողովելոցս՝ արս ընտրեալս յղել առ ձեզ: — Գոսս սկեղէնքդ ոչ են սաստուածք:

Իսկ ուր որ էական դերանունն չի գրուիր՝ յօդն զգեմք կ'որոշէ. ինչպէս.

Ոչ բաւեմք արարածքս զԱրարչէն պատմել: — Մի մարմին եմք բազումքս: Մի հեղաացուք մեզաւարքս գառնալ առ Աստուած: — Եթէ սրդեակ իմ ես, հօրս նմանեա: — Երանի տամ լողացդ: — Խոստովանութեան ժամանակ է եւ մկրտելոցդ եւ շմիրտելոցն. (այսինքն՝) Ինչ մկրտելոց եւ այլոց շմիրտելոց:

Այսպէս ալ կոչականները. Լուարուք ինձ զօրքդ ամենեքեան: Բազում խաղաղութիւն գտեալ ի քէն՝ ամենայնիւ շնորհակալ եմք, քաջդ Փելիքս: Արքայդ Իսրայէլի: Մշակքդ անիրաւութեան: Ո՛րթդ խապանացեալ: Ո՛ հէքդ եւ թշուառական: Ո՛վ աղաջուրդ:

ԺԲ. 2. Հուցական յօդ՝ ցուցական դերանուան հետ՝ յայանի է Ա մասէն. (եր. 47. տես եւ եր. 290):

Ցուցական յօդ ցուցական դերանուան տեղ:

Ոչ է իմ բանս, այլ Պաւղոսի: Այս իօսին իմս զէ, այլ Պօղոսի: — Փրկեսցես զմեզ ի մահուանէս. (այսինքն՝ յայսմ մահուանէ:) Պահեսցէ զմեզ ի գիշերիս **:

* Յայանի է թէ սա, դոս, նա եւ այլն ցուցականներն իբրեւ էական դերանունն ալ կը բանին:

** Այս գրաբարի նմանութեամբ է որ աշխարհաբար ալ երբեք կ'ըսուի՝ Գիշերս ցուրտ էր. օրէս ի վեր ձմեռ է:

ԺԳ. 3. Ստացական յօդ՝ իւր գերանուանը հետ : Բժշկեցի մանուկս ի՛մ : (Հոս ս ստացական յօդ է, եւ ոչ ցուցական՝ վասնզի մանուկը խօսողէն հեռու տեղ կը գտնուի : Յես թիւ է) — Աւատիկ տոյք ցքեզ . (նոյնպէս ստացական է որ, եւ ոչ ցուցական՝ ապա թէ ոչ հարկ էր ըսել սասորիկ : Եւ ուղիղ է սասորիկ, վասն զի տոյք ըսածը խօսողին ձեռքին մէջն է) :

Ստացական յօդ ստացական գերանուան տեղ, աշխարհաբարի նման :

Յայսմ գիշերի զոգիդ ի քէն ի բաց պահանջիցեն . (գիշի՛ զոգի տոյք) Այս գիշեր հոգիդ տեղի ոչտի պահանջին : Պու կէճէ ճանընը սէնտէն իսթէէիպ ալաճազար : — Գազարեալ են աչք քո ի լալոյ, եւ չելանէ կառաչ ի բերանոյդ . (Բերնեդ յայն չելիք) : — Կենդանի ես, եւ շունչդ ի քեզ է : — Սպիտակացեալ են հերքս : — Երեծէին զգլուխն եղեզամբ . (անոյ գլխիք) : — Եթէ ակն քո չար է՝ ամենայն մարմինդ խաւարին եղիցի . (Բուր մարմինդ) * :

Հետեւեալ երեք օրինակներուն մէջ կը տեսնուի միեւնոյն յօդին կրկին պաշտօնը, այսինքն իբրեւ պարզապէս որոշիչ յօդ, եւ դարձեալ իբրեւ ցուցական կամ ստացական յօդ՝ փոխանակ գերանուան :

Գամ խնդրել պտուղ ի թղենւոջդ եւ ոչ գտանեմ . արդ կարեա զգա, ընդէր եւ զերկիրդ խափանէ : Կո՛ւ քո՛ պտուղ կը քնարեմ՝ սա ինչնուոյն լքայ սա չեմ քոնեք . ոսորի կորէ սոսիկա, ինչն՝ գեպինն ալ իսփանէ : (Առաջին որ յօդը ցուցական գերանուան տեղ է, փակ՝ յայտմ թղենւոջ . իսկ երկրորդը՝ զերկիրդ՝ պարզապէս որոշիչ յօդ է) : — Գուրքդ փակեալ են, եւ ման-

* Բայց շատ ստացական եւ ցուցական կարծուածները պարզապէս որոշեալ յօդ են . ինչպէս այս խօսքերուս մէջ . Հոգիս յօժար է, բայց մարմինս սկար : (Մարգար) հոգին յօժար է, եւայն : Յուր ինձ բաժին որ անկանի յընչեցդ : Աշխարհս անցանէ եւ ցանկութիւնն . եւայն . նոյպէս վերը (թիւ Դ-Թ.) բերուած օրինակներուն մէջ : Ար նոյն է եթէ ըսուէր՝ Հոգի յօժար է, բայց տարիս սկար . աշխարհ անցանէ . ըստ Բ կանոնին որ վարը Բ Յօդուածին մէջ պիտի տեսնենք, երես 306 :

կուչքս կան յանկողնի: Գաները թոյ են, եւ պատս ան-
կողնոյ մըլ են: (Առաջինը՝ որ յօգը՝ որոշիչ յօգ է. եւ
երկրորդը՝ օ՝ ստացական, փխկ՝ մանկուչք ի՛մ:) — Առ-
աճի միւսքս ընդ բանս յիմարեցան, եւ չկարեմ զճառօ
ի գլուխ հանել: (Առաջին յօգը՝ միւսքս՝ ստացական
է, փխկ՝ միւսք ի՛մ. երկրորդը՝ ընդ բանս՝ ցուցական յօգ
է, փխկ՝ ընդ այս բանս. եւ երրորդը՝ զճառօ՝ որոշիչ
յօգ է:)*

2. Յարաբերական խաներոս հետ կապուած յօդա- նոսթիւն:

Ա. Պարարի մէջ շատ յաճախեալ ոճ է՝ յա-
րաբերական բառէ մը անմիջապէս ետքն եկող բառին
վնայ օ, ք, ն յօգերը գնել:

Բ. Յարաբերական բառերն են՝ որ դերանունն
եւ անոպ կազմած բառերը, որ ինչ, որ օ+, որպիսի, որ-
պէս, որչափ, յորժամ, յորմէ հետէ, եւայլն. նոյնպէս՝
որ** ինչ, նախագաս դի, եւայլն. որոնք հարկաւ ու-
րիչ բառ մը կամ խօսք մը կը յարաբերեն:

Գ. Ասոնցմէ ետքն եկած որեւիցէ մասն բանի՝
կ'առնու օ, ք, ն յօգերը, թէպէտ հոլովուած անուն
կամ գերանուն ըլլայ կամ խոնարհուած բայ, մակ-
բայ, եւայլն. նա եւ այն բառերն որ երբեք յօգ չեն
կրնար առնուլ, ինչպէս են՝ ես, քոս, նա, եւ նման-
ները. նաեւ անորոշ մտօք դրուած անունները. վեր-
ջապէս ամէն բառ՝ ի բաց առեալ նախդիր, նախա-
դրութիւն***, շաղկապ ու միջարկութիւն, եւ դարձեալ
օ՞ն, օ+, ի՞նչ, երբե՞ն, եւ քանի մը նմանները:

Դ. Յօգին այս գործածութեան մէջ ալ ճշգիւ
կը պահուի երեք գէմբերու հետ համեմատութիւնն

* Այսպէս կը ցուցնեն բնագիրներն ուստի այս խօսքերը
թարգմանուած են:

** Այս կարգն են նաեւ հարցական բառերը՝ եթէ իբրեւ
հարցմամբ չեն գործածուած. ինչպէս են ինչ որ. ի՞նչ
ինչօ. ի՞նչ. եւայլն: Որ երթամն. լուր զինչ ասերն:

*** Նաեւ նախադրութիւններն այս յօգերը կ'առնուն՝ եթէ
իբրեւ մակբայ գործածուած են. ինչպէս. Որ առաջին

ու կապակցութիւնը: Գէմք ըսելով կ'իմանանք նաեւ տեղւոյ եւ ժամանակի յարաբերութիւնը, (ներկայ, մտաւար կամ հեռավար.) զորօրինակ՝ այժմ, այօր, եւ սօս, այդք՝ առաջին կամ երկրորդ գէմքի յօգ կ'ուզեն ըստ իմաստին. յայնժամ, անդ՝ երրորդ գէմքի, եւայլն. — եթէ նաեւ լռելեայն իմացուին:

Ե. Եթէ խօսքին մէջ այլեւայլ գէմքի բառեր կան, յօգը կրնայ մէկուն կամ միւսին համաձայնիլ, երբեմն անուան բայի, երբեմն խնդրոյն, երբեմն տեղւոյն կամ ժամանակին*: Բայց սովորաբար կը համա-

երթային. որս՜ որ սօսի-ին ՚իբնային: Որ առաջիկայ: Ջոր յանդիմանն անոսի: Որ շուրջ կային:

Ըստ ինքեան յօգ շառնող բառերուն զրոյ այս գէպքին մէջ յօգ գրուելուն պատճառն այն է՝ որ այն յօգը ոչ թէ նոյն բառին յօգն է, այլ նախընթաց (կամ նաեւ հետևորդ) ուրիշ բառի մը ակնարկութիւն է՝ որ խօսքին իմաստին համեմատ երբեմն ներդարծութեամբ գրուած կ'ըլլայ, եւ երբեմն լռելեայն կ'իմացուի. ինչպէս, ներդարծութեամբ՝ Այս որ սասորաւ. այն՜ յոր-ժամ հեռիս եմ ի ձեռն. դոս՜ որ շարք էք. յեւ որ սայլքս եւ թչ որ առնուս. այն՜ որ հաւատայն. այն-ձի որ զին առաքեաց. այն՜ զոր անգն ասաց. զոր կամին շին առնեմ. — եւ լռելեայն՝ (Այն՜) մինչ գեռ հեռիս իցեմք, կամ՜ մինչ առ ձեզս եմ. (յայն՜ամ) մինչ թշնամքն էաք. (այն՜) մինչ սիրելիքս եղեաք. (յայն՜ամ) մինչ կային ի մէջ նոցա: Որովք (սասորի) այժմք զսօսի շարեալ էք. (անգր) ուր եսն երթամ՜ զուրք ոչ կարէք գալ: — Հաստատուն կաց յայդ՜ զոր սևարգ. կամ՜ Հաստատուն կաց յորս սևարգ. — յայդ՜ գե-րանունն առաջինն մէջ ներդարծութեամբ գրուած է, երկրորդին մէջ լռելեայն կ'իմացուի:

* Ջորօրինակ՝ միւսնոյն խօսքը ժամանակին համաձայնութեամբ ըսուած է, Դուրք որ մեռեալն էիք իբնին. եւ զարձակ անուան բայի համաձայնութեամբ՝ Դոս՜ որ մեռեալք էիք երբեմն:

Իսկ շատ անգամ՝ տեղւոյն եւ ժամանակին համեմատ՝ ակնարկութիւն մի է լռելեայն իմացուած սօսի, սօսորի, սօսանի բառերուն: Այսպէս այս օրինակներուս մէջ առ հասարակ դ յօգն է սօսորի: Ասուած որ անդ զքեզ առ մզ. յորոյ ի բարիսդ վայելէք: Սեղանքն որ քեզք երեւին: Այն որ այժմք իսկ ծնեալ. եւայլն. — Թէպէտ կրնայ յօգը նաեւ խնդրոյն կամ բային կամ ժամանակին համաձայնած համարուիլ, որոնք Բ գէմքի են:

Նոյն կերպով ալ կ'ըսուի՝ Յես զարեգակնդ. զԹըռ-շունսդ յօգս. Ծճիդ լաւ է քան զկուսան:

ձայնի յարարերեալ բառին* զէմքին հետ. ինչպէս.
Ս՝ որ իշխերս: Զոք զոր տեսանէքք:

Զ. (Յօգին այս զործածութիւնն ազատ է. այս-
ինքն եթէ յօգ չդրուի՝ սխալ չ'ըլլար, մանաւանդ
ուր որ յարարերեալ բառը ներգործութեամբ դը-
րուած է. զորօրինակ՝ Ո՛վ է որ ասէք ցքեզ. կրնայ ը-
տուիլ նաեւ՝ Ո՛վ է որ ասէ ցքեզ: — Որ համբերիցէն
ի սպառ., կամ Որ համբերեսցէ ի սպառ.: Բայց յօգը
կ'աւելցուի վայելութիւն, ոյժ եւ շատ անգամ բացա-
յայտութիւն տալու համար:

Ս յօգ.) Ես որ կոչեցայս անմահ՝ ահաւասիկ ի մեռա-
նել երթամ: Ես որ անմահ խոյն-եցայ՝ անա մեռնելու
կ'երթամ: Պէն էօլմէզ տէնիլմիշ իքէն՝ իշխէ էօլմէյէ
կիտէյօր ում: Զօք ունիմս զայս տաց քեզ: Մեք
մասնեմք ի հանդիսան որդ հաւատացաք: — Զի՛նչ
է այս զօր ասէս ցմեզ: Տէրն զայս մարմին զգեցաւ՝
որ զանդիտէս ի շարչարանաց, որ դողայս ի բռնու-
թեննէ մահու, որ խռովիս ընդ վախճան կենաց: —
Վայելեսցուք ի բարութիւնս որ կանս: Ո՛չ աւասիկ
ամենեքեան սղքա որ խօսինս** Գալիլեացիք են:
Զպարտիս իւրեանց հատուցանեն այսուիկ զօր տանս
տանել նոցա: Սա որ իշխերս ի վերայ թագաւորաց:
— Այս որ եղեւ՝ ոչ էր եղեալ: Եւ սմա եւս որ կո-
չեացս զիս ի ճաշ՝ ոչ առնում ակն. (Ես ոչ այս մօր-
դէն որ շէս սեղանի կանչեց՝ ակնաթուղիս կ'ընեմ): Առ-
այժմ զօր ասացաւ՝ զայս ի մօրի կալարուք: Որ մնա-
ցեալքս են՝ եւ սղքա մի՛ վրիպեսցին:
Զունի զգը ի սոցանէ որ ընդ իսօ են: Աւելի ինչ

* Յորթիւրիւ բառն ան է՝ զորն որ յարարեական բառը
յառաջ կը բերէ. ինչպէս Ա մասին մէջ ըսինք, (երես
51.) Սո՛տա որ խօսինս՝ Գալիլեացիք են. հոս յարարե-
րեալ բառն է սո՛տա: Աօր ուր օտարքս են. յարարե-
րեալ բառն է սօր: — Շատ անգամ յարարեակն
իրօք դրուած չ'ըլլար եւ լուկեայն (զօրութեամբ) կ'ի-
մացուի, ինչպէս յաջորդ Ը Գլխոյն մէջ կը տեսնենք:

Հասարակօրէն « եւ որ յօգ դրուած խօսքին մէջ յա-
րարերեալ բառը ներգործութեամբ կը գրուի:

** Որ գերանունն անհոլով մնալով իրբեւ յոգնակի ալ
յաճախ կը գործածուի. քիչ տեղ նաեւ այս, այդ, այն:

նշանս առնել քան զոր սոյս առնէ: Կարող լինիս
ամենայնի հասու լինել՝ զբոց մէքս ամբաստանեմք
զգմանէ:

Այս որդի իմ է որ կենդանիս է: Չայս որ փոքրս
էր՝ ոչ թողոյր: Ասա ուր օտարքս են՝ այսպէս պայ-
ծառացան: Որ ինչ առաջիս կայ՝ յայս եկեացուք:

Դ 304.) Տեսէք զինչ լուքդ: Տեսէ՛ ինչ ինչ էլ լուք:
Կէօրին թի նէ իշխակիօր սունուզ: Ես դիտեմ՝ զբո-
շարեցիդ: Հասո՛ ինձ զոր պարտիսդ: Չինչ է այդ
զոր գործեսդ: Դու որ տիրեսդ զօրութեամբ՝ հե-
ղութեամբ դատիս: Չինչ է այդ զի խորգասդ: —
Ո՞վ է որ ասեց ջքեզ՝ թէ տուք ինձ ըմպել: Չի
ասէքդ Աստուած՝ բարիդք ասէք: — Ո՞ր են գաքս որ
կանդ աւագիկ. որ անցանենդ: Այդ զի տեսրդ
զիս եւ հաւատացեր: Հաստատուն կաց յայդմ՝ զբ-
ուսարդ: Չինչ իրք են վասն որոյ եկիքդ: Չի զար-
գացայքդ յառաքինութեան: Որ մկրտեցաւդ՝ դա է
որդի իմ: Վասն այդբ զոր արարդ ընդ ձեզ:

Առաքեմ զքեզ՝ զոր եսդ բժշկեցի: Դուք որ յիող
հաւատացէք՝ փախերուք ի լերինս: — Չոր ինձդ
ասես թէ չեմ արժանի՝ զզոյն տեսուն ասաւ: — Չո-
րոյ դուքդ վկայէք: Լինելոց է այդ զոր գայդ մար-
դարեանայ: Տեսանե՛ս զինչ դարայդ գործեն:

Որ ի սուգդ ես՝ ծիծաղին եւ խնդա: Չոր այժմդ
ունիս՝ չէ քս: — Չիարդ այժմդ տեսանէ՛ մէք ոչ
դիտեմք: — Ած զձեզ յայդ՝ յորում այսօրդ կայք:
Որ չեւդ էք բժշկեալ, որ չեւդ էք սրբեալ:

Ե 304.) Հանից զոր եկուլն՝ ի բերանոյ նորս: Անոր
իլլածը քերնէն պիտի հանեմ: Եութատուղունու օնուն
աղզընտան չըգարաճաղըմ: — Չոր կամիմ զայն
առնեմ: Գուցէ ոչ որդիսիս կամիցիմ գասնիցեմ
զձեզ: Ես նոյն եմ որ խօսեին: Աղաչեցի զքեզ կալ
յեփեսոս՝ միւ իրթային ի Մակեդոնիա: Տամ դմա
զկէս ընչից իմոց զոր բերին: Գարձայց ի տուն իմ
ուսոյն ելին: — Չոր պատրաստեցերն ո՛ւմ լինիցի:
Ուսափ՝ իցէ զոր ունիցիս: Ուր պանդխտիցիս՝ ոչ
բանայցես զբերան: — Որ չէն ջառկոս՝ ոչ եթէ

վաղվաղակի դժած գաանի: Ար խնդրէն յայտ առնէ
 թէ չեւ եւս եզիտ: Հարկ է այնմ որ սիրէն՝ զայն-
 մանէ զոր սիրիցէն հոգալ: (սիրուն է-ր սիրածը հոգա-
 ւո- է:) Ար որբէն եւ որ սրբին՝ ի միոջէ էին: Ելին
 տեսանել զինչ իցէ որ գործեցաւն: Աչ որ զրկեցաւն
 միայն հեծէ, այլ եւ որ զրկեացն: Ի նոյն երթայ՝
 ուսոյ առաւն: Աչ զի մեռաւն՝ այլ զի խաչեցաւն՝
 այն աւելի են զարմանք: Չոր պարտեալքն հատու-
 ցաք: Արոյ խնդրենն, որոյ աղաղակենն, որոյ հայ-
 ցենն՝ ապ Աստուած զբարութիւնսն: Տեսցուք ՚
 շատ շահի, որդ առնուցունն թէ որդ ապցենն: Ա-
 րարին որդիս ուսանն:

Ար առաքեացն զիս. կամ — որ զիսն առաքեաց:
 Ա-ր երթամն, կամ — ուր ենն երթամ:

Ես որ զիսն սիրեն՝ սիրեմ: — Չոր գուն շինեցեր՝
 աւերեցին: Աչ աւանիկ այն զոր է զոր գուն աղար-
 ատէիր: Ընդ որ գուն տրամիս՝ նա ուրախ լինի: Ապ-
 րեցուցես զոր քեզն լուիցեն: Այս քեզ մամնայ,
 եւ այնմ որ զքեզն շունիցի: Աստուած է տեր, եւ
 ոչ զորժ գուքն կարծեցէք: — Պարտ է խնդրել
 յոմե նայն եղեւ. (չայն յորժ նա եղեւ:) Մի լուի-
 ցուք զոր նորայն լուան:

Ի ինչ գծնդակ ախտ՝ զոր սուրն կոչեն: Մինչ մա-
 նուկն էիր՝ անձամբ անձին գօտի ածէիր: Չոր յուն-
 կանէն խօսեցարուք՝ քարոզեցի ի վերայ տանեաց:
 Չոր անիրաւութեամբն ժողովեցաք՝ արդարու-
 թեամբ թօթափեցուք: Ար յազարակին իցէ՝ մի
 դարձցի յետս: Լաւ է որ մարգարէանայն քան զայն
 որ ի լեզուսն խօսիցի:

Ար պիտայն չիցէ՝ զինչ անկ իցէ մեզ: Աչ գիտացաք
 որդիս արժանն էր գիտեւ: — Ընդէր բնաւ խօսեա-
 ցիս զոր ոչն գիտիցես: Ար չեւն էր ծնեալ. որ չեւն
 էր բնաւ ի լոյս եկեալ: Ար յետոյն դայցէ՝ եւս աւելի
 պարտ է բերել: Արդիս ցանկն ասէի՝ եւ այժմ
 ասեմ: Արդ չարաչարն տեսանէին՝ յիրաւի կուրա-
 ցան: Ար կարին իսկ չարաբարոյք իցեն: Ար մտա-
 դիւրն ծառայեաց:

Գու՛ ես որ գալոցն ես. ես եմ որ գալոցն եմ: Որ
 Ինչ լինելոցն էր՝ ահա եղել:

Խառն.) Տացի մեզ որ ասեմք՝ ասել, եւ ձեզ որ լեզբք՝
 հաւատաւ: Մի թէ ի վայր ինչ իցենք քան զմեզ
 որդ կարօտանամք՝ նորա որդ չկարօտանան: Այս
 որ էջ՝ նոյն է եւ որ ելն: Որ երեւինս եւ որ ոչն
 երեւին: Որ այժմս կեամ մարմնով՝ ոչ ինձ կեամ՝
 այլ այնմ որ սիրեացն զիս:

Այսպէս եւս՝ Որ խօսիմս իսկ. որդ ուսուցանելս
 պարտեաք զնոսա. յորմէ հետե մտեալս եմ. այս որ
 իջանէս. զմեզ որ լեւեմք. այսք շոր արարեքս. սոցա որ
 նստինս: Ջոր Ինչ մեքս գիտեմք. որդէս զիսս տեսա-
 նեք. ինձ որ տրուպս եմ. որ այժմս կատարի: — Որ
 եղերք որդի. դուք որ մեռեալք էիք. որ ծիծաղիքք
 այժմ. որ կանոք աւագիկ: Ջոր դուք առնես. որ
 մարդդ ես. որ ոչք իմանաս. դու որ հետիք շրջիս.
 շոր այժմք լուարուք: — Աստուած Որ էն. շոր Գա-
 նիէնն ասաց. որ Սովտերն կոչէր. որդ զայսն կամին.
 զու՛մ շարն խօսէր. շոր պարտն էր ասել. զի ողորմե-
 ցաւն. զի դատարկն նստէր. յորժամ պիտոյն եղել. յոր-
 ժամ փակեցանն. յորժամ զայրանալն պարտ էր. իբրե-
 մեղանն. որդէս սւսոյցն զձեզ. աւելի քան որչափ կա-
 մերն. որչափ ինձն պիտոյ իցէ. զինչ դուն ասես. շոր օրե-
 նակ նգրայն կործանեցան. որոյ իւրն հրաման տուեալ
 էր. (որոնց Ինչ հրաման որոտծ էր:)

Է. Վոյն կերպով բուն հարցական բառերուն
 յաջորդող մասանց բանի վրայ ալ յօդ կը դրուի: Այս
 ոճը շատ յաճախեալ չէ:

Ջի՞րք կամս հիացեալ: Ի՞նչպէս աղշա՞ծ իցեր եմ:
 Նա՞սըլ շա՞մըլ գալմըլ բմ: Ընդէ՞ր զըկիցիմս: —
 Ջի՞նչ խօսիսք, բեկանես զմեզ երկիւղել: Ջի՞րք
 երկնչիսք ի աստանայէ: Ջի՞ խորելք զիս քեզ կա-
 միս: Վասն որո՞յ եկիրք: Ջի՞ մոլիքք: Ջի՞ լայքք:
 — Ընդէ՞ր ոչ նայն հարկանէր:

Ը. Բ՛սինք վերը (Թիւ Ա.) թէ յարաբերական
 բառէն անմիջապէս ետքն եկող բառին վրայ կը դրուի
 յօդը. սակայն կ'ըլլայ երբեմն ասոր հակառակն ալ:

1. Յարաբերական բառին անմիջապէս յաջորդող բառն եթէ նախադաս յատկացուցիչ կամ անական՝ (երբեմն նաեւ եթէ հետը կապուած մակբայ) մ'ունի, յօդը գլխաւոր անուան վրայ կը դրուի՝ որ յարաբերականէն զատուած է, այսինքն յատկացելոյն ու գոյականին վրայ². Ինչպէս.

Ջորս միանգամ Գործոյ սօփաբն լեալ էին սպանմանն՝ բմբռնէին զամենեւեան: Ջամբնն որ (Մանգլ) սպանուելուն օքնակոն եղած էին՝ քանեցին^{**}: — Մեզ որ Գրէսփոսի շքրակնիս եմք: Որ ամենեցուն ժրէլից ես: Որ հանդիսի տեսողից էք: Որ արտայի իրենդրակն էին: — Սա որ անուանեալ Գրէսփոսեայ է: Որ Կործեալ սիւնին էին: Որ ճշմարիտ Օծեալն է: Որ սփոյգ այրիին իցեն: Որ երեց եղբայրն էք: Որ քաղած ոսկին մթերիցէ: — Որ յառաջ հաւածիչն էի, (կամ որ յառաջն հաւածիչ էի:) Որ Կարէ ստողջին իցեն. (կամ որ Կարէն ստողջի իցեն.) եւ այլն:

2. Երբ յարաբերականին յաջորդող բառը պէտք եղած գէմքի յօդը չի կրնար առնուլ. զորորինակ՝ դու եւ նա՝ օ յօդ չեն առնուր. այսօր, այժմ՝ ն յօդ չեն առնուր, թէպէտ պէտք ալ ըլլայ. եւ կ'ըսուի՝ Մինչև ցայն տեղի՝ ուր այժմ Հոռմն կայ, (չըսելու համար՝ այժմն) Առաքեա յոյր ձեռն առաքելոցն ես^{***}:

3. Երբեմն լոկ զարտուղութեամբ կը գտնուի յօդը յարաբերական բառէն հեռացած. ինչպէս.

Թէ ակն քո չար է՝ ղի ես առատս եմ: Ձի այժմ աստո նստիմք: — Որ ոչ երթասք զհետ: Երոյ գուք չարախօսէքք զգմանէ: — Ձմկրտութիւնն

* Մանուանգ երբ նախադաս յատկացուցիչն իւր յատկացելոյն հետ միացած մէկ բառ կը համարուի. ինչպէս. Գործոյ սօփաբ. հանդիսի տեսող. ծառայից երեց. սփոյգ գոտուանքան. սաղարս գոփաբ. եւ այլն. տես եր. 249: Նոյնպէս իբր մէկ բառ կը համարուին՝ Իկալ հատեալ, եւ նմանները. Ընդէր բնաւ՝ որ Իկալ հատեալ է՝ հրատարէք ի սմանէ: Որ հատարտեալ Կարեալ է ի վերայ իրացս այսոցիկ: — Ասոնց վրայ յաջորդ Եղուածին մէջ:

** Ըթանիին, (բանեցին.) տես եր. 277, Ա ծան:

*** Ի յեռն նախադրութեան պատճառաւ՝ որ յօդ չ'առնուր:

զոր ես մկրտելոցն եմ: Որք ընդ նմա ի խաչն ելեալ էին: Որ ի Սամարիա բնակեալն էին: Որ զաստուածս անարգենն. եւ այլն: (Փխկ՝ շի այժմս աստ. զոր եսն մկրտ... որ ոչք երթաս. յորոց գուքք չարախօսեք. որ ընդ նմայն ի խաչ... եւ այլն. որ սովորական ձեւն է:)

Թ. Հօգի համաձայնութիւնը կամ մերձաւոր բառերուն հետ գէւքի կապակցութիւնն որ Յօդուածիս մէջ տեսնուի, իմանալու է նաեւ ամէն ցուցական բառերու վրայ՝ որ «, որ, ն դիմորոշներով կազմուած են. զորօրինակ՝ այսպէս, սոյնպէս, քոյնչպիսի, նոյնպիսի, աւտօիկ, ահաւանիկ, այսօր, այդրէն, անախ, անտուտ, եւ այլն. ինչպէս բազմաթիւ օրինակներն ըստ բաւականի ցուցըցին* : (Ցես նաեւ եր. 165, ծան:)

Վիմորոշ յօդերուն նշանակութիւնն ու համաձայնութեան կանոնները փոքր ի շատէ մանրամասն (թէեւ ոչ ճշգիւ կատարեալ) աւանդեցինք, տեսնելով թէ ոչ բաւական մտադրութիւն եղած է գրարարի այս էական եւ գլխաւոր մասին վրայ:

* Երբեքս զորոց մէջ աւերելոյթ անհամաձայնութիւն կը տեսնուի յօդերու. ինչպէս « եւ ն դիմորոշներու խաւանակութիւն այս խօսքիս մէջ. Ս» է որդին ձեր զորքէ դուքն ասեիք թէ կայր ծնաւ: Սակայն գիտնալու է՝ որ հոս զորք գերանուան յարաբերակն ոչ «» է՝ այլ որդին յեր, որուն հետ ճշգիւ համաձայնած է դոստին: Իսկ «» եւ որդին բառերուն գէւքի տարբերութիւնն անկէ է՝ որ մէկն (որդին յեր) անուն բայի է, եւ միւրը («») ուղղական խնդիր բնութեան. իբր թէ՝ Ս» է այն որդի յեր: Այս փոքրին կանոնաւոր ձեւը յաճախ կը հանդիպի: Ահա այս այն այր է որ...: Ոչ այս այն Մուշեղն է՝ որ...: Ոչ նա է սա՞ զոր խնդրէինն սպանանել: Այսպէս է նաեւ՝ Ահաւաքիկ տեղին՝ ուր եզին զնա. (այսինքն՝ այդ այն տեղի է՝ ուր...): Ոչ դոստ էջէք որ խօսեցիքն. եւ այլն: Ցես նաեւ եր. 291, Թիւ Դ. եւ եր. 298, Բ ծան: — Աստիք եւ նմանները կանոնաւոր են, ինչպէս ըսինք, եւ տեսնուած անհամաձայնութիւնն աւերելոյթ միայն է:

Իսկ զարձեալ հին ընախ դրոց մէջ հոս եւ հոն յօդերու իրական անհամաձայնութիւններ որ երեւան կ'եւլին՝ զբազարոց աղաւաղութիւնք են, որոնք հաւատարմազոյն օրինակաց վրայէն կ'ուղղուին:

ՅՕԳՈՒՆԺ Բ.

ՅՕԳԵՐՈՒՆ ՈՒՐ ԵՒ ԵՐՐ ԴՐՈՒՒԼԸ

Նախագիտելիք: — Գրաբար հայերէնի յօդառութեան մասին՝ Որոշեալ անունները կը զանազանունին Ընդհանուր որոշեալ եւ Մասնաւոր որոշեալ. եւ ըստ այնմ՝ յօդ կ'առնուն կամ չեն առնուր: — Այս հիման վրայ հաստատուած յօդառութիւնը գրաբար հայերէնի առանձին յատկութիւնն է:

Այս Յօդուածին մէջ յիշուած ընդհանուր եւ մասնաւոր մտօք առեալ անուններն Որոշեալ են: Անորոշները նախընթաց Յօդուածին մէջ տեսանք:

1. Ընդհանուր որոշեալ անոռանց յօդառոյթիւն:

Ա. Ընդհանուր մտօք առնուած գոյականները՝ (որ այս ինչ կամ այն ինչ մասնաւորը չեն ցուցընէր,) թէեւ որոշեալ ըլլան՝ գրաբար անյօդ (առանց յօդի) կը գործածուին, — մասնաւանդ վճռական խօսքերու մէջ: — Կ'ըսենք անյօդ՝ բայց ոչ անորոշ. անոր համար ալ իրենց հայցականը միշտ զ նախգրիւ է*:

Բուռն է իբրեւ զմե՛ծ օեր: Մահուած լա՛ք սասորի՛ է օերը: — Գիտո՞ւնի՞ս հպարտացուցանէ, այլ օեր շինէ: Յոյս ոչ երբեք ամաչեցուցանէ: Նախանձ կուրացուցանէ: Տրտմո՞ւնի՞ս մահ գործէ: Բազում չարիս ուսոյց դատարկո՞ւնի՞ս: — Օրէն՛դ սիրեն մարդոյ: Հասորո՛ք առանց գործոց մեռեալ են: — Որ սիրէ շիրտո՞ք սիրէ շի՛մաստո՞ւնի՞ս: Որդեակ, ի բաց արա շրտմո՞ւնի՞ս ի սրտէ քուսմէ:

* Գրաբար լեզուի մէջ անյօդ բառի մը որոշեալ թէ անորոշ ըլլալը ճանչնալու կ'առաջնորդէ հայցականը: Եթէ խօսքին փոքր փոփոխութեամբը, (այնպէս որ ուղղականը հայցականի դառնայ,) տեսնես որ հայցականը զ նախգրի կ'ուզէ, նշան է թէ անոր ուղղականն որոշեալ է, թէեւ ընդհանուր մտօք ըսուած ըլլալուն համար յօդ կ'առնուր: Այսպէս այս խօսքին մէջ՝ Նախանձ կուրացուցանէ. նախանձ որոշեալ է, վասնզի եթէ հայցականի գործընէս՝ զ նախգրի կ'ուզէ. Չնախանձ՝ քանզի կուրացուցիւ է՝ տեսն արդարը:

Այսպէս անյօգ կը գործածուին Աերացեալ բառերը*։ Աբդարոսիւն, զրիոսիւն, աշխարհոսիւն, ժոզ, լարիտ, մահ, կեանք, եւ նմանները՝ քանի որ մէկի մասնաւորուած չեն։ (ինչպէս որ մասնաւոր են ասոնք։ Ընդ վայր է աշխարհոսիւնդ. ի մարդկանէ է խորհուրդդ. Ոչ որպէս յանցանին՝ նոյնպէս եւ շնորհին. — եւ անոր համար յօդ առած են։)

Բայց ասոր հակառակն ալ կը գտնուի. Ջօրէ՛նն ինչ խափանեմք. քաւ լիցի։ Ի հաւատոցն արգարացուք։ Կեանքն յայտնեցան։

Բ. ‘Մանապէս շատ իրական եւ նիւթական բաներու անուններ անյօգ կը մնան՝ երբ այս ինչ մասնաւոր հատը չեն ցուցններ։ ինչպէս.

Ոգի մարմին եւ ոսկերս ոչ ունի։ Հոգին մարմն ու ոսկրոյի վանի։ — Մարմն ցանկայ հակառակ հոգոյ։ Բողոքն պատի զծառովք**։ Ատի՛ծ որոյ լինի գարանակալ։ Ջիւղի ասեն թէ հեղձնու յանոյշ հոտոյ։ Երկաթ ցուրտ է առ ի շօշափել։ Թեթեւ է փայտի բնութիւն։ Հայր փայտոյէ զբոյրի։ Բարոս շրջէ ու աիւք իւրովք զբարբն։ Ջրագլմն կորոյս գինի։ Գինի ուրախ անէ, եւ հոց հաստատէ զտրոս մարդոյ։

Այսպէս ալ մասնաւորապէս մարդ, մարդիկ եւ ասոր նմաններն իբրեւ ընդհանուր որոշեալ՝ անյօգ կը բանին։ Ապաքէն իբրեւ ի ստուերի շրջի մարդ։ Մարդոյ՝ որպէս խոտոյ են աւուրք իւր։ Ջմարդիկ եւ զանառան կեցուցանէ Տէր։ Կին երկնչիցի յառնէ իւրմէ։

Եթէ մասնաւոր որոշեալ ըլլային՝ յօդով պիտի բուռէր։ Առաջնոյ մարդոյն՝ մինչ չեւ յանցուցեալ էր՝ հնազանդ էին գազանքն։ Մարդիկն երկրին չար էին։ Կինս ետ ինձ ի ծառոյ անտի։ Կինն պատրեցաւ եւ յանցեաւ։ Ոչ է բարւոք մարդոյդ միայն լինել։ Գնաց այրն եւ պատմեաց։

* Աերացեալ կը կոչենք հոս այն անուններն որոնց նշանակածը թեպէտ արգեամք կայ եւ կը կատարուի, բայց ի՛նչ, այլ մի՛մակ մը, կամ գործել մը, կրել մը, եւ այլն, ինչպէս օրինակներէս կը տեսնուի։

** Մեկնողարար՝ հարկ է յօգով բուել՝ Կանեփուկն թուփ ինչ է։ Հունկըն կատարած աշխարհիս է։

կայ ասոր հակառակ՝ յօգով ալ ընդհանուր որոշեալ: Ո՞րք ի մարդկանէ գիտաց ինչ զմարդոյն. (մարդասն մէկ բանը:) Արար Աստուած զմարդն՝ ուղիղ, եւ նորա* խնդրեցին զխորհուրդս շարութեան: Ոչ եթէ ի գտառապարտութիւն ինչ, լինի մարդոյն տանջանքս գիւաց: Աղուէն՝ ցուցանէ զբարս նենգաւոր մարդկան:

Գ. Այն ամէն բաներու անուններն՝ որ բնութեան մէջ միակ են, ուստի եւ իրենց անունը զիրենք կ'որոշէ, թէեւ մասնաւոր որոշեալ բառեր են՝ առանց յօգի կը գործածուին: Այսպէս են՝ Աստուած եւ Տէր, երկն, երկիր, աշխարհ, ծով, ցամառ, հիւսիս, դժոխք, աստուայ, գիր կամ գիրք (սուրբք)**. եւ դարձեալ տարբրց անուններն եւ նմանները:

Ոչ արեգակն յընթացից դադարէ, եւ ոչ Լուսին կասէ ի մաշէլ եւ ի ընուլ, եւ օդք ի շնչելոյ ոչ դադարեն. եւ ոչ ծով ի սահանս ծփանացն, զեղեալ սահմանն ոչ կարացեալ անցանել. եւ ոչ երկիր բառնալ կրել՝ դանդաղի զամենայն: Պարտ էր ձեզ եւ յաշխարհի իսկ ելանել: Աւազ առ եզր ծովս: Ճշմարտից հաւ-

* Երբեմն եզակի անուն մը յօգնակի գերանուամբ յառաջ կը բերուի, երբ այն անունն ոչ մէկ հատ այլ բազմութիւն կ'ազնարկէ: Այսպէս այստեղ՝ զմարդն եւ նոսա. եւ վերջ եր. 293. յոսն եւ ի նոյնն: Յես վարը եր. 336:

** Քրիստոնէական լեզուաւ՝ Տէր կը նշանակէ Աստուած, իսկն յօգով՝ մասնաւորապէս Քրիստոս կ'իմացուի: Աստու Տէր զտէրդ ի գլխոյ քումն: Այսպէս ասէ Տէր: — Ասէ Տէրն յաւետարանին: Մարիամ օծ զՏէրն իւղով: ՉՏէրն ի խաչ հանին: Այս յօգը սովորաբար ուղղականի եւ նախդրիւ հոլովոց է:

Առտեալ առանց յօգի բայց մասնաւոր որոշեալ մտօք՝ կը նշանակէ յատկապէս զՊօղոս առաքեալ: Առտեալ ասէ թէ այլ մարմինք են երկնաւորացն, եւ այլ մարմինք երկրաւորացս: Առտելոյ առեալ զերեսս ամենայն մարդկութեանս՝ ասէ... Դուք ոչ գիտիցէք յԱռտելոյ՝ զի...: Ոչ ապ թոյլ Առտեալ թէ...:

Արոյ բառին համար ըսած ենք՝ թէ նաեւ որոշեալ մտօք՝ անյօգ կը բանի շատ անգամ. (եր. 254):

Մասնաւորապէս՝ երկրն եւ աշխարհն յօգով՝ յատուկ գուռա կամ տէրութիւն կամ հայրենիք կը ցուցնեն. (եւ կ'ըսուի) Յաշխարհիս Հայոց. յաշխարհէն կորզէին. (եւ հոնէին): Յունաց աշխարհն. երկիրն Մարաց. եւ այլն: Այսպէս՝ Յաշխարհի ելանել՝ կը նշանակէ մեռնել. իսկ յաշխարհն ելանել՝ այս կամ այն երկրէն գուրս ելլել:

ատացելոց ոչ կարէ ստատանայ փորձութեամբքն
ստանանել: Ջձկունս մեծամեծս ծովածինս՝ վիշապս
կոչեն Գրէր: Կայ իսկ ի Գրէ՛ թէ զբո՛ն զովացուցա-
նէ ցօղ. եւ զհօր բորբոքեալ՝ շիջուցանէ Լուր:

Առանձին դէպքերու մէջ հարկ է յօդով ալ որո-
շել. ինչպէս. Աստուածդ ձեր ոչ փրկէ զձեզ. Աստու-
ծոյն Գանիէլի: Աստուածն չճանաչէր (կրւր.) եւ չաս-
տուածքն երկրպագութիւն առնուին: Տեսցուք՝ քո
աստուածն զի՞ արասցէ: (Սուտ աստուածները միշտ
յօդով.) Ջաստոյն աստուածոյն Հռեմիայ: — Նոյն-
պէս տեղւոյ մը միայն մէկ որոշ մասը: Չեւ եւս
յայտ է թէ ցերբորդ ինչ մասն երկինս ասիցէ, զի
ոչ ասէ թէ մինչեւ ցերբորդ երկինն: — Ահա-
ասիկ երկիրս անզաւակ է: — Ջի՞նչ արասցուք եւ
դադարեցէ ծովս: Ի ծովն առաջին (առջեւ) եւ ի
ծովն՝ որ յետոյ: Ի ծովն Աղի: Կայր Յիսուս յեզր
ծովուն. եւ աշակերտքն չէին հեռի ի ցամաքէն:

Գ. Լուելի յաճախ՝ անուանց յոգնակին անյօդ
կը մնայ: Ջայնր զփորձ ոչ միայն Կրիստոսի՝ այլ եւ
հեթանոսս եւ յոգի գիտեն: Գեւտ հաւատան եւ սարսեն:

Յաջորդ օրինակներուն մէջ կը տեսնուի՝ եզակի
անունները յօդով եւ յոգնակիներն անյօդ:

Են ազգմունք ինչ բնականք յանասունս, որովք
հանգերձելոց իրիք իրաց ազգ լինիցի նոցա. որպէս
Յիոյն՝ ի սմբակէն վարելոյ, եւ եզի՞նն՝ ձմերանի ընդ
ալուց կողմն նստելոյ, եւ իսրայոյն՝ վաղ ի մարմանդ
տեղիս փութալոյ, եւ հայից՝ վաղազոյն տարմատարմ՝
չըջելոյ, եւ աղանիւթաց՝ համագունդ երամ՝ երամ
խաղալոյ, եւ ահաւանաց՝ ի ջերին տեղիս գնալոյ, եւ
արջոյ՝ յառաջագոյն քան զձմեռն ի բայոց մտանե-
լոյ՝: — Խելամուտ իցես կարգի Բագմասօփեղաց, եւ
քո՞ բացեալ իցէ զպատրուակ Հայի՞նն:

Ե. Կոյնպէս ածականներուն՝ որ իբրեւ որոշեալ
գոյական անուն (թէեւ ընդհանուր մտաք) գործա-

* Աերջին անյօդ եզակին (արջոյ) կը ցուցնէ կանոնն որ
վերը տեսանք. (Թիւ Բ.)

ծուած են՝ հասարակօրէն եղակին յօդով է եւ յո-
գնակին անյօդ:

Անգրտն անգոսնէ զերաս: Ջերաս անգրտմտ ան-
դոսնեն: — Մի արդարն յարդարութենէն ծուլաս-
ցի, եւ մի իրդաւորն ի մեղսն կացցէ: Ի տեղիս ամ-
դարչոյ հեծեն արդար: — Այն անօրինին: Այն
անօրինաց: — Խոյս տալ ի չարէն եւ զբարին ընտրել:
— Մի պարծեցցի կորն իբրեւ զուղիղն:
Խառն:) Կուրացուցանէ արեգակն զփնջախոնս, եւ
աչացաւքն փնասին ի լուսոյ:

Բայց երբեմն եղակին ալ անյօդ կը գործածուի:
Մորս ի ծիծաղել իւրում բարձրացուցանէ զձայն
իւր: — Կոյր զրկի ի ճառագայթից արեգական: —
Ցանկութիւնք սպանանեն զլաթ: — Մանուկ է եւ
չգիտէ ընտրել զլաթ ի քարոյ:

Իսկ եթէ մասնաւոր որոշեալ են՝ յօդով կը
գործածուին. ինչպէս. Անհնարինն հնարաւոր լինի,
եւ բառնայ թեթեւն զծանրն: Սակաւաւորն ի հազա-
րաւորս եղիցի: Ջօդտակարսն փնասակարս կարծեցու-
ցանել: — Մեռաւ արդարն ի վերայ անարդարոց: —
Կամիմ՝ յեանոցս տալ որպէս քեզ: — Եղիցին լու-
սաւորքք ի հաստատութեան երկնից*:

Ստացականներու համար տես յաջորդները:

Ջ. Երբ խօսքին մէկ մասին գոյականը միւս մա-
սին մէջ միայն ածականով մը կամ ստացականով կամ
յատկացուցչով բացատրուած է, այս վերջինները յօդ-
կ'առնուն.

Ածին:) Մի թողուր զքորեկամ հին, զի նորն ոչ է հաւ-
ասար նմա: — Գինի ունի- չփնասի ի փոփոխմանցն,
իսկ յօրն վաղվաղակի յանդիմանի: — Եթէ ընդ-
էայր դաւը զայս առնեն՝ ընդ չորն զհնչ լինիցի:
— Ստեղծ Տէր զմարդն ի ֆեցերորդոս՝ ասոր, եւ
հանգեաւ յեփնեբորդին: Ոչ զսոյ՛ աղքատն՝ այլ
զհոփոփն. (զայն որ հոգւով աղքատ իցէ:)

* Կայ հակառակ գործածութիւնն ալ. Եղիցին ասովն+յե-
սինք, եւ յեփն+ առաջինք. (փիկ ասովն+ն, յեփն+ն):

Ստցկ : Յիշեալ գրադարանսն է՛մ, զի այսպէս (իցէ) եւ
 +ոյն : Ոչ է՛մ համա՛ այլ +ոյդ լիցին : — Աշակերտն
 Յովնանն — պահեն ստէպ, եւ +ոյդ ուսեն եւ բնագին .
 (այսինքն՝ քո գրադարանն . քո համադ . քո աշա-
 կերտդ) — Քանզի է Յեանն մարմինն կատարեցան
 կեանք եւ մահ, եւ է մերոմն կատարեացի : Նա հան-
 դեաւ յիւրոց Գործոց անոյ՛ որպէս եւ Աստուած յի-
 րայոցն : Գեղեցիկ քան զ+ոյդ՝ հանդերձ զգենուն :

Յտկց : Աւաւելուցու արդարոմնիւն յեր քան զդպրացն :
 Ձմեր Ռոգոմարոմնիւնս խոտեաց եւ զկայսերն ըն-
 տրեաց : Յ՞ր ասուողել կործանեացին . ի յԱբելոնն ,
 ի Մակեդոնն եւ յայլաց նոյնպիսեաց : Նա է մարմնոյն
 ցանկոմնիւն հատեալ է, եւ սա յընկեցն :

Բայց յօգն երբեմն չի դրուիր, մանաւանդ երբ
 այն համառօտուած մասն անորոշ է կամ միայն ընդ-
 հանուր որոշեալ : Եղիցին աւուրքն այնդքիկ՝ նեղու-
 թեան . (այսինքն՝ ասուրդ նեղութեան) : Ձլեզու մար-
 դկան խօսիցիմ եւ զհրեշտակաց : Ոչ խնդրեմ զանձին
 օգուտ՝ այլ զՔաղմաց :

Է. “Նոյնպէս՝ եթէ գոյականն ամենեւին յի-
 շուած չէ՝ միայն յօգը բաւական է գոյական մը լռե-
 լեայն (գորութեամբ) իմացընելու . ինչպէս .

Անտի եկին յիւրեանցսն . (իբենց մարդիկներուն ե-
 հան) — Յիւրսն եկն, եւ իւրքն զնա ոչ ընկալան :
 Ի նոցայոցն մերս հաւատարմագոյն լինի . (այսինքն՝
 ի նոցա Քանկեցն՝ մեր Քանս հաւատ...) : Ա՛ռ զքոյդ եւ
 երթ : Այս եւ իմ շատ, քեզ լիցի քոյդ : Ձիցէ՛ ինձ
 իշխանութիւն յիմս : — Որ արամբին է՝ հոգայ
 զաշխարհին . (այս է՝ զաշխարհի իրս) : Խափանեա
 զմանկոմնիւնն . (զմանկութեան իրսն) :

Նաեւ անյօգ : Մի զք զանյին եւեթ խնդրեացէ,
 այլ եւ զընկերին : Եթէ որ իւրոց խնամ ոչ տանիցի՞ :

Այս երկու ձեւով (Թիւ 2 եւ Է.) լռելեայն
 իմացուած գոյականին համար՝ տես եր . 250 :

* Իսկ այն գէպերուն համար՝ ուր բայ մը գորութեամբ
 կ'իմացուի, (զորն որ յաջորդ օրինակներուս մէջ մեր
 կողմէն փակագծիւ կ'աւելցընենք) մտադրութեան ար-

Ը. Գարձեալ՝ մակրայ մը կամ երկու այլեւայլ մատուցք բանի մէկ բառ համարուած եւ անական եղած կ'ըլլան, եւ յօդ կ'առնուն, կամ զլխաւոր գոյականը կամ բայը լռելեայն իմացընելով:

Ընդ ողջակէզս եւ ընդ վասն ժողոցն ոչ հաճեցար. (այսինքն՝ ընդ պատարագսն վասն մեղաց մատուցեալս:) Առնիցէ զողջակէզն եւ զկաման: Չլին եւ զտանց պտոճանացն: Տխմարն, առանց դոչբոսութեան. (որ առանց զպրութեան էր):

Թ. Արնայ որեւիցէ մասն բանի, կամ նաեւ ամբողջ խօսք մը՝ իբրեւ գոյական անուն յառաջ բերուիլ յօդով:

Եղեցի ձեր բան՝ այո՞ն՝ այո, եւ ոչ ոչ: Չի՞նչ իցէ այստե՛սին: Թերեւսն ի վերայ անյայտ ինչ իրաց կայ: Եբբայեցին զնո՞ն յաճախ վարէ: Իբբս այս ոչ եթէ առակ օրինակի ինչ իցէ: Իբբ ոչ եթէ չգիտեմ՝

Ժանի են հետեւեալ խօսքերն ու նմաննքը: Այլ որ զբրկեցան միայն հեծէ՛ այլ (հեծէ) եւ որ զբրկեցն: Կամքի ալ սմա՛ որդի՞ եւ թեղք. (եռու): Որտ յայտառածին (սերմանեցան)՝ նորս են որ...: Չգործ Յեռան գործէ՛ որդի՞ եւ ես. (գործեմ): Եմք աւետարանեալք՝ որդի՞ եւ նորայն. (էին): Որ յառաջ հալածի՛ն (էի՛) եւ արգաւատիկ աւետարանեմ: Ելից եւ արարից որդի՞ս միշտ. (առնէի): Չոր ինչ նայի կամք՝ զնոյն եւ ես. (կամքի): Յակոր որ Հեղեայն. (որդի էր): Գիտելի է՛ որ յօդը գրուած է նախնիԹաց յարարեական բռաին պատճառաւ, (բաս Ա. Կանոնի՛ եր. 297.) կամ նաեւ յօդառու բռաին որոշեալ ըլլալուն համար. այնպէս որ՝ եթէ բայը ներգործութեամբ ալ գրուէր՝ յօդը փալու էր, ինչպէս այս խօսքիս ձեջ. Ամատութիւն սոցա յայտնի լիցի՛ ամենեցուն՝ որդի՞ս եւ նոցայն իսկ եղի: Իսկ բայը լռելեայն իմացընողը ոչ թէ յօդն է՛ այլ նոյն իսկ յարարեական բռաին գործածութեան կերպը, — Աւատիկ առանց յօդ գրուածներն ալ. Չէք որ որ քննիցէ, եւ ոչ (դոյ) որ անիցի զմտա: Յառաջ քան ի քանից (հաւանեալ)՝ ի գործոցն մերոց հաւանեցին: Յետո՛ւ Նատայ. (որդի):

* Կայ գրուած նաեւ Այոյն. տես վարը՝ 328: — Մեկնողական խօսքերու ձեջ նաեւ հաս մը գիր իբրեւ գոյական անուն կը գործածուի. Ահաւատիկ սաս ին որով է, կամ Թէ քն ընդ իցէ. (այսինքն, ի նախդիրն որով կամ ընդ շտե՛լ է, կամ գործիական է:) Երկնի՛ առանց արթերն տես, որ է ն. («երկնի՞» կ'ըսէ առանց յօդի՛ որ է ն գիրը):

զուսոյն, այլ սուգ առեալ ունիմ զուսոյնսդ: Եկն զայս յայտ առնէ: Ձեռք խարոց եզ ի միջի: Մովսէս զՀօրէ ստէ զին: Էրն նշանակ է մշանջնաուարին*։ Ջանաջիբը խլել հանել ի մտաց զՍ- իմ ե- սս Կոյն: Ջինչ է այն Փոքր Ի- ս ե- սն: Փոքր ի շարէս խա- փանեացի:

Եթէ ամբողջ խօսք է յառաջ բերուածը՝ յօգը սովորաբար առաջին բառին վրայ կը գրուի:

Ի Սիբեցեան զընկեր Կ Էբրե- զանն Կ: Լինել հե- թանսոաց՝ Ժառանգակիրցս եւ մարմնակիրցս աւե- տեացն. զինչ իցէ Ժառանգակիրցս ե- մարմնակիրցս: — Երն զնսս ի հասարակութեան երկնից ծագել յերկիր՝ զայն նշանակէ թէ...:

Ժ. Վիչ տեղ կը գտնուի նաեւ գոյական գե- րանուանց վրայ յօգ գրուած:

Եղբրուք իբրեւ զես, քանզի եւ ես իբրեւ զձեզք էի: Եւ ես մարդ եմ իբրեւ զձեզք: — Մի ի նոսայն ապաստան լինել: Ջայնսն որ թռչին: Եթէ անդէն ի նմայն է: Եւ նոքա զնոյնսն քարոզեն:

2. Յատուկ անոռանց յօդառոյթիւն:

Ա. Մարդու եւ տեղոյ յատուկ անունները գրեթէ միշտ անյօգ կը բանին, վասնզի ինքնին որո- շեալ են կամ ծանօթ:

Եսիորոս բազում ծնունդս աստուածոց համարէր, (կը համբեր,) եւ Հոսիբոս պաճուճեալ բանիւք զնոյնս ճամարասկէ: Յովսէփ չէ ի միջի, Շմոն չէ ի միջի. եւ զԲեկիմոսն եւս առնուցուք: Ասէ ցԱմն՝ Յիսուս: — Եկին ի Տարն, յԱշտիշար. առ ափամբ Եբրատայ: Գերանուան հեա. Ես Տերտիոս. ես Պապուս:

Բայց կը գործածուին նաեւ յօգով,

1. Եբբ առանձին կերպով որոշել կամ մասնաւ- որել ուզուի. ինչպէս. Ո՛վ է Պաւղոսն կամ ո՛վ Ապո-

* Է. լի, Կոյ, լիոյ բառերուն մէջ բայն անպահ եղած ու գոյականաբար առնուած է: Այլէ զլիոյն իբրեւ զԿոյ: Ձերն լիին վասն լիին յաշտ առնէր. (որ չէրն՝ այնմ որ չէն, կամ այնմ որ չէր):

զոսն: Պաւղոսս այս շրջեաց բազում ժողովս: Մարկիոնս այս: Մովսէսն այն: Ոչ այդ այն Մուշեղն է: ԶՏիրիթն ասեմ, որ...: Այս Գողգոթայոս*:

2. Սովորականէն պարզապէս խոտորելով: Սկսաւ Տերախլոսն ամբաստան լինել: Եղդադն եւ Մովզադն մարգարէացոսն ի բանակին: Առջեցին Ղրղակն յընթրիս: Յետուայն ընդէր ոչ հաւատայցեն: Զբուանն՝ այր մի քաջ առ Տիտանզքն: Ասէ զՅովսեփայն թէ զեղեցիկ էր: — Այժմ լինի պատերազմ զՄիջագետազքն Ասորոց:

Այսպէս ալ՝ Արհմն. Զբուանայն. զԱդամն.** զԳրիգորոյ. Կորիւնս (Ես):

Բ. Ազգի, ցեղի, ևն անուններն, որովհետեւ ըստ ինքեան ածական են, երբ որ գոյականորէն գործածուին՝ յօդ կ'առնուն — ըստ ընդհանուր կանոնի. (Եբ. 308, Ե:) Այսինքն՝ եզակին միշտ յօդով***. Իսկ յօդնակին առանց յօդի:

Զօրքն Պարսից ի ծառայութիւն մտին Ստահրացւոյն: Իբրեւ զայն լուաւ Պարթեւն՝ զերգումն ուխտին յիշէր զոր ուխտեալ էր: Փարիսեցին կայր մեկուսի: — Եկեացեն Հոսոփ եւ բարձցեն զազգ մեր: Գէմ եդ զնալ ի կողմնս Յունաց: Ուսուցանէր զնա յամենայն ուսմունս Պարսից: Ի թիկունս հասանէին Աղուանփ, Լէֆնփ եւ Կասպփ՝ զի զարեան վրէժնփ Ար-

* Յատուկ անունք ալ երբ ցուցական ածականին յետագաս են՝ հասարակ անունաց կանոնով՝ սովորաբար անյօդ կը մնան. եւ կ'ըսուի՝ Այս Մեղքիսեդեկ. այսմ՝ Երուսաղեմի:

** Յատուկ անուններն առանց հարկի ոչ յօդով գործածել հասարակ չէ, բայց կան ընտիր հեղինակներ որ յաճախ կը բանեցընեն՝ մեր ընտանեկան աշխարհաբարբին նման:

*** Յայտնի է որ եզակին ալ եթէ ընդհանուր եւ անորոշ ըսուած է՝ ա՛յցօդ կը մնայ. ինչպէս. Ամենայն Հրէայ որ լուծեց զօրէնս՝ սպանցի: Բայց որչեաւ եզակին՝ եթէ նաեւ յօդնակի մասը գործածուած ըլլայ՝ յօդով կը բանի. Հրեշտակ իմ մերժեացէ զՔանանացիք եւ զԱմփղոհացիք եւ զՔետացիք եւ զԻսելացիք: Կարգեցաւ Գաւիթ ընդդէմ Ասորւոյն, եւ փախեաւ Ասորին յերեսաց նորաս (Այսինքն՝ զՔանանայն. Ասորաց, եւսլլն):

† Զարեան-վրէժն Արփա-անայ. ասն Եբ. 249, Զ. երկու յատկացուցչի մէջ յատկացեալ:

սաւանայ խնդրեցեն : Հրէոյ՝ ի զուր ակնկալու-
թիւն կապեալ կան* :

Ար գտնուի յոգնակի ալ յօգով . Աւհանն եւ
Մերուժանն զորդիս իւրեանց տային յուսումն Մազ-
գեղանցն : Ընդէր որդիք սասանայի կոչին Հրեայքն :
Սագուկեցիքն առնն՝ թէ չիք յարութիւն եւ ոչ հազի-
բայց Փարիսեցիքն խոստովանին զերկոսեան . (այսինքն՝
ընդհանրապէս ամէն Սագուկեցիք, ամէն Փարիսեցիք) :

Բայց յօգնակին ալ ըստ կանոնի յօգ կ'առնու-
եթէ մասնաւոր որոշեալ է . Հրեայքն ազազակէին .
եթէ զգա արձակես՝ շես բարեկամ կայսեր . (այսինքն՝
այն Հրեայքն որ հոն էին) :

Գ . Երբ յատուկ անուանք նախադաս Աերդիբ
(ածական կամ բացայայտեալ) ունենան՝ իրենք սովորա-
բար անյօգ կը մնան, եւ վերագիրը կ'առնու զյօգը :

Թշնամանես զմեծն Անահիտ եւ զմեծն զարին Արա-
մազդ** : — Գետն Երասիս յարուցեալ գայր դարիւ
եւ դարիւ յաւուրս իւրոյ պղտորութեանն :

Այսպէս եւս՝ Քաջք Թէոփիլէ . զսէզն Տրդատ .
տիրանենդն Փիսակայ . ամբարտաւանին Համանայ . զու-
թերորդն զՆոյ . Երուանդեանն Տիգրան . յազատն Մա-
սիս . վերինն Սիոն*** : — Զօրաւարին Մուշեղի . մինչեւ
ի գետն Եփրատ . ի լեառն ՚ Սիոն . ի քաղաքն Տիգրոն :

Նոյնպէս՝ երբ յատուկ անունը սեռական հօլով
գրուած է, (ինչպէս երբեմն բացայայտիչն իւր բացայայ-
տելոյն քով կը գրուի . Տունկ վարդեհոյ) Բնակեալ

* Աշխարհաբար ալ զբարբորի նմանութեամբ կ'ըսենք յօ-
գնակի որոշեալն առանց յօգի՝ Հոյ, Եսմոց, Եգարոց,
Եւայն . փեկ՝ Հայերը, Յոյներուն, օտարներուն :

** Այս կերպ ածականի յօգաւութիւնը՝ միայն յօգի Յե-
ղափոխութեամբ է . որուն վրայ վարը . (եր . 324) :

*** Ար գտնուի ասոր հակառակն ալ : Տիրան զնոյն զոյն չի
գտեալ՝ ի ձեռն մոլեկան Փիսակայն աւ իշխանն Աարազ
արեակեր . (փեկ՝ մոլեկանն Փիսակայ) :

† Անուանց վերինն ծայրի ն գիրն երբեմն իբրեւ ն յօգ
կ'առնուի : Ոչ օրինակին եւ ոչ առն արգարոյ եղեն նա-
խանձաւորք . (նմանօղք) : Մասք ի առն առն ոյնարիկ :
Ի բարձր լեառն Մասիս : Գառն եւ խոյն եւ երկնցն յօ-
րինակ մեծի խորհրդոյն : Ածէք զսէզն պարտակ : Ո՞վ չ
հարսն, կամ ո՞վ փեսայն : Սասակեցի անձն այն : (Փիկ՝
առնն, լեառնն, գառնն, եղնն, հարսնն, անձնն) :

էին զգետովն Եփրատայ: Կամուրջն Տափերայ. բերդն Արտագերից. լեռան* Մասեայ. ի գաւառին Յուզայ, (Տոսպ.) ի գիւղն Երթլայ, (Երէզ.) — նաեւ յետադաս՝ Մինչեւ ի Թիւրյ գիւղն. ի Կարուց բերդն**:

Դ. Իսկ եթէ վերադիրը յատուկ անուան յետադաս է՝ սովորաբար երկուքն ալ անյօդ կը մնան. այսպէս. Մանածիհր ուշուռնի. Ղեւոնդ երանելի. Ջրագաշտ մոգ. Երասի գետ. ի Կարին գաւառէ: (Տես բացայայտչին Գլուխը, եր. 254:)

Բայց անսովոր չէ յատուկ անունն ալ յօդով: Վահանն մամիկոնեան եւ Մերուժանն արծրունի. Մերուժանն վատանշան. — մանաւանդ առանձին կերպով որոշեալը. Երուսաղէմն վերին: Իսկ քանի մը տեղեաց անունները՝ սովորութիւն է այս ձեւով գործածել. Կուաշն աւան. յերէզն աւանի. Անդժըշն (Անյուշն) բերդ. Տափերն կամրջի: Քակէին*** զՆանէական մեհեանն ի Թիւրն աւանի: Տես վարը՝ եր. 324:

Ջատական մտք գրուած կամ առանձին կերպով որոշելու համար աւելցուած յետադաս ածականները յօդ կ'առնուն. ինչպէս. Այս Յովհաննէս՝ մեծս եւ անուանիս. Մանտանոսս այս առաջնորդ էր նոցա, մուկզնեալս: Ջակքէոս՝ մաքսաւորն եւ մեղաւոր. Գաւիթ մեծն. Ղազար մեռեալն. (այն որ մեռեալ էր): — (Ջատական՝ տես վարը, եր. 318, Ե:)

3. Կապակցեալ կամ զոյգ խառնրոս յօրառոյթիւն:

Իրարու կապակցեալ զոյգ բառերուն մէջ առաջին տեղն ունին վերադրան անունները. որ են՝ 1. Ածական եւ գոյական, 2. Յատկացուցիչ եւ յատկացեալ †, 3. Բացայայտիչ եւ բացայայտեալ: Ասանց մէջ

* Տես կրեո 313, ծանօթութիւն Դ:

** Քանի մը հին անեղական անուանց ու ծայրեւ հայցականը սովորութիւն եղեր է իրեւ ուղղական գործածել: Այսպէս են՝ լեռան Մասեայ, (Մասիս) Կարուց բերդ, (Կարո) բերդն Արտագերից, (Արտագերո):

*** Քալիւն, փիկ տիւցիւն. (փլուցիւն) եր. 277, Ա ծան:

† Յատկացուցիչ եւ ածական՝ այնչափ իրարու նմանութիւն ունին՝ որ շատ անգամ յատկացուցիչ մը տեղ տ-

զլխաւոր անուններն են Գոյականը, Յատկացեալն ու Բացայայտեալը. — իսկ ածական, յատկացուցիչ եւ բացայայտիչ՝ զլխաւոր անուան Վերադիչներն են:

Ս. Յօդը, ինչպէս յայտնի է, զլխաւոր գոյականին որոշիչն է՝ եւ ոչ վերագրին. (որն որ աշխարհաբարի մէջ շատ որոշ կը պահուի. Բարի որդի. Հովիւ լախաորը*.) — միայն որոշեալ յատկացելոյ մը քով կրնայ յատկացուցիչն որոշեալ կամ անորոշ բլլալ՝ ըստ իմաստին պահանջելուն. ինչպէս. Իշխաններուն հօգին, կամ Իշխաններու հօգին Աստուծոյ ձեռքն է:

Գոյական եւ ածական:

Բ. Գոյականը՝ եթէ նախադաս բլլայ իւր ածականին եւ եթէ՛ յետադաս, յօղն ինքը կ'առնու՝ ըստ կանոնի: (Միայն յօգի տեղափոխութեամբ կամ կրկնութեամբ ածականն ալ կրնայ յօգ առնուլ. որուն վրայ՝ վարը եր. 324.)

Այսպէս կ'ըսուի՝ 1. Ջհոգեւոր պատարագն,
կամ 2. Զպատարագն հոգեւոր**:

1.) Մանր նաւքն ի մէջ մեծամեծ նաւացն շողան:
Զիարդ ի նոյն ջուրս պիղծ ճճիքն ընդ սուրբ
ձկունսն սնանիցին: Անկոխ դրախտին ճանապարհ՝
մարդակոտոր աւազակաւն նախ բացաւ: Յանշունչ
կուռն յուսացեալք՝ երգնուն սուտ:

2.) Հուչակ հարեք ընդ բնաւ՝ վասն իրացո գործելոց:
Մատեաւ աշակերտն նենդաւոր առ վարդապետն

ծական, եւ ածականի մը տեղ յատկացուցիչ կրնայ գործածուիլ. ինչպէս. Մարդիկն ընութիւն, եւ Մարդոյ ընութիւն: Երկու կեանք կան առաջի, ժամանակաորն եւ յաւիտիկն. (փիկ՝ յաւիտեականն):

* Շատ անգամ երկու գոյականներէն մէկը կամ միւսը հաւասարապէս բացայայտիչ կամ բացայայտեալ կրնայ համարուիլ՝ իրար բացայայտելուն համեմատ. ինչպէս. Քախաւորն հովիւ, կամ Հովիւն թագաւոր: Դարձեալ միեւնոյն անունն՝ այս գոյականին քով բացայայտիչ է, եւ այն գոյականին քով՝ բացայայտեալ. ինչպէս, Հոսմ քաղաք, կը ցուցնէ ոչ Աթէնք այլ Հոսմ քաղաք. իսկ Արեգ տաղտ, կը ցուցնէ ոչ Արեգ տա՛ այլ տաղտն Արեգ:

** Հայցական հոլով կը գնինք օրինակներն, որով յօգին զօրութիւնը լաւ եւս կ'իմացուի: Յես եր. 303, ծան:

Ճշմարիտ՝ համբուրել զնա: Քակեցաւ անտառն տընկախիտ: Առ կուռան անմուռնչս երթայիք եւ գայիք: Խառն.) Էշն՝ անխօսուն՝ մարդկեղէն բարբառուովն բարբառեալ՝ արգել զմարդարէին զանօրէնութիւնն:

Այսպէս ալ՝ Մարդկեղէն բնութիւնս. զխօսուն պաշտօնք. զուղղորդ ճանապարհն. անօր տերեւն. անարար բնութեանն. արագընթաց գնացիւք՝ ի վերին բարձանցն. եօթն աստեղքն* — Աշխարհս՝ ամենայն. բանիցս՝ ասացելոց. իրացդ՝ եղելոց. Ծուրացիքն՝ չարատեացք. տերեւն՝ թանձրախիտ. ալեացն՝ կուտակելոց. առաքելոցն՝ երկոտասանից. զօրն՝ եօթններորդ**:

Գ. Ստացական ունեցող գոյականներուն ալ նոյն է կանոնը՝ եթէ յօդով գործածուին: Իմ որդին, կամ որդին իմ. — զիմ մարդարէք, կամ զմարդարէք իմ. — զիւր ոչխարսն, կամ զոչխարսն իւր. — միշտ գոյականին վրայ դնելով յօդը:

Բայց սովորաբար՝ յետագաս գոյականն անյօդ չի գործածուիր, մանաւանդ եզակին. ինչպէս.

Ոչ վասն քոյ խօսիցդ հաւատամք, զի մեզէն իսկ լուսք ի գմանէ: Քշիստոս զմեր մեղսն իւրով մարմնով վերացոյց ի խաչափայտն: Չձեր առաքինութիւնսն նուիրիցէք այնմ՝ որ զձեզ կոչեաց յիւր սքանչելի լոյսն: Քեզ չէր արժան զքո թագդ աւրեամբ շաղախել: Գիտեմ զի զիմ բերանս շաղախեմ:

Իսկ եթէ նախագաս է՝ յօդի պէտք չունի. եւ կ'ըսուի՝ Հօր եւ Տօր իմում ոչ պատմեցի: Խօսի քո յայտ առնեն զքեզ: Ոստերտ ձեր եւ դոստերտ ձեր. զիւրեի իւր. — թէպէտ շատ անգամ վայելչապէս կ'ըսուի յօդով՝ Եղբարքս իմ. որդւոյդ իմում. մանուկն իմ. յերդմանէդ քումմէ. ուղտուցդ քոց. զթագաւորդ ձեր. այրն իւր, եւայլն: Գալիլեացի ես, զի եւ խօսքդ իսկ քո նման են:

* Քուական ածականներն ալ այստեղ հասարակ ածականաց քով կը դնենք:

** Իսկ Չօր եօթներորդն եւ ասոր նմանները՝ Միջին ժամանակներու գրուածոց (աւելի տաղաչափութեան) մէջ կը տեսնուին. Յօր հինգերորդն. Ծառայ մահաբերին. Երջայ լքբին. օրինաց հոյն. ի իմ երրորդին. ի Գբի ներքնումն, եւայլն:

Դ. Աոր հակառակն է յուցական ունեցող գոյ-
ականներուն կանոնը: Այսինքն,

Յետադաս գոյականը հասարակօրէն անյօդ կը
գործածուի. իսկ նախագասը միշտ յօգով. (ինչպէս Ա
մատին մէջ ըսինք. եր. 46, 47.) եւ կ'ըսուի՝ Այս այր.
եւ Այրս այս: — Միայն քանի մը դէպքերու մէջ սով-
որական եղած է յօգով յետադաս, եւ անյօդ նախա-
գաս, (որ մինչեւ հիմայ ալ քանի մը հեղ տեսնուեցաւ:)

Ինդրեսցի վրէժ յազի յայդմանէ: Յօրէ յայսմանէ
եւ յապա: Յո-ո-ր յայսմիկ, եւայլն: Եզբայր քո
այս մեռեալ էր եւ եկեաց: Անցցէ իողովորք քո
այս: — Թողու Տէր զքո զայդ զանհարին մեղսդ:
Այսու միով գործովս իւրով արդարացաւ:

Ե. Գլխաւոր գոյականէն ետքը Զարական մտգը
կամ զատական ձեւով կը դրուի ուրիշ վերագիր բառ
մը՝ գլխաւոր անունն իւր նմաններէն զատ ցուցընելու
համար. — եւ այն ատեն վերագիրը միշտ յօգով կը
գործածուի, (կամ գոնէ շ նախդրիւ կ'որոշուի՝ եթէ
հայցական է:)

Արծուին մեծ՝ — լայնաթեւն, երկայնատարածն
եկեալ մտանէր ի Լիբանան: Միւսով արուեստիւ կա-
մին (մարդիկ) նմանել Արարչին, — բժշկաց արուես-
տիւն: Զխիղճ մտացն ասեմ՝ — ոչ զիւրն այլ զըն-
կերին: Ա՛ն դու քեզ զքաղբանն՝ շանոյշ, եւ զկըն-
դրուկն՝ զերեւելի*:

Հաս անգամ ալ անորոշ գոյական մը յաջորդ
որոշեալ բառովն իւր նմաններէն կը զատուի: Օրէն
այն կացցէ: Իմ ջերմ կռիւ զայն էր տեսեալ: Հաց
զեր կերիցուք: (Տես եր. 233:)

Յարկացոցիւ եւ յարկացեալ:

Զ. Եթէ յատկացուցիչ եւ յատկացեալ՝ եր-
կուքն ալ անորոշ են, յօգն ըստ կանոնի երկուքին
վրայ ալ դրուելու է. բայց սովորաբար յատկացուցչին

* Երեւի կը նշանակէ նաեւ Բաբելոնի, ինչպէս հոս:

վրայ միայն կը դրուի՝ եթէ նախագաս ըլլայ եւ եթէ յետագաս: Այսպէս՝ չորս կերպով կրնայ ըսուիլ.

- | | |
|------------------------|----------------------------|
| 1. Զճառագայթն լուսոյն. | } (քնականն ու կանոնաւորը.) |
| 2. Զլուսոյն ճառագայթն. | |
| 3. Զճառագայթ լուսոյն. | |
| 4. Զլուսոյն ճառագայթ*. | |
- սովորականը:

1. Խեցզետինն ընկենու քար ընդ անջրպետան պատենիցն ոսարէի: Աշխատութիւնն մշակացն անօգուատ էր: Տէրն ախորժեղի իմն առնէ զսկիզբն քարոզութեանն: (Այս առաջին կերպ յօդաւորութիւնն ամենէն քիչ գործածականն է:)
2. Տեսանեա զԹագաւորին խոնարհութիւնն. տեսանեա զմարգարէիցն ճշգրտութիւնն եւ զգրոցն ճշմարտութիւնն: Մարգարէիցն սերմանցն առաքեալք եղեն հնձողք: Կինն Գնելայ հասեալ առ սուրբն Ներսէս՝ դոյժ արկանէր նմա զիւրոյ առնն տարապարտ կորուստն: ԶԵլլագացւոցն զպերճաբանն. ևն:
3. Զափ աղիւսարկին արկէք ի վերայ նոցա, եւ ծանրասցի էորձ մարդկանն: Եբաց Աստուած զԵբեան օձին: Արդարո՞ւնի՞ն օրինացն հաստատեսցի ի մեզ:
4. Մեղայն խիտ լուծանէ զհոգւոյն շքո՞ւնի՞ն: Եկ եւ տես զբանիցդ հանգաման: Ապրեցան ի Զուրոյն հեղեղէ: Խառն 1, 2.) Եւ ոչ որդիքն Յուսկանն արժանի եղեն Տօրն աթոռոյն:

* Եթէ ըսուի ճառագայթն լուսոյ, կամ լուսոյ ճառագայթն, անորոշ կը համարուի լուսոյ յատկացուցիլը:

Այս չորս կարգերէն՝

Առաջինն (Զճառագայթն լուսոյն) կը վերաբերին՝ Որդիքն Իորայի. արքային Հայոց. զլսոյն լուսնի:

Երկրորդին (Զլուսոյն ճառագայթն) կը վերաբերին՝ Աւետարհի արարածն. Յանայ իմաստունքն. Արարոյ հոգին:

Երրորդին (Զճառագայթ լուսոյն) կը վերաբերին՝ Զաւազ ծովաւ. զլիծս անյրեաց. զքնակութիւն երկնից:

Չորրորդին (Զլուսոյն ճառագայթ) կը վերաբերին՝ Պարտազմայ սկիզբն՝ յագահութենէ մարդկան եղել: Մարդոյ մարմինն ի չորից տարերց խառնեալ է: Գիտաց շարութիւն. ըստ մարդիկան մասնաց. — որոնց նորազգիր մասերն որոշեալ բառեր են, եւ յօգ պէտք էին առնուլ, բայց վերը (եր. 305—308) յիշուած կանոնաց համեմատ առանց յօգի գործածուած են:

Խառն 3, 4.) Գոյն երեսացն ցուցանէր զբաթին Ռե-
թո-նիսն: Վայել աստուածապաշտութեանն յառա-
քինեացն աշխարհ-նիսն էն: Զոգիս մեր պատկեցին
վկայիցս վաստակի, եւ զորս տաճարիս՝ կանթեղացո
լուսաւորոս-նիսն:

Այսպէս եւս՝ Երեզըն մարմնոյն. յուրախու-
թիւնն հարսանեացն. զլար ցանկութիւնն ընչիցն. եւ
զպատճառն եւս զյայտնութեանն: — Զաւուրն ու-
ճիկն ժողովել. լուսոյն ստուերն. հանդիսին տեսիլն:
— Զպարթիսոս քաղաքիդ. զժոքս բանիցն. անսանս ցե-
ղիցն: — Զբանիցն Գեղեցիո-նիսն գովել. իշոյն թնօ-
րիս. գեհնեին փանջանս. զընչիցն փնջանս. ճշմար-
տութեանն նանապարհ:

Է. Յատկացուցչի կարգն էն գերանուանց սե-
ռականները՝ սորա, նորա, նոցա, նոցին, իւրեանց, եւ-
այլն*: Սակայն ասոնք որովհետեւ իրենցմէ որոշեալ
են՝ անոր համար 1. իրենք յօգ չեն առնուր, եւ 2.
իրենց յատկացուցիչն ալ սովորաբար անյօգ կը բանի:
Յերկիւղէ նոցա մի զարհուրիցիք: Յետ սորա՝ սորին
որդի: Հանգիստ նորա մինչեւ ի թոփս նորուն:

Բայց շատ անգամ յօգով ալ կ'ըսուի՝ Արեամբն
նորա. զպաշտօնեայն իւրեանց:

Իսկ ասոնց յետադաս գոյականը գրեթէ միշտ
յօգով է, մանաւանդ յարաբերականներունը՝ որ իրենք
միշտ անյօգ կը մնան. Որոյ գլուխն. որոց մարմինքն. զօ-
րոց ոգիսն. որոյ որսոք: (Յետ ստացականներու համար
ըսուածը. եր. 317:)

Նոցա բանն ստի: Անոնց ըսածը ստոք կ'ելլէ: Նորա
բարեբարութիւնն երեւեացի: Նորա ոգին կախեալ
կայ զդորա սգւոյդ: Զինչ նման իցէ սորա մահո՝
նորայոյն:

Ը. Ի նդհանրապէս յատկացեալն անյօգ կը գործ-
ածուի՝ երբ իւր առջեւն որեւիցէ կերպով որոշեալ

* Ասոնք՝ իբրեւ յատկացուցիչ կամ սեռական՝ միշտ ան-
հօլով են. բայց եթէ զպականաբար առնուին՝ այն տ-
անն միայն կրնան հօլովիլ եւ յօգ առնուլ. զնորայն.
յիւրեանցն. սորայն. (սեռ եր. 198 եւ 310:) կ'ըսուի
Քսոյց ակտուացդ, բայց ոչ՝ Նորայոյց ակտուացն:

յատկացուցիչ մ'ունի. — կամ իւր յատկացուցիչն ուրիշ յատկացուցիչ ալ ունի. (եր. 248, Բ.)

կաց մնա դու, եւ տեսցես զշքոսիւնս մեծամեծ սքանչելեացն: Առաքեցայ առ ոչխարս ի դրոսեալ տանն իսրայելի: Իշեան աշխարհիս այսորիկ: Մայր որդւոցն Ջերեգեայ: Դաւիթ զգնայր ի վերայ Գանեաց Գան թաղաւորին: Ջօրէնս հարց իւրեանց: Ի դրոսնս Գաղտաց ձերոց: — Աքրջիններուս ամէն բառն որոշեալ է եւ անյօդ մնացած:

Կը գտնուի ասոր հակառակ ամէնն ալ յօդով, եւ վայելչապէս ըսուած. Բորբոքէ զՏնոյն հրոյն գեհնին: Եւ այս է բուն կանոնաւորն, ինչպէս ըսինք. սակայն շատ քիչ անգամ կը տեսնուի:

Թ. Յատկացեալն աւելի յօդով եւ երբեմն անյօդ կը գործածուի՝ երբ յատկացուցիչն յատուկ անունն է. եւ կ'ըսուի. Մայրն Յիսուսի. պարիսպքն Երուսաղէմի. զաթոռն Դաւթի. եկեղեցիդ Կորնթացացոց. ի կոսն Փարաւոնի. եւ այլն: — կամ՝ ի իզման Յունաց. յասոննս Պարսից. ի զասոնս Դաւթի. զկոսն Փարաւոնի:

Յատկացելոյն յօդառութեան վայելութիւնը միայն վարժութեամբ կը սորվուի:

Բացայայտել եւ Բացայայտեալ:

Բացայայտչին եւ բացայայտելոյն յօդառութեան վրայ ըստ մասին խօսեցանք ի Գլուխ Գ. (եր. 254.) եւ զարձեալ վերը՝ Յատուկ անուանց յօդառութեան հատուածին մէջ. (եր. 314:)

Յօդը գլխաւոր բառինն է, ինչպէս ըսինք, եւ ոչ վերագրին. իսկ գլխաւոր անունն ան է՝ որուն անուն մը կու տանք. ինչպէս, Ծառն եղեւին. ափ սուտակ. արտոյն Տրդատ. հաւն՝ փիւնիկ. անոնն եկեղեցի:

Ժ. Եթէ գլխաւոր անունն անորոշ է՝ այս ձեւով անորոշ յօդ կ'առնու. Սիմոն ոմն խաղախորդ. քա-

* Հաս կը նշանակէ նաեւ ընդհանրապէս Բուսան:

ղար մի Եփրոնն անուն. — կամ բողոքողին անյօգ՝ Այր մարգարէ. կին մարդ. եւ այլն. ինչպէս յառաջ տեսանք: Տես նաեւ եր. 289, Բ. ծան:

ԺԱ. Եթէ գլխաւոր անունն որոշեալ է, կրնայ յօդիւ կամ առանց յօդի դրուիլ: Այսինքն՝ երբ գլխաւոր անունը (բացայայտեալը) նախագաս է՝ յօդ կ'առնու. եւ երբ յետագաս է՝ հասարակօրէն անյօդ կը մնայ:

1. Ամիսն նիսան. } (երկու ձեւն ալ գործածա-
2. Նիսան ամիս. } կան:)

- 1) Տկար Թռչունն աղկիոն Թիւէ զձուս զեօթն օր: Աքանչելի է հաւն արմաւ, սակայն Թռչուն մի անասուն անբան: Գնաց պատանեակն մարգարէ յՌամաթ*: Բխեցին անդունդք զայրն մարգարէ (զՅովնան): Գետս Յորդանան շուրջ զմեզք պատեալ է: Առնն Թագաւորի. անապատն Վազէս. Լն:
- 2) Արեգ օրն հասեալ է աւասիկ, գարուն է ժամանակս: Յուրախութեան նաւասարդ առար: Ի միաշաբաթոջ առար: Նոյն անձրեւ ընդ ամենայն աշխարհ ցօղէ, եւ իջեալ՝ լինի ի շուշան ծաղիկ սպիտակ, եւ երփն երփն կապուտակի հարկանէ յակինթ ծաղիկ: ** Այն դք ի կոկորդիղոս Գալանէ սաստակեցաւ: Այրարատ Գաւար. Հրեաստան երկիր. *** Եւն:

ուջ տեսանք. եր. 214: Ասի յգիւլ նորս զկեանս մինչեւ ցամօն . . : Ի գեւղ է կարծեւ՝ Մովսէսի զսա գրեալ: Յորժամ տեսանիցեն նորս իբեւ զայսպիսի շարչարանս. (Թէ նա կրեաց): Տեսանես նորս վասն քո զերկինս յգիւլ եւ զերկիր հասարոյեալ: Չօրավարի ուրեմն ետես փրկեսոցոս մի՛ գեղ բժժանաց ընդ անձն արկեալ: Փէլնո՞րայ ՚ը պետաւ որ զօրավար ՚իւր իրայ բժժանս իտեբեր եր: Պատմէ Յովսէպոս՝ սովով եւ սրով հարիւր եւստն թիւրոց իորոբեալ: Գտանիցես առ Ներոնիւ ինչնայաւաւ ի գլուխ ելեալ եօթներորդացն Գաննէլի:

Շողոմոյի հետ խաղաղեալ Աներեոյն:

Է. Որպէս զի, մնչ զի, մնչե՞* շողկապներէն ետքն եկած աներեւոյթը գիմաւոր բայի սյժ ունի: — Աներեւոյթի հետ որպէս զի՛ կը նշանակէ այնպէս որ. իսկ մնչե՞ կամ մնչ՝ կը նշանակէ այնչափ որ:

Այս աներեւոյթին անուն բայի տրական կը տրուի՝ շատ քիչ բացառութեամբ:

Էր հայր Յորայ՝ Չարեհ, որդի որդւոյն Եսաւայ, որպէս զի մնել նմա հինգերորդ յԱբրահամէ. (այնպէս որ հինգերորդ կ'ըլլայ): Որպէս կրկին իսկ մնել շինուածոյն Հուսայ. (փիկ՝ որպէս զի):** Մինչ զի եւ հաց անգամ չժամանել ուտել նոցա. (չժամանէին նոքա): Ժողովեցան բազումք՝ մնչ եւ տեղի եւս ոչ մնել եւ ոչ առ գրանն. — մնչե՞ ի նաւ ժողովել նմա: Մինչ ամենեւին դուլ եւ դադար չիտանել: Եղեւ պատանեակն իրեւ զմեռեալ, մնչե՞ բազմաց իսկ տել թէ մեռաւ: Չարմացան ամենեքին, մնչե՞ հծծել ընդ միմեանս եւ տել՝ զի՞նչ է այս:

* Մնչե՞ շողկապը զսա է մնչե՞նախադրութենէն: Ա՛րքնն որ է կամ յ նախգրիւ ինգիր կ'առնու՝ ժամանակ սահման կը ցուցընէ. իսկ առաջինը լիկ աներեւոյթով՝ օտարութեան չափ: Այսպէս՝ Մնչե՞ յյամտել իրայն. մնչե՞ որ ջուրը ցամքեցաւ. մնչե՞ ջրոյն ցամքելը: — Մնչե՞ յամտել իրայն. այնչափ որ ջուրը ցամքեցաւ:

Կ'ըսուի նաեւ գիմաւոր բայով՝ Մնչե՞ պարպարեի ուսկանք նոցա: Չատ է դարձեալ մնչ, մնչե՞ մակբայն այլեւայլ նշանակութեամբ. եր. 153:

** Որպէս կը գրուի երեքն փիկ որպէս զի:

Ինչպէս մնչե՛ն նախադրութիւնը՝ նոյնպէս մնչե՛ն շաղկապը կը գտնուի վերջահարցով աներեւութով ալ: Հարին զնոսս՝ մինչեւ շնորհ ի նոցանէ ասպեալ: Մինչեւ անյոյս լինելոյ մեղ եւ ի կենաց: — Բայց այս չէ սովորականը:

Ինչպէս կամ անկե՛ր Անբերեալն:

Ը. Երբեմն խօսքի մէջ աներեւոյթ բայ մը գի՛մաւոր բայի տեղ կը գտուի՝ առանց ուրիշ բայէ կամ շաղկապէ մը կախում ունենալու. այլ միայն իբրեւ ուրիշ նախադասութեան մը նախընթաց կամ հետեւորդ, կամ նաեւ իբրեւ առանձին նախադասութիւն: — Այս ձեւը շատ ազատութիւններ ունի:

Ընդէ՛ր արուեստագէտ միայն համարիցին (զարարիչն) եւ ոչ ի չգոյէ ի գոյ օձել զհասակս ամենայնի. (փիկ՝ եւ ոչ՝ ին ի չգոյէ ի գոյ օձեցե): Եթէ կարծիք յանցանաց էին գեւք, ոչ երբեք զմարդիկ ի կռապաշտութիւն յօժարեցուցանէին, եւ ոչ ընդ աստեղս ոչո՛ցօնել. (պշուցանէին): Միշտ հպատակ կայցես յաղօթս, եւ բազում զուարթութեամբ արևոսն կալ. (կայցես): Ի բոց իօնափել այսու հետեւ զամենայն չարութիւն. (թօթափեցէք): Ծառայք՝ հնազանդ լինել տերանց: Սոյնպէս եւ կանայք հնազանդ լինել արանց իւրեանց, ի զարդ խոնարհութեան զարդարել զանձինս: Ըստ պատուոյն որ տուաւ (քեզ)՝ արժանի վարս ցո՛ցօնել. եւ զերկնից առաքինութիւնն առաքինեաց*. (վարս ցո՛ցօնել): Ոչ իբրեւ զոչխարս ի մէջ գայլոց՝ կեղեքիցիք, այլ քան զառիժ եւս ահագին լինել: Ոչ այժմիկ ծաղկօք լի է երկիր եւ յոբանել զոյդիս. (յոբանեն կամ ժամանակ է յատանելոյ էն):

Շատ անգամ արգելական խօսքեր այս կանոնով կը ձեւանան:

Մի՛ գուք առաւելս ինչ իմանալ քան զոր գրեալն է: Մի՛ յայլ ինչ ունձալ: Եթէ դք եղբայր անուանեալ՝ կռապարիշտ իցէ, ընդ այնպիսումն եւ հաց մի ուտել:

* Առաքինի բայի հրամայական: Յես եր. 239, Բ. Չբարեք նախնին նախնիել:

Մէ՛ բազում վարդապետս լինել, եղբայր իմ: Մէ՛ զան-
ձանց եւեթ փոփել, այլ իւրաքանչիւր զընկերին:
Սիրելիք, մի օտարոտի համարել զեռանդն ինչ որ ի
փորձութիւն ձեզ լինիցի:

Երբեմն եւ աներեւութի վերջաւորութիւնը կը
զանուի եւ զրուած՝* ընդուն. անցելոյ նման:

Սուրբ են սատ առաջի գերեզմանաց վէճ փոփու.
(փորել): Իշխեցին զինամն Աստուծոյ երկնիք չափ
փոփու: Ա՛ղիք ինչ էին Աստուծոյ ընդ մարդկու-
թիւնս իջեալ շրջու. (արգենիք մը կար շրջելու):
Դուք աւաղիկ կամիք օտար տերանց ծառայեալ: Ա-
մենայն իշխանք մեծամեծք այփոփու գային արքային
Պարսից: Ջհերսն զանգրագեղս (Ներսիսի) զվայե-
լուչ թագազանդուր վարսիցն՝ զայն ի բաց իոյ՞ալ
հրամայէր. եւ ընդ նմին զվայելուչ պատմուծանն՝
զայն ի բաց պատատեալ հրամայէր: Ոչ գիտեմ ոչու-
տեալ երեսաց: Ամէր յոյ՞ալ գետպանս. են:

Տարակուսելի կը մնան տանը՝ յաջորդ եւին
պատճառաւ, որ երբեմն իբր զարդ կ'աւելցուի: Եւ եղև
Պաւղոսի շրջու զվերին կողմամբքն եւ իջանել յԵփե-
սսս**: Չմարթի յսկի համակեալ եւ արտասուսարկանել:

Բաւական հիմն չունինք ենթադրելու թէ առ հա-
սարակ գրագրաց սխալ ըլլայ աներեւութի տալ ձեւը:
— Եթէ ե՛՛ լծորդութեան նախնական ձեւը մտա-
ծուի եւ՛, եւլ եզած ի հնուց, նոյն ձեւին թաղարդ-
ները համարուելու են գրեա, գրեաց, արեւ, արեւ
ղար. թաւայէր եւ գրգրեայր. երկնայր զի ծնանիցի. ոչ
դարձրեայ (ոչ գաղարե.) մէ ինայտար, եւայլն, որ գրաց
մէջ կան:

Այսպէս եւ աներեւութին իւր անցելոյն հետ նոյնա-
նայուն նմանութեամբն՝ ուրիշ լծորդութեանց ալ

* Շատ քիչ անգամ նաեւ ալ աներեւութի վերջաւորու-
թիւնը. Ձերեւալ սկսան զօրքն. փիկ՝ դեւալ. ինչպէս
կայ նաեւ կար. արգեաց փիկ արգաց. — որ յատկապէս
ու եւ զ գրերուն վրայ ըլլաւուն՝ առփնին գիտելիք
ունին. եւ ոչ գիւրաւ գրչի վրեպակ համարելի են, (ինչ-
պէս որ վրեպակ կը համարինք՝ յարեւալ փիկ յարեւել:
եւ նմանները):

** Բնագիրն ունի՝ Շրեւալ Իւնիւ յԵփեսոս:

իրական անցեալն երբեմն աներեւութի տեղ կ'ան-
ցնի. ինչպէս. Յարեաւ Եսթեր Իրիտւ ի սենեակն
արքայի: Դորին խրատդ անշնորհ արտու զգրոն իշ-
խեաց: Յարժամ մերժեցաւ սուրբն Ներսէս, եւ ոչ
դք գոյ՛ ընդդէմս թագաւորին, այնուհետեւ ըստ
կամոց չարութեան իւրոյ գնացեալ լինէր նա: Երա-
նեւոյն Մաշթոցի պարգեւէր վիճակ Սասունժոյ՝ Հայ-
րապետն չափուն ընտւ ծնունդս նորոգ՝ նշանագիրս
Հայերէն լեզուին: (Փխկ՝ յարեաւ Իրիտւ. Թանկ իշ-
խեաց. ընդդէմս կամ-ցող թգրին, ընտւ ծնունդս):

Այսպիսի ցանցառ ձեւերն՝ որ նախնեաց ալ ա-
մէն կարգի զբուսածոց մէջ չեն տեսնուիր, ներեւի չեն
համարուիր նորուներու:

3. Ընդունելութիւն Ներկայ և Ապառնի:

Ա. Բայերու խոնարհմանց մէջ միայն ոչ ընդու-
նելութիւն ներկայ կը յիշուի սովորութեամբ. բայց
աւելի յաճախ կը գործածուին իչ եւ լի. — որոնց
երեքին ալ պէտք եղած գիտելիքներն ըստ բաւականի
աւանդեցինք Ա մասին մէջ. երես 127, 128:

Բ. Ընդ. ներկայ՝ կամ ներգործական բայի է եւ
կամ չէզոք. — կրաւորական չկայ գրաբար: Բաց ասկէ՝
շատ բայ կայ որ ոչ եւ իչ մասնիկ չեն առնուր. որ վար-
ժութեամբ միայն կը սորվուի:

Գ. Ու, իչ, լի՝ երեքն ալ երբեմն իբրեւ բայ կը
բանին, երբեմն իբրեւ ածական. եւ երբեմն նաեւ
իբրեւ գոյական. եւ կը գործածուին առանձին կամ
խնդրով. եւ կը հօլովին եզակի ու յօգնակի:

Դ. Խնդիր սեռի ամէնքն ալ հաւասարապէս
սեռական կ'առնուն՝ իբրեւ բոյի մասն: Իսկ խնդիր բնու-
թեան՝ իրենց նշանակութեանն համեմատ այլեւայլ
հօլով: Հայցական խնդիրն ընդհանրապէս հայերէնէ
օտար ոճ է:*

* Ու ընդունելութիւն կամ բայածական, որ առ հասա-
րակ յաճախեալ չէ ընտիր մասննագրաց քով, ընդ-
հանրապէս առանց խնդրառութեան կը բանի՝ կամ իբրեւ
գոյական, ինչպէս. ծնող. հշոգ. Կնայն. եւ կամ
իբրեւ ածական, ինչպէս. սյր Բորչոցոյ. թոյնք օդա-
նոգ. զօր պարբալոյ, եւ այլն: Իսկ եթէ խնդիր առ

Աւասիկ օրինակները:

Բայ.) Լաւ բնդ լաջող, խնդաւ բնդ խնդաջող: (Նշխար հացի) որ յաւելաւ ի կերողացն: Կորիցէ փախուսա յընկաջողն. (վազողը չկարենայ փախչիլ): Աստուած հաճեցող ողորմութեան է: Բազումք ի լաջաց բանին հաւատացին: Եթէ լինիցի դք պահանջող բնութեան ջուրցն՝ թէ յէր վերայ կայցէ, բնաւ ամենեւին մի տացուք պատասխանի: Գոհացող լինիջիք զԱստուծոյ: Մի լիցուք ցանկացող չարեաց. (խնդիրը կրնայ հոս տրական ալ համարուիլ): — Բարեաց արբիչ է Աստուած եւ ոչ չարաց իրաց: Մէք փառաւորեմք զհարբիչն նոցա եւ զյորինիչ: Փառաւոր տանէին զբոնիչն այնպիսի իշխանութեան: Զգրկիչն աշխարհաց: Ապահանիչ էն միմեանց. գրիչ չարեաց. զբժոցիչ ի մահուանէ. յարոցիչ ի զլորմանէ. հարճիչ յանցանաց. եւն: — Լինիջիք տանիչ բանին եւ ոչ լիւիչ միայն: Յուդա եղեւ առաջնորդ ունելեացն Յիսուսի: Աչք նոցա լի են տան փողաղն որ առ ոտան յառնէ մարմելեացն եւ ելանելեացն: Եթէ մեծ իցէ գործն քան զտանել գործոյն: Գործն եւ գործելն առ հասարակ տանջեացին: Բանիբունք՝ յատեանս ջատագով զրկելոյն լինին, բազում անգամ իսկ եւ զրկելեացն. (նաեւ զրկողներուն):

Ածկ.) Տէր հոգոցանող է: Յանդգնեցան ոմանք ի շրջաւ Հրէիցն: Գատարկանձունք, շրջող տանէ ի սուն: Օգագնացն թռչնոց ոմանց ոմանց լեզուքն ճուղղէ եւ ճնոողէ եւ կանչող էն: Մարդք արհամարհող, այդանող. այր խօսող, կերող եւ արբեցող: — Ի կերիչ եւ կերակուր: Այլ դք զարջոյ թոճիւն առեալ կատախչու սուսցանէ: Հուր ծախիչ. գայլ ապահանիչ: Ապարաճեցոցիչ եւ արհամարհիչ. միջնորբիչ. ողբեցոցիչ. եւ այլն: — Անասնոց կէտքն կրելի էն

պէտք է սովորաբար որ գերանուամբ կը գարձուի. ինչպէս քիչ մը ետքը կը տեսնենք: — Կորու, գրիչ եւ քանի մը նմանները հասարակ անպահի կարգն են:

* Ը՛գով (արթ) բայն ընդուն. ներկայ չունենալուն՝ անոր անդ արբեմամբ բայինը գործածուած է արբեցող, որ թէ փնտցող ըսել է եւ թէ պարզապէս ի՛նչ:

եւ կէպ ուրիշի. (ոմանք բեռ կրելու եւ ոմանք ուտուելու. — ներգծ. եւ կրւր:) Բանս նախատանաց խնթելիս ի նոսա արձակէին. (կսկծականս:) Բանք ինտնթելի. բանք պարելի. (Թախանձողականք, պատրիչք:) Հասարակ ածական. Երեւել նշան. շարմանալ. հասարակ. ցանկալ. սիրել. եւայլն:

Գ. Գ.) Ըուրջ եղեն ի ծագի ի հրապարակս: Ներողի եւ աղեղնաւորք մտցեն անգր: Անգրէն կրկնեալիք որպէս (կրկնիցի) կնոջ յոճ իւր. (ինչպէս որ ցորեն քաղողն իւր ցորենին վրայ կը ծռի:) Որ իցէ տուն փեսանոցն. (մարգարէին:) — Ոչ արարածք կարեն քննել զարարելն, եւ ոչ զանգուածն զլանգելն գիտէ: Բառնի սչ կարեն այնպէս սպիտակացուցանել: Իբրեւ զմի դի է կատուաց: Հրեայք որ երգմեցոցն էին: Գրելն ոմն Հռոմեանոս անուն: Յովհաննէս Սիրտիլ: Բարողի. աւերաբանի. Բնակի. Բորնի, (սասանայ.) եւայլն: Հասարակ անուն. Գրել երկաթի. Բրել. յեւել. (գործիք:) — Որպի անմիտ՝ ցաւք են ձնանելաց. կամ՝ Տրամութիւն է ձնելացն. (այսինքն ծնողաց, ծնողին:) Ատելոյն մեծաբանեալ էր ի վերայ իմ. (այսինքն՝ Թշնամուց:) Հասարակ անուն. Ամել. ունելի. հայել. արկանել. Բաւանել. լեւել. փեսանել. եւայլն:

Իսկ գերանուն խնդրոյ տեղ սաացական կը գրուի հարկելի: Իմաստութիւն գիւրաւ գտանի խնդրողաց իւրոց, եւ հասանէ առ ցանկացողս իւր: Օրհնեցէք զանիծիչս յեր. բարի արարէք ատելաց յերոց. (զձեզ անիծողները. զձեզ ատողներուն):* Ընդունելի է՞ ես գու, ապաւէն իմ. (զիս ընդունող:) Ի հալածչաց իմոց ապրեցո զիս: Ծանեաւ եզն զստացիչ իւր: Ի փրկչէն

* Սիրելի եւ արելի կը գրուին սիրող եւ արեցող (Թշնամի) նշանակելով. որ սուրբ Գրոց մէջ շատ յաճախ է: Եթէ սիրէք դուք զիւրիշս՝ ձեր, որ շնորհ է ձեր. (եթէ զձեզ սիրողները կը սիրէք.) ո՞չ ապաւէն եւ մեղաւորք սիրեն զիւրիշս իւրեանց. (զիրենք սիրողները.) նոյն խօսքն ուրիշ Թարգմանութեամբ՝ Եթէ սիրիցէք զայսոսի՝ որ սիրին յիւր: Փրկութիւն ի ձեռաց արելոց մերոց: — Այսպէս եւս շատ անգամ՝ սիրուելու, արեցող կարծուածները ներգործական նշանակութիւն ունին. Սիրելի ա-

Տիբե. զբամահիչնն Տիբ. զբարտիչքնն իւր. եւայլն.
— ուր ստացականներն ամէնը հայցականի անդ են:

Ե.] Է ընդունելութեան յաակութիւնն է՝ որ երբ
իրբեւ բայ գործածուի, շատ անգամ եղակի թուոյն
անդ յոգնակի կը գրուի:

Ըստ մտաց յիշեացն առնէր պատասխանի Յիսուս.
(Ըստ մտաց Յովհաննու որ յղեացն:) Ի տախտակացն
խորտակելոցն յայտնի երեւէր Քիբելեացն թախծու-
թիւն.՝ (այսինքն՝ Մովսիսի) Արշակ անշնորհ առնէր
զորպէս պարզելին. (զԱղէս:) Գուցէ հրատարկեք
է իօտելեաց սօսի.՝ (յԱստուծոյ:) Ար չկարկեցէ անեղ-
ծուլ զառակս՝ ատելոյնն ինչս ասուծիցէ. (առեղ-
ծողին, գանողին:) Թուզ որ թէ շարժեցի՝ անկցի
ի բերան սօտելեաց. (կերողին:) Բարիք ինչ՝ զոր ըն-
կերին կամկցի դը առնել՝ նախ զտրջելոն ուրախ առ-
նեն: Եթէ դը գացի որ զրողեալն թագուցեալն գու-
շակեացէ, ինչքն եւ ստացուածքն հաշակելեացն լե-
ցին. (իմաց ասողին:) Հասեալ են մանկունք յեր-
կունս, եւ չիք զօրութիւնն ի ծնանելիս. (ծնողին, մօր
վրայ:) Ի բամբաստանս արկանէ զայլիս ծնանելեաց ի-
րոց. (ծնողին, իւր հօրը:) Ոչ ընդ չափ արացն հայի
Աստուած՝ այլ ընդ կամս Կալեացն. (ասողին:)
Չբռնազատէ զկամս չկատելեացն՝ ակորժել զառա-
քինութիւն. (չկամեցողին):

Չ. Ը ատ սովորական է ընդուն. ներկայի անդ՝
որ գերանուն կամ մասնական անուն գործածել գի-
մաւոր բայով. մասնականք երբ հետը ինգիբ ունենայ:
Նոյնպէս երբեմն ընդուն. անցելոյն անդ: — Գիմաւոր
բայով՝ ընդունելութեան անցած ժամանակն ալ կը
ճշգուի. (վասնզի գրաբարը չունի փետած ըլլալ, ամկ.
կիօրփիւշ օլան ժամանակը):

Նուան քոյ. ողջոյն ասը օրելեաց մեքոց. (զմեզ օրողնե-
բուն.) խոստացաւ օրելեաց իւրոց. (չբոկու համար՝ օրող,
օրողաց, զփոյնզ, ինչպէս բնագիրները կը ցուցնեն):
Նոյնպէս ընդունել է իմ ներգծ. է, եւ ընդունել է ինձ՝
կրաւորական անական:

* Նոյն խօսքերն ուրիշ գրոց մէջ՝ Յայտնի եղեալ անասնէր
Քիբելեացն թախծութիւնն: Գուցէ հրատարկեք յոյն-
մանի որ իօտելեացն:

Որ հարկանէ զծնօս քո՝ դարձս նժա եւ զսրանն. (բաս
յաւն.՝ հարկանօղն զծն. քո դարձս եւ զմ:) Որ հաժա-
քնցն ինչ ո՛ր պիղծ՝ նժա է պիղծ. շար այնմ՝ մարդոյ է
որ խղճիւն ուրիցե. (բաս յաւն.՝ պիղծ համարողն ինչ՝
է պիղծ. շար է մարդոյ խղճիւ կերպի.) Որ ուրի՛ն՝
զայն որ ոչն ուրի մի՛ անգոսնեացէ. (կերպոյն զվերո-
ղը:) Ո՛չ այն ո՛ր ինչ է որ րնկեացն եւ ոչ որ զշուրն
եք, այլ որ անեցոյցն Աստուած. (ոչ անկած բլլողը
բան մի է. եւ այլն:) Մացէ ի տունս գողոց եւ ի տունս
որոց երգնոցոսն սուտ.՝* Մարդոյ անվշտի եւ յաջո-
ղելոյ յամենայնի, եւ որ կարող էցե տակաւին: Այնմ
որ զլարն քործէցե. (չսեւլու համար՝ կարող տակաւին.
քործողն զլար:) Որ ընտրանաւն ինչ ո՛ր էցե՝ աւելի
իմն պատուական է. եւ աւելի իմն գութ կոյ ընդ
նժա այն որ ընտրէցեն: Ընտրուելեամք՝ եղուն աւելի
յարբի է. եւ ընտրուն աւելի սեր կոնենայ լքան: Ոչ
եղց զուսն իւր հնձողն, եւ ոչ զգիրկս իւր՝ որ շրայն
ժողովր: — Մարգարէին որ ասէ կամ որ ասեր: Չայն
բոցոյ որ ուրիցե զեղէզն. (կերպոյն:) — Անցելոյ անդ.
Դու ոչ գիտացեր զնչ քործեցաւ ի նժա. (գիկ՝ զե-
ղեալն:) Լքցի որ ասացան ի մարգարէէն. (ասացեալն:)

Նայնն աւելի ճշգիւ կը պահանջուի ընդունն. ներ-
կայ շունեցողը բայերուն վրայ. ինչպէս են եմ, ունիմ,
գնեմ, կամ, յառնեմ, ուսնում, գիտիմ. — Բոյ, կոյ, եւն:
Ոյր ոչն քոցե՝ եւ զոր ունիցն՝ բարձցի ի նժանէ:
Չունեցողն՝ ունեցան ալ յեւելն կոնում: —
Չխարզ գժուարին է՝ որ զինչսգ ունին մտանել յար-
քայութիւն Աստուծոյ: Ոչխարք որոց ոչ էցե հովիւ:
Ո՛չ որ կանն եւ ոչ հանդերձեալքն: Վայելեացուք ի
բարութիւնս որ կանն. (ներկայ, հիմակ եղածք. աճ.
վար օլան:) Բարձողքն հաւատացին, եւ որ անկեալն
գնեք անդամալոյծ՝ վայելէր ի բժշկութեան:

Այսպէս նաեւ լոց ապաւնին մինակ եւ յօգով
բործածուելու տեղ՝ յարարերականաւ կ'ըսուի՝ Որ լի-

* Յուսարէնն որ կը յիշեցէ՝ իմանալու է հայերէն թարգ-
մանութեանց բնագիրը:

** Ուրիշ անդ մը բարգ բաւով՝ ի տունս գողոյ եւ ոտրդումն:

նելոցն էր՝ ահա եղեւ. (ըլլալիքն եղաւ:) Որ դաւոցն իցե՛ եկեացէ: Տես եր. 351, ԻԵ: (Փիկ ըսելու՝ լինելոցն եղեւ. հալոցն եկեացէ:) Բայց կ'ըսուի նաեւ՝ Ձգալոցն պատմացէ. (եր. 56):

Է. Ընդուն. ներկայ շունեցող բայերուն, (որ բազմաթիւ են գրաբարի մէջ,) շատ անգամ անցեալը կը գործածուի անոր տեղ: Այսպէս կ'ըսուի յոսացեալ, գիտացեալ, մարտացեալ, գնացեալ, կացեալ, նստեալ, աշխատեալ, ջնանցեալ, եւ այլն. յուսացող, փախչող, կեցող, նստող եւ այլն նշանակութեամբ:*

Տեսանիցէք զորդի մարդոյ եկեալ ի վերայ ամպոց. (փիկ՝ զի գայցե. որ կու գայ. աճ. կէկնջօր կէօրեճե՛ + օխի՛շ:) Ձխարդ գժուարին է յոսացելոց յինչս մտանել յարքայութիւն երկնից. (փիկ՝ յոսացողաց:) Անց այն ամենայն իբրեւ զստուեր, իբրեւ զնաւ սանեալ ի ջուրց կուտակելոց, եւ իբրեւ զհետա հաւու թոսացելոց յօդս: Ձքարբա թոսացեալ. (սահող նաւ, թուշող օձեր:) Տեսանէր Մովսէս երկուս արս ընդ միմեանս մարտացեալ. (փիկ՝ զի մարտնչին, կամ փնչ քեմ մարտնչին, ինչպէս է ուրիշ գրոց մէջ:) Իբրեւ զծառայ երկոցեալ ի տեսունէ իւրմէ, եւ իբրեւ զվարձկան որ սպասիցէ վարձուց իւրոց: Տարայց զնա ի տուն մը իմոյ եւ ի սենեակ յընցելոցն զես: Ոմն ի զերծելոց անտի պատմաց Աբրահամու յայնկոյս կոցելոց. (մինչ կայրն յայնկոյս:) Գուռն իմ բաց էր ամենայն եկելոց. (եկողներուն:) Ընթացք անասնոց կայտելոց: Հողազործին աշխատելոց:

Երբեմն նաեւ ընդ. ներկայ ունեցող բայերուն: Օրհնելն գոհացելոցն է, եւ լալ եւ ողբալն՝ ամնջեցելոց: Ձբանս առնն Աստուծոյ՝ Քարթատելոց. (ըստ յն. Քարթատողի, այսինքն՝ որոյ էր բարբառեալ:) Լինիցիք իբրեւ ընդ օդս իօսեցեալ. (խօսողք:) Եզիտ զարքայն Ասորեստանեայց պարտաշնորհու ընդ Լորնայի: Մէք ձեզ նմանեալ կարեզք մարդիկ եւձք. (նմանողք:) Աստուածս տեսանեմ ելեալս յերկրէ. (փիկ՝ զի ելանն. ինչպէս ուրիշ թարգմանութիւն մ'ունի:)

* Տես նաեւ ընդդէմացեալ փիկ ընդդէմացու. եր. 413:

Այսպէս եւս՝ Ուրացեալ, (փիւկ սուրացող) երկն-
 աց ի պատերազմ. ծառայի քնացելոյ առաջի քո: Ի մէջ
 ծառայելոյն Աստուծոյ եւ ի մէջ զծառայելոյն. նոտելոյն
 ընդ աջմէ. զկնի եկելոյ, (եկողներուն, գալիսներուն.) եւն.
 — որոնցմէ սմանք անցած ժամանակ ակնարկող ընդու-
 նելութիւն են. (տե՛կ. սուրուշ օլան. քալըշ օլան, եւն.)

Ասոնց դերանուն խնդիրներն ստացական կը
 դրուին եւ կը հոլովին. (տես եր. 417.) այսպէս. Տէր
 փրկէ զյոսացեալ իւր. ապաւեն է յոսացելոյ իւրոց.
 (փիւկ՝ զյոսացողս յինսն. յինսն յոսացողաց. որ խորթ են):

Ը. 1] ընդունելութիւնը ածականորէն կը նշա-
 նակէ յարժօր, արժանի, կօրելի. եւ այն ատեն կրաւորա-
 կան է կամ չեզոք:

Որ ի քեզ նախանշելի ինչ է՝ ի ծածուկ պահեալիւր
 ինչ նախանշելի քան որ ունիս՝ ծածուկ պահէ: — Յօ-
 րէնսն զսօտելի անասունսն սուրբս կոչէ, եւ զսօտե-
 լիսն՝ պիղծս*: Մանուկ կաթնակեր որ յայլ ինչ
 կերակուր մտաբերիցէ՝ ոչ պարտելի է այլ արգահա-
 րելի: Այս որ ասացաւ՝ մի ումէք զհատարի կար-
 ծեցի, Ուր սէր է՝ ամենայն ինչ կրելի է. (այսինքն՝
 դէռնի՛ն կրել է:) Նա այնու գովելի է, եպրելի է. եւն:
 — Իսկ լելի վնել՝ լսուիլ, կամ լսելու արժանի հա-
 մարուիլ. (եր. 111.) եւ լելի արնել՝ լսեցնել:

Թ. 1] էական բայով իբրեւ գիմազուրկ կը գործ-
 ածուի, եւ կը նշանակէ՝ պարտ է, արժան է:

Կրնայ այս կերպ գիմազուրկին քով ուղղական
 կենալ իբրեւ անուն բայի (ներգործութեամբ կամ
 լռելեայն). — կրնայ նաեւ հայցական դրուիլ՝ իբրեւ
 խնդիր սեռի. եւ այն ատեն ընդունելութիւնը ներ-
 գործական է: Գործոյն տէրը (ներգործութեամբ կամ
 լռելեայն) արական հայով կը դրուի: **

* Արք տեսանք՝ Միս սօտելոյ. տեղի հոց սօտելոյ. ակնջք
 լելոյ. եւայլն. ասոնք զլիաւոր բային հետ կապուած
 են. Յօցի միս սօտելոյ եւ հանգերձ գիւնոյ. — Իսկ վ՛
 դոյականին որպիսութիւնը կը ցուցնէ:

** Քիչ անգամ բացառական խնդրով. Բռնակալ խոտա-
 պարանոց եւ յԱրոսձոյ ատելի: Նմա ճառելիք էին
 (բանքն), եւ յայլոց ընկերացն անճառք:

Ուղ.) Գինի նոր ի տիկս նորս արկանել է: Նոր թխնին նոր պէկերս մեջ գնելս է: — Եւ ոչ՝ յարժամ ջուլցանէ թէ է սրոյ երկնչիցի՝ հասարակ է. (եւ ոչ այն արին հասարակս է:) Ջնոյն գրեւ առ ձեզ՝ ինձ ոչ ինչ գանդաղել է. (անուռ բայի՝ շնոյն էրել:) Մեզ ոչ ինչ գանդաղել է երկրորդել զպատմութիւնս: Յայլ առակ փոփոխել է մեզ. (սորչել ստակն անցնելս եւս:) Այն ոչ ամենայն ուսմէք հասարակ է: Այսպէս իմանալ է բանս. ոչ յայն միտս իմանալ է. եւ ուղ- զորդ իսկ տել է. եւ այլն:

Հյոյ.) Ջերեւելն Աստուծոյ՝ ըստ կարողութեան տեսողացն իմանալ է: Այսպիսի ինչ է իմանալ զէջո սաստուածեղէն Հոգւոյն: Մեծբայիմ՝ ուստի զառաջինն հարստութիւն Եգիպտացւոցն կարծել է: Չայծն ոչ եթէ բոկանալ տան է. (քակեց ըսածը բոկանալու մտք առնելու չէ:) Ջնոյն եւ զայլոցն իմանալ է: Առ Աստուծոյ անքննութիւնն ընծայութիւն անգիտութեան մարտցանել է: Ջինչ ընդել է ինձ՝ զայն ես ոչ գիտեմ: (Ինդիր սեռի են՝ զբրեւն, զէջո, շնոյն, ընծայութեան, զինչ. — ինչ. բնութեան են՝ այսպիսի ինչ, եւ թոյնալ:)

Ժ. Ասոնց բացասականն այլեւայլ կերպով կը ձեւանայ. 1. չ գրով. չարել. չհասարակ. 2. աւելի յաճախ՝ բառին արմատին վրայ ան մասնկաւ. անճառ, անբառ, անկար, անկողոպոս. 3. շատ անգամ արանց բառով իբրեւ լոկ անական. արանց անելոյ. (անքննելի.) արանց թիչութեան, (անբժշկելի.) եւ այլն. եւ 4. շատ քիչ անգամ այս ձեւով՝ անբժշկելի, անքննելի*:

* Այս վերջին ձեւն ընտիր չէ համարուած նախնեաց քով. անոր հակառակ՝ անոնցմէ ետքը լեզուին սովորականն այս ձեւն ըրած են. անճառելի, անբառելի, անկարելի, անլինելի, անբացբառանալի, եւ այլն: — Երրորդ ձեւը միայն հին հարազատ հայկաբանութեան ժամանակները գործածական էր: Իսկ բարդութիւն հասարակօրէն նախնեանցով կը ձեւանար, կամ գարձեալ բառին արմատով. ինչպէս. Գժուարին ար է բարձալ. ցաւք անհարկնք ար է թիչութեան. ամուրն անհարկն էր ար պարել. — Գիւրահոռ, գիւրայրեաց, եւ այլն. եւ ոչ գիւրահոռանելի, գիւրայրելի, գիւրեմբիւրելի, երգալուսելի, եւ այլն. ինչպէս միջին եւ վերջին ժամանակները:

1. Իրս անարժանս եւ չհաւաքալիս զործէր: Ի գրաց մահաւանէ չհաւաքալի զերծեալք. (մահաբայօրէն:) Ի մէջ ուսեւելեացն կենդանածնաց եւ ի մէջ չըստիւթացն անասնաց: Չախորժովով մտաց մարդկան: Չի այնչափ ծնդիցիմք ընդ չկայս եւ ընդ չծալիս:
2. Անթաթին եւ անտի եւ անհոփ եւ առանց մասանց է արարիչն: Չինչ անհաւաք թուի քեզ՝ եթէ Աստուած զմեռեալս յարուցանէ: Անհաւաք է՝ ի մարմնոյ մեռելոյ որդեծնութիւն լինել: Եւ որ քան զամենայն անհաւաքօրոյն է. . : Աբախութիւնն անխաւաքօրն. անհրապոյրն Գայիանէ, եւ այլն:
3. Արարէք ձեզ քսակս առանց հեռեալոյ. (չհիննալու:) Առանց մնելոյ են դատաստանք Աստուծոյ: Առանց շնելոյ են շաւիղք նորա: Եթէ ճանապարհք նորա առանց հասու լինելոյ են, նմա հասու զք զհարգ մարթիցէ լինել: Քրիստոս առանց անցանելոյ ունի զքահանայութիւնն. առանց փոփոխման ունի զփառաորութիւն: Առանց պարտօնով քալոյ* ես, ով մարդ: Հոգին անքակ եւ առանց թաթովելոյ է: Առանց օայնատելոյ պահեցեր զշաւիղս իմ: — Չար են մեղք, այլ ոչ եթէ առանց թշխոնութան են: (Արնար ըսուիլ նաեւ՝ անփն, անշնեպն, անանց կամ անանցակն, անօայնատ, եւ այլն:)
4. Չանջնջիլ զարեացն չմոռացական տանջանացն կատարեաց զզործան զանարժանս: Յանապօրի անգունդս արշաւանաց: Անմատոյց եւ անբարեմելի: Գարձեալ այլեւայլ կերպով. Եհար զերկիրն հարուածովք անթշխոնութան: Նորա զեղծանելի պատն առնուցուն, եւ մեք զանեղծութանն: Պահեցէ զձեզ, եւ անհնարին յաղնութիւն արասցէ. կամ՝ Անհնարինս առ յաղնութիւն. (անյաղթս:) Որ միանգամ ոչ ընկնելով են՝ զայն մի ընթեռնուցուն: Թէ այն հաւատոյ է՝ այս անհաւաքոյ է. (հաւատալի, անհաւատալի:)

* Նայն իմացիր նաեւ ոչ, էլ եւ իսլ ընդունելութեանց բացասականն եւ բարգութեանցը համար:

* Պարտօնով քալ կը նշանակէ նաեւ արգարացընել, ջատագովել. եւ պարտօնաւորութեան զատագովութիւն:

ցական խնդիր սեռի ասոնց անբնական խնդիրն ըլլալէն կ'իմացուի՝ Թէ դրաբար հայերէնն ասոնք իբրեւ բայ չ'ընդունիր, — ուր որ ուրիշ լեզուաց մէջ բնական է ասոնց հայցական խնդրառութիւնը:

4. Ընդունելութիւն Անցեալ:

Ա. Ընդուն. անցեալն երեք կերպով կը նկատուի. 1. իբրեւ Ածական, 2. իբրեւ Բայ, եւ 3. իբրեւ ներգործական Բայ եւ Ածական:

2-էնք յիշեր մինակ թողուելով Գոյական եղած անցեալն՝ ուրիշ ամէն ածականներու օրինգը, (եր. 308.) ինչպէս. Առտեալք. Տոցեալք յիսրայէլէ. զաղբեալն ի սրոյ. խնդրել զիւրոսեան. կանխագէտ հանդերձեւոց. յանցոցեւոցք. ասացելովք. զնորա ասացեալն. (անոր ըսածները.) — միայն այս վերջնոյն վրայ ետքերն ըսելք կ'ունենանք:

Բ. Յիշեալ երեք կերպ անցեալներուն առաջինն եւ երրորդը հոլովական են. իսկ երկրորդն անփոփոխ է ամենեւին եւ անյօդ: — Այս է ընդհանուր կանոնը:

Գ. Երեք դէպքին մէջն ալ անցեալն իւր բայական խնդիրը կրնայ հետն ունենալ՝ այլեւայլ հոլով ըստ բային պահանջելուն: — Աւասիկ երեքին ալ օրինակը:

1. Ետես զաշակերտան հողմկոծեալ ի վարելն:
2. Ջոր քարջեալ պաշտօնէիցն եկին բերին ի Թորդան:
3. Պատահեցէ ձեզ այր մի քարջեալ սափոր ջրոյ. (Ջրէ սափոր շալի՞ծ քարք ճը:)

Ընդունելութիւն անցեալ՝ Ածական:

Գ. Ընդուն. անցեալն իբրեւ ածական՝ (այսինքն գոյականի որպիսութիւն ցուցընող,) կը հոլովի եզ. ու յոգն. ըստ կանոնի հասարակ ածական անուանց. եւ ուր պէտք ըլլայ՝ յօդ կ'առնու: Գոյականին նախադաս ըլլալով ալ շատ անգամ մէկտեղ կը հոլովի: — Իսկ իբրեւ ստորոգելի (ուղղ. կամ հյց. խնդիր բնութեան) կրնայ եզակի ալ յոգնակի ալ դրուիլ. նոյնպէս բաղադրեալ ժամանակներուն մէջ, (յարակատարի, եւն:)

Ո՛վ մահ, իբրեւ զի գառն է յիշատակ քո մարդոյ
 իտղազացելոյ յինչս իւր, առն անվշտի եւ յաջոյելոյ
 յամենայնի. բարի է գառատառն քո մարդոյ կոչո-
 րելոյ, կոտցելոյ յուժոյ: Կրկին կալաւ զնոսա հե-
 ծութիւն անցելոյ յիշատակաց: Յիշատակ իջաւորի՝
 միոյ աւուր Գնացելոյ. (մէկ օր քալած ճամբորդի. —
 փիկ՝ ղի՛ օր գնացելոյ. աստ եր. 437:) Յորդութիւն
 ջրոց հոտելոյ բռնութեամբ: Արեգակն լուսաւորէ զօգս
 իտարեալս. փայտայէ հայր զորդի զբարւոյք ծառայ-
 եալն նմա. (օր բարւոյքն ծառայեալ իցէ:) Զճոցելոյ
 ասնջանաց լցեն զպատիժս: — Ոչ ինչ ընդ վայր
 ոսացեալ է բան իմաստնոյն: Ղօղեալ համարէին
 զանձինս ընդ գաղանեզք մեղացն: Հաւատովք իմա-
 նամբ հաստատեալ զլաւիտեանսն բանիւ Աստուծոյ:
 (Իբրեւ խնդ. բնութեան կրնար ըսուիլ՝ ղօղեալս:*)

Այսպէս եւս՝ Գահայք զարդարեալ. աթոռք ան-
 իեալ. (չարուած աթոռներ. փիկ՝ արկեալ. եր. 85.) ի
 վերջաւորս փոխոյեալս. վիմաց հալովելոյ. զօրութեանցն
 երեւեցելոյ: — Հանդերձելոյ աշխարհին. վասն եղելոյ
 զօրութեանցն. (կարգէ դուրս եղած բաներուն համար.)
 մի ոմն ի կտիելոյ չարագործացն. յոսացելոյ իբաց.
 պոսոսեալ առասպելեաց զհետ երթալ. եւսյն:

Ե. Մասնաւորապէս բաղադրեալ ժամանակնե-
 րուն համար միւսք առնելու է՝ որ յոգն. թուոյն մէջ
 շէզըք եւ կրաւոր. բայերուն անցեալներն ի հարկէ յոգն.
 պէտք էին դրուիլ միշտ. իսկ ներգործական բայերունն
 անփոփոխ մնալու էր: Բայց գրաբարի սովորականն ե-
 ղած է առաջններուն թէ՛ եզակի եւ թէ՛ յոգնակի
 դրուիլը, որ աւելի յաճախ եզակի կը մնայ, ինչպէս
 պարզ ածականներն ալ. իսկ ներգործականներուն՝ յո-
 գնակի դրուածը զարտուղութիւն է, (օրոշեալ կարգի
 քանի մը գրոց մէջ բաւական յաճախ:) Այսպէս.

* Գիտելի է օրինակիս մէջ աւել անիւ ներքծ. բայն իբրեւ
 մէկ բառ՝ իւր հայցական ինդրովք մէկտեղ կրաւորակն
 անցեալ եղած. Յուն պարապորգ, աւել-անիւ եւ մա-
 քրեալ. (աւլուած:) Սոյնպէս հոլ հարեալ՝ ածական ե-
 ղած է յարմի բառին. Առեալ զնա անէր ի հոլն-հարեալ
 յասակն. (հոլ ցանուած գեանիւր:)

Որք մտեալն էին կամ մտեալն էին. անգր հասեալ
կամ հասեալ էցեն: Էթի հասարակեալ կամ հասար-
ակեալ: Ծերացեալ էին եւ անցեալ զաւուրքք: Եղի-
ցին դատիք ձեր պարեալ ընդ մէջս, եւ ճարգունք՝
լացեալ: — Առցեալ էին պահապանս: (Ջրաղ-
Էին ի ծածուկ վառեալք եւ ի վերայ արացեալ
հանգերձ:)

Ձ. Երբ անցեալն հետը խնդիր կամ ուրիշ յա-
րակից բառեր ունի, գոյականը յառաջ կը դրուի:

Ձաւակք օրհնեալ յԱստուծոյ: Արարենի քոսեալ
է քնաց շուրջ: Ըունք կերակրին ի փշտանաց անկէսց
ի սեղանոյ: Աղիւք յարեալ չարացեալ. եւ այլն:

Բայց ասոր հակառակն ալ (աշխարհարարի նման՝)
թէ եւ գրարարին սովորականը չէ, կը գտնուի ընտիր
գրոց մէջ՝ նաեւ շատ վայելուչ կերպով. — մանաւանդ
խնդիրներն ու յարակից բառերը գոյականին երկու գին
բաժնուած: Ձգերեզմանս կրկտեն, եւ վնասեալ մար-
մինս ընդ հողով՝ մերկացեալ խայտառակեալ արեալ
ցուցանեն: Տես զիկեալ ուրախութիւնն Կն յԱստուծոյ:
Ձիկեալ է վերայ յեր զարկութիւն Աստուծոյ: Ժառան-
դեցեք զպարաստեալ յեր զարքայութիւնն: Ձվան մեր
սերմանեալ ցորեանն: Ձնացեալ ճարակն ի յիջ առ ոտն
կոտորէիք: Ձանցելոց անցիցն ընդ նոսա: Ձիւրեալ ար-
կեալ պատանքն: Յիշարկեալ է միջ այրս Աղմէս:
Ձվաղաց արեալ է հիմանց զԸամրին կանգնեաց: Յա-
ռաւագոյն եղելոց նշանացն. յառաւագոյն Գործելոցն մե-
ղաց. Բնակեալ յիս մեղքն. եւ այլն: Փխկ՝ զմարմինս
Խոյեալ. զուրախութիւնն էիկեալ քեզ. եւ այլն:

Է. Ընցած կատարուած գործ ցուցընելու համար
անուն բային ընդ. անցելով մէկտեղ Բացարձակ սե-
ռական կը դրուի՝ փոխանակ իբրեւով գիմաւոր բայի.
— Ինչպէս աներեւութիւն վրայ տեսանք. եր. 394:

Ազգիւն հասելոց արտօսոսն օրն լուսանայր կիրա-
կէն: Մեռաներ՝ ամենայն չբաց առ ահին ի վերայ
դիմելոց: Մի մոյ հարելոց՝ միւսն ընդ նմին աշխատի-
ցի: Սրբոյ Կողմն ամենայն խաղաղութեամբ Բնա-

իւլայ, եւ օրինացն իբրեւ զի գեղեցիկ իմն պարհեցելոյ՝*
Սիմոն ոմն անուռն առաջնորդ էր տոհմին իւրոյ: Չո-
րից մացի ժիջի կատարելոց: Հզօր մարտի եղելոյ, այգուսն
եղելոյ. եւ այլն:

Այս յունածեւ սեռականն, ինչպէս ըսինք, յա-
ճախեալ շէ գրոց մէջ: **

Ընդհանրութիւնն անցեալ՝ Բայ:

Ը. Բայ է ընդ. անցեալն՝ երբ աշխարհաբար լըլ
(տճկ. իօրէն-ի, իեյէի) նշանակութեամբ գործածուի՝
փիկ մակբայով գիմաւոր բայի. ինչպէս քանի մը հեղ
տեսանք: — Աւասիկ երկու կերպին ալ օրինակները:

- { Չայս ասացեալ՝ արձակեաց զժողովսն:
- { Չայս իբրեւ ասոց՝ արձակեաց զեկեղեցին:
- { Չեբ լսեալ զբանն ճշմարտութեան:
- { Դոս-ի իբրեւ լսարոս-ի զբանն ճշմարտութեան:
- { Չայս արարեալ՝ կայծակունս հրոյ կուտեացես ի գլուխ
- { Չայս իբրեւ արձեցես՝ կայծակունս հրոյ. . . [նորա:
- { Պարիսպքն Երկրովի անկան՝ շարժելեալ զնորօք զեթն
- { Պար. Երկր. անկան՝ իբրեւ շարժելեալ զնորօք. . . [օր:
- { Չմաս անեալ զանխիղճ հաւատան որ են ի քեզ:
- { Յորժամ շմաս անեմ զանկեղծաւոր հաւատան քո:

Թ. Անցեալն իբրեւ բայ՝ իւր խնդիրները կը պա-
հէ ըստ սեռին. անուռն բայի հասարակօրէն սեռական,
եւ երբեմն ուղղական կ'առնու. ինք անփոփոխ է ըստ
կանոնի. եւ ամենեւին յօդ չ'առնուր:

Ներգծ.) Հրէից կտեալ զեմ՝ կամէին սպանանել: Գոյեալ
հարիւրապետին նաւ մի՝ եմոյծ զմեզ անդր: Եւ ըն-
կեցեալ զգունդան՝ գտին գիրկս քսան:

Արւր.) Յովնէսի նեմիեալ յեղբարցն՝ վաճառի յԵգիպտոս:

* զան բառեր որ թէ՛ բեով եւ թէ՛ առանց բէի գրուած կը
գտնուին. այսպէս են՝ Պարհել եւ պահել. մարհ, եւ մահ.
բարժանել եւ բաժանել. շղարշ եւ շղաշատեա. եւն:
** Պայ հայերէն ոճով ալ բացարձակ սեռական՝ պլեւպլ
նշանակութեամբ: Այլ երբեք լեւոյն՝ եւ ոչ մի ինչ յան-
սանոց է այնպէս սուր լեւեթօք՝ որպէս էշ. (լեո-դ լե-
լս- մասին): Սա եւ կօշկօք տայիւլոյն գնայր ի վերայ լուրց
գետոց. (տայիւլով):

Չէզոք.) Մարտոցեալ աշակերտքն՝ զարթուցին զնա: Եւ Գործեալ անտի արանցն՝ եկին ի Սողոմ: Լուսաւորութեան արեւուն յոյեալ ընդ սպիտակութիւն ապակոյն՝ հուր ծնուցանէ:

Ժ. Լնցելոյն անուն բային ներգործական բայերու քով կրնայ համարձակ սեռական դրուիլ, բայց նաեւ ուղղական. չէզոք բայերուն՝ աւելի ուղղական քան սեռական, (թէ եւ ընտիր գրուածոց մէջ հարիւրաւոր օրինակներ ունինք սեռականի.) իսկ կրաւորականներու՝ գրեթէ միշտ ուղղական: Ասոր շարին ու վայելութիւնը յաճախ ընթերցմամբ կը սորվուի: *

ԺԱ. Լսյս կերպ անցեալ բայն հասարակօրէն՝ խօսքին առաջին մասը կը կազմէ. բայց շատ անգամ ալ միջանկեալ է, (եր. 214, ծան.) եւ երբեմն ետք ալ կը թողուի, (տճկ. Էփէրէտ, օլարտի նշանակելով:) — Ոչ ոք կարէ զկարասի հզօրի, յոյեալ ի տուն նորա, աւար հարկանել: Թեթեւացուցին զնաւն՝ խոփեալ զգորեանն ի ծով: Լքոյց զնոսա շարհօւրեցոցեալ. (փխկ՝ զարհուրեցուցեալ Լքոյց:) Սղբա ամենեքին չեւ եւս ընկալան զաւետիսն, Աստուծոյ լաւագոյն համարեալ՝ զի մի առանց մեր կատարեսցին:

Բայց աւելի բնական է չէզոք եւ կրաւորական անցեալներուն ետ թողուիլը: Մեծապէս ծանակեցի նա՝ ի վատթարաց անտի ի պարտութիւն յարմեալ: Մեք ծնանիմք՝ յանգիտութենէ տղայութեան ի կատարումն փոփոխեալ: Մի ի մեծամեծ նաւուց՝ որ զոգս առեալ ուռուցեալ առազաստիւք ասպատակի ի վերայ

* Ցես կարճ նախադասութեանց եւ իրարու կապեալ բայերու համար ըսուածը. երես 213, ծան:

Կոյնպէս մտադրութեան արժանի է չէզոքներուն այս ձեւ ժամանակաց ալ անուն բային. Չեւ է հասեալ ծամ. չեւ իցէ հաստ խօսեալ. ի՛մ եթէ չեւ եկեալ. չեք երեւեալ քեզ Աստուծոյ. ծնեալ է նա. չեք մեռեալ. չիցէ անկեալ. եւն. որոնց մէջ զանազանելու է ազատ գործողութիւն ցուցընող չէզոքները, ինչպէս են՝ Գամ, Երթամ, Դարմիմ, Կանիմ, Խօսիմ, Եւայլն. որ կրնան երբեմն սեռական անուն բայի առնուլ. ուր որ ալ ազատ գործողութիւն կամ վիճակ ցուցընողներն ուղղակիանող կը քանն՝ գրեթէ միշտ. ինչպէս են՝ Ինանիմ, Դարմիմ, Եամնոս, Վլանիմ, Ինիմ, Կտան լինիմ, Եւայլն:

մկանաց ծովուն սլացեալ: Եկի իօնջեալ: Ի բաց կացցեն
սմայցեալ. եւայլն:

Երբեմն ներդործ. անցեալ մ'իւր հայրական
ինգրովը մէկտեղ՝ յեառգաս վերագիր կ'ըլլայ գլխաւոր
անուան կամ գերանուան:

Ձք անկեալ կաս զձեռք արիւտեալ. (գու:) քուրճեն նստին
ի առնս իւրեանց՝ հերս տեղեալ, տեղեալ մըրսս
նստին առաջի գիցն: Ել ընդ առաջ նորա քուտի՝ պո-
րտեալ զպարսմանն իւր: Եկին ալք ութսուն տե-
ղեալ զմըրսս եւ պարտեալ զհանդերջ:

Այս ձեւը նմանութիւն ունի թոյ եւ անօնան
անցելոյն հետ. աես վարը՝ ժը:

ԺԲ. Անցեալն իբրեւ բայ՝ յայտնի է թէ ի կախ
մնացած կամ անլրացեալ խօսք մի է՝ որ գիմաւոր բայ-
ով պիտի լրանայ. ինչպէս. Տեօեալ զքաղաքն՝ — Ելաց
ի վերայ նորա: Այս երկու բայերը հասարակօրէն մի-
եւնոյն անձին գործողութիւն կը ցուցընեն. բայց կը
գտնուի հակառակն ալ. ինչպէս. Պաւղոսի զայս պա-
տասխանի որտեալ՝ Փետտոս ի ձայն մեծ ասէ, մըլիս
Պաւղէ: Նորա ընթացեալ զգազանն ի հուրն՝ եղև նմա
չար եւ ոչ ինչ: Խար Բործեալ նմա ի բարեկամէ՝ մեռա-
նէր: Վաչէ՝ ձին զուլամբ երկեալ՝ սպանանէր: Իմ Աս-
տուծով կեցեալ եւ ջերմ քրիստոնէութեամբ՝ մի իբրեւ
հեթանոսս կոծ դք անյուսութեամբ դնիցէ ինձ:

Երբեմն կը գտնուի նաեւ լոկ անցելով խօսք մը
լրացեալ. (ինչպէս նաեւ աներեւութով. երես 413.)
մանաւանդ յորժամ, իբրեւ մակրայէն ետքը: Յորժամ
ոգի տեալ սահաւ մի՝ եւ անդուստ ելեալ յարձակէին:
Յորժամ հարաւ ընթեալ՝ ասէք թէ խորշակ լինի: Եւ
վասն զի ոչ իմիտեալ գիտացեալ ձեր զարժանն, վասն
այնորիկ ան զարժան գաւազանն ի վերայ: Երկուս խոզ
եւ մի էլ վերեալ այնչափ ընդերկար ծանապարհ, եւ
գու ասես, զի՛ ես քրանեալ այդչափ. (ես երկու խոզ
քշած ըլլալով:) Վասն էր արդեօք զամենայն իտեալ,
եւ զայս միայն ի ձեռն տեալ: Եւ նոքա այոչափ թօղ-
րեալ (լրբեալք), մինչեւ զամենայն մարդկան աչս կամին

ունել: Չխորհ մանուկն ի հասակ անցեալ, ապա ի ծերութիւն գարջեալ: Խոփոքեալ յինէն անզգամին՝ եւ ետ անփոյթ առնէի:

Ասոր նման են այն խօզերն՝ որոնց բաղադրեալ ժամանակներուն էական բայը զեղչուած է: Որոյ նորոտեալ զամօթ՝ բարձցէ թողցէ զմերձաւոր իւր. (այսինքն՝ որոյ կորուսեալ իցէ զամ:) Մի խաբիր արքայ, ոչ կերեալ գորա երբեք եւ ոչ արբեալ: Գնեն եւ Յունաց իմաստունքն մի ինչ ինքնակաց՝ որոյ ոչ յուժեքէ եղեալ, այլ ինքն անձամբ ինքնակաց առաջին Կոթեալ: Չոր նորա յողմեալ՝ սա ցրուէ. (նորա ժողովեալ էր կամ իցէ:)

Այսպէս նաեւ անցեալ աներեւութի տեղ (կերտ ըլլալ)՝ կամ գիմաւոր բայի տեղ յատուկ ձեւով մը կ'ըսուի:

Մեծ էին սքանչելքն՝ թիեալ ի հինգ նկանակէ անտի կերպուր ի հինգ հազարաւոր ժողովուրդն. են զարմանք՝ եւ կուրին ի ծնէ ի Սելովամն ասի Բոցեալ. (փիկ՝ զի բխեաց կերակուր. աչացն բանալ. Թեա՛ ըլլալ. Բոցոտ՛ ըլլալ:) Գուցէ կարծիս ինչ տայցէ թագաւորին՝ իբրեւ գաւուղ ինչ ի նմանէ շայն զասեալ. (կարծիս ինչ տայցէ զառնն զնասելոյ. ինչ մարդն էր մն զաստոտ ըլլայ:) — Այս ոճը լեզուին պերճութիւններէն է, բայց շատ յաճախեալ չէ:

Հոս ալ ընդուն. անցելոյն հայցական կամ ուղղական ըլլալը՝ զլեւաւոր բային սեռէն կախում ունի. ինչպէս յառաջ ըսինք. եր. 410, 411:

ԺԳ. Ի՛նչնք թէ անցեալն իբրեւ բայ անփոփոխ է. եւ այս է ընդհանուր քերականական կանոնը. — սակայն չէզոք եւ աւելի՛ կրաւորական բայերուն քով, ուր սեռական անուն բայի չկայ, երբեմն անցեալն ալ կը գտնուի յողմակի գրուած. այսպէս:

Դարջեալ ի Բարբլունէ՛ զսեղանն կանգնեցին. (փիկ՝ գարջեալ:) Սուրբն Ներսէս հասաատէր զթերահասաաս՝ զի հոտոբացեալ յԱստուած՝ ապրել կարացեն: Բարձեալ թողեալ եղին նորա ի ձեռանէ Տեառն՝ երբեալ ըստ հետ կամաց սրտից իւրեանց:

Ձկորստեան ճանապարհն Բնացեալք եւ կամօք լեալք որդիք բարկութեան՝ առանց Աստուծոյ շքէին յաշխարհի: Դեւք ի ձեռն հաւատացելոց մինչեւ ցայսօր հաւածեալք ելանեն: Խառն. Մարգիկ ելեալ ի քաղաքաց եւ ի գիւղից՝ հետամուտք լինին կոտորելոյ զգազանսն. եւ նոքա սրացեալք ի լերինս եւ յափափայս ձեպին անկանել փախտականք:

Այսպէս նաեւ՝ նոքա հատեալք անդր. ընդ այս նայեցեալք. Տարոնցեալք բուռն հարեալք զնմանէ. հոյհոյեալք՝ օրհնեմք, քաճաքեալք՝ աղաչեմք:

Իսկ սեռական անուան բայի քով յոգն. անցեալ՝ զարտուղութիւն է: Նոյնպէս զարտուղութեամբ երբեքն ներգործական անցեալք կը տեսնուի յոգնակի գրուած: Տօտեալք միմեանց ողջոյն, աբիեալք զհարաքանչիւր աթուռն նստէին կարգաւ: — Սակայն բաւական յաճախեալ ոճ մըն է՝ որ

ԺԴ. ‘Ներգործական անցեալ մ’իւր սեռի խընդրոյն հետ համաձայնելով՝ անորոշ յոգն. հայցական կը գրուի՝ կրաւոր. անցելոյ ձեւով. ինչպէս:

Հուրջ զդրօշելովքն զսրահսն փախեալք եւ կօրկեալք եւ ամբոցոցեալք պահեն քուրմքն իւրեանց: Այսր նմին իրի եկեալ է, զի կօրեալք զսոսա տարցի առ քահանայապետսն: Թէ զոք գտցէ արս կամ կանայս՝ կօրեալք ածցէ այսր: Դէպ եղեւ եղբարս եօթն մարքն հանդերձ կօրեալք ածեւ յատեան: Թորժամ պակասեալք ի փրկութենէն գտանէին, իօրօրեալք սրեալք եւ գունակ գունակ խոյրօրեալք եւ յաշխարհէն կորզէին. (զնոսա): Ձքազուճս ի նոցանէ կօրեալք կօրեալք տարցուք ի գործկաւագործութեան: Ձկապիկս անապատականս ըմբռնեալք հտպիտոս ուսուցանեն: Ձքահանայսն տանէին կօրեալք նոքոցեալք ի վերայ ջուրոց: (Փխկ՝ զսրահսն ամբոցոցեալք պահեն. կօրեալք տանել. կօրեալք ածեւ. եւայլն:) — Այս ոճն ընդհանրապէս որոշեալ կարգի մը գրոց յատուկ է:

Ներգործ. անցեալք այսպէս յոգն. հայց. գրուելով՝ իբր կրաւորական խնդիր բնութեան եղած կ’ըլլայ

գլխաւոր բային. ինչպէս երբեմն յարակից ածական խնդիրներն ալ կը ցուցնեն. Ջփարաւոն զորօքն հանդերձ ծովամացս ի կորուստ յազարկեալ ընկզմեցեր: — Իսկ իրական խնդիր բնութեան են՝ տանի՛, կացոցանի՛ եւ այլն բայերուն քով. ինչպէս. Ջախյեանն ստատնայի կարկեալ ըմբռնեալ ամենպարտեալ հանդերձ թագաւորաւն կացուցանէր: Երես 225:

Այս յոգն. անցեալն յունականին համեմատ է:

ԹԵ. Այսպէս նաեւ երբեմն սեռական աներեւութի տեղ անցեալ կը դրուի՝ գոյականին համաձայնած. մանաւանդ յեք եւ վան նախադրութիւններէն ետեւ. եւ կ'ըսուի՝ Յետ սակաւ ժամանակի անցելոյ. յետ ամսոց վեցից անցելոյ: Յետ այնչափ ոգւոց ի գեհհենի փանջելոց. (փխկ' անցանելոյ, փանջելոյ:) Յետ քսանեւհինգ ամաց խոփացելոց աւետեաց. (այս է՝ քսանեւհինգ ամօք յետոյ քան զաւետեացն խոստանալ:)

ԹԶ. Ինչպէս աներեւութին մէջ տեսնը՝ (եր. 399.) երկու նոյնանշան կամ նմանանշան բայ իրարու վրայ ընկած. դիմեաց գալ ի վերայ. եւ այլն. նոյնպէս՝ եւ շատ աւելի յաճախ՝ անցեալն իւր նոյնանշան դիմաւոր բային հետ կապած կը գործածուի: Այսինքն. շատ անգամ երկու նոյնածեւ դիմաւոր բայի տեղ, ուր որ դիմաւորներն ոչ իբրեւ մակբայի պէտք ունին եւ ոչ եւով կապուած են, առաջին բայն անցեալ կը դրուի. ինչպէս. Յարեաւ հեղեղ, եւ արկեալ փարազայլան. փխկ' արի փարա, — որ նոյնպէս ընտիր է:

Այս երկու ձեւերն ալ գրարարի պերճութեանց մասն են. եւ հաւասարապէս կրնայ ըսուիլ՝ Անց քնաց, եւ անցեալ քնաց. — Գայն հասանելին կամ եկն հասն, եւ եկեալ հասն. — Խողայր քնայր, եւ խողացեալ երկայր. — յաթն իճն, եւ յաթեալ իճն: — Ջայնչափ վայրս հոփանել անցանել, կամ հոփեալ անցանել: Անարգեաց անփոսնեաց Մովսէս զգանձան Եգիպտացոց, եւ փոխացեալ ընկացու նա առ սուկերան Յովսեփու:

Այսպէս՝ երեք կերպով կրնայ ըսուիլ. Դիմեաց գալ ի վերայ. դիմեաց եկն ի վերայ. դիմեալ եկն ի վերայ:

Խաղայ ելանել ի ներքուստ ի վեր. Խաղայ ելանել ի ներքուստ ի վեր. Խաղացեալ ելանել ի ներք:

Դէմ եգեալ գայ,

կամ Դիմեալ գայ.

Խաղացեալ գան ի վերայ.

Հեռացեալ մեկնեցան.

Յանախեալ բազմանայ.

Քակեալ քայքային.

Անուանեալ կոչին.

Թարգմանեալ կոչի.

Ջհեա անկեալ զնային.

Շուրջ եկեալ յածիցի.

Ջահի հարեալ երկնչէր.

Յանդիմանեալ կշտամբել.

Արգելեալ փակեաց զնա.

Արգելեալ կարճեցին.

Յայտ արարեալ ցուցանէ.

Վանեալ վիանդել. եւն:

Անդ է տեսանել չար քան զարս՝ որ զիմտօթի՛ ելեալ Խաղացն. (մէկը մէկալէն աւելի չարեր՝ իրարու հետ մրցելու ելած:) Լայնանիստ մեծութեամբ տարածեալ կայ ծով, եւ մըրկեալ ամբոխն զնա ալիք:

Ասոնց վրայ քանի մը կարեւոր գիտելիք կան միտք առնելու:

1. Անցելով բաղադրեալներէն շատերը՝ միայն այս ձեւով կը գործածուին, եւ ոչ աներեւութով կամ կրկին գիմաւոր բայով. — որ միայն ընթերցմամբ կը սորվուի:

2. Այս ձեւ անցեալն յոգն. թուոյն մէջ ալ հասարակօրէն եզակի ձայնով կը մնայ:

3. Այսպիսի բաղադրութիւնք անթիւ են գրաբարի մէջ. բայց հին ընտիր գրոց մէջ չգտնուածները մտքէ հնարելու չէ:*

4. Աշխարհաբար թարգմանութեանց մէջ՝ եթէ ուզուի երկու բայն ալ պահուիլ, (թէեւ մէկը միայն հերիք է,) պէտք է երկուքն ալ գիմաւոր զնել. այսպէս. Եկեալ հասանէին. եկան հասան. (տես եր. 213, ծանն:)

5. Կերպորձականով բաղադրեալներն ալ կրնան ըստ իմաստին չէզոք ըլլալ, ինչպէս. Չո՞ տարբեալ զնաց. գո՞ր) տարբեալ եմուտ այսբէն. Քո՞ի տաեալ ծրանայ շուրջ. տո՞ի տաեալ. Գե՞մ եդեալ, եւայլն:

* Ինչպէս որ հարազատ լեզուին ժամանակներէն ետքը գրողներն անզահ բաղադրութիւններ հնարած են. Յարմարեալ պատկանի. կերպացեալ ձեւանայ. աջօթեալ տղերսէ. անուանեալ տաի. ուրախացեալ ցնծայ. երեւեալ ցուցանի հրաշալի, եւայլն:

Ընդհան. անցեալ՝ իբրեւ ներգործ. Բայ եւ ածական:

ԺԷ. Հայերէն լեզուի յատկութիւնն է՝ որ միեւնոյն անցեալը թէ՛ ածական եւ թէ՛ միանգամայն ներգործական բայ ըլլայ՝ իւր հայցական խնդրովն որ շատ հեղ հետն ունի: Այս յատկութեամբ կ'ըսուի՝ Մարդոյ իորոտելոյ զհամբերութիւն:

Ասկէ է որ ներգործական բաղադրեալ ժամանակներն՝ ե՛մ, լինի՛մ բայերով ալ՝ հայցական խնդիր կ'առնուին. Ուսեալ էր զգիրս. տեսեալ եւս էին շնչանն. նիւթեալ լինէր թագաւորն չարոսն. գտեալ լինի՛ր զգրուսն. (գտած կ'ըլլաք.) եւայլն:

ԺԸ. Իշական կամ օժանդակ բայէ անկախ, իբրեւ պարզապէս ներգործական՝ անցեալն իւր հայց. խնդրովը մէկտեղ ածական կ'ըլլայ գոյականի մը, կամ բայի մը խնդիր բնութեան եւ ստորոգելի. այսպէս:

Ուզ.) Մէք եղիցուք յողորմութիւնն սրացեալ: Եղիցի (նա) արգարտութիւնն ածեալ ընդ մէջ իւր. եւ ճշմարտութեամբ ուտեալ զիողս իւր: Պատահեցէ ձեզ այր մի քայտեալ ստոր ջրոյ յուս իւր. (Նրի սափոր շալկած մէկը): Գիպեցաւ սմա պատանի մի աշխարհական՝ լուացեալ զներս, օրիկ արկեալ զուսովք, եւ գայր զճանապարհս իւր: Ես էի յաչս նորա իբրեւ Գրեալ խաղաղութիւն. (խաղաղութիւն գտածի պէս):

Սեռ.) Բարերարաց եւ քարի գրեւոյ. (բարերարներուն եւ բարերարեալներուն): Կարմիր են հանգերձք քո իբրեւ հնձանահարի՝ լոյ հնչանի խիտելոյ. (լիք հնձան կոխած մէկու մը):* Կանանց զատորոտած պաշտոնութիւնն յանն արեւոյ: Ջարմանային վանն նորա արտաւելութիւնն իմ հեղութեան սրացելոյ:

Տրկ.) Բարի է դատաստան քո մարդոյ անհաւատի եւ իորոտելոյ զհամբերութիւնն: Կման է ուռկանի արկելոյ ի ծով եւ յամենայն ազգաց խողովելոյ** . (ծով ձգուած եւ ամէն տեսակէն ժողոված ուռկանի):

* Ուզականն է Հնձանահար լի հնչան խիտալ: (Ցես ժԹ:)

** Ուրիշ թարգմ. մը գիմուար բայով, Ուռկանի որ արտաւելցի ի ծով եւ յամենայն կողմանց խողովելոյ:

Հյց.) Ետես զնոսա արիեալ ուսիան ի ծով.* (ծովն ուսկան ձգած տեսաւ:) Տեսանիցես զՏէրն ի հարսանին զլուսն ի գինի արարեալ. (Զուրբ գինի բրած կը տեսնես:) Եւ ոչ ի տաճարի անդ գտին զիս ընդ ումէք խօսեցեալ եւ կամ ծողզու արարեալ բազմաց: — Զնոսա, զՏէրն՝ խնդ. սեռի. արիեալ, արարեալ՝ խնդ. բնութեան. (Եր. 225:) Արնար ըսուիլ նաեւ՝ արիեալ ուսիան: Առաքեաց պատարագս՝ ուղարկնելա՝ կողակամբ հանդերձ. (ձագ բերած ուղտեր ընծայ խաւրեց՝ ձագերովը մէկտեղ:) Եթէ աւեր՝ զի պարծիս իբրեւ զլատեալ. (չառածի պէս:)

Այսպէս նաեւ՝ Առաքեալքն Գան արքեպօպ. ամենեքին ուսեալ զպարերազ՝, (կամ ըստ այլ թարգմ. լաւ եւս՝ հմտաբար պարերազնի:)

Չէզոք եւ կրաւորական անցեալ՝ էական բայով, կամ բայի մը խնդիր բնութեան եղած կամ հոյովեալ հասարակ է ամէն լեզուաց. ինչպէս՝ Արիեալ եւ զու. Ետես զնոսա հողտեղեալ ի վարեն. Գինեմբ զլուսն ի գինի արարեալ. եւ այլն: Եղիպէս ուսի՛ սօտան զակով՝ ամէն լեզուաց է. Բարձեալ ունիմ, արեալ ունին սերմանին ի ձեռին քում, եւ այլն: Բայց ներգործ. անցելով եւ հայցական խնդրով բուլ Ատեալ եւ զքոյն. Ետես զնոսա արիեալ ուսկան ի ծով՝ միայն հայերէն եւ տաճկերէն լեզուաց յատուկ է: **

Ասոր նման է նաեւ հետագայ ի կանոնով ներգործական անցելոյն իբրեւ ամական գործածութիւնը, լման աշխարհաբարի եւ տաճկերէնի սճով ու շարքով:

Այս գործածութեան հետ շփոթելու չէ սեռական անուամբ բայի անցեալն՝ որ բայ է եւ ուրիշ բայի վրայ ինկած, կամ խնդիր բնութեան եղած, բայց անական չէ: Արի յիշեալ նորա զկեանս. նորա գտանի չժանոցեալ զԱստուած. (Եր. 214 եւ 411.) — Թէպէտ նշանակութեամբ նոյն են երկուքն ալ:

Ես տեսի անդամաց արմատս յիշեալ: Գտանէր պանեալ նմա զթագաւորութիւնն ուրոսն անուանի: Յար-

* Աւրիշ թարգմ. գիմաւոր բայով. Զէ արիեալ եր նոյս ուսկանս ի ծով:

** Ար գտնուի մինչեւ նաեւ իմ բայով. Մի այլով ցանկութեամբ լցեալ կայրեն գտնան իւրեանց. — սւր լցեալ թէ՛ ներքծ. է եւ թէ՛ անական. (լեզուցած կենան):

Ժամ Դե՛՛ն էւ անուանոյ գտանիցի զնոյն Կորձեալ.
(Երբ մեծն ու անուանին նոյնն ըրած կ'ըլլայ):

Այս վերջին ձեւը կը նոյնանար ԺԸ կանոնին հետ,
եթէ սեռականներն ուղղական կամ հայցական դրուած
ըլլային՝ գլխաւոր բային պահանջելուն համեմատ:

ԺԹ. Վի՛ճ անգամ սեռական անցելոյն հայցա-
կան խնդիրն ալ սեռականի կը դառնայ. ինչպէս սեռա-
կան աներեւութինը. Եր. 392:

Յիշատակ իջաւորի՛ Ժոյ առաջ գնացելոյ. (փխկ՝ զ՛ի
օր գնացելոյ): Ասան էր կարմիր են հանդերձք քո
իբրեւ զհնձանահարի լեոյ հնչանէ կոխելոյ. (փխկ՝ լե
հնչան կոխելոյ):

Ի. Արբեմն օր դերանուամբ դիմաւոր բայ կամ
բացառականով կրաւորական անցեալ դրուելու տեղ,
(որ դրաբարի սովորականն է,) անուն բային սեռական
եւ բայը ներդրածական անցեալ կը դրուի՝ գլխաւոր գոյա-
կանին ածական եղած: Այս ոճոյս մէջ գործոյ տէր սե-
ռականն հասարակօրէն անցելոյն նախադաս կը դրուի,
— ճիշդ աշխարհաբարի եւ տաճկերէնի սովորական
համառօտեալ ձեւով երբեմն նաեւ յօդառութեամբ.
Ասորո՞՞ն արո՞՞ած կերակուրները. մարդո՞՞ն ըստձե՛՛րը,
ևն: — Աը գտնուի նաեւ անցեալը յետադաս եղած:

Ձմարդի՞ն հասարակեալ կտակ ոչ զք կարէ անարգել.
(փխկ՝ զկտակ հասարակեալ է մարդի՞ն): Ուսուցանէք
վարդապետութիւնս զմարդի՞ն պարտախելս: ՁԱ-
որո՞՞ն արո՞՞եալ զկերակուրան խոտան համարել: Լսե-
ին զԱսորո՞՞ն արարեալ սքանչելիսն: Մի արարածք
են ամենայն՝ Հօր եւ Որդո՞՞ն արարեալ: Մերկեաց
Աստուած զ՛իք զիեցեալ խաւարն հեթանոսութեան:
Ողոմայի անձինն իւրում կարի զգոյշ կայր, մանաւ-
անդ յըմպելեաց. բայց զի՛րոյ նախորոյ պարզեալ
զգինի ճաշակէր: Ամենայն մեծամեծքն առեալ ու-
նոյն կաշառանգք խաւարեցան: Մատուցին իշխանքն
զիբրեալ դարասիանին թղթոյն: Ապաշխարէր զառ-
ցեալ բանսն. (իբե՛՛ն արո՞՞ած ոսկւ. իբե՛՛ն քերթ պա-
տասխ. ի՛ր ըստձ խօսքերը): Մատիր դու քննել զա-

ասցեալն Յակոբոս առ Յուզա: Ասն Աստուծոյ աս-
ցեալն իսկ եւ իսկ ի գլուխ ելանէին: Չնորս աս-
ցեալն հաստատէ յաւետարանի: Թագաւորն ծաղը
առնէր զբանսն կաթողիկոսին, եւ մկթայր շնորս ու-
սացելովն: — Խօսել սկսանէր զբանս ի բերան Ե-
դեալ Անդոնիայն շարագործի, (չար Անդովկին՝ իւր
բերանը գրած խօսքերն սկսաւ խօսիլ:) Ձեւոց նա-
խըրոց կերակուրս արտեալ ճաշակէր: Չարիեալ ա-
ռասպելն Սողոմոնի լուծանել. (Յողոմոնի առաջար-
կած հանելուկները:) Չհուրն՝ զարիեալ Բանին յեր-
կիր: — Վերջին չորս օրինակներուն շարքը սովորա-
կանը չէ. սովորաբար՝ Ձեւոց նախըրոց արտեալ կե-
րակուրան. կամ բացառականով՝ Չառասպելն արիեալ
ի Սողոմոնի. կամ յարաբերականով՝ Չոր Բանն Էսրի
յերկիր:*

Իսկ փոխանակ դերանուն սեռականի՝ ինչպէս
ամէն ուրիշ տեղ՝ ստացական կը գրուի, որ կը հոլովի
ալ: Ձե՞ եա ի ձեռս զիւր պարիեալն՝ շարչարել. (ին-
չո՞ւ իւր խաբածները ձեռք տուաւ որ շարչարէ:) Չո
փրիեալ ժողովուրդս. եւայլն:

Ասոր նման՝ նաեւ չէզոք եւ կրաւորական ան-
ցեալներ երբեմն բացառականի տեղ սեռական առած
կը գտնուի. — բայց ասոնք զուտ ածական անցեալ են:

Այսպիսի բանից՝ փոճարոց յորոց կարկատելոց՝ չէր
պարտ ամենեւին բնաւ առնել պատասխանի: Ա-
պեալք խոտարի եւ կաշկանդեալք երկայն ֆիշերոյ:
Հարեալք սոսերի իճոյ էք: Գերեալք սրոյ. անկեալք
սրոյ. եւայլն: — Ստացականով. Հանցուք զնա յա-
չաց իւրոցն իաբեցելոց**.

(Իրմէ խաբուածներուն.)
Այս եւ ասոր նման ձեւերու վայելուչ գործա-

* Չգուշալի են այս անցելոյն անճաճ կերտուածիւններն
որ լեզուին ընտիր ժամանակներէն ետքը կը տեսնուին.
Ի հրաւիրեցելոցն զմեզ վայրի. եւ ասոր նմանները. (փեկ
յոր հրաւիրէն զմեզ, կամ ուր հրաւիրեալս եմք:)

** Յաւոց հանել, յաւոց ելանել՝ աշխարհաբարին նշանակու-
թիւնն ունին. բայց արական խնդիր կ'առնուն փիկ յատ-
կացուցի: Աստուծոյ յաչաց ելին. շարից յաչաց ելա-
նէին. նոյն իսկ հանէ զքեզ արան յաչաց:

ծութեանն համար հարկ է գրաբար գրութեան մէջ
երկար վարժութիւն ստացած ըլլալ:

Լոց ապառնոյ շունինք օրինակ սեռականով.
այլ յարարերականով կ'ըսուի՝ Հայն զոր ես փոց. զբա-
ժակն զոր ես բնկելոց ե՛մ. (իմ տալու հացս. խմելու
բաժակս) Շատ քիչ տեղ՝ այս ձեւով. Ոչ գիտաց
ղնելոց եղիտն իւր. (ըլլալու փորձանքը, գլխուն գալիքը
չիմացաւ:)

Գ Լ Ո Ւ Խ Ժ Ա.

Բ Ա Յ Ա Ն Ո Ւ Ա Ն Ց Վ Ր Ա Յ

Ա. Շատ անուններ աներեւութի եւ ընդունե-
լութեան ոյժ ու նշանակութիւն ունենալուն համար
Բայանոս կը կոչուին:

Բ. Բայանունները բայինշանակութեամբ՝ երեք
բայական սեռերուն համեմատ խնդիր կ'առնուն. բայց
ժամանակները շունին: Իսկ իբրեւ անուն՝ կը հոլովին
եւ յօդ կ'առնուն:

Գ. Բայանունները կը բաժնուին՝ Գոյական եւ
Սծական: — Աներեւութի նշանակութիւն ունեցող-
ները գոյական են. եւ ընդունելութեան նշանակու-
թիւն ունեցողներն ածական:

Կայ գոյական բայանուն ալ՝ որ աներեւութի
նշանակութիւն չունի. ինչպէս վարը Զ, Է, Ը թուե-
րուն մէջ յիշուածներէն շատերը:

1. Գոյական բայանուն:

Դ. Գոյական բայանուններէն, որ աներեւութի
ոյժ ունին, ոմանք բայի մը լոկ արմատն են, — վերջին
արմատ կամ բայարմատ. (տեք եր. 79.) — եւ ոմանք
բայարմատէ մ'աժանցեալ. ինչպէս.

Դարձ, էջ, ել եւ մուտ, ցոյց, աւեր, արտունջ. կամ՝
էջք, ելք, մուտք, վայելք. — ընթացք, խաղացք,
գնացք, նայեացք:

Յափշտակութիւն, շինութիւն* — փախուստ, կորուստ. ուտեստ, պահեստ. — կործանումն, յապաղումն. — պոռփանք, անարգանք. — շինած, աւերած, կամ՝ շինուած, յաւելուած, հարուած: Մնունդ, ծնունդ, յագուրդ, տեսիլ, երկիւղ, բախիւն, եւն:

Գոյական աներեւոյթը շատ անգամ պարզապէս բայանուն է. եւ կ'ըսուի՝ (նաեւ ածականով եւ օտարականով կամ յատկացուցչով մէկաեղ.) Լուեաց ի խօսելոյ անտի, կամ Լուեաց ի խօսիցն: Ծառ զեղեցիկ փեսանելով, կամ զեղեցիկ փեսիւմս: Զգացին զիս նորա, կամ զիս նորա: — Այսպէս եւս՝ Զլու հարկանել. մեծաւ լալով. մեծաւ Գոյելով. եւ այլն:

Որովմ ներելոյ թողութեան լինիցին արժանի** : Առ ի Կալիքիւ ժողովրդեանն առաքեցան արքանեակքն Յեսուայ. (այսինքն՝ առ ի Կալիքոսիւնն):

Ասկէ է աներեւութիւն երբեմն սեռական խնդիր առնուլը փոխանակ հայցականի. տես եր. 387, Գ ծան:

Աներեւութի նշանակութեամբ կը բանին նաեւ բայէ ածանցեալ լի՛ վերջով անեզականները: Եղեն զարմանալի՛ ի վերայ ամենեցուն: Լքան զարմանալի՛ ի վերայ նշանին որ եղեւ. (այսինքն՝ զարմանի, զարմացմա՛մբ): Խօսեւ բանս հպարտս յարբիւցաց. (յարբեցութեանն): Մարմնոյն մեծելի՛ց ցուցանեն զհպարտութիւնն: — Այսպէս եւս՝ Մեծաւ զարմանալի՛ց. օտիցն մեծելի՛ց. արտեւանանցն ինքնելի՛ց. լալի՛ց, (լացք.) եւ այլն: Իսկ խնդրելի՛ կը նշանակէ երբեմն՝ խնդրուածք, խնդիրք:

Ատոնք հասարակօրէն առանց խնդրոյ կը մնան:

Ե. Գոյական բայանուններէն ոմանք ներգործական են, եւ սեռական խնդիր կ'առնուն*** (ինչպէս

* Ըսինք բայարմատէ ածանցեալ. վասնզի հասարակ անունն ածանցեալները հասարակ գոյական են եւ ոչ բայանուն. ինչպէս. Միծոսիւնն, ներոսիւնն, Տարբոսիւնն, եւն:

** Ներել թողութեան իբրեւ կրկին նոյնանշան գոյական՝ այնպէս կը գործածուի՝ ինչպէս օրհոսիւնն քորոսիւնն, իւր զօրութեան, պարի՛ց պարոհասի, պարոսի՛ր հրամանի, Տարք պարբազի, արալ նշառի, եւ այլն եւ այլն. որոնք շատ յաճախեալ են ընտիր գրուածոց մէջ:

*** Թարգմանութեանց մէջ կը գտնուի երբեմն ներգծ. բայանուն մը հայցական խնդիր սեռի առած. որ հայերէնէ

ընդունելութիւնները.) եւ ոմանք կրաւորական, ու բացառական խնդիր կ'առնուն. իսկ շէղդքներն իրենց նշանակութեանն համեմատ այլեայլ հոլով:

'Ներդձ.) Նեղէին Եդիպոսացիքն զիտրայէլ ի շինուած Կառուած զգործուածն ամենեցուն զեղեցիկ գործէ: Արար զերկիր պաղարեր ի սնունդս ծառայից իւրոց: Լաբան երթեալ էր ի կտուրս խաշանց իւրոց: Ընդերկար էին խնդրուածքն պարբերին զոր խնդրէր աւազակն: Եկեսցուք յայնք ի քնին: Հսկոյն պիտոյ հայհոյութիւնք մի թողցին: Յետ ընդունելութեան Գիտոսիան ճշմարտութեան. (այսինքն՝ զայն եկեսցուք ի անել. ընդունելոյն զԳիտոսիանն:)

Աբր.) Ասան փոփոխման Ամբակուսայ ի հրեշտակին. (հրեշտակի ձեռքը փոխադրուելուն համար:) Գոնէ ի նախատանաց ապրեսցի նա յընկերաց իւրոց. (իւր ընկերներէն նախատուելէն ազատի:) Ոտնհարութիւնն ի Նշածեաց. եւայլն: — Բացառականները կրաւորականի խնդիր սեռի են:

2էղդք.) Փոքր մի հայթայթանք լիցին ի ցառոցն: Չիք ինչ բաժանումն եւ որոշումն ի միտանց. (իրարմէ տարբերութիւն չկայ.) Արկին ինձ երկիւղուկս ի Կէն: Յետ դարձին ի Բաբելոն: Ինձ դարձ լիցի յի՛մ աշխարհն: Բախիւն լեզուի ընդ զոս: Տեսանէր մարդպետն զգեղեցկութիւն վայրացն, զնիստ շքեղութեան ի բարձաւանդակ տեղեացն, եւ զնայեացն ի խոսարն՝ զի կարի վայելուչ էր. (դէպ ի վար տեսքը:) Փակեալ է քեզ ճանապարհ մտին առ հայր: Աերացումն յերկնս. մուտք ի Հրեատարան. յէջան Սէնեալան լեռանն.

օտար սճ է: Լսեմք իւրից նոցա ի մեր լեզուս անծածոս Աստուծոյ: Ըստ յաւաքագին Կարգութեանն Յովհաննու Արարիանն ապաշխարութեան: Քարգութեանն զԳիտոսոս. (փոխանակ աներեւոյթ գրուելու բայանուան տեղ. իտեւ ընդ զմեծամեծս. Կարգելոյն Արարութիւնն:) — Ստորին գրաբարի ժամանակներն աւելի յաճախ էր այս սճը. Օրհնութիւնն Իսահակայ զՅովսէփ, եւ Յակոբայ զՅոսոս: Արհամարհանաց գործ զի՛մ արտայանքին. յարհամարհանաց զարտոյ. զմեր կամսն զարտոս Բարիս. (Իմա՛ զմեր կամելն.) որ առ հասարակ խորշիկ են:

(փխկ՝ ի Սին . . .)*: Ընդ այն զինչ զարմանք իցեն: — Պատմական եւ պրոկն. ՋՀոգոյն հայհոյութիւն մթ թողցի մարդկան: Թագաւորէին մեզք ի ժամանակէ անտի յանցուածոցն Ադամայ զլստոտիբանան: — Այս վերջինները շատ սովորական չեն:

Ձ. Ըստ անգամ կրաւորականն շանակութեամբ են բայանունները՝ սեռական հոլովով, որ յատկացուցիչ է. ինչպէս՝ Արարչութիւն աշխարհի. աշխարհի ստեղծութիւն: Ասեմ Երոստոյթի. կործանումը:

Յարարածին երբեք չէաք մտ: Երբեքն սպիտակուելան ներկայ չիկէ: — Եղեն ի շինուածոյ րոմարին մինչեւ ի կարեիքով շինուածն ամբ հարիւր քառասուն եւ երեք: Ընդ մէջ կցուածի տարնոց վարեցի ցից: Հատած վերին ի խոր է. (վերջին կարուածքը.) Լուսեղէց փարթար զՈրդոյն ի կարապն փոփոխութիւնս. (փարթար, գունէ):

Այսպէս եւս յաջորդներն՝ որ ոչ գործողութիւն կամ լինելութիւն կը ցուցնեն, այլ եղած բան մը. բայց գոյական են եւ ոչ թէ ածական.**

Կուած արծաթոյ. Կարած որթոյ, մայրից.

Ծեծած վոյ. Թրջած յարդից.

Արարած շիրմացն. (չէնք.) Այրեցած պուտան. եւն. — ուր բայանունները համեմատ կու գան աշխարհաբար նայումք. շարումք կամ շար էւայլն գոյականներուն, կամ մանաւանդ ածկ. փիլի, էջի, փիթ, էջընիլ եւ նման բառերուն. այսպէս՝ Այրեցած պուտան, (պուտուկի էրածք.) չեմիկէ Եանըլ: Այս կերպով առանց սեռականի ալ կ'ըսուի՝ (Տախտակացն՝) խոփածն մարդոյ էր, գիրն՝ Ատուածոյ: Կազմել շիտիտածն. ծուխ այրեցածոյն. եւայլն:

* Ուրիշ գրոց մէջ՝ Յէջան Սինեական լիբն. տես վարը ի թուոյն վերջերը:

** Միջին ժամանակներն սկսան առմական հայերէն առած՝ իբրեւ ածական (չէզք եւ աւելի կր. բնգուն. անցեալ) գործածել ան եւ ուստի վերջաւորեալները. Որոյ գրեալն է՝ լոյս զինքեամբ սրլատ. բունտ ես. (ըմբռնեալ ես.) միտք արգարոցն է օրինօք իբրտոտած. (խրտոտալ): Վերջին դարերուս մէջ ան ներգործ. անցեալ եղած է աշխարհաբարի:

Իսկ հասարակ ածական են՝ (եւ ոչ բայանուն կամ անցեալ՝) Այր հոգիք, ցառք, բան անկոթ, եւն։

Է. Սեռական խնդիրը շատ անգամ հոմ է, այսինքն. միեւնոյն բայանունն ըստ խօսքին բերմանը կամ յատկացուցչին նշանակութեանն համեմատ՝ կրնայ կրաւորական ըլլալ կամ ներգործական. ինչպէս կրւր. Գարձաւ Աբրահամ է հոգորածէ խոփաորաց (ուր թաղաւորք կատարեցան.) եւ — ներգծ. Կոչեաց Սամիսն զտեղին՝ հոգորած թնօփ. (ուր ծնօտն կոտորեաց զայլապղծիս) կրւր. Նա գիտաց զսօփոյնս ածա մեր. (մեր շնորհ) ներգծ. Լքաւ երկիր սփոյնս ածա յնորա. (անոր սփոյն թաթներովք) Այսպէս եւս՝

Ներգործական.	Կրաւորական.
Երկք մշակաց.	Երկք անդոց.
Գործ ծառայից.	Գործ դաշտաց.
Կերակուր մանկանց.	Կերակուր ծառոյն.*
Հարուած մտրակի, գանի.	Հարուածքն Եգիպտոսի.
Քարոզութիւն Թաղէի առաքելոյ.	Քարոզութիւն աւետարանին:

Այս բայանուններն իրենց յատկացուցչաւն պնայէս են՝ ինչպէս հասարակ անունները՝ Մօնն Փարսոսնի. Երոննիսն ժեռելոց. է մոպս թոզա. եւայլն: Եւ ընդհանրապէս հասարակ անուններ իբրեւ բայանուն եւ բայանուններ իբրեւ հասարակ անուն կրնան գործածուիլ:

Ը. Եւ դարձեալ միեւնոյն անունը կրնայ երեք կամ աւելի առում ունենալ՝ զորօրինակ, յափշտակութիւնն՝ յափշտակելը, յափշտակուիլը, յափշտակուած իրը. նոյնպէս թնօնոյ՝ ծնանիլը ներգործաբար կամ կրաւորաբար, եւ ծնածը: Թափոսոյ՝ պահուրտիլը, պահուրտելու տեղն եւ պահուած բանը: Այսպէս՝ կ'ը-

* Առաջին նախնեաց քով յաճախեալ է ներգործ. մտօք՝ Առ չգիտանա եկեր կամ թէ առ չժուժալոյ է կերակրոյ թոսոյն: Առանց կերակրոյ թոսոյն ոչ գիտէին ամաշել. (եթէ չէր ճաշակեալ է ծառոյն) Ասան փայտի կերակրոյն ելին է գրախտե անտի: Այլ եթէ կերակուրն պարզն խիստ էր: Ազամայ յանցաւորութիւն փայտի կերակրոյ. — ուր ետքինները կը գրեն՝ է հալախանի փայտին. պաղոյն հալախանի:

սուի 1. Յափշտակութիւն ընչից: 2. Յափշտակութիւն փնակէն, (ի տնանկէն:) 3. Հասուօցէ զյափշտակութիւնն, (զյափշտակեալն:) Միթէ թազօնսա ինչ իցէ է ծառայէ իմե. (ծառայէս գաղտնի մնայ:)

2. Ածական բայանուն:

Ա. Ածական են բայանուններն որ ընդունելութեան ոյժ ունին. եւ կը կոչուին Բայածական:

Բ. Բայածականք առ հասարակ ածանց բառ են կամ բարդ: (Իսկ արմատական բառերն, ինչպէս՝ հմայ, կեր, խոր, զէր, զէր, զէր, եւայլն. հասարակ ածական են, որոնց խնդրառութիւնը յառաջ տեսանք. Գլ. Ե. եր. 261:)

Գիտուն, զգայուն, շարժուն. փախսեայ, գործունեայ. երկիւղած, կոխան, վիրաւոր. եւայլն:

Նոյնպէս ասոնց բացասականները՝ Տգէտ, անգէտ, անգործ, անհաս, անքննական, եւայլն:

Չարխօս, վնասակար, կանխագէտ. լուսատու, առատաբեր: *

Գ. Բայածականներն ամէնքը հոլովական են, (ի բաց առեալ անոնք որ ի բնէ անհոլով են, եր. 190.) եւ բայական խնդիր կ'առնուն:

Դ. Ներգործական (ընդունելութեան) ոյժ ունեցողները սեռական հոլով խնդիր կ'ուզեն: **

Ընդ գիտունս օրինաց խօսիմ: Օրէնք էրբոյն մասը՝ կար, (կար, կեր) բայի մը մնացորդ է՝ առնել (ընել) նշանակութեամբ, որ միայն բանի մը բարդութեանց մէջ կը տեսնուի. օրինակ. աղբիւր. խնայել. ընել. եւայլն. որմէ են այս ածանցները՝ փայտակեր, յետակեր, եւայլն:

* Բարդերը բայով բաղադրուած են՝ որ գլխաւոր խնդառառ բառն է: Անտառայր բառին ալ վերջին մասը՝ կար, (կար, կեր) բայի մը մնացորդ է՝ առնել (ընել) նշանակութեամբ, որ միայն բանի մը բարդութեանց մէջ կը տեսնուի. օրինակ. աղբիւր. խնայել. ընել. եւայլն. որմէ են այս ածանցները՝ փայտակեր, յետակեր, եւայլն:

** Ինչպէս ընդունելութեանց շատ ցանցառ է հայցական խնդրառութիւնը, նոյնպէս բայանունաց իբր զարտուղութեամբ կը գտնուի հայցական հոլով արուած. Գաիւք շարեաց, զնոյն անարգութիւն:

նոսք արարածոց պաշտօնատարք եղեն: Լուսին լուսա-
տու Էփէբոյ: — Աերջինները արական կրնան համա-
բուիլ՝ ըստ յետագայ Ջ կանոնի. որոնց վրայ տես զար-
ձեալ եր. 262 աւանդուած կանոնները:

Ե. Արաւորականները երբեմն սեռական կ'առ-
նուն փոխանակ բացառականի, եւ երբեմն տրական. —
քիչ անգամ բացառական:

Իսաչիք իմ զկոխան ոտից յերոց ճարակէին: Աժօ-
թալից ննջեցին ընդ վերաւորս սոստերաց: (Տես վերը՝
եր. 348, հարեպլ սոստերի:) — Սատանայ՝ ձերոց ո-
տիցն Գորչապարցն կոխան լինի: — Ախրաւորք Փա-
րաւանի յորոյ. (բցռ.՝ քովի սեռականին պատճառաւ:)

Ջ. Իսկ խնդիր բնութեան՝ հասարակօրէն բային
պահանջած հորովը կ'առնուն:

Ածին զարան չարախօսս զԴոմնիլի. (կ'ըսուի սեռական
խնդրով ալ՝ Եկեցցեն չարախօսքն +ո:) Երկիւղած
յԱսոսածոյ. անխաղաց է դեղ-սջէն. փախտեայ է
նշնամայն. դիմակաց Բոգոսորի: Ընդդիմակաց է հրոյ
Ջուր. վնասակար էրոց արտանի. եղէզն շարժուն է
հոգոյ. ամենայն զեռուն շարժուն է վերայ երկրի:

Բայց երբեմն իրենց բայէն անկախ խնդրառու-
թիւն կ'ունենան: Սէիանոս՝ Տիբերի հազարապետ՝ յոյժ
բանկայ* էր արտայի: (Թագաւորին քով խօսքն ան-
ցուկ էր:) Եօթանասուն թագաւորք՝ թաթահատք
յեռաց եւ ոտից ի-բեռնց** քաղէին հաց ի ներքոյ սե-
ղանոյ արքային Բեզեկայ:

Է. Բացասական բայածականները, զորօրինակ՝
ոքեո, անոքս, եւն. (այսինքն անոնք որ բայական ար-
մատի մը վրայ բացասական մասնիկ մ'ունին,) տրական
կամ բացառական խնդիր կ'առնուն, — մանաւանդ
կրաւորական նշանակութեամբ:

* Բռն գոյականը իւր բայով կը գործածուի այսպէս. Տես-
ցուք այր քոն իոյցի. (տեսնենք որուն խօսքը կ'անցնի
կամ կ'արժէ:) Ասկէ է քանկայ բարդ բառը:

** Ուրիշ մը այսպէս գործուցած է. Թաթահատք է յեռաց
եւ յոտից ի-բեռնց. ըստ Բ կան. երես 266: — Ի-բեռնց
այստեղ երբայական կամ ասորական յաւելուած է, որ
յաճախ կը տեսնուի սուրբ Գրոց մէջ:

Աստուած հոգի կենդանի է, անհաս յոգոյ, անխօս լիզոսոց, անամփոփ իօրհրդոց, արտազոյ քան զամենայն ճառս: Յգէտք իցէք իօրհրդոցոյ այսօրի: Տգէտ է քանին. Աստուծոյ արգարտութեանն: * — Յողովանօսինքն եւ յամենայն չարեաց անկոխ է քաղաքն. (չարիք մը ոտք չի կոխեր այն քաղաքը:) Միամիտ եւ անփորձ է չարեաց: Արարիչն ամենեցուն աներեւոյթ է է յարժանօր աչաց. անտես աչաց կամ յաչաց. անքննուկան է աննողաց. (անքննելի:)

Նոյն խնդրառութիւնը քիչ անգամ ներգործական նշանակութեամբ՝ փոխանակ խնդիր սեռի հայցականի: Աստուած անփորձ է չարեաց. (ոչ փորձէ նա:) Անծանօթ եղեն է նձանկ. (ոչ ծանեան զնա:)**

Իսկ չէզոք նշանակութեամբ իրենց բնական խնդիրը (բնութեան) կը պահեն:

Ոչ եղէ անհաւան երկնօր օրեօրեանն: Չեմք ինչ անտեղեակ իօրհրդոց նոցա: Անխտիր լինել է Բեզ:

Ը. Բարդ բայածականները, որոնց գլխաւոր մասն է բայը, այս առանձին գիտելիքն ունին՝ որ թէեւ իրենց խնդիր սեռի իրենց մէջն է, (ինչպէս՝ պարբերատարս, որ ըսել է՝ պարգեւ տուող,) սակայն ուրիշ գոյական խնդիր սեռի մ'ալ կ'առնուն, եւ միշտ սեռական փոխանակ հայցականի. ինչպէս ընդունելութիւնները: Եւ կ'ըսուի՝ Փորձն յուշարար է զնասակարցն. (զմեասակարսն յուշ ածէ մեզ:) Լաօնօրեանց խրատտու: Պարգեւատու Բարեաց. (բարիք պարգեւ տուող.) աւարառուք սփացոսածոց. (ստացուածքն աւար առնողներ:) — Ածականով՝ Առատաբեր ցորենոց. (առատ ցորեն բերող:)

* Բայանուանց այս արական խնդիրը կապակցութիւն ունի կրք. բայերուն արական խնդիր առնելուն հետ՝ (փոխանակ բացառական խնդիր սեռի առնելու.) ինչպէս. Գիւրաւ գասնի ինքրողաց իւրոց: Գոսաց այնոյի որ զինն ոչ խնդրէին: — Բայց բայանուանցն աւելի յոճախ է:

** Նաեւ բայածականներուն բացասականը կրնայ առանց բառով եւ աներեւութով նեւանալ՝ ինչպէս ընդունելութեանցն. (եր. 423:) Առանց զասիւց են թոյնքն. (անձեռ, ներգծ. նշանակութեամբ:)

Այս սեռական խնդիրն երբեմն յատկացուցիչ է բարդ բայանունան մէջի գոյականին. ինչպէս Ա-անբա-պահ պատուիրանաց. (որ պահէն դա-անդ պատուիրանաց)։ Ա-անբապահ ու-խորից ժերոց։ Ամենագործն քնո-ւթեանց Ատուած. (արարիչն ամենայն քնո-ւթեանց)։ Սրբազէտ ամենայնի. * (սրբից ամենեցուն գիտակ)։ Աղէկերք ճարգ-իցիկն ճարճոց. (որք ուտեն շաղխ ճարգիցիկն ճարճոց)։

Սակայն գրաբարի առանձին յատկութիւն մի է՝ որ բայանունան մէջի գոյականն իբրեւ զառ խնդիր աւել-ցուի առջեւը. — մանաւանդ այն տեղն ուր գոյականին վերագիր մը տալ պէտք է, (ածական կամ յատկացու-ցիչ.) այսպէս. Աշխարհագործն ամենայն աշխարհի **. (Հաստիչն ամենայն աշխարհի)։ Ամնագէտ է ամենայնի։ Օրբնակիրք օրբնացն սրբութեան։ Իրագէտ իրացն կա-տարելոց։ Բերդակալք բերդացն. եւ այլն։

Նայն ձեւը կը տեսնուի նաեւ ածանցեալ բայա-ծականաց վրայ։ Չեռքն են քործունեայ քործոց։ Գոր-ծաւորք քործոյն։ Անյեան հաս յեռին մարդոյ. եւ այլն։ ***

Ինչ հանրապէս բայածականներու եւ հասարակ ածականներու խնդրաւորութիւնն (եր. 261.) իրարու մեծ կապակցութիւն ունենալուն՝ հոս եւ հոն աւան-դուած կանոններն իրար կը լրացընեն։

* Քիչ տեղ հայցական խնդրով. Ջոյ ես անձին իմում իրագէտ եմ։

** Չքսելու համար վերագրաւ մէկտեղ՝ Ամենայն-աշխարհա-գործն. ինչպէս որ կայ տեղ մ'ըսուած՝ Ջո-ամենայն-լա-րե-տապարտ Մենեղաւոս. (վիսկ' զամենայն լարեաց պարտ կամ զլարեացապարտն ամենայնի, ինչպէս վերի օրինակաց մէջ)։

*** Շատ ուրիշ գեղարքու մէջ կը տեսնուի գրաբարի այս յատկութիւնը։ Այսպէս են՝ Ջրհեղեղ ջուրք. զբազուրի զբաց. տարածի պարստարաց. ընդ այն այնոյն. գոր-ծել զգործ նաւաբործութեան. — նորայնոս ինչ յեռել, կամ նորաձեւս ինչ նորոգել. երկիր գլաբեր գլաւից. ճաշ աղուտալ. եւ ուրիշ այլեւայլ ձեւերով։

Իսկ նաեւ ճաշել, երկել, երգ, տել զաւոր, խնդ-խնդել, պարստ պարսիտ, գործ գործել, եւ այլն. եւ այլն. (որ ամեն լեզու չի կրնար բռնել.) քանի մ'արեւելեան լե-զուաց հասարակ է։

Գ Լ Ո Ւ Խ Ժ Ք .

ԱՆՓՈՓՈՒ ՄԱՍԱՆՑ ԲԱՆԻ ՎՐԱՅ

Անփոփոխ մասանց բանի վրայ՝ որ են Նախգիր եւ Նախադուրօթիւն, Մակբայ, Շաղկապ եւ Միջարկութիւն, ըստ բաւականի խօսած ենք Ա Մասին ԱԶ. (Եր. 128 — 182:) Այստեղ անոնց գործածութեան քանի մը կարեւոր գիտելիքը կը մնայ աւանդել:

1. Նախդիր եւ Նախադրոյթիւն:

Ա. Նախգիրներն որ միշտ իրենց գոյականէն կամ նախգիր աւանդ որեւիցէ բառէն յառաջ գրուելու են, գոյականին նախագաս վերագիրներէն ալ (որ են՝ ածական, յատկացուցիչ, մակբայ, եւայլն,) յառաջ կը գրուին, եթէ նաեւ վերագիրներն այլեւայլ բառերով յօդեալ ըլլան*. ինչպէս.

Աչք ի բազում ինչ սխալին՝ ի մտաց այլուր ազատիւն: Աւել շտ քանի մեջ իւ սխալ՝ մոտի ուրիշ տեղեր պարզութիւն: — Յառաւել զմարզն պարտելոյ: Աստուած զվասն մեր սերմանեալ ցորեանն ամի ամի մեռեալն յարուցանէ: Չեղ շահ աւելի լինիցի՝ յորժամ զվաղուց ասացեալն ի մտի կալեալ պահիցեք, եւ զպետոյ նախալն լսիցեք: Չվաղուց ասերեալն կանգնեաց: Մեղքն յորովայնին ծառայ լնելոյ մտին. (ի լինելոյ ծառայ որո:) Աղէ դու զկարին իսկ զոչոյթեալ ցանկութեամբ՝ պրկեալ եւ մարակեալ: ՉՈրդւոյն աստուածութիւնն ցուցանէ՝ զյառաջ քան զարուսեակ ի Հօրէ Զնեալ: Ի քառասուն եւ յեւս աւելի ամաց: Վարձս առ՝ զի վեր քան զամենեսին լինել:

Այսպէս նաեւ՝ (թէպէտ ոչ շատ սովորական.)
 Զ'առ սակաւ սակաւ անոսմ յայտ առնէ. յոչ բաւական լնելոյ. յոչ ուղիղ հայելոյ. (աւելի սովորական՝ առ

* Չենք յիշեր պարզապէս նախագաս ածական կամ յատկացուցիչ ունեցողները. որ շատ անգամ ըստուած են. զնոցա քան. ընդ մեծամեծ չարիսն. եւայլն:

ոչ ուղիղ հոյեւոյ.) շնոր արժէ շախտան. շատ մարմնոյն վերանան. զի սկզբանէ շարո-նիանն. նախ քան զի սկզբանէ աշխարհի. զնախ իջանել զաղաւնոյն: — Զի, շնոր, շնոր՝ աւելի միջին եւ վերջին ժամանակներու սովորական են:

Նոյնպէս նախադրութիւնները. Առանց շնոր քանս ինչ արեւոյ: Յետ անոր երկուայն: Վասն բազում անգամ ոտնակապովք եւ շղթայիւք հոյեւոյ: Ըստ տակաւ տակաւ մերձեւոյն. ինչպէս յառաջ տեսանք՝ երես 392. — Թէպէտ շատ անգամ կրնան վերագիրներն յետագաս մնալ. այսպէս. Զքորեանն սերմանեալ վասն մեր. զքեանն ի Հորէ յառաջ քան զարուսեակ. եւայլն:

Բ. Բայց շնոր հանուր կանոն է շնորք գրաբարի՝ երկու կից նախդիր շարձախել, ոչ միեւնոյն նախդիրը, (ինչպէս յ եւ ի, կամ երկու շ եւայլն.) եւ ոչ այլեւայլ նախդիրներ՝ շ եւ ի, կամ շնոր եւ շ կամ ի. եւայլն: Ուստի շատ անգամ երկրորդ նախդիրը զեղջելով կ'ըսուի՝**

Յարոյց Տէր վրկիչ Իսրայելի զԱւովդ՝ զ՝երկոցունց ձեռաց արեւոյ. (փոխանակ՝ զյերկոցունց ձ. արեւոյ.) Ընդ երեսս թքանէին այնորիկ՝ որ թքովն իւրով զ՝ծնէ հոյն բժշկեր. (զի՛ ծնէ:) Յառաջ քան ՞ ի խաչ ելանել եցոյց զԹագաւորութիւն իւր. (զի՛ խաչ:) Յառաջ քան ՞ զերկիր արանել եւ նախ քան ՞ զանդունդս Գործել: Յառաջ քան ՞ զայլ առաքինութիւնս հոգորել. (շ նախդիրը չկրկնելու համար:) Յառաջ քան ՞ զաղօթսն կալ: Անկանիս ի հպարտութիւն եւ ՞ զընկերն դատապարտել. (զյաղօթս. ի զընկ:)

Այսպէս եւս՝ Զծնունդն եւ զ՞աշխարհի շրջելն. շարագարեմ ի ՞նոյն ասելոյ. (փիկ՝ զյաշխարհի շրջելն. ի ՞նոյն ասելոյ:)

Այս կանոնէս կը զարտուղին՝

1. Ի եւ յ, երբ աւելագրութեամբ իրարու վրայ ընկած են. ի յերկնաւորն բարութեանց. (եր. 11.) —

** Զեղուածն հոս ալ այս ՞ նշանաւ կը նշանակենք:

որ հնոց քով շատ ցանցառ գործածութիւն ունի: Բայց յ'ի մէկտեղ չի դրուիր:

2. Առ նախդիրն՝ որ շատ ստեպ է նախդիրն կից է. ինչպէս մինչեւ հիմայ տեսանք: Քիչ տեղ կը գտնուի նաեւ՝ Մերձ առ յերուսաղէմ. առ յասելն նոցա, եւն:

Գ. Ուր որ է նախդիրն բառի մը վրայ շ գնեւ պէտք ըլլայ՝ այն երկու նախդիրներուն մէջտեղն առ կ'աւելցուի, մանաւանդ բացառականի վրայ. այսպէս: Մեծատունն զառ ի գուրսն ընկեցելովն զանց առնէր. (փխկ՝ շի գուրս ընկ. այս է՝ զընկեցելովն ի գուրս:) Գրանը տո՛վ պարկաճին հոգ չունէր. (Ղապարոս:) — Ընկալայ զառ ի ձէնջ զհրամանդ: Ճառեցից զառ ի ֆաղդեացւոց մի ըստ միոջէ զմէնջ գրեալն. զառ ի մէնջ կարգեալ ամս. զառ ի վերուստ եկեալ զհարուածսն. զառ ի մարդկանէ փառաւորութիւն՝* եւ զառ ի յԱստուծոյ: Ջմտաւ ածցուք զառ ի յԱստուծոյ եւ զառ ի մարդկանէ գովութիւնսն: * Փառս ի միմեանց առնուք, եւ զփառս զառ ի միոյն Աստուծոյ ոչ խնդրէք. (զփառս որ ի միայնոյն Աստուծոյ է:) Ջառ ի սկզբանէ եղեալ սահմանն խախտել: Գո՞վէ զառ ի շարեացն հեռանալ: Ջառ ի փառացն անկանել շար համարիմ. (զանկանելն ի փառաց:) Պահեա զառ ի քեզ ապաւինեալս: **

Դ. ինչպէս է նախդիր երբեք ձայնաւոր գրի վրայ չի կրնար դրուիլ՝ բայց առ է նախդիրը ձայնաւորով սկսած աներեւութի վրայ երբեմն կը գտնուի դրուած: Առ է ուսեւ զկեանս. առ է ըմբերանել զայնոսիկ ուրք ասենն. եւայլն: Սակայն աւելի հասարակ է՝ Առ է յայրել. գիւրին առ է յընդունել. (կամ նաեւ՝ առ յուսուցանել.) եւ աւելի յաճախ՝ Առ սորել. առ սյրել. առ

* Փառատորութիւն, փոփոխութիւն՝ այստեղ կըր. նշանակութեամբ բայանունն. Աստուծակ փառատորել, փոփոխել:

** Միջին ժամանակներու դրուածոց մէջ շատ անգամ անձա՛հ զեղծմունքներ կան այս կանոնիս. Ջառ ի ցրեալն հաւարել. զառ ի սուրբ յառազաստի քում բնակեալգ. զառ ի զուքնէ կառուցմամբն. եւայլն. որ մեծապէս խորչելն են: Բայց կանոնաւոր են՝ Ջառ ի քէն զմարմնացեալն. զառ ի քէն հովանացեալն. եւայլն:

տել: -- Ուրիշ տեղեր՝ միշտ , կցելով. Առ ի յիւրմէ.
առ ի յարքայէ. առ ի յԵրբայեցւոց. եւ այլն:

Ե. Գրոց մէջ կը գտնուի երբեմն շ գրէն յա-
ռաջ շ նախդիրը՝ եւ ի գրէն ետեւ ի նախդիրը զեղչուած,
(ինչպէս նաեւ , գրով սկսածներուն ի նախդիրը զեղ-
չուած տեսանք յառաջ՝ երես 237, Ա ծանն:) Այսպէս.

Այլք կերիցեն զորութիւնս ձեր*: Տալ օ Զերէի
եւ զՍաղմանա ի ձեռս իմ: Կազմեաց զօրս իւր: Պա-
տառեաց զգեստ իւր: Ծանիցեն զորութիւնս իմ:
Տես զարմանալինս: — Չկարիցեն եւ ի գետնի օ քուն
լինել: Չոգաւ ի սուն առն միոջ աղքատի օ Հարսա-
նիս: Լըջի օ ճարպոյ նոցա: Սեպուհ մի օ Մամիկո-
նեան սոհմէ. եւ այլն:

Այսպէս նաեւ նոյնաձայն կամ նմանաձայն գրերէ
յառաջ եւ ետքը՝ զեղչուած կը գտնենք այս նախ-
դիրները՝ շ, յ, ի. զորօրինակ. Իսկ օյող ցորենոյն
հանգոյց առ հանգոյց հաստատեաց: Առեալ ունի-
օ նշանս գալտեանն: Այսպէս օ բազում օժեւանաք
զանց առնէին: Մտապան զԱստուած օսուրբն իւ-
րեանց: Ուտեաք հա՛յ օյազ. եւ այլն. եւ այլն. (փիլի
զոսոյ. զնշանս. զսուրբն. յյազ.) Ասոնք եւ ասոնք
նմանները գիտելով՝ այսօր իբրեւ քերականկան կա-
նոն կ'աւանդուի այս երեւոյթը: Սակայն ուրիշ շատ
եւ շատ նմանօրինակ գէղքերու մէջ տեսնուած
գրչազրաց յայտնի սխալմունքները մեծապէս կասկա-
ծելի կ'ընեն այս կանոնիս արժէքն ու իրականու-
թիւնը: — Աւասիկ կից նմանաձայններու յայտնի
վրիպակներն, որ աչաց կամ մանաւանդ լսելեաց
սխալմամբ** մտած են հին գրուածոց օրինակու-
թեանց մէջ:

* Զօր-Նիւն՝ սուրբ Գրոց լեզուաւ կը նշանակէ նաեւ
երկէ Բերտ, որքիւնտ, սրացոտանտ:

** Հին գրութեան կերպն որով բառերն առ հասարակ
իրարու կից կը գրուէին՝ շատ կը գիւրացընէր Աչաց
սխալմունքն ու խօսքի այլալուծիւնը, որով եւ կրկին
գրերու տարապարս զեղչումը. ինչպէս բերուած օրինակ-
ներէն սմանց մէջ: Այսպէս է, օրինակի աղագաւ, բնա-
գրին ուղիղ գրուածքը՝ նամակեաց լիւսիսա՝ (նամալ
իւ յլիւսիսա), աչաց սխալմամբ եղած՝ նամակեաց լիւ-
սիսա, (նամալիտայ լիւսիսա.) որով անլուր բայ մը կ'ենէ՝
նամալիտ, որ գոյութիւն չունի:

Նոյնպէս յաճախ կը տեսնուի (ուրիշ կարգովէն)
Լսելեաց սխալ, ինչպէս գարձեալ վերը բերուած օր-

Ասացի ձեզ լու ի լու. փիկ՝ Ասացի ձեզ լու ի լու :
 Զայն ինչ յայտնեաց. Զայն ինչ յայտնեաց :
 Արդ մտաց ինչ զգան. Արդ մտաց ինչ զգան :
 Առ աւար, ժողովեցաւ կա- Առ աւար, ժողովեցաւ կ :
 Սոսս ինձ ս' ծնաւ. [պուտ. Զոսսս ինձ ս' ծնաւ :
 Արդ եւ սկիզբն եղեւ. Արդ եւ սկիզբն եղեւ :
 Շրջանաց այլակերպն աստե- Շրջանաց այլակերպն աս-
 Յածեալը ահհին. [ղաց. Յածեալը ահհին : [տեղաց :
 Երկուս մահ սպանանեն. Երկուս մահ սպանանեն :
 Զմկ եկեալ փրկելը դու. Զմկ եկեալ փրկելը դու :
 Ոչ եկի խաղաղութիւն ար- Ոչ եկի խաղաղութիւն ար-
 կանեւ՝ այլ զհար. կանեւ՝ այլ զհար :

Նշյնն ըստ մասին կրնայ մտածուիլ յօդի զեղչման վրայ ալ, որ յառաջ յիշեցինք, երես 314, Գ. ծան :

Ի նդ հանրապէս նախդիրներուն գործածութեան այլեւայլ կերպերը, այս ինքն են՝ տեղափոխութիւն, կրկնում եւ աւելադրութիւն, զեղչում, եւայլն. շատ ազատութիւններ ունին գրաբարի մէջ. որոնց մի առ մի բացատրութիւնն ու վարդապետութիւնը շատ երկար է եւ մանրամասն, եւ միանգամայն անհաստատ : Ուստի մինչեւ հոս այլեւայլ տեղեր աւանդուած կանոններուն մնացորդը՝ վայելուչ գրուածոց ուշադիր ընթերցմամբ միայն կրնայ լրանալ :

Զ. Նախադրութեանց կարեւոր գիտելիքն աս է :

Տեսանք շատ բառեր՝ որ նախադրութիւն են եւ միանգամայն մակբայ. (եր. 167.) ինչպէս՝ առաջ, է Ֆերոյ, ընդդէմ, հանդէպ, եւայլն. որ տեղական (տեղ յուցընող) բառեր են : Թէ ասոնք ի բնէ նախադրութիւն են թէ մակբայ՝ խնդիրն այսպէս կը լուծուի :

Տեղական նախադրութիւններն որ մակբայ ալ են, ճշդիւ՝ գոյական անուն են*, մեծաւ մասամբ պա-

նակներուն մէջ, զորոնք կ'երեւայ թէ ընդհանրապէս առանց ը ձայնի կը հնչեն, (ինչպէս ցայսօր շատ գաւառացիք) : Այս կարգէն է լեւելաց վրիպակը՝ Կղզոյ իտ-տախա, փիկ՝ Կղզոյն է իտախա... որով կղզոյ՝ այլակերպ բայը մասն է հայերէն բառագրոց մէջ : — Թող գրաց ուրիշ բազմաթիւ մարդկօրէն սխալմունքները, մանաւանդ հին լեզուին ըստ օրինի հմուտ քննալին : Եւ այս է որ բրտերոց ազատազօրութեան անուամբ կը յիշուի քննական գրութեանց մէջ :

* Բացայայտ օրինակն ունինք ասձկ. լեզուին մէջ, որն որ

կասաւոր հոլովմունքով. այսպէս՝ Առաջ, (ընդ առաջ,) եւ առաջի, առաջոյ, յառաջոյ, զառաջեալ: Մեջ, միջոյ, ի միջոյ, ի միջի: Հանդիպոյ, ի հանդիպոյ, ի հանդիպով. եւն: (Տես եր. 148.) — Բայց կո՞նք ալ որ չեն հոլովիր:

Այս գոյականներն երբ յատկացուցիչ ունենան՝ նախադրութիւն կը համարուին սեռական խնդիր առաջ. (բայց իրօք յատկացեալ են.) եւ երբ բայի վրայ իյնան՝ մակբայ կը համարուին. այն ատեն սեռականը կը դառնայ վերջահարով տրական խնդիր կ'ըլլայ բային: (Նխդր.) Ընդ առաջ եւ նորս: — Առաջի ի՞մ կայ: Միջոյ.) Ընդ առաջ եւ նմա: — Առաջի ից ինչ:

Նոյն վերջահարով տրական խնդիրն ուրիշ հասարակ անուանց վրայ ալ կը տեսնուի. ի թիկունս հասանէ որչառութեան մերսմ: Հաս ինչ ի թիկունս:

Ի. Սան հասարակ ածականներ ալ նախադրութիւն եղած. ինչպէս. Աղաղակեցին եւ նոքա կից նմին: Աննո՛ք ալ անոր հետ միտեղ պտային: Այսպէս են նաեւ մօտ, հոռոյ, հախտակ. զոյգ, եւայլն. որ գործեալ բայի վրայ իյնալով մակբայ կ'ըլլան:

2. Մակբայ:

Բնած ենք (եր. 166.) թէ շատ անգամ հասարակ ածական մը բայի որպիսութիւն ցուցնելով մակբայ կ'ըլլայ. ինչպէս. Ե՛ւս չաք կործանեցան: Համարե՛մ ընդդէմ հայել: Հրաման տուր արձակել զնա ի կապանաց մի օր միշտ: Այս լ՛ երեսուն ամ է՛ զի...:

Ա. Ածականները մակբայ կ'ըլլան գարձեալ յոգնակի դրուելով՝ 1. անորոշ հայցական, եւ 2. ի նախդրիւ հոյ: — Ուրիշ նախդրիւ մակբայ՝ տես եր. 165:

1. Այր խորագէտ հազիւ հանդարտս ժպտի: Արտիւ ընթացին եւ Ռե՛նես հասանիցեն: Կա՛մախոս զնայ

Հազիւ քանի մը նախադրութիւն միայն ունի, մնացած ամեն հասարակ գոյականներով ու յատկացուցչաւ կը ձեւացընէ՛ եզ. ու յոգն. հոլովելով: Նոյն նմանութեամբ նաեւ աշխարհարար հայերէնը կ'ըսէ՝ Ի՞մ առկառ. գրան տպին. անտառին միջրը, ներսերը. բլրին մերերը. տան դի՛մացին. եւայլն. եւայլն:

ընդ քեզ: Որ սպանակն գնացեն: Ոմանք անկրեղ-
իմն աշխարհն. (այլանգակ մը կ'ողբան:)

2. Տունն հայրենի այրի, եւ մէք անցեալ գայուեմք*
յանգիտայ յանհոգս յապահոգս: Աչք կուրացեալ եզեն
գողոցն, եւ ինքեանք յանխոստ առ խարխափս եկին
ածին ի դուրս զեզինսն. (առանց իմանալու:) Ընդ
գետս անցցեն յսպանաորս. (սազք:)

Այսպէս նաեւ՝ Անօրոսոս ծախել. անշահս լալ.
աշինս խօսել. ծանոնս լսել. նշիրօրոսնս գիտել. զըն-
դսօրոսնս շարախօսել. մեծամեծս պարծել. (ոմանք կրնան
մեկնուիլ իբր Բանս ազնիւս, Քանս անարժանս խօսել:)
— Յանհոգս կալ. յանգիտս ուտել. սերմանել ի սնօրնս.
նետս ձգել ի գողորնս. (այսինքն՝ ի ծածուկ.) եւայլն:

Գերանուամբ կազմուածներն անորոշ հայցականի
տեղ շ նախդրիւ են. շայս օրինակ. զնոյն օրինակ. շոր
օրինակ. շայս յնս օրինակի. եւայլն: Հրովարտակն ար-
քունի օրինակ շայս գրեցաւ:

Բ. Բայց երբեմն մակբայի տեղ ածական կը
գտնուի գրուած. — այսինքն՝ ածականն ածական մնա-
լով: — Այս կերպն ընտիր է, բայց շատ յաճախեալ չէ:

Նորտ էին ժողովեալք ի Հրէաստան, եւ զսեղանն
դեռ եւս էին սրբեալ: Բազմօրեայ եկն գուժկանն ի
ճակատատեղւոյն. (փխկ՝ ի Քաղւած առօրս:) Բազմ-
ժամանակեայ արգելեալ փակեալ կային: Մարթ ինչ
իցէ՝ մեռելոյ երեօրեայ յառնել: Իշոցն երեօրեից
կորուսելոց. (յերից աւուրց հետէ:) Երեօրեայտ եկաք
ի Պատիողուս. (յերկուս աւուրս:) Արեգակնդ չըրե-
օրեայ ստեղծաւ: Տեռատես երկօրասանամեայ ծիւ-
րեալ: Յուղիոս մահեծան կալաւ զՀուովմայեցիս:
Այնպիսի խիստ վարս ունէր Յակովբոս, զի ի հոմո-
պաղորդ ծունր դնելոյ՝ ծունկքն իբրեւ զուղտու գեր-
ծեալ եւ ցամաքեալ էին. (փխկ՝ հանապազօր:) Որ ի

* Միտ անցեալ էայտիտ. մենք ասդին կը պառկինք: Ան-
յանիտ այսպիսի տեղեր յաճախեալ զարգու յաւելուած է:
Եւս անցեալ կայր եւ հայեր ընդ ծառն: Յորժամ ան-
ցեալ զատուցանիցէ զխաչնսն: Ասէ, անց նիսա սոս
վայր մի. եւ նա անցնստաւ: Առ զգեղարդնն եւ անց գնաց:

ծերութեանն այնպէս կողիցի՝ յայտ է թէ ի մանկութեան եւս չար:

Բազում ածականն ալ այս կարգի յատուկ գործածութիւն մ'ունի: Բազում եւս խօսեցաւ. ծառայեցէ քաղւած. թէ քաղւած ինչ թարթափին մտօք:

Գ. Շատ անգամ մակբայ մը գոյականի քով ածական կ'ըլլայ: (Տես եր. 348, Ա ծան. վերջը:)

Ո՞վ եկն անտի եւ պատմեաց զնոյն իրան: Ո՞վ եկանիլէ եւ այնպէս քանից որոնց: — Չեն ինչ ընդհատ ի բանտէ՝ ասոյն կեանքս: Նոքա զասոյն իրացս վակտոյս լինին. (այստեղաց բաները պինդ կը բռնեն:) Ձայն յասոյն ինչ գործոց կարծեն. (այստեղի գործերէն մէկը:) Ո՞չ կամիս գիտել զելս այս անոց ճանապարհիդ, զի մի զահէ* անկեալ կործանեցիս: Անծանօթ լինէր առյուծայ մարդկան՝ Աստուծոյ բարերարութիւնն: Ըստ յառաջագոյն տեսլեանն Գրիգորի: Ի միասնեմ գալստեան իմում հասուցից:

Այսպէս եւ՝ ժողովել (զկերակուր) զօրբարօրէն. վերջերոյ բանիւք. Կիրիւնդիտան կոիւ. մեծապէս սիրով. առ ակնն ծառայութիւն. յասոյն եւ յանոյն բարութիւնն վայելել. եւ այլն: — Իսկ յոյժ բառը շատ յաճախ իբրեւ ածական կը գործածուի, մանաւանդ յետադաս: Մտեալ ի ներքս ետես ամբոյն յոյժ եւ լալականս, եւ պողպէ յոյժ: Էր իոփ յոյժ ի տեղուջն: Երկեան նոքա երկիւղ յոյժ: Նա բերէ պոսու յոյժ: Արծաթ յոյժ ետուն զօրականացն: Ո՞գիտաց զյանցուած իւր յոյժ. (փիկ՝ զբազումս:) Բազում շահ եւ յոյժ սիրոփ: Եկեալ առնուին զմացորդս յոյժ աւարացն:

Այսպէս եւս յատուկ կերպերով կ'ըսուի. Արծաթ կրկին առէք, գուցէ ընդ իփս ինչ իցէ. (խորեական բան մ'ըլլայ:) Ի շոք են զարդարանքն քո: Ի նանիք է ձեզ յառնել կանխաւ: — Իսկ ընդ երկուր եւ ընդ ունայն՝ հասարակ ածական ալ համարուած են, եւ այն ատեն կից կը գրուին: Ձայնչափ ընդերկուր ճանապարհ. էր փողն ընդերկուր. ընդերկուր եղեւ պան-

* Գահ, բարձր տեղ. (տե՛ս. սուրբութիւն) Ասկէ է Գահ-վտ բառը:

գրեաութիւն իմ: Ընորհք նորա ընդունայն ինչ ոչ եղեն. ընդերջար ժամանակզբ: — Իբրեւ մակբայ՝ կը գրուին Ընդ երկար կատել. ոչ ընդ երկար կալաւ բարկութիւն քո. մի ընդ ասնայն զընորհան ընդունել:

Դ. Ոչ եւ չ՝ ածական եւ գոյական անուանց սկիզբը գրուելով հակառակ նշանակութիւն կու տան: Ի շահագործի ինչ իրաց երկնչել: Յունաց չմաստուն իմաստունքն: Նոքա նախանձեցուցին զիս չսարսածով, եւ ես նախանձեցուցից զնոսա չպիտա: — Արչեցան ոչ յողովարդ իմ, — կամ չողովարդ. ոչ սարսածով. եւն:

Ե. Երբեմն ոչ, չ եւ մի առաջին բառին վրայ միայն գրուելով՝ յաջորդներուն վրայ ալ կ'իմացուին: Զո՞ ի մարգարէիցն ոչ հալածեցին հարքն ձեր եւ սպանին: Բռնի զուրուք մէք ոչ կերտ եւ որբտ: Եթէ պիղծ ինչ էին կերակուրքն՝ նախ ինքն իսկ ոչ հաշիւիք ի նոցանէ եւ ապա այլոց հրաման րայր ճաշակել: Ոչ խորիք եւ ցրտեցեր զնոսա: Ոչ արնոզեալ իւր եւ քոյ զկնի իմ: — Մի՞ անկանիք առաջի իմ եւ երկիր պտանիք:

Զ. Ոչ, մի եւ ընդեր՝ երբեմն իրենց բային յետագաս կը գրուին:

Ասիցէ զք. երթայք ջեռարուք եւ յագեցարուք, եւ րայց՝ ոչ զպէտա մարմնոյն, զինչ օգուա իցէ: Օրինացն ոչ հնազանդի, քանզի եւ կարէ իսկ ոչ: Որ կճղակահերձ իցէ եւ որոնիցէ ոչ. խոզ կճղակաբաշխէ եւ որոնոյ ոչ: Յայտէ թէ բնաւ եւ կ'իսկ ոչ: Եւ ամպիին իսկ ոչ:

Որ ոչն գործիցէ՝ եւ կերիցէ մի: Բնաւ եւ իօսեացին մի յեկեղեցւոյ: Եւ անսանեացի՝ իսկ մի ի միջի ձերում: Համարեա թէ պահապան չես, սպանող ընդէր ես. եթէ ոչ պահէիր՝ սպանանիք ընդեր: Եւ իրկիք իսկ ընդեր զայլոյ արարածս:

Այսպէս եւս՝ Օքնէ ինչ ոչ. քրեցաւ իսկ ոչ. բայց իրեի ոչ. զպն բնաւ եւ յայտնել մի:

Այստեղ մտադրութեան արժանի են եւ ու իսկ շաղկապներն որ գրեթէ միշտ կից կը գործածուին:

Նոյն կարգն են նաեւ ոչ ինչ, ոչ ո+, օյ ո+, եւն: Սորա բարբառս իւրօրէնցոցնն ոչ զո+: Եղև նմա չար եւ ոչ ինչ: Մեղա- եւ ոչ ո+: Ժողովոցե եւ օյ օյ. (եր. 175):*

Է. Վիչ անգամ կը գտնուին ոչ, օյ մակբայ- ներն աւելորդ կրկնութեամբ՝ բացասական բայի վրայ:

Այնպիսին հպարտացեալ է եւ ոչինչ ոչ գիտէ. (գիտի՝ ոչինչ գիտէ, կամ՝ ինչ ոչ գիտէ:) Եւ ոչ ի միում ոչ վայելցեր: Եւ ոչ նշմարանս ինչ զոր լսէինն՝ ոչ կարէին ինչ ունել ի մտի: Եւ ոչ զմի ոչ ապրեցուցանէին. — ուր աւելորդ են վերջինն ոչ մակ- բայները: Կանոնաւոր եղած կ'ըլլար խօսքը՝ եթէ ե- ուով ըսուէր՝ Գիտի ե- ոչ ինչ. ըստ Ջ կանոնի. — կամ՝ Ոչ գիտէ ե- ոչ ինչ. ոչ կարէին ե- ոչինչ ունել ի մտի. ըստ կանոնին որ աւանդեցինք Ա մասին մէջ, եր. 174:

3. Ըստկաս:

Ա. Երբ քանի մը բառ ե- ուով կապել պէտք ըլ- լայ՝ հասարակօրէն վերջնոյն վրայ միայն կը դրուի. ինչպէս. Հուր առաքի ի վերուստ՝ հաշել ե- մաշել | զերինս ե- զանտառս: Ժողովել զառ զաւար ե- զա- պուռ բանակին: Յի՞նչ քարածերպս մտցեն թագիցեն ե- ապրեցին: Թողուլ լքանել ե- ի բաց գնալ: Ցե- սանիջիք դուք դիս արծաթեղէնս, ոսկեղէնս, փայտե- ղէնս ե- քարեղէնս: Բայց շատ անգամ վայելուչ է ամէնն ալ ե- ուով շաղկապել՝ միայն զարդու համար**:

Ազգի ազգի սողունք ե- բոտոսք ե- ցեցք ե- ճճիք ի նոցանէ կերակրին: Առնուն եւ ապխտեն զմիսն, եւ այրւոյն ե- որբոյն ե- աղքատին անտի մասն ինչ ոչ հանեն: Հուր անկանի ի տուն դիցն ոսկիապա- տացն ե- արծաթապատացն ե- փայտեղինացն:

* Մակբայն յետագաս եղած չի համարուի՝ երբ բացա- սական կամ արգելական բաղէն ետքը ե- շաղկապով եւ մասնական բառով մը (ու ո+, օյ ո+, օյ ուրիտ:) կրկնուած է. Ոչ դատիմ ե- ոչ զո+. օյ գտցե ե- օյ ինչ. օյ զանց առնիցես ե- օյ չիտլ. եւայլն:

** Նոյնը գրաւոր տաճկերէնի ալ պերճութիւններէն է՝ արաբերէնի նմանողութեամբ:

Բ. Ասոր հակառակ՝ սովորութիւն է երկու կամ աւելի բառ ամենեւին առանց ե-ի իրարու կցել, մանաւանդ բայերը, — երբ կամ նոյնանշան ու նմանանշան են, եւ կամ կից գործողութիւն կը ցուցնեն: *

Խախտեցին խորոհեցին այլազգիք զորդիսն Իորայէլէ: Ջր գործիս պայմիս դու, Յովբար: Կրնեցան ելն ընդ ծանապարհն. (նորէն գարձան նոյն ճամբով ելան:) Դու ելանիցես՝ պարիցես պաշարիցես ինձ զսահմանս նոցա: Ահաւասիկ սարակի՛՛ս ի՛նչն ի՛նչս թախի՛՛ս. մինչեւ ի սպառ մեռանիցիմք: Կարգեցաւ իզմեցաւ ճակարեցաւ. եւ այլն: Իբրեւ ազուաւք ի յերկինս եւ ընդ երկիր՝ օդոյ արեալ որբարբարոց խոռոցեալ: Ջորէն զարգասէր աղջկանց վրեաց շինեց: Յարձակեցաւ, յաշահեալ կոտորեաց: Անդ յանձանձէր զից ճոց** ժողովրդեանն. (եւ մնացածները) Բնակիչքն Բեաիղուայ ելանէին անկանէին ի վերայ Ասուրայ, աւար հարկանել ժողովել զաւարտութեանս, զի պարտ իողպարտ** զանկեւոցն:

Այսպէս եւս՝ Առն քնացին զնա***. աւել ընկեցե՛տ զնս. աւ ընկաւաւ զնս. փարտա հատոյց ի քաղաքն. ելին թերին զայն ինչ. ափս յեռս ածել, (տճ. լըբ՛ըն՛ժո՛ւ֊) եւ այլն. — որ աշխարհաբար եւ տճկ. լեզուաց ալ հասարակ են: (Աւելադրութեան ձեւ. եր. 463:)

Այս եւ ասոնց նման կրկնութիւններ կամ կը ցուածներ՝ սովորութիւն չէ հարցական կամ բացասական խօսքերու մէջ գործածել:

Գ. Երբեմն ընդուն. անցելոյն (որ իբրեւ բայ՝ խօսքի մ'առաջին մասն է,) եւ յաջորդ դիմաւոր բային մէջտեղն եւ շղկապ կ'աւելցուի. — քիչ անգամ նաեւ ուրիշ շղկապ մը՝ նաեւ երկու դիմաւոր բայի մէջ:

* Յես եր. 398, Իր. եր. 433, ԺՁ. եւ գարձեալ Նոյնանշան աւելադրութիւն եր. 467:

** Ջից ճոց, զիպարտ իողպարտ եւ նման նոյնանշաններն իբրեւ մէկ բառ համարուած եւ մէկ նախդիր միայն առած են: Կրնար ըսուիլ նաեւ՝ Ջկաց եւ զիցոց. զիպարտա եւ զկողպարտ:

*** Առնաւ քնալ իբրեւ մէկ ներգրծ. բայ եղած ըլլալով՝ չէ զոք բային առջեւ հոգ. խնդիր սեռի ընկած է:

Ի մանկութենէ կանխեալ ի գիրս մինչեւ ի ծերանալ՝ եւ ի ազիտութեան մեռանին: Տղայութենէ մինչեւ ծերութենէն երբեք չբազմ՝ վերջպէս ոգեւ կը մեռնին: Ի վերոյ մեծարոյ ալեգքն ծաղկեալ՝ եւ ի ներքոյ զմանկաւոյ միտս ունիցի: Զաշակերտոսն կամուրջ գործեալ՝ եւ ի վերայ չըլէր: Զոր օրինակ կոթող ինչ կանգնեալ ուրեք՝ եւ ամենայն թռչուն ի վերայ ծրտիցէ, սոյնպէս եւ դիքն: Զօրս ընտիրս գումարեալ՝ եւ իւրաքանչիւր մի մի կողմն ունէին զԱսորոց: (Տես նաեւ եր. 430:)

Ընդ որ այժմ ոչ հայեցեալ՝ քոյց հաւատացէք. (չտեսած՝ հաւատացիք:) Եթէ կամիք եւ եթէ ոչ՝ քոյց թէ մտանեմ: Թէ ասացից ձեզ՝ սակայն ոչ հաւատայք: — Ասոր նման են նաեւ՝ Ըստ գործոցն եւ զհատուցումն նոյնպիսի առնուցու: Ըստ առն եւ զօրութիւն իւր:

Նոյն եւ յաւելուածն անմիջապէս յաջորդող գործողութիւն ցուցնելու կը ծառայէ: (Թերիակէ) չեւ հասուցեալ եւ անդէն բուժէ. (հազիւ թէ դրուի՝ անմիջապէս կ'առողջացնէ:) Թուուցեալ եւ մերձեցաւ առ իս: Սակաւ ինչ երեւեալ՝ եւ անդրէն ամփոփէր: Թափ հանեալ զնետն ընդ մէջ ներքինւոյն՝ եւ անդ յերկիր անդեալ սատակեցաւ: *

Գ. Ուրիշ այլեւայլ շաղկապներ առանց հարկի եւ միայն զարդու համար կ'աւելցուին, ինչպէս այս Բ մասին մէջ զանազան տեղեր, եւ նաեւ Ա մասին մէջ տեսանք համառօտիւ. — տես մանաւանդ՝ Թէ, զԲ, եւ, ադ, ևն. շաղկապներու յաւելուածը. (եր. 174, 177, 178, եւ ծանօթութիւնք՝ եր. 168—173:) Ասոնք գրաբարի պերճութեանց մասն են. եւ շատերը հարազատ հայկաբանութեան էական կանոնաց կը վերաբերին:

* Երբայական սճով շատ յաճախ է եւ ի գործածութիւնն, որ ուրիշ շաղկապներու եւ յարաբերականներու տեղ ալ կը դրուի: Հայեցայ՝ եւ ոչ որ էր: Եւ ետես՝ եւ ահա ելանէր բոց. (փիկ՝ ետես զի ելանէր:) Յարեաւ Թողաւ, եւ նա բնակէր ի Սամարիա. (փիկ՝ որ բնակէր:) Բայց նոր գրուածոց մէջ թերեւ իբրեւ գրաբարի յատուկ զարդարանք՝ գործածուած կը գտնուին այս օտար դարձուածները:

Բայց կան գրոց մէջ աւելորդ շաղկապներ՝ որ ոչ զարգ են խօսքին եւ ոչ ղյժ, այլ անկանոն յաւելուածք, որոնց հետեւողութիւնն զգուշալի է:

Ետ հրաման վաղէս ղ՛ զԵւսերիստ արկանել ի բանդ: Արձակեաց մեծաւ պատուիրանաւ ղ՛ Յուզա ինքնին ի գլխոգին զբաւմբ արկանել: Պաւղոս աղաչէր ՚ի զմեկնեալն ի նոցանէ մի առնուլ ընդ ինքեանս: Ասէ, ղ՛ մի կարի զանձն քո աշխատ առներ այդչափ:

Այս եւ ասոնց նման շատ մը անկանոն ըսուածքներուն պատճառք հետեւեալն է:

Խօսք մ'երբ երկու կերպով կրնայ ըսուիլ, երբեմն կրնայ գրողն գրին ներքեւ այն երկու կերպերէն բաղադրութիւն մ'ելլել՝ որ ոչ մէկն է եւ ոչ միւսը, այլ ճշգիւ քերականօրէն խօսելով՝ սխալ է, բնատնեկան բերանացի անկանոն խօսուածքի նմանութեամբ, որ երբեմն առաջին կերպով սկսած՝ երկրորդով կը վերջացընէ. եւ չէ այն զարտուղութեանց կարգէն, որոնք լեզուին սովորական եղած ըլլալով՝ թեեւ անկանոն լեզուի յարմարիւն կրնան համարուիլ: — Այսպէս, օրինակի աղագաւ, այս խօսքէս որ երկու կերպ կրնար ըսուիլ,

Ետ հրաման զուրբն արկանել ի բանդ. — կամ

Ետ հրաման ղ՛ զուրբն արկցեն ի բանդ, ելած է անքերական բաղադրութիւնը՝ Ետ հրաման ղ՛ զուրբն արկանել ի բանդ: — Նոյնպէս փոխանակ՝ Ասէ, մի կարի զանձն քո աշխատ արձիբ. — կամ

Ասէ, ղ՛ մի կարի զանձն ի՛ր աշխատ արձիբ, ըսուած է երկուքէն բաղադրելով՝ Ասէ, ղ՛ մի կարի զանձն քո աշխատ արձիբ: — Եւ զարձեալ՝

Վաս զիշխանին զմիտսն հոհել, — կամ

Չիշխանին իմեցեալ զմիտսն հոհել, երկուքն իրարու խառնակած եւ եղած է՝ Վաս զիշխանին իմեցեալ զմիտսն հոհել:

Այսպիսի անկանոնութիւններ զխաւորաբար կարգ մը գրոց մէջ յաճախեալ են, որոնց ընդհանրապէս քերականական ճշգրութիւն պակաս է, թեպէտ ուրիշ ամէն նկատմամբ սքանչելի օրինակ են հզոր եւ զարգարուն ոճոյ հայկաբանութեան: Ուրիշ կարգի կանոնաւոր գրութեանց մէջ սեանուած շատ ցանցաւ օրինակներն անմտադրութեամբ կամ որեւիցէ պատահական դիպուածով կարելի է մեկնել:

Գ Լ Ո Ւ Ք Ժ Գ .

ԳԵՐԱԿԱՆԱԿԱՆ ՁԵՒԵՐՈՒ ՎՐԱՅ

Ա. Մինչեւ այստեղ աւանդուած կանոններէն եւ բերուած օրինակներէն տեսնուեցաւ որ գրաբար հայերէն խօզքի կազմութիւնը շատ եւ շատ ազատութիւններ ունի, այսինքն թէ կրնայ միեւնոյն խօզքն այս կամ այն ձեւով ըսուիլ, մանաւանդ մասանց բանի իրարու համաձայնութեան եւ շարուածքին պէսպիսութեամբ՝ առանց իմաստի պլրայլութիւն տալու: Արով այլեւայլ ոճեր կ'ելլեն գրութեան, պարզ, զարգարուն, շրջուն, պերճ, ճոխ, խրճին, եւայլն եւայլն:

Այս գրուածքի ազատ ձեւերուն անուն կը տրուի՝ Քերականական Ձեւ. — որոնց մէջ դարձեալ զանազանելու է սովորականն եւ ոչ սովորականը. ինչպէս շատ տեղ նշանակեցինք:

Բ. Վերականական ձեւերն այս չորսն են գրւխաւորաբար. 1. Շքղո՞՞ն, բառերու ետեւառաջութիւն. 2. Ձեղչո՞՞ն, էական մաս ժը զանց առնելով լեւելայն իմացընել. 3. Ա-եւադրո՞՞ն, պէտք չեղած բառի յաւելուած՝ զարդու համար. 4. Աբոո-ղո՞՞ն որ լեզուին օրէնքէն զարտուղելով՝ հոլովները, թուերը, ժամանակները եւայլն իրարու տեղ կը դնէ: Արտուղութեան կը վերաբերի նաեւ 5. Բախոո-նի՞ն, որ է ըստ խօսողին կամ խօզքին մտաց համաձայնութիւն եւ ոչ ըստ քերականական օրինաց: Երկուքին տարբերութիւնը տես եր. 465:

Քերականական այլեւայլ ձեւերը մասանց բանի կարգաւն այլեւայլ տեղեր յառաջ բերինք. հոս դնենք քանի մ'օրինակ ցարդ ըսուածներն ալ յիշեցընելով:

Շքլ:) Ար մխիթարէն զխոնարհս՝ մխիթարեաց զմեզ Ասորո՞՞ս. (346:) Ձոբ ունիցի դք ինչ. (զոր ինչ ունիցի դք:) Ենի զբեալ ո՞՞ յումեքէ իցի. (275:) Ձե յեի՞ ի զղջումն յանցոցեալն՝ յիրաւի կրեաց պատիժ

զմահ: Այնպէս համարէին՝ թէ արդ եկեալ անկեալ
 էջէ ի բուռն սրտ: Իբրեւ լառան զձայն ճշոյն ի բու-
 րաստանի անդ ընդանիս, անկան ընդ կողմն գրանն
 ի ներս: Եղոյց յաջընչէ յինչ շէտն:

Ջնեռանէ առեալ նոր՝ մուծին ի քաղաքն: Բայց
 շեր, լերինքդ Իսրայելի, զնազոլ եւ զարդեանս կե-
 րիցէ ժողովուրդիմ: Ո՛ կարասցէ զնիւ ունեւ զլըրըրըր
 մասն զԻսրայելեան գնդին. (250:) Բանկ- ինչ զնոր-
 ոչ անցանէր թաղաւորն. (233:) Ինքեանք յինդեանց
 վերայ որից ոչ կարեն կալ. (յոտից վերայ. 249:)

Բարկացեալ յոյժ եին քաղաքացիքն: Լա- այնպէս է՝
 եթէ. . . : Շար այնչափ էր՝ եթէ. . . : Յոյր ի բանիցն
 ասացելոց է: Ի Գոթնապէ զկառավարն եւ զանձինս
 իացոցանէն: Եւ ոչ ինչ որ զնէր իմ զնաբանս մե-
 ունելոյն՝ յաւուրսն Ներսիսի* 2 Ձոր ինչ ինդրե-
 ցերն՝ 1 երթ՝ ասուեալ լիցի քեզ: 2 Բան անդէն կա-
 պել կախարդացն զդեւն՝ 1 լաւ էր թէ աղաչեցեալ
 զԱստուած օգնականութիւն գտանէր: Ելեալ խըն-
 դրէին զնա, եւ 2 յանուանէ 1 շղէին գոչէին կոչէին:
 Բաշաղանք Կուրբելոց մտաց ի դիւոց. (մտաց ի գիւաց
 մուրբելոց.) Փրկէր իսկ ընդէր. եւ տայցէ ոչ. (457:)
 Ջհոգեւորն պարարգ. (324:)

Ջեղլ: Ճարակ մեծատանց՝ ազարտ. (են:) Ի՛մ այդ
 տեղի ուր գուզ ես բազմեալ. (իմ է.) Աղքատն խո-
 սեցաւ, եւ ասացին՝ սո՛ս: Տէր, իսկ սո՞ղի: Ջ՞ դոս, զի՞
 ընդ քեզ: Մի՞ դոս, եւ մի փեսայ լինիցիս նորա: Եւ
 ասեն. իսկ զնոր. (լինիցի:) Ձե- ուրեք որդի, եւ
 նա չծնելոյն անուն գնէր. (չեւ լեալ:) Թիւ աւուրց
 մարդկան՝ եկէ շար՝ ամք հարիւր: Մինչ այս մինչ
 այն՝ նորա հեծեալ յիւրաքանչիւր երկվարս փախըս-
 տական լինէին: Թէպէտ եւ շառնուցուլք՝ յամե-
 ցուք (յաղօթս) զի առնուցուլք. եւ եթէ առնու-
 ցուլք՝ վասն զի առաքն. (յամեցուք վասն զի:) Տո-
 տալ քեզ հրաման. (լիցի. 360:) Եւ ինչպէս՝ ի
 բաց առ զքրիստոնէութիւնն եւ անդէն եղծանես
 զկաղաղութիւն. (թէ պէտ էջէ. 373:)

* Նշանակուած թուերուն կարգաւ Շրջումը կը պարզուի:

Լուեալ իցէ շնոր ասեմն. (ձեր՝ զայս զոր. 558:) Եղբոր ասացերդ. (այդ զոր:) Որ մեռան ի մեղս՝ ժամանակ ոչ գոյ այնուհետեւ ապաշխարութեան. (343 — 346:) Գոյ որ դատի զնա. (զք. 361:)

Այն ցաւ չաբէ ի ցրտոյ լկեւոյ լինի: Ոչ դադարիցես զուր ի խոյզ ելանելոյ. (ի կարի. ի զուր. 388:)

Աւելդր:) Արձակել հաւս ինչ ի հոռոց: Օր մի յառոց. աղքատ յաղտոց եւ տառապեալ ի փոստոյեւ. մարդ զք ի մարդիանէ, կամ՝ մարդ զք մարդ. կին զք կն. եւ այլն: Իրագէտ իբոցն. ամենագէտ տննայնի. (447:) Ձո՞ ոռոքե՞ր ասեն զինէն թէ իցեմ: Հաստատութեամբ ոռոքե՞ր պահեն զօրէնս: Ոչ ինչ կարի հեռի էր: Աւ չգիտե՞լ ինչ հարցանիցէ: (276 — 279:) Ըստ նոյն նորին մեղկ բարուցն նմա օրէնս կցկցեաց: Մեղք հարցն՝ այն ընդ մեզ ելին: Ի կարգ մտաց (բանիցն)՝ յայն ոչ հայեցան: Չայցելութիւն նորա զայն այլ տարցի: Իբրեւ զաղաւնի՝ այնպէս մընչեցից: Իբրեւ զմրրիկ այնպէս պատէր ծուխն: (333:) Ետե՞ս զք օգուտս ի նոցանէ՝ որչափ թէ սակաւ մի: Շատ այնչափ է՝ թէ. . . թէ կամէր թէ չկամէր՝ սոխայն կրեսց: Որպէս զի թէ կարող էր՝ եւ ոչ կամեցաւ: Ձինչ օգուտ՝ բայց թէ միայն մնաս: Ի՞՞ք ոչ եթէ որ բազում ունիցի՝ մեծատուն իցէ. (177, 459:) Եւ զնա եւս զան հարին: Եւ այն եւս սուտ է. (168:) Արար նմա տուն ըստ նմին արժանի. (263:)

Ձինչ մարթի զք լինել՝ որ իցէ թէ անկերպարան իցէ: Մի է, միածին է, յերկրին Եգիպտացոց է հաւն արմաւ: Իսկան է եւ անշարժական է: Կապեցին ի ինչի՞ն զմանուկն զազւոյ ձիոյն: Ձգլուխն հանին հարին ի նիզակի: Նա կաղայր երկայր ի զստէ անտի (յընդարմացելոյ:) Ծանրացեալ տաղտկացեալ ի մալորական թափառականութենէն. (398, 493:)

Չայս զոր ասէ՞. կալ յարդարն հնազանդութեան. առ հնգըն թագաւորզն. (324 — 327:)

Արտոյ:) Լուսաւորեաց Վրփոռնեմիս առնելով. հրամայէր հրաժարել յարեմէ ուտելոյ. առանց զբնոց խնդրելոյ: Ազդ եղեւ ինձ նեմփոռնեմս յայրդ լնելոյ:

(նենգութիւն լեալ յայրդ. 393, 395:) Իջաւորի՝
 մոյ առաք գնացելոյ. (437:) Ի խորոց անգնդոց եր-
 իբէ հաներ զիս. ի տանէ Աստուծոյ Կոթմէ. (252:)
 Առ ի չգոյէ Գեղի՞ թաղելոյ. (տեղւոյ:) Առ այն ոք
 ասելոց եմ. (352:) Դոռոք որ թողէք զիս՝ ես մատ-
 նեցից յիեշ ի սուր. (354:) Ասան Գոյ լինելոց էին
 ի ձեզ շնորհի՞ մարգարեանային. (347:)

Պաւղոս զՀրեայան յանդիմանէք, ցոնցանել գրովք՝
 թէ...: Ջփառան արհամարհելով եւ ամենայն կա-
 բեաց գերիվերոյ լինել. (402 — 404, 414:)

Ծածկեցին զմարմինն ընդ հողով՝ ըստ հրամանի
 նոցա Գոթմէ. (տուելոյ նոցա. 259:) Եղեալ որո-
 տուան յերկնից աստիկ անհնարին՝ զի հաճեցիեալ
 զամենայն ամբոխն. (ահարեկեաց. 430:)

Պատմեցաւ ամենայն պատուիրանք օրինացն: Հաճոյ
 ինչոցաւ բանքն: Մեծ եղեւ ընդ ամենայն տիեզերք
 փորձութիւնք նեղութեանց վասնդի: Թէ քեզ
 պէտք է. եւ այլն. (360:) Ջքեզ միածնին իւրոյ հա-
 զրքս եւ մարմնիցս արար: Ջարջոյ թոժիւն սնու-
 ցեալ՝ խոտիւս ուսուցանէ: Ջտիւն գիշերս գործէ
 արբեցութիւնն, եւ զլոյս՝ խաւար: Յէրոնիմ վարս.
 ի մերոս անգամս. (336:) Չէ անպարտի՞ս՝ այսպիսի
 օրինակս ի մէջ բերել վասն Աստուծոյ: Չէ ինձ պէտք,
 որդեակ իմ: — Լինիցիմք իբրեւ զեղեալք:

Առեմի գի իջցէ հուր յերկնից. (370:) Իբրեւ գիտաց
 թէ ոչ կարե՞ ժողով ունել նմա՝ գարձաւ անդրէն:
 Իբրեւ ետես թէ մեռանի՞մ՝ կոչեաց զճառայս իւր.
 (փխկ՝ ասացուք. ոչ կարէ. մեռանի:)

Բառանալով բարձուցիք. Կոչելով ապշեցոյց. պայծա-
 րացեալ ծաղկեցուցէ. (փխկ՝ բարձուցանելով, ապ-
 շեցուցանելով, պայծառացուցեալ:)

Բկա:)* Ջարմացեալ ընդ քաջութիւն գնդին կոտորան,
 եւ ասէր՝ եթէ զարմացեալ եմ ես զոր ինչ տեսի,
 զի ի՞մ ի մանկութենէ իմմէ համակ ի ճակատոս եւ ի

* Առերեւոյթ սեռականի վերջաւորութիւն:

** Բակառութիւնը թէ եւ անկանոն՝ բայց դիւրիմաց ըլլա-
 լու է. ինչպէս օրինակները կը ցուցնեն:

կուիւ մտեալ եմ, եւ առանց կռուոյ ամ չեմ լեալ. բայց իմ ջերմ կուիւ զայս եր գիտեալ որ այս անգամս գիպեցաւ ինձ. (իմա՝ ի կոտորելու. եւ ի ճակատու լեալ եւ ի կռ. — ջերմ կուիւ զայս գիտի): Որոյ զյօժարութիւն Աբայեցւոցն պատմեալ՝ նախանձեցուցեալս յորդորեաց. (իմա՝ զայլս. զամենեսեան): Երջեալ ի տեսիլ նձանկալ անասուն զազանացն*, եւ շրջեր ի մէջ զազանացն: Նոտա ժողովեալ անթիւ մարդկանն՝* խնճոյս կացուցանէին. (անթիւ մարդիկ):

Արշակ կայր Սնդմբն բերդին, այս ինքն որ անուն Անյուն բերդն կոչեն: — ՅԱստուծոյ տուեալ էր զիրաւունս յաղթութեանն. (358): ԶՇապուհ Վրկէր ի նեղութեանէն պատերազմին թշնամեաց անոթի. (206): (Մարդոյ՝) յօրէ ելանելոյ մօր էրոյ մինչեւ յօր թաղելոյ ի մայրն ամենեցուն. (ի մօրէ իւրմէ): Ասան բազում անգամ խզելոյ է նձանկ զըզթայսն. (յիւրմէ. 335): Իբրեւ զայն եւս հասանէր թագաւորն ի վերոյ իրոցն:

Ոչ խորշեցայ ի չպատմելոյ ձեզ. արգելու զմեզ ի չտալոյ հարկս. չտայք թոյլ չառնել ինչ հօրն. (իբր թէ՛ այնդէս զի եւ չառնէ իսկ ինչ հօրն):

Տեսանք անքերական բախառութիւն՝ վերը եր. 460: Ասոր եւ Արտուզութեան ձեւոյն տարբերութիւնն այս է՝ որ Բախառութիւնը գլխաւորաբար երկու կերպով ըսուելիքն առաջին կերպովը կը սկսի, երկրորդովը կը վերջացընէ. եւ ընդհանրապէս շուրթափելով եւ անմտադիր գրութեան մը նշան կու տայ, որ կարգացողն ինքնին կարգաւորելու կամ ուղղելու է, այլ ոչ հեռանելու. իսկ Արտուզութիւնը լեզուին սովորութեանէն խոտորում մըն է, որուն մեծ մասը շատ ընտիր հեղինակներէ միեւնոյն կերպով գործածուած՝ եւ յեղուին ընկան եղած ըլլալով, ունի իւր վայելութիւնը, եւ մեծաւ մասամբ հետեւելու է: Կան գրութիւններ որ գրեթէ ծայրէ ծայր բախառութեան սնով յառաջ կ'երթան: Օրինակ:

* Երկու է գիտիլ Բազանաց, եւ Նձանկալ Բազանաց նոյնանշան են. բայց անկանոնութիւնն այս է՝ որ միեւնոյն Բազանաց բառն առաջինոյն սեռական յատկացուցիչն է եղած, եւ երկրորդին՝ արական խնդիր:

Նոյնպէս յաջորդին մէջ խոզութեալ բայը թէ նոտա ուղղականին է եւ թէ մարդկանն սեռականին:

Ատէ Թագաւորն. Յաւուրց ժամանակաց յորմէ Թագաւորութիւնս կանգնեալ է, չիք որ մարդ եղեալ ի մարդկանէ՝ որ իշխեցեալ է յիշեցուցանել Թագաւորաց զոր յայնմ բերդի եղեալ զոր է Թագաւորաց, յիշելով զայն մարդ որ յայնմ բերդի զոր եղեալ է*, Թոյ Թէ է զնա՝ զայր Թագաւոր եւ զիմ՝ ընկեր կապեալ եղեալ զհակառակորդն: Քան մինչ աշխատարարեր զմեզ եւ յիշեցուցեր. բայց զի վասն քո մեծ վաստակք են առ իս, զոր ինչ խնդրեցերն՝ երթ տուեալ լիցի քեզ:

Պարզենք վերջին մասին կնճիռն, որ երկու կերպ կանոնաւոր ըսուածքի անկանոն բաղադրութիւն է: Բայց զի քո մեծ վաստակք են առ իս. — կամ Բայց վասն քոյ մեծ վաստակոցն առ իս:

Գ. Աւելադրութեան ձեւով կը գործածուին նաեւ նմանաձայն բառերը:

Գազանք ի գառազիւզն զմնիլն եւ զմնիլն եւեթ կիրթ ունին: Ելեալ խնդրէին զնա, եւ յանուանէ շրջէին գոյէին կոյէին: Ա՛ռ քնար, յաթեաց կոթեաց: Հային հատալին եւ յոգւոց հանեն: Արճէ զատամուշս, փորոքայ որոքայ, հուր եւ կայծակունս շնչէ: Հայեացի մալեացի զհեթանոսս: Ցեցտ եւ մեցտ յինքեանս ընկալան զմարմինն: Մի ումեք խելի եւ խոթի ընդ ոստարկանել: Ամենայն ազահութիւնք եւ սոսո-մոսո երդմունք: Խառնամառն անասունք: Խառն ի խուռն. խուժ դուժ. աղտ եւ կեղտ. տեւել բաւել. շաչել շառաչել. պոչիւնք պոռոչիւնք. արթունք եւ զուարթունք. զուարթացեալ զուարճացեալ յանձն իւր. ևն:

Իսկ նոյնանշաններս — աւելադրութիւնն իւր այլեւայլ կերպերովն առանձին գլուխ կը կացուցանէ հայկաբանութեան արուեստին: Անհամար պէտքստութեանց մէջէն հետեւեալները միայն յիշենք այս տեղ. — որ մեծաւ մասամբ առանց ե-ի կապուած են:

Համագունք խոտունիւնայ՝ ամենեքեան ա- հատարի ի վերայ գիմեն: Յորժամ տեսանեն պապանձեալ հաւաքեալ եւ ոչինչ տայ պատասխանի, անկեալ իստալի առաջի Բեկայն: Հաղորդ հաստարդը նորին բարոյ բարուց ծննդեան. եւայլն եւայլն:

* Այս երկրորդ մասն առաջին կրկնութիւնն է, յիշուողն եւ յիշելով իբր նոյնանշան տառուած:

Ասոնք երկ'երկու նոյնանշան են՝ մէկ բառի տեղ. իսկ յաջորդներն երկ'երկու նախադասութիւն են միեւնոյն իմաստը կրկնած պլլեւպլ բառերով: Յաճախեցուցանէ զերկիւղն, ասիոցանի զահն: Չայրանայր ընդ առարժամ գուծն, Եդերբը զնժոժ ինանն: Որ զուսկանն արկանիցեն՝ ի միմանց զատեալս, Բացարձակ յերեսոյ կան: Օրէնք ուրոյնք, Կոտոս աստի: — Տես վարը Պէսպիտութեան ձեւ, եր. 469:

Այս վերջիններուն սրոշ կանոն չի կրնար աւանգուել, բայց առաջիններն որոշեալ կրկին բառերով են բոտ նախնեաց, ուստի ինքնասնար բաղադրութիւններ մեզի ներեալ չեն. ինչպէս ուրիշ տեղ ալ մտադիր բրած ենք. (434, 3) Աւասիկ ասոնց սովորական ձեւերը համառօտիւ:

Բայ.) Կացի մնացի զի բերցէ խաղող, եւ եկն երբր ինձ փուշ: Չոգաւ գնաց անտառին փայտն ի դաշտն: Սպան սատակեաց զնա սրով իւրով: Խոնարհեցան անկան երեսքն Կայինի, Չատ, մեկնեաց, ուրոյն բնակեցոյց: Չուեաց խաղաց գնաց: Անցին գնացին: Փութամ ճեպիմ. եւն: Գուքեզէն ասացեր բաս, յերկէն յաշխարհէն ճնեաց լեալ եմք: Բերոսոս բայ ասէ. կամ՝ ասէ բայ. ասացի բամ. եւն: Ասացէք ցարքայ, գողէք:** — Պատեալ պաշարեալ պահէին: Յետս հարեալ վատթարիցէ զնա: Յակն առեալ սիրէր զնա. գնացեալ երթայր. (433.)

Գոյ.) Հասարակօրէն սեռականով: Սպաս պաշտաման, կամ ծառայութեան: Ի հարկի ծառայութեան կալ: Տեսիլ երազոյ. դէմք երեսացն, կամ կերպարանացն. անձուկ սիրոյ. թիկունք օգնականութեան. այսն կատականաց. առակ օրինակի. վախճան կատարածի. թիւ համարոյ զօրուն. փորձ հանդիսի, կամ հանդէս փորձութեան. եւայլն: Նախճիրս որոոց կոտորել. խօսել ի հաշտութիւն խաղաղութեան. հնարս մեղքենայից գտանել, կամ ի հնարս նենգութեան մտանել. անկանել ի տազնապ ներութեան, ի տազնապ տարակուսի, կամ ի վարան տարակուսի. եւայլն. (եր. 440.) Կոտորեաց ի սուր սուսերի, կամ ի սուր սայր սուսերի: — Հաւանութեամբ հաւատարութեամբ. (միաբան.) լրջմտութեամբ զուարթութեամբ. բազում փութով տազնապաւ, կամ ճնեպով տազնապաւ. կամնք կամաւորութեամբ. եւայլն:

* Այսպիսի կրկնութիւնները շատ անգամ հայ թարգմանչաց յաւելուածներն են, որ բնագրին մէջ չկան:

** Գո՛վ եւ Բամ, Բաս պակասաւորները նոյնանշան են ասի՛մ բային. (եր. 117.)

Ածի.) Ասոնք իրենց բարգուծեանն եւ անանցման ձեւերուն համեմատ այլեւայլ կարգ կը բաժնուին:

1. Ոգեկէց սգեկիր մարգարէք, կամ՝ հոգեկէց եւ հոգեմեւի. հայարարաւ հայերէնախօս. երկզքինն միանել միանման. մարտնք մահաւանք. համամիտք համակարիք. քաղաք նորաշէն նորակերտ. սրասուււչ սրտաբեկ. սրտաբախ սրտաթոււնդ լինել. մտաշոյղ մտախորհ լինել. մեծապատիւ մեծապարզել. (ածկ. եւ մկր.) երկիր մարդավար մարդածախ. երկիր փշարեք փշալէց:

2. Երկիր փշարեք տասասկարեք. գահերէց բարձերէց տանարին. ցրտաշունչ հողմաշունչ սաւաւամանիք. գրախա ջրալէց պողալէց ծայրալէք պողով. վանադոյն սկանազոյնն երկնից. տանարակապուտ սեղանակապուտ գողութիւն. եւայլն: Խաչանման լուսաւոր շողաւոր ձեւ. բազորդ եւ բաժանորդ. հասարակորդ հաւասարորդ, եւայլն: Մերժեւ զնոսա ի խլխլական հեղգական մտաց:

3. Գանալից չարագան տանջել. (ծեծել.) կամագնաց ինքնակամ մեղացն. բուրաստան լի ծաղկաւ ծաղկալից. (սչ յանախեալ.) ինքն միայն միայնուկ: Զմի միււր շունչն ընդ ամենայն մարմինն սփռէ:

4. Դաշտ խոտալից ծարակաշատ. ի տափակողձի դաշտագետին վայրի. համաշունչք միախորհուրդք. օտարական այլարարաւ. մարդ հոգեխառն հրեշտակակիր. արարչաինդիր. եւ աստուածախոյզ են. գիցցապաշտ մեհենասէր թագաւորք. քինախնդիր նախանկայոյզ. ծոփածուփ ալէկոծ. վաղափուլ արագաւեր. գահալէժ գարահոս լինել. սորամուտ ծակախիթ. գատափետ ատենաքարչ. մերկազուլի ազատագէմ. կրակատեղաց հրացան բարկութիւն:

5. Չեւնտու օգնական. համօրէն ամենայն ընակիչք. ազգ հեւաւոր բացական. ձեզուն գողեալ գմբեթաձեւ. զրկեալք եւ տարագիրք (յիմեքէ):

Այսպէս եւս՝ Պարտ եւ պատշաճ է. պարս եւ արժան է. մարթ եւ արժան է, մարթ-ու-պատշաճ է. ի դէպ եւ վայել է. ըմբոն եւ ի դէպ է. եւայլն:

Մկր.) Ապա յետոյ. ապա յետ այսորիկ. ընաւ ամենեւին. զուր տարապարտուց. ընդ վայր եւ վայրապար. անդուստ ի վերուստ. (յաւաշուց, սկիրէն.) անդէն եւ անդ. անդրէն միւսանգամ. արդարեւ ստոյգ. ինքնակամ մտադիւր. եւայլն: — Պատերազմեցաւ խառն ընդ նմա: — Իսկ վաղլաւի եւ յանարտի՛ հասարակօրէն այս յաւելլուածները կ'աւնուն. Հուպ ընդ հուպ վազվ. իսկ եւ իսկ վզ. անդէն վզ, նոյն-ժամայն վղ. կամ վաղվաղակի արագ արագ. վզ. յա-

կան Թօթափել. փութանակի արագ արագ. եւ այլն: — Յանկարծակի յեղակարծում ժամու. յանկարծ յեղակարծումն ժամանակի. յանկարծ յեղակարծումն տարակարծի. յանկարծօրէն յանպատրաստից յեղակարծումն. յանպատրաստից յանկարծօրէն յայլակարծուց. եւ այլն:

Շղկոյ: Սա աւասիկ. դա աւաղիկ. ահա աւասիկ, եւ այլն. բայց սակայն. ապա ուրեմն:

Նոյնանշանաց զբայ ըսուածն իմացիր նաեւ նմանանշան բառերու աւելագրութեան համար:

Յօրդարան գրիչներն՝ երբեմն չորս՝ հինգ եւ աւելի նոյնանշան կը բարդեն իրարու զբայ. բայց չափաւորութիւնն ընտրելէ այս եւ ուրիշ օճով ձեւերու մէջ:

Գ. Պարարար հայերէնի յատուկ է դարձեալ բառերու Պետդեսոն-իւն 2-ն, որով միեւնոյն բառը կրկնելու տեղ՝ ուրիշ համագօր (նոյնանշան կամ նմանանշան) բառ մը կը գործածուի. ինչպէս են՝ կոյճ, կոյս, լեբ. — քոզն-լիւն, դրոսադէ. — հրաման, պարոտ. — շահ, օգոտ. — յանտիւ, արատելու, յուժել, անցոցանել, սրտաբացոցանել, եւ այլն:

Գոյ: լինիցի քեզ արատելու-լիւն պատուոյն՝ յանտիւ-լիւն տանջանաց: Պարոտոյ շարտ-լիւնը քեզ արտանայ շարտ-լիւն կ'ըլլայ: — Մի ընդ քաղտ-լիւն սպասաւորացն հայիցիս՝ այլ ընդ յանտիւ-լիւն տրտմութեանցն: Ոչ էր համար դանձուց նոցա, եւ ոչ լիւ կառացն: Ի մի քոֆ ծովուն մի ազգ ձկանց ճարակի, եւ ի միւսում խորջայլ ազգ բնակեալ է: Ձարին ի մի լեբ, եւ զչարն ի միւս կոյճ: Յորմէ կոտարեզակն իցէ՝ յայնմ լեբէ սկսանի ի լուսնի լոյս ծնանել: Յորժամ յարեւելից կոյճանէ երեւի լոյսն՝ ստուերն յարեւմուտս կոյս ձգէ զանձն: Գարձցի սուգն յարտիւ-լիւն, եւ կոծն է ինդոս-լիւն. (փիւկ՝ սուգն եւ կոծն դարձցի յուրախութիւն:) Որչափ շահ ի պատժոցն լինին, որդե՛ս՝ օգոտ յետ տանջանացն*: Եթէ մեծութեան նորա չէք բա, եւ գոյութեան նորա յայտ է թէ չէք չափ: Պարտեազ՝ է ընդ լեզուի, կոտ է ընդ աչս: Ի կոյճ ծովակին՝

* Յուլնո, ծեծ, դանահարութիւն. տես եր. 364, Բ ծան:

ի գետոյ կոտէ: Ան իշխանաց եւ սասո տերանց. կասկած ի գողոց եւ երկն-ը յաւազակաց. օրո-ր աշխարհին եւ շահ եկեղեցեաց. մարդկան ըսասկորս-նիւնն եւ դիւաց Տրդանկանուն-նիւն. յաշխարհին քորքոսոյ ի յունարէն լեզու դարձուցեալ. ծառայից քունդք եւ ներքինեաց դասակ. (գեւնդք ծառայից եւ ներքինեաց.) եւ մշակացն եւս դաստ եւ ձեռագրի-տացն ջնկի:

Ածկ:) Ըստ դեօդեօ հիւանդութեանց ազգի ազգի դեղս մատուցանել: Ջքաղոս՝ ինչ ունէր զմեր, եւ շար ինչ չունէր: Ջգիւաց նմանիսն առնել հանդոյնս հրեշտակաց: Ո՛ւմ նմանը լինելոց իցեմք, եւ ո՛ւմ զու-գակն: Անման են այլոց կեանք նորա, եւ այլազգի՝ շաւիղք նորա: Տրամականացն կոորդ լինել, եւ հեշտականացն չլինել հաղորդ: Բաղոս՝ լուութիւն եւ յոյժ հանդարտութիւն. քաղոս՝ ծախք եւ յածախ թողակք. զտիւն ողջոյն եւ զգիւերն ամենայն. հասարակ աւին եւ զայի բաժանեցին. (հաւասար):

Մանկ:) Մխիթարեցէք զմեանս, շինեցէք դերեօրս. (եր. 282:) Առ ի-բոտանի-բ ցանկութիւն զանի-բ մեռեալս տեսանել: Անտ աստ միայն, եւ այլ անդ միայն: Ո՛մանտ հաւանէին, եւ կեօտ չհաւատային. (եր. 281:) Քան զամենայն ինչ վերագոյն է եւ քան զքեա-զորագոյն: Ամենեւին գոհ են զքէն, քուրդտ առ իրաւագէտս ունին: Ջամենեւեօս յածեալ շքի, զքուրս կլանէ, հասարակոց թշնամի է: Ի մարմնի ամենեւեան էին, այլ ի գործս մարմնոյ ոչ քուրդե-տեան: Ջլ՝ գործէիր, զի՛նչ կամէիր: Ի՞նչ արդեօք պար-ծեսցի, կամ որ՛ով ի-նիտ հպարտանայցէ: Քանի՛ մերկք, որչափ հաշմք. որչափ ծաղր, անի՛ թշնամանք. որչափ ինչ ջերմութիւն, որոյնի՛ հաւատք:

Դեր:) Ջայս խորհեցայ, եւ զայն արարից: Դու այօր հնազանդեցար, այն օր քեզ փրկութիւն: Այն է բաժին քո եւ նայն վիճակ քո. նոցա հեղեր նուէրս, եւ նոցին մատուցեր զոհս. (337:) — Անյո՛ք բնութեանալ եւ ինտին շարժել: Դատաստան նորա յանի՛ն ի-բոտեղիցի, եւ առած ի-բո յինտեմէ ելցէ: Ի-բոտնոց աշխա-

տութեամբն անյանց տանջանս կուտեն: Չամենեւեան
առ ինն գրաւէր եւ առ իւր ամբոփէր: Ես ինչիս խոս-
տացայ, եւ ես ինն մոռացայ. (195—197:)

Բայ: Երբժամ գութ ցուցանել կամիցի՝ որդիս հոյն,
եւ յորժամ մեծարել եւ պատուել՝ եղբարս անուա-
նէ: Լոյս հոյն Հայր. լոյս անուանի եւ Որդի: Ոչ զեր-
կինս փեսանել կարիցէ եւ ոչ զօգս նշմարել: Հայեանքի
յերկինս ի վեր, եւ յերկիր ի խոնարհ պշտոցոս:
Ստեպ ստեպ յիւր պատարագս, առտէր դեսպանս:
Թէ շուան տեսանեն՝ օձ համարին, զի զասհագինսն
ահագինս կարծեն: Ընդէր երկնիս, եւ ի հակառա-
կորդէն զանգիփոս: Ոչ ընդ մարդոյն կոտի (բժիշկն),
այլ ընդ ցաւն մարդնի: Կագի ընդ ազահութեան,
կոտի ընդ ապիրատութեան: Ամենայնի համբերիցէ
եւ ամենայն վշտաց փանիցի: Չմանունս շնորհեո,
եւ զմեծամեծոն պարգեփցեո: Ոչ յառնել կարեն, եւ
ոչ գործ ինչ գործել զօրեն: Թողութեան հասա-
նել եւ բարեաց ծամանել: Ելլոթ զօրէնսն եւ խօսփեաց
զկրօնսն, մահապարտ էր: Այս կարք յորժամ ընդ
արեւելս ընթանան՝ չէ ինչ արգել թէ ընդ արեւմուտս
ոչ արշափցին, եւ յորժամ ընդ հիւսիսի վարգին՝ չէ
ինչ արգել թէ ընդ հարաւ ոչ սորայցեն: — Այսպէս
եւս բայանունս են. Չյարեացն փորձօնեաց եւ զբա-
րեացն արարիլ. (փխկ՝ զբարեգործն եւ զչարագործն:)

Նխոր: Իբրեւ զեղբայր, որպէս զորդի գրգեալ եղել
ի նմանէ: Համարեալ է նմա երկաթ իբրեւ զյարդ,
եւ պղինձ որպէս փայտ: Ժողովեացէ իբրեւ զհող զար-
ծաթ, եւ հանգոյն կուղյ զոսկի: Իբրեւ զջրմուղ ի
գետոյ, եւ որպէս վտակ ի գրախտէ: Նախ Ժան զմահն՝
տանջանս, եւ յառաջ Ժան զտանջանսն՝ նախատինս
եւ դարձանս: Հանգեոյ նմա արեւմուտք, եւ յանգե-
ման նմին հիւսիսի: Ծառայս կոչէ վան բնութեանն,
եւ բարեկամս՝ յաղափո շնորհացն: Ոչ ի մարդասիրու-
թեան աղափո՝ այլ վան խրախ լինելոյ: Է՞ր վան
արար, քո՞ աղափո: Ոչ ի տունս մօր, եւ ոչ յատենից
տեղիս հօռ, եւ ոչ յարքունիսն մեր, այլ ի բացե
ուրեք եւ ի հեռի կապեալս պահեմք (զգազանս):

Մկրչ) Ի զո՛ր սեղանն, ընդ ձոյր լուսնն եկեղեցւոյ, ձոյ-
 րադար քահանայիցն ձեռք համբառնայցեն: Ոչ զո՛ր
 ինչ ընթացայ, եւ ոչ ընդ սնայն ինչ վաստակեցի:
 Ոչ կարի վաղ եւ ոչ յոյժ անագան: Ոչ կարի խորագէտ
 եւ ոչ բնա՛* միամիտ: Յորժամ ակնն առւատ է՝ ա-
 մենայն մարմինն լուսաւոր եղիցի. եւ երբ ակն չար
 է՝ խաւարին եղեցի: Իբրե՛ս օր մի լինէր պարապոյ,
 յորժամ ընթրիս ապր Հերովդէս: Յորժամ չունիցին
 ինչ՝ բարի լինի, միշտ ունին՝ չէ բարի: Որպե՛ս եւ
 ասաց, զոր օրինակ եւ երդուաւ: Յեօ բազում երախ-
 տիս ցուցանելոյ՝ ադա եւ զորդին իւր առաքեաց:
 Ջիւրո՛ր ճանաչիցի, ո՛րպե՛ս տեսանիցի: Վաղձաղիկ
 աւար հարկանել, արտի արտի զապուռ ժողովել:
 Վաղձաղիկ մերձեցայք, իսկ եւ իսկ ցուցէք զպտուղ:
 Մէջո՛ր քաղցնու եւ ցանկ ծարաւէ: Համի ի քուն
 կամք, միշտ երազս տեսանեմք: Ընդէ՛ր փոխեցաւ Ե-
 նովք, եւ զմ՞ ոչ մեռաւ: Ընդէ՛ր զրկիցիմս, վասն է՛ր
 ի յափշտակութիւն մատնիցիմ՝, յո՛ր սակս գատափեա
 ատենաքարչ լինիցիմ՝: Դեա ընթանամ՝, րակաւին
 զհեա մտեալ եմ: Ի մտակն գնան, եւ մտակմայն
 թռչին: Նոցայն ամենեւին իսկ մանուկ էին, եւ մերս՝
 բնաւին՝* մեծամեծք:

Եւ ասո՛ր իսկ թողու զմեզ, եւ ինքն ասակն մնայ:
 Անդ մեռաւ Ահարոն, եւ անդե՛ն թաղեցաւ. (Եր.
 337, ծան.) Անդի եմուտ կուրութիւնն, անդոսո՛ր
 խաւարեցան եւ միտքն:

Շղի) Ոչ եկի թէ դատեցայց զաշխարհ, այլ զի փրկե-
 ցից զաշխարհ: Վասն այնորիկ գեհեհն, նմին իբի հուր,
 յայն սակս գետք հրեղէն: Ոչ եհան զուր իւր՝ զի
 երկեաւ, Կանգի մանուկ էր:

Յօր.) Ի հացէ անդի կերիցէ, եւ ի բաժակէն արբցէ:
 Որպէս ի քաջութենէն քաջն կոչի՝ նոյնպէս եւ ի
 փառաւորութենէ անդի՝ բախտաւոր: Սորա չեն յաշ-
 խարհէ ասոյն, որպէս եւ ես չեմ յաշխարհէս: Դար-
 ձոյց զերեսս իւր յորմ անդր. վասն է՛ր արդեօք յորմն:

* Բնա կամ բնաւին՝ կը նշանակէ նաեւ բուրբոյն, լճան:

Բարդ: Սիրեն զյառաջազահս յընթրիս եւ զնախաթոս
ի ժողովուրդս: Չնախաձկայն եւ զյառաջարկաւազն
Սաեփանոս: Եղբայրասպան, եւ մանկակոտոր, եւ
հայրատեղոր, լինելոց էին: Հողեհ վաղաշէջ երազ-
անցոհ: հրայրեաց արեգակնակէզ լինել. լայնալիք
եւ երկայնաբարձ. տես վերը՝ եր. 468, թիւ 4:

Ե. Վասե մասանց բանի շարքին մէջ պէսպի-
սութիւն կը գործածուի վայելչութեան համար, զոր-
օրինակ մէկ յետադաս եւ մէկ նախադաս խնդիր կամ
յատկացուցիչ, եւայն:

Աչգը տեսնելն զերեզնի լեղան, եւ ականջօք զհունանն
լուինն: Չկերպարանս մարդոյ ունիցիս, եւ զբազանի
Քարթոս արձակիցես: Ի շնո-ածոյ փածարին մինչեւ
է կարեգունի շնո-ածն: Քանզի ոչ ունէին զերկիւն
Ասո-ածոյ՝ զմարդիւն երկիւն առաջի եդին. — թէ
խնդիրն եւ թէ յատկացուցիչը պէսպիսութեամբ
շարուած: Ոչ ո՛ր ճանաչէ զՈրդի՝ եթէ ոչ Հայր, եւ
ոչ զՀայր ո՛ր ճանաչէ՝ եթէ ոչ Որդի: Ոչ միայն ո՛ր է
Քնակչաց՝ այլ եւ ոչ յիմացն ո՛ր զիս ողբէ: Մի՛ պար-
ծի՛ր ի դիւրութեանդ, եւ մի՛ ի յաջողութիւն իրացդ
կարբանայ: Ի միտիւ ամենայն ժողովողեանն եւ
ընդ Յիսուսի միտիւն:

Չ. Այս բառից պէսպիսութեան ձեւէն յառաջ
կու գայ նախադասութեանց կրկնութիւն՝ նոյնպէս
պէսպիսութեամբ, որ է՝ միեւնոյն խօսքն երկու նա-
խադասութեան բաժանել այլեւայլ նոյնանշան բառե-
րով* . այսպէս:

* Բնագրի մը պարզ նախադասութիւնն այս ձեւ կրկին
նախադասութիւն ընել՝ սովորական է մեր առաջին
թարգմանչաց, ինչպէս նաեւ բառից պէսպիսութեան
ձեւն իրենց յատուկ կերպն է՝ բուն Հայացի սոսով զարդ
ու կենդանութիւն տալու համար:

Նաեւ սուրբ Գրքը լի է այս պէսպիսութեան կրկնու-
թեամբք, որ երբայական բանաստեղծութեան ալ ոգին
է, (բայց հասարակօրէն ե-ող զօգած. եր. 459, ծան:)
Այսպէս են օրինակի համար՝ Հայեցոյ՝ եւ ոչ ոք էր որ
օգնէր, — զհոս անի՛ եւ ոչ ոք էր որ է ինչոնս հա-
սանէր: Ո՛վ է իմաստուն՝ եւ իմացի զայս, — հանձարեղ,
եւ ծանօցի զայս: Եկ՛ նզովե՛ գու ինձ զՅաւովք, — եւ
եկ՛ անէ՛ ինձ զիտայել: Երջեցան զինեւ երկունս՝ մահոս,

Գինին տուաւ՝ զի ուրի լիցուտ, ոչ զի ծանակնցն՝ Կ.

զի բերկրեցուտ, ոչ զի ծաղր իցցես՝
Տեսանեն զարամութիւնն, | հայրն ի բարկութիւնն :
Ի զուր ջանաս | եւ ընդ վայր վաստակես : Չերկնչին
երբեք յաղքատութենէ, | չկասկածեն ի կարօտու-
թենէ : Եկն եհաս ի վերայ մեր վախճան, | ժամա-
նեաց ի վերայ մեր օրհասն : Եղեցուք զթածք, | լի-
ցուք սղորմածք : Մեծ է սէր քո, | կարեւոր է գութ
քո* : Չամենայն շարժէ, զնաւ խռովէ, | զբոլոր վեր
ի վայր կործանէ : Յամենայն կողման վարդին, | եւ
ընդ հանուր արշաւին, | եւ ընդ բնաւ սլանան : Միշտ
մարտք | հանապազ պատերազմուչք : Վասն էր փախ-
չիք, | ընդէր սրանայք :

Երբեմն մէկ բայով եւ կրկնածեւ աւելագրական
բարդերով երկու բուռելիքը մէկի կ'ամփոփուի. այսպէս :
Վայրենամիտ աշխարհն Աղուանից մարգարեազեաք
եւ առաքելածանութք լինէին. (այսինքն՝ զմարգարէս
գիտացին եւ զառաքեալս ծանեան) : Եւ առ ձեզ
իսկ տեսանէի զքարապաշտ զփայտապաշտ մուրու-
թիւնսդ. (զի մուրեալ պաշտէիք զքարեղէնս, զի
պաշտէիք զփայտեղէնս) : Ո՞վ են սղքա՝ որ իբրեւ
զամպս թռուցեալ են, եւ իբրեւ զաղանիս ձագա-
խառն երամովին գան առ իս : **

Է. Բառերու ընտրութիւնն որ հայկաբանու-
թեան արուեստին էական մասերէն է, — այսինքն՝
սովորական եւ անսովոր, յարգի եւ խոտան եւն բառե-
րու զանազանութիւնը, — այս պէսպիսութեան ձեռքն
մէջ փոքր բացառութիւն մ'ունի. զոր կարեւոր է միտք
առնուլ՝ ընդհանուր շարագրութեան ալ նկատմամբ :

Եւ վերտ գիտից գահն զիս : Ընդանայն են որ առնին
զձեզ, — եւ անոք են որ սփռնանին զձեզ : Շուտիցն
լորտ իբրեւ իյրտ, — եւ իբրեւ զաշտոս խարտիցն :
Դարձոյց զիտո ի ցոտտ, — եւ զինաց լուրց յերկր
Իարտոսոս, որոնց երկրորդ մասերն առաջններուն նոյն-
իմաստ կրկնութիւնն են :

* Գոսթ եւ սեր շատ յաճախ նոյնանշան են իբրարու :

** Հայերէն թարգմանութեան զարգարածքն է. ս.բ բնա-
գիրն ունի պարզապէս իբրեւ զաղանիս հանդիս յստոտ
գան առ իս : — Յես վերը (եր. 468.) խոտն ընդ նմա՝
իբրեւ մակրայ :

Պէսպիսութեան ձեւոյն մէջ՝ միայն կրկնութենէ խորշելու համար ներեալ է այլեւայլ բառեր գործածել՝ որոնք հասարակօրէն ուրիշ դէպքի մէջ յաճախ չեն գործածուիր, մանաւանդ թէ ոմանք միշտ խորշելի համարուած են ըստ հին նախնեաց: Այսպէս են օրինակի համար՝ նախ Ժան, զինի (փխկ՝ յեո), յաղագս կամ է սախ, որդէս (փխկ էքրե-) նախադրութիւն. Չան զի, յար, այնԺան, համայն, քուր, (ամենայն,) անյնի-բ, զի-բերս, ինԺան, յոֆն, ըմքոն, Վարկանիժ, եւն. որոնք համեմատաբար՝ երկրորդական գործածութիւն մ'ունին, ինչպէս մինչեւ հոս բերուած օրինակները կը ցուցնին. եւ ոմանք միայն այս պէսպիսութեան ձեւոյն մէջ կը տեսնուին:

Ամպարշտեցար, սախայն ե- այնդէս ոչ յազեցար. յաճախեցեր ի մեղս, սախայն ե- այնդէս ոչ յազեցար. յաճախեցեր դաշինս, համայն ե- այնդէս ոչ յազեցար: Մէշո փթթի, ցանկ ծաղկի, յար հասանէ: Թէ այնչափ կոտորէր, կամ թէ այնԺան խրատ տայր կոտորել: Բազում անգամ յոֆնոֆոյն օրինակօք ոչ մտադար յայտ առնել: — Ուրախ լըր քերկրեալք: Ուրախօֆո մայր որդւովք քերկրեալ: Յնծացեալ քերկրեալք: Բազում ինդո-նեամք լի առնէ, եւ այնչափ քերկրո-նի-ն ծնանի ի ներքս:

Նոյնպէս տեսանք վերի օրինակներուն մէջ (եր. 470, 471.) քուր, քուրԺ, քուրԺԺան. եւ նախադրութեանց մէջ՝ նախ Ժան, որդէս, յաղագս՝ իրենց նոյնանշաններուն քով պէսպիսութեան համար գրուած. ասոնք առանձին շատ քիչ անգամ կը գործածուին:

Ինչպէս ամէն կանոնաւոր լեզուաց՝ նոյնպէս մանաւանդ գրաբար հայերէնի հարադատ ոճոյն մէջ բառերու յաճախ կամ ցանցաւ գործածութեան ատիճանաւորութիւն մը կայ, որ առանձին ուսման նիւթ է եւ շատ կարեւոր գործնական հմտութիւն, թէ նիւթապէս այս կամ այն բառի ընտրութեան եւ թէ անոնց այս կամ այն նշանակութեան նկատմամբ: Այսպէս բազմութիւ նոյնանշաններուն մէկ մասը բուն գործածականն է, միւսը չափաւորութեամբ գործածելի, եւ մէկը կամ երկուք իստան համարուած՝ հազիւ մէկ կամ երկու տեղ տեսնուած

ըլլալով: Խնդիր յուզել այս իրականութեան վրայ, որուն ներքին պատճառն անծանօթ է մեզի, անգիտութեան գործ է. եւ այս գործնական օրինաց արհամարհութիւնը, նոյնանշանաց անխտիր յախուռն կիրառութիւնը նախնեաց օրինակաց զեղծումն է՝ որ ապականեալ դարուց եղծ ազաւազութեանց մէջ կը թողու զգրողը:*

Գ Լ Ո Ւ Թ Ժ Գ.

Ո Ւ Ղ Ղ Ա Գ Ի Ո Ւ Թ Ե Ա Ն Վ Ի Ա Յ

Ա. Ուղղագրութիւնն կը կոչուի իւրաքանչիւր բառանսխալ, այսինքն իւր յատուկ գրերովը գրելու կանոնը, Ուղղագրութեան մասերն են դարձեալ կանոնաւոր Ափոփարութիւնն ու Տղադարը: որոնց վրայ այստեղ կը խօսինք:

Յ Օ Գ Ո Ւ Թ Ա.

Ո Ւ Ղ Ղ Ա Գ Ի Ո Ւ Թ Ե Ա Ն Ը Ն Դ Հ Ա Ն Ո Ւ Ի Ս Կ Ջ Բ Ո Ւ Ն Բ

Բ. Առանց ձայնաւոր գրի բառ չի կազմուիր ամենեւին:

Գ. Հայերէն լեզուն կրկնեալ գիր չունի, ոչ ձայնաւոր եւ ոչ բաղաձայն: Միայն ըստ պատահման կը բնայ երկու նոյն գիր քովէ քով կցուիլ՝ կորուսման կամ ամանցման, եւայլն կանոնով. զորօրինակ. Եբ'ըորդ. չոր'ըորդ. քն'նեմ'. կո'փեմ'. ցուց'ցես. կաց'ցուք. ուզ'ղութիւն. գյ'յութիւն. ան-նման. ան-նախանձ. խրատոփու. քաղաք. ի մարդարէի, եւայլն**:

* Զանի մը մասնական տեղեկութիւններ տուած ենք Ա մասին մէջ, (մտնաւանդ անփոփոխ մասանց բանի վրայօք.) եւ շատ հասարակ եղած եւ լեզուին բնականն ու գործածականը կարծուած բառերու աստիճանաւոր կիրառութեան մտադիր ընթերցողը կը դանձ' որ սովորականներու եւ անսովորներու տարբերութիւնը շատ անգամ համեմատաբար տասն կամ հինգ կամ թե հազիւ մի է առ հարիւր:

** Հակառակ չեն այս կանոնիս՝ սուղ (կարճ) և գրով կա-

1. Զայնաւոր գրեք:

Ա. Զայնաւոր գրեռէն՝ ա, ե եւ ո բառի վերջ չեն մնար, այլ ա եւ ո անձայն յիով կը վերջաւորին. այսպէս. Ծառայ. աղայ. դողայ. երթայ. գշտայ. մարդայ: Իսկ ե կը փոխուի եի. այսպէս. (Գնեմ), դնե, (եմ, էս) է: — Ար զարտուղին՝ Սա, սորա, նա, դմա, սքա. ահա. ո. եւ հրամայականները՝ Գնա. աղա. դողա. կացո. հատո. մատո. դարձո: Նոյնպէս ա վերջով օտար անունները. Ասիա. Սամարիա. Յուդա. կասիա: — Ար գտնուի գրուած նաեւ Սորայ. մատոյ. յապայ:

Բ. Ա եւ ո՝ բառին վերջը միայն յ եւ — կրնան առնուլ եւ երկբարբառ կազմել՝ այ, աւ եւ ոյ, աւ. — ուրիշ ձայնաւոր ասոնց չի յաջորդեր:

Գ. Ա գիրը միայն ա եւ — ձայնաւոր կրնայ առնուլ, եւ երկբարբառ կազմել՝ եա, եւ. — ուրիշ ձայնաւոր ասոր չի յաջորդեր: *

Դ. Ա՝ գրէն ետքը ոչ յ եւ ոչ ուրիշ ձայնաւոր կրնայ գալ. իսկ իրմէ յառաջ՝ յ նախդիր միայն: Ը ձայնաւորը միավանկ բառ չի կազմեր, բայց կայ միայն ընդ եւ ըսոք, որ անշեշտ են: Նաեւ ոչ բառի մը վերջին ձայնաւորը կրնայ ը ըլլալ: **

պուած բաղաձայններն որ քանի մը բառի սկիզբը կամ վերջը կը պատահին. ինչպէս. Գրուել. լլուկ. հէի. դրում. — տարբ. երբ. լուսան, եւայլն. իսկ յաւելուած են յօդերը. զբան. ի խօս. յարդդ:

Նոյնպէս օտար բառերու, մանաւանդ յատուկ անունաց գրութեան մէջ, ուր ընդհանրապէս հայերէն ուղղագրութեան կանոններն անփոփոխ կը պահուին, կրկին ձայնաւոր, շատ անգամ նաեւ կրկին բաղաձայն փոխ կը մնայ. ինչպէս. Մարա. Բերտաբեի. Փակեի. Մովդիմ. Սեղում. Աննա. Բաքիդդ. կապաթա: Բայց նաեւ ասոր հակառակ՝ սոփորութիւն եղած է կրկին բաղաձայնին մէջը գանց առնել. Ապոսն. Թադէսս. Սիմօնս:

Իսկ սոփորական եղած սխալներ են՝ Ստեփաննոս եւ անքնին, նուի վայրապար կրկնութեամբ:

* Նոր գարուց ուղղագրութեանէն ելած է իօ նոր երկբարբառն՝ որ իօնն, քեօզ եւ արդեօ: Բառերուն վրայ կը տեսնուի փիկ ի-նն, քե-զ, արդե-օ. եւ դարձեալ յոգն. դործիականներու՝ Վարծեզ, չարեզ, փիկ կարծեալ:

** Քիչ օտար անուն կը գտնուի ասկէ զարտուղած. Անդելն բերդ. Դմիտրէժ լեռան:

Երբեմն զեղչուած ի, ու ձայնաւորներուն տեղ կը գտնուի ը աւելցուած՝ եթէ բազմաթիւ են բաղաձայնները. Ծննդոց. դալըստեամբ. զսկզբան: Բայց աս սովորական եղած չէ:

Ե. (3) գրէն յառաջ միայն ու եւ ո կրնայ գալ, եւ ոյ, ոյ* երկբարբառները կազմել: Իսկ բաղաձայն՝ ըստ պատահման միայն կու գայ յիւ յառաջ. Անյապաղ. անյագ. յեղյեղել:

Զ. Ի գրով բառ չի սկսիր: — Իրմէ յառաջ միայն կրնայ ո, ե, ի, ո գալ՝ եւ ու, եւ, իւ, ու երկբարբառ կազմել:

Ար զարտուղին՝ 1. Հոլովմամբ՝ Հոհոյ. տարոյ. եւայլն: ** 2. Կոյն կանոնով ածանցք. Արի, արու-թիւն (կամ արութիւն). *** որդի, որդու-թիւն. տեղի, անտեղու-թիւն, (տեղոյ պակասութիւն): 3. Քանի մը տեղ կը գրուի ը՝ միայն ու հնչումը խափանելու համար. այսպէս՝ Տըչութիւն, (փխկ. տուչութիւն այսինքն տուչութիւն.) նոյնպէս յաճախ կը գրուի տուչնջեան՝ փոխանակ տուչեան:

Ըստ հին ուղղագրութեան երբեմն նաեւ պարզ ու կը գրուէր իւ երկբարբառի տեղ. Եգպատոս. Փոգիա. Մսիա. դեռ այսօր այն կանոնով կը գրուի Եթոովպիա: Ըստ այսմ՝ հիւստոյ (եր. 189, ծան.) աւելի կանոնաւոր կ'ըլլար գրել հստոյ: — Այդ գրուած նաեւ ըստ հին ոճոյ՝ Չփքս գարնի, փխկ զփոտո:

Է. () գրէն ետքը միայն բաղաձայն կրնայ գալ: Պատճառն է՝ որ ի բնէ հայերէն օ գիր չըլլալով՝ միայն

* Լեզուին ներքին կազմութիւնը կը պահանջէ՝ որ յ գիրը ձայնաւորաց կարգը դնենք, իբրեւ սուղ ի. Թէեւ հիմայ իբրեւ բաղաձայն ալ կը գործածենք՝ հոյի նման ձայնով:

** Բաւական յաճախեալ սխալ մըն է անվարժ գրողներու՝ ի վերջով բառերու հոլովման դրութեանը հետ շփութեւ ի վերջաւորներունը, եւ գրել անոյ. պարոյ. հալի եւայլն. կամ արոսոյ. Կարոսոյ. եւայլն:

Իսկ մտադրութեան արժանի չեն ռամկական ժամանակներու սովորական սխալները՝ նափ. թին, եւն:

*** Միջին ժամանակներուն՝ հին նախնեաց լեզուէն խոսողներէն են՝ Արիսթիան փիկ արութիւն կամ արու-թիւն. Այրիսթիան փիկ այրութիւն. եւ Այրիսթիան փիկ առնութիւն:

բաղաձայնէ յառաջ Հանդիպած աւերկբարբառնն օեղած է, եւ աղաւնի միայն ազատած: *

Ուղղագրութեան թանձր վերպակներուն կարգն է՝ օտար անուանց մէջ աւ, ով երկբարբառներուն եւ յիտեղ օ գրել. Օֆոֆոֆո. Պոլլնա. Յօհան. Սթօն. Անֆօն եւ Կրօնիֆո. Պօլլիֆոֆո. Պօլլիֆոֆոֆո փխկ Պոլլի:

Ձայնաւորներու վրայ ըստածներէն կը հետեւի որ հայերէն ուղղագրութեան հակառակ բաղադրութիւններ են՝ աե, աե, աի, աո, եի, եյ, եո, եո, եյ, եւ, էյ, օյ. այլ միշտ կը բաղադրուի՝ այե, այի, աւ, էի, ով. այսպէս. Շմանն. Մենեղաւս. Արքեղայոս. Սային. Մանային. Սաւաղ. Տրովդա. Յովքազ. եւայլն: **

Ը. Հայտնի է որ հայերէն ձայնաւորներէն ումանք որոշեալ օրինօք փոփոխման եւ կորուսման կաննի ենթակայ են:

Նոյն կորուսման կանոնին հետեւութեամբն է եւ աւ ձայնաւորները հայերէն բառերուն միայն վերջին վանկը կը կազմեն: Իսկ նախընթաց վանկերուն մէջ գտնուածները՝ կամ 1. էէ եւ ղյէ դարձած են, ինչպէս՝ Գիտեմ, գիտես, իջաներ, եղիցի. բասաւ, գոսփկան, ծերութիւն. — կամ 2. բացառութիւն են, ինչպէս՝ Գիշեր, հիմանց, վիճակ, շիրիմ, գոպարիմ, սոտակ. որոնց շատին արմատն ու կազմութիւնը, ուստի նաեւ պատճառն անծանօթ է մեզի. *** կամ թէ սովորական կերպէն դուրս ձեւացած, ինչպէս՝ Յիշատակ. իմաստ. յիմար. եւ կամ 3. որոշ պատճառ մ'ունին անկորուստ

* Երբ որդէն բաղաձայնէ յառաջ Հանդիպած առն աւսկուած էր օ հնչել, յետին դարերու մէջ Յունաց օ գիրն աւելով նոյն աւ երկբարբառին տեղն անցուցցաւ:

** Շառ գարեթէ ի վեր ռամկական ժամանակներն ստեպ կը գրէին՝ Թափար հոսց. արտաւիտն. կամ հակառակը՝ Թայթար. պոյնոֆիտլ. աւֆոյնոյն, (աւագանւոյն.) եւն. — գլխաւորաբար յ կամ է ձայնով (իւ, օյ. այ, եւ) երկբարբառներուն հնչումն ու գրութիւնը խանդարած ըլլալով:

*** Բացառութիւն է առանց որոշ պատճառի մը՝ Աղիտից, անօրինութիւն, դեղագէղ, հինգերորդ եւ նմաններուն անփոփոխ մնալը: (Երես 189):

մնալու. ինչպէս՝ Սպիտակ, շո-շան. սկոտեղ. սո-դա-
րունք. եւայլն՝* Այսպէս են

1. Քերականական օրինգը՝ Պէտակ, գիտաց, գունոց, լու-
ծեալ. Գ'րիչ, բ'րածեծ, թ'ուեան, շ'նչեմ, ա'նկոց,
Հան'ցես. — գ'րգիւ, փ'րփուր, թ'րթ'ուեմ, եւն:
2. Օտար բառերէն՝ Պնակ, գմակ, սմբակ, կրպակ,
կտապ, պղինձ, գմբէթ, սրինգ, վրկանք, Տրդաստ,
եւ ուրիշ շատեր:

Ի եւ ու ձայներու համար ըսուածն աւելի ճշգիւ
իմանալու է նաեւ է, էո, ոյ փոփոխելեաց վրայ, որոնք
միայն վերջին վանկ կազմող են՝ գրեթէ առանց բաց-
առութեան:

Աւանդեցինք Ա մասին մէջ (եր. 58.) իբրեւ ընդ-
հանուր կանոն հայերէն լեզուի, թէ երբ ձայնաւորի
մը վրայ նոր վանկ մ'աւելնայ, այն առաջինը կը սղի՝
գրին բնութեանը համեմատ փոփոխել կամ փոփոխ-
ել. — որ ոչ միայն հարվմանց՝ այլ եւ խոնարհմանց,
այլ եւ բովանդակ լեզուին ընդհանուր կազմութեան
էական եւ տիրող օրէնքն է:

Բայց գիտելով ոմանք 1. որ բառերուն սկիզբն
եղած ի եւ ու ձայնաւորներն ը գրի կը փոխուին,
(ընձուց, ընչից, ընչաց. եր. 11. ծան.) եւ 2. որ
ձայնի խասութիւն կրող վանկերու մէջ բնականա-
պէս ը ձայն մը կը մտնէ. (ս'րբեմ, գ'նգի, խրձուկք.)
բաւական ժամանակէ ի վեր նոր տեսութիւն մ'աւ-

* Գիտելի է՝ որ շատ լեզուաց մէջ ձայնաւորներն իրենց
տեսողութեան շափոքն Երկուր եւ Սո-ը կը զանազանուին:
Թէ հայերէնն ալ ունէր այս զանազանութիւնը՝ բացա-
յայտ գրաւոր վկայութիւնն ունինք հին նախնեաց. բայց
գործնականին համար բաւական հմտութիւն պակաս է
այս օրս:

Օտար ազգաց բառերուն առաջին սուղ վանկերը հայ-
երէնի մէջ հայերէնի կանոնաւ անհետ եղած են, կամ
սուղ ը ձայնով կ'արտաբերուին. ինչպէս վերի օրինակ-
ներէն կը տեսնուի. Գ'ղիւ, Բ'րբու, շ'լեայ, Գ'նակ, եւն.
այսպէս նաեւ մեր լեզուին ի հնուց կրած փոփոխու-
թիւններովը՝ ն'լլահ, ն'լլան, ն'լլաղ, վ'նա, լ'րար, լ'րեղ,
վ'ճար: Բայց երբ օտար լեզուաց մէջ բառի մ'առաջին
վանկն երկար է, հայերէնի մէջ ալ նոյն ձայնաւորն ան-
կորուստ կը մնայ, (թէպէտ եւ ոչ երկար այլ սղեալ,
ինչպէս կ'երեւայ.) այսպէս — գոնէ Արիտականաց կամ
Արեւելեաց բառերէն՝ — Նիզակ, գիպակ, լեզակ փիկ
լիզակ, սպիտակ, շո-շան, եւն. նոյն կանոնաւ՝ որ հայ-
երէն գիտակ, կոսան, եւն:

ոչ շնչելի) * Ինչպէս նաեւ ճնշուի, յրձի, սրբուի եւ նմանները կը հնչուին: ** — Եւ զարձեալ Տ. եթէ միտ դուռի այլեւայլ օտար լեզուաց՝ որ ձայնաւորի Փոփոխմանէն զատ՝ իրական Արուստան ալ ունին, բաւական լոյս մ'առած կ'ըլլանք թէ հայերէնն ալ յայտմ' խօսողութեան ընդհանուր օրէնքներէն զաւրտ ելած չ'ըլլար՝ գրի կորստեամբ: Բաւական է լեզուագրիտի մը՝ յունարէն այր, հայր, մայր, դոստր անուններուն եւ լատիներէն հայր, մայր, քիչ, փոքր, չորսնորս եւ ուրիշ բառերուն հոլովման եւ կազմութեան կերպը գիտել. կամ նաեւ տաճկերէնին իւր, կորի, բերան, ին, յօտրոսիւն անուանոց կորուսման կանոնը. (փ'լըն, փո'օիւնորն, ա'լըն, փո'լընփո' կամ փոյնփո' եւ այլն): Հայերէնն յայտմ' մասին շատ աւելի կանոնաւոր է, եւ հաստատու միակերպ օրէնքներ ունի Փոփոխման ու Արուստան քան ուրիշ լեզուները:

Դարձեալ անշուշտ այլազգ կը խորհրդածուէր, եթէ գիտցուած ըլլար՝ թէ շատ հայերէն (ինչպէս նաեւ օտար լեզուաց) անուններուն արմատականն են

* Արդի հայերէնն աւելի ենթակայ է Արուստան կանոնին. բայց եւ այնպէս հեշտ հնչման օրինաց հպատակելով՝ կ'ըսուի բնականապէս Յանկընի, պարճնի, փալճընի, եւ ոչ կրեք Յանկընի, եւ այլն:

** Եւ ոչ ստորին զարուց տաղաչափներուն կամ երգահաններուն ըրածն արժէք մ'ունի, կամ բաւական վիզայութիւն է մեզի՝ թէ այն ժամանակները կենդանի եղած ըլլայ ը հնչումը, որոնք հոս հոն ըստ կամի կը յաւելուն եւ կը յապաւեն ը գիրն՝ առանց քերականական հիման, գրելով պարտեցար, լընըոյ, ըլնա, սլանըն, եւ այլն: Անոր հակառակ՝ գիտե՛ք թէ իրենց ժամանակին եւ նաեւ կանխագոյն ազգային հնչումն այնպէս Դիշդ կը պահէր ձայնաւորաց կորուստը, ինչպէս որ իրենցմէ ետքը մինչեւ ցայսօր մեր ժողովուրդն ամէն տեղ կը պահէ այնչափ որ անով շատերը սխալ կ'ելուզէին չգիտցած բառերնուն արմատները. զորօրինակ՝ յան'ի ներգոյականն, փո'նայ սեռականն եւ փո'նի' բայէն ուղղական կը հանէին անի եւ փո'նն եւ փո'ն, (փխկանաթ, փո'ն, փո'նփո'ն) այս կարգէս է նաեւ փո'նի' բայէն ելած անիոտո' անականը (փխկ նախնաց անիոտո' բառին) որ դեռ ցայսօր կայ գործածող:

Նոյն դարերը՝ մինչեւ նաեւ կորուսման պատճառաւ իրարու կցած բաղաձայններն հեշտալուր ընելու համար կ'արտաբերէին ու կը գրէին պանդրափ (բայց ոչ պանդրափ. — պանի եւ սփի.) ինչպէս որ ամէն լեզուի վրայ կը տեսնուի՝ ն եւ ՚ գրերուն մեջտեղը ք յաւելուլ:

Իբր կորուսման պատճառաւ եկամուտ գրի յաւելուած՝ տեսնուի Յունաց լեզուին փոքր բառը, եւ զարձեալ անոնց այր բառին հոլովմանն ու անոնցման առած ձեւերը:

Հորովեալները, եւ ոչ թէ ուղղականը՝ որ կորուսմամբ ամփոփեալ է, — կամ թէ ըսենք, ոչ յուղղականէ ի սեռական՝ այլ ի սեռականէ յուղղական քայած է ձայնաւորի կորուստը, զորօրինակ անու, սրբու, սրբ, սոր, եւ այլն բառերուն արմատական երկարացոյն է, որ են՝ անասն, սրբան, սրբա, սորիւ, որոնց ա, ե, ու ձայնաւորները հնագոյն կորուսման կանոնաւ ընկած են ուղղականէն, ըստ լեզուին նախնական կազմութեանը: — Բայց մեզի բաւական է նաեւ այսօր մեր աչքի առաջ ունեցածը:

2. Բաղանայն գրեր:

Ա. Բաղաձայն գրերն երեք կարգ են ըստ նախնեաց. Նուրբ, Միջակ եւ Թաւ:

Նուրբ.	ւ.	կ.	տ.	ծ.	ճ.	ժ.	չ.
Միջակ.	բ.	դ.	դ.	ձ.	ջ.	—	—
Թաւ.	փ.	ք.	թ.	ց.	չ.	շ.	ս.

Իսկ Նոյ կ'ըսուին՝ թուլաձայն գրերէն՝ շ, ջ, ն, ր.* մեացածներն են՝ լ, հ, ի, ու, Վ:

Գարձեալ նոյն բաղաձայնները բերնի գործարանական բաժանմամբ կը զանազանին՝ Արածնայան, Քմայան, Շրինայան, Լեղնայան, Ոսկայան, Կոկորդային:

Բ. Ո գրէն ետեւ միջակներն՝ իսկ սէէն ետեւ թաւերն ու նուրբերը կը յաջորդեն. զբաղնում. զբասա. ազգեմ.* — սփոփեմ. ստանչելի. ստղեմ. սնափեմ.* — սղաս. ստփէն. սսկի: Այսպէս ալ՝ իէի առջեւ միշտ փ է եւ ոչ փ. ախփ. ուխփ. բախփ. եւայլն:

Գ. Ո գրէն ետեւ բաղաձայն չի գար. եւ եթէ հանդիպի՝ ո գիրը չէի կը փոխուի. այսպէս՝ քոյր, քեռ,

* Ուրիշ աճէն լեզուաց շորս նայերուն առաջինն է լ, իսկ մերն է շ, — որուն վրայ տես եր. 490:

** Հայերէն ուղղագրութեան դեմ կ'ելլէ յեանագոյն դարուց գրութիւնը. սբանում, սբալ (փոխանակ զբալի.) եւայլն: Նոյնպէս օտար անուանց ձջ՝ ուղիղ գրութիւնն է Ատանաղ. Ցիլքոն. Լեղոս. Թեղեօթի. (եւ ոչ՝ Ազգանաղ, Լեպոս):

*** Այս կանոնաւ՝ ձայնաւորներու եւ միջակ բաղաձայններու սկիզբը կցուած զ յաւելուածը՝ թաւերուն քով սէի կը փոխուի. զարթնում, զարմանամ, զնկնում, զքնամ, զգոյշ, — սթափեմ, սքոյեմ, սփարիմ, սփոփեմ, փիկ՝ զթափեմ, զքոյեմ, եւայլն:

տերք, * տերց. ձեռն շնորք, յերթակալ. եւ կրկնաւորնե-
րը՝ Բառ, Բարբառ. կառ-ոյց, հարկառ**. [Թիւ, [Թուիչ,
նրթաւ. գռ-ոյթ, էրգիւ. Տարմառատ. Տրմեւալ. եւն:
Ար զարտուղին՝ հուշի, սուհան, եւ քանի մ'անյայտ
բառեր: — Իսկ ո՞ն՝ տես վարը՝ Ե:

Գ. Ո՛ր եւ զգրերով հագիւ քանի մը բառ կը սկսի
հայերէն, այլ կը գրուի հո՛ կամ հր: Իսկ օտար անուանց
սկիզբը ո՛ է կամ հո՛ մանաւանդ յունականներուն, (չառ
քիչ զարտուղութեամբ, ինչպէս՝ Բէա, Բախաք, Բողէ:)

Ե. Բ՛ գրէն ետեւ եթէ ն հանդիպի՝ կը գրուի
ռն. ինչպէս լեզուին ամէն արմատական բառերուն եւ
յատուկ անուանցը վըայ կը տեսնուի. Բոտան. Գտան.
Խառնիճ. Կտանի. Փտանակ: Այս պատճառաւ այր, Գէր՝
կը հըլովին առն. Գեառն. իսկ ուրիշ ք արմատով եղած-
ները՝ Խտան. Գոտան. Գռնե՛, Բտանա՛, եւայլն, տես
եր. 97, Բ ծան:*** — Նոյնն օտար բառերու մէջ ալ կը
պահուի. Բարնարաս. Փարնաւազ. Սկիւռնոս:

Ար զարտուղին կորուսման կանոնաւ եղած ամ-
փոփոնւնքները. զորօրինակ. Գարնայնոյ. վերնոց. վեր-
նատուն. սերնդոց. եւայլն:

Զ. Վ՛ գիր կրնայ միայն բառի սկիզբն ըլլալ.
Իսկ բառի մէջ կամ վերջ՝ իրմէ առաջ միայն ո՛ գիր
կու գայ, եւ ո՛վ երկբարբառ կը կազմէ:

Ար զարտուղին բարդերն ու անանցները. Զօրա-
վար. անվեհեր. կարեվէր. † եւայլն:

Է. Վ՛, —, ք գործիական կազմող երեք լծորդ
գրերը ճշգիւ հաւասարազօր են իրարու. այնպէս որ՝
ըստ այլեւայլ օրինաց հայերէն ուղղագրութեան՝ կը

* Յայանի է որ գործիականը տրականին վըայ ք, Վ, —
գնելով կը ձեւանայ. տես վարը՝ Է:

** Կոտորանի՛ ըստ բնիկ նշանակութեան՝ վրան դնել. առ-
կէ՛ խրիտո, (գէզ.) ամկոտոյց լինել կամ զայս կոտոր-
անել. (յառած նայիլ:) — Շինել նշանակութիւնը հա-
րազատ հայերէնէ ետքն է:

*** Եթէ Գանձի եւ հնոց բառերուն ալ արմատական ք գիրն
ընկած չըլլար, (Գար, հոբ.) պիտի գրուէին Գտանի՛, հոնոյ՛:

† Ընդհանուր կանոնին համաձայնութեամբ կը գտնուի զը-
րուած նաեւ զօրաւար. երիւար. կարեւեր. իլեւան, եւն:

գրուի լ՝ ուր — եւ ք չի կրնար գրուիլ. կը գրուի ա՛ ուր լ եւ ք չի կրնար. եւ կը գրուի ք՛ ուր լ եւ — չի կրնար կենալ: Օրինակ.

1. Բանիւ, կարգաւ. — լ շընգունիւր վերի (Ձ) կա- նանին պատճառաւ. եւ ոչ ք, վասնզի ձայնաւորով եւ քենով (աք, իք, ուք) վերջաւորութիւն չի տանիր լեզուն, — մէկ կամ երկու միավանկներէն զատ:
2. Գործով, խոսով. — ք շընգունիւր՝ յիշեալ պատ- ճառին համար, եւ ոչ ա՛ որպէսզի հոլովման նկա- րագիրը (ո ձայնը) ու ձայնիւ անհետ չըլլայ:
3. Քրտամք, ոսկերք, աստղք, ջուրք. — բազմայն վերջ ունենալով՝ կից ոչ — կ'առնու եւ ոչ լ. (տես եր. 468, Ձ. եւ պատեղ Ձ:)

Ը. Սնացած նմանաձայն գրերուն համար, զորօրինակ ց, յ. — շ, ջ. — ք, ք. — ր, ա. — ց, հ, եւ- այլն. որոշ կանոն չի կրնար տրուիլ, եւ միայն վար- ժութեամբ ու մտադիր ընթերցմամբ կը սորվուի: Սա- կայն կրնայ իբրեւ ընդհանուր կանոն աւանդուիլ՝ թէ հայերէնի մէջ համեմատաբար աւելի յաճախեալ են՝ շ, յ, ր, ք, ե, ա. եւ աւելի ցանցաւ կը պատահին՝ ջ, յ, ա, ք, ե, օ:

Գարձեալ շատ կը գիւրանայ ուղղագրութիւնը՝ բառերուն քերականական կազմութեանը, ածանցմանց եւ ստուգաբանութեան մտադիր ըլլալով:

Տարագրչութիւն անուն կու տանք այս օրս այն գրութեան կերպին՝ զոր նախնիք օտար ազգաց բա- ուերը հայերէն գրելու կը գործածէին: Նախնեաց օ- բէնքն էր՝ օտար հնչմունքն ըստ կարի ճշդիւ փոխա- արել հայերէն տառերով. ինչպէս բնական է:

Բայց հնչմանց հետզհետէ այլայլելուն համեմատ այլեւայլ դարեր պէսպէս կերպեր ունեցած են յայսմ. եւ մեր օրովն առանձին ուսման նիւթ է մեզի՝ հարա- զատ գրաբարի ժամանակներուն այն գրութեան կերպն որ մեր հիմակուան կերպէն շատ տարբեր է:

Մեր, արեւմտեայ Հայոցս վարժած ու սորված հնչմամբը Միջակ բաղաձայնները թաւերէն շեն տարբերի, եւ կը նոյնանան ք եւ է, — է եւ +, — ք եւ ք* : Սակայն լեզուին կազմութիւնը, նախնեաց անվրէպ միակերպ գործածութիւնն եւ ուրիշ յայտնի ցլցեր կը վկայեն անոր հակառակ՝ թէ Նուբերն աւելի նման են թաւերուն, թէեւ ոչ նոյն. զորտե՛ նակ՝ ոչ է լծորդ էիւրի եւ ոչ ք. այսինքն՝ մեր ք, է, ք հնչմունքն անոնց ոչ, ՚, ք հնչման տեղն անցած է, նոյնպէս եւս փոխադարձաբար. այնպէս որ մեր Գարգո՞ գրածը՝ մեր նախնեաց Կարգո՞ գրածն է :

Տեսնելով մեր նախնեաց այս դարաւոր հաստատ գործածութիւնն, որ գրաբարի տիրող օրէնքն է. — դիտելով Կիւրոս, Եփեմարոս, Պետրոս, Դափն, Բաժանան, պահարօթի, արիֆան, խոն, փիկ Գիբրոս եւայլն. գրութեան կերպը մեր ըմբռնման ճիշդ հակառակի. — այն զարմանալի երեւցած գրութեան կերպին անուն տուած ենք Յարագոս—իւն, իբր թէ օրէնք է օտարազգի բառերուն տառերը դարձրնել եւ հակառակ հնչմամբ գրել հայերէն, (երբեմն անուն մը չճանցուելու չափ) : Բայց նախնիք պէտք չունէին այսպիսի անորոշեակ օրինաց : Հին հարազատ հնչմամբ՝ իրենց հայերէն Նուբը տառերն օտարաց նրբերուն, Միջակները միջակներուն եւ թաւերը թաւերուն ճշդիւ կը պատասխանէին : Ակայ է այն ժամանակներն ամէն օտար ազգաց ալ մեր բառերը մեր նախնեաց հետ միաբան՝ նոյն հնչմամբ կարգալի ու գրելը : Նմանը դեռ արեւելեայ Հայոց ընտելական հնչմունքն ու գործածութիւնն է : — Բայց գրաբար ուղղագրութեան այս էական մասն անարատ պահելու համար այլեւայլ ուրիշ կանոններ ալ կան միտք առնելու :

* Կ'ըսենք մեր սորվածն, այսինքն՝ զարոցաց մէջ աւանզուածը. որուն դէմ կ'ելլէ մեր ժողովրդեան բնիկ հընչմունքն որ ըստ մասին համեմատ է նախնեաց, միջակ բաղաձայնները (ք, է, ք) ըստ նախնեաց գործածութեան պահած ըլլալով, գոնէ բառերուն սկիզբը : Միտ գրուի ժողովրդեան՝ էլուիը քարձին քնել. քիււհար գառնալ. յմեւան լուրն, եւայլն արտասանութեանը. — որ դրողիտաց իրեւ բիրտ աւովութիւն խոտելի երեւցած է : Մեր աւմիկը նախնեացմէ կը խոտորի՝ անոնց նուբը (պ, ՚, ք) տառերը միջակներուն հետ նոյնացընելով : Ուղղագրութեան այս կարգի այլալուծութիւնը ձ գարէն առջին երեւան կ'ելլէ. եւ գրչաց աղբարութենէն կը տեսնուին զլիսաւորաբար միջակներն ու թաւերն իրարու խառնակած՝ թարման, հոտ, փոփր, մինչեւ նաեւ ի փաղափն եւ ուրիշ անհետեւ թառախախներով :

ՅՕԳՈՒՆԹ Բ.

ՎՐԿԻՆ ՈՒՂՂԱԳՐՈՒԹԵԱՄԲ ԲԱՌԵՐ

Ա. Հատ բառեր կրնան երկու կամ երեք կերպ գրուածիւն ունենալ. այսինքն այս կամ այն գրով գրուիլ, կամ գիր մ'աւելի ու պակաս ունենալ:

Բ. Լծորդ, (լծորդադատ) կ'ըսուին այն նմանաձայն գրերն որ իրարու տեղ կրնան գրուիլ: Ինչպէս քնն- բառին մէջ, որ քնն- թ ալ կը գրուի՝ թ լծորդ է յայի: * Այսպէս եւս՝ հայերէնի մէջ ղ լծորդ է վիւնի:

Գ. Հատ երկբարբառներ կը գտնուին իրարու տեղ գրուած. ինչպէս ո՛վ եւ ա. — ոյ եւ ի. — ոյ եւ ե. եւ այլն. եւ կրկին ձեւով կը գրուին՝ Բովանդակ եւ բաւանդակ. յովանակ եւ յաւանակ. պահաք եւ պահաք, (պահաք.) ամպաք, ամաաք, (փխկ - ո՛վ.) նոյնպէս թոյն, ինն. լոյլ, լն. — վաղորդայն, վաղորդեան. եւ ըստ այնմ երկու կերպ կը հոլովին. թունից եւ իննից. վաղորդայնի եւ ի վաղորդեմի: Իսկ ընդուն. հնչողք եւ հնչողք, հնչողաց՝ տես եր. 424:

Դ. Մենի առջեւ երբեմն ք եւ ոյ իրարու տեղ կը գրուին. կը գրուի մոյ կամ մոք. ըմպել կամ ըմքել. մոյարիշտ կամ մոքարիշտ:

Ե. Երբեմն ք, ոյ, ք գրերէն առաջ՝ ն գիրը ճ կը գրուի. մոքիծ. մոյարիշտ. մոքոփ. ըմքերանել. (փխկ ան-պարիշտ, ըն-բերանել:)*

Զ. Երկնայէս նուին առջեւ Միջակ ըսուած բազմայնները՝ ք, ոյ, յ, ջ՝ իրենց նուրբ տեսակին կը փոխուին, որ են ի, ո, թ, ծ. եւ կը գրուի անփ եւ անի. ցանփ եւ ցանի. խանփ, ժանի. ընիբ, ընփեր. ընիոյլ,

* Բայց շատ անգամ մասնաւոր պատճառաւ մը կրնան գրերն իրարու տեղ գրուիլ՝ առանց լծորդ ըլլալու. ինչպէս, ըմքեմ եւ ըմպեմ՝ նախընթաց անգականին (մենին) պատճառաւ:

** Ասորի լեզուէ թարգմանութեանց մէջ կը տեսնուի երբեմն ասորական ուղղագրութեամբ՝ ըմպել, ըմքել, ըմքանի, անք, անփոք:

ընդոյլ. Բանօր, բանօր. Գանօր, գունօր. անգոսօսօր, անօրուսօ. Խանձօղ, խանձօղ. Ընձօսօց, ընձօուց. Խնձօր, խընձօր. Կննճ, կիննճ. Խննոյտ, խննոյք. Եւայլն:*

Է. Զ գիրն երբեմն բառերու սկիզբն ու բէի քով շարժականն է. եւ կը գրուի՝ Հակայ եւ սկայ. հակիճ, սկիճ. համբարտ, ամբարք. համբարչիտ, ամբարձէք. — սուրհամ, (սուրհանդակ,) եւ սուրամ. Եւայլն:

Ը. Կոյնպէս չ գիրը՝ շ, ժ, և բաղաձայններու քով շատ անգամ շարժականն է. եւ կը գրուի՝ Գարշոն, գաշոն. շարշ, շղաշատեա. Գուրշի, գուրշի. Բարձանիճ, բաժանիճ. Գարձանիճ, տաժանիճ. — արհաւիրք, զարհուրիճ, եւ ահ, ահաւոր. պարհ, պահ. Ժարհ, մահ. վերհ, վիհ. Եւայլն: **

Թ. Դ նայ գիրն ըստ նիւննեաց լծորդ եւ մերձաւոր է լինի: Յառաջներն աւելի յաճախ էր շ՝ հայերէն եւ օտար բառերու մէջ, որ հետզհետե լինի դարձաւ: Տես սակէ վար ըսուելիքները:

Ժ. Դ գրին նախընթաց ի ձայնաւորը շատ անգամ է կը գրուի, եւ երբեմն ի-: Այսպէս շատ անուններ երկու երեք կերպ գրութիւն կ'ունենան: Ինչպէս. Շիշ, շեղ, շիւղ: Ուղիղ, ուղեղ, ուղիւղ. (աճ. ողիշն:) Երիւղ, երկեղ, երկիւղ ***: Պիղճ, պեղճ, պիւղճ: Ափղն,

* Այս Դ, Ե, Ջ թուերուն մէջ յիշուած նուրբ եւ միջակ գրերը յունական ուղղագրութեան նմանագրութիւն ըլլալով՝ կ'երեւայ թէ անգականէ (Տննէ եւ նուէ) ետեւ միակերպ թուլանայն կը հնչուէին, — ինչպէս ցայսօր մեր Ժողովրդեան հնչումն է ամեն տեղ:

** Բ գիրն ընդհանրապէս հնութեան մնացորդ է շատ բառերու մէջ, որ արդէն հին գրաբարէն ալ վերցուած կը տեսնենք. այսպէս պարհ եւ պարիչ արմատներէն էին պահիճ եւ պաշտիճ բայերն՝ որ առ հասարակ առանց բէի կը գրուին: Յայտնի է գարձեալ՝ թէ արհ արմատեն, որ հիմակ ահ մնացած է, ելած է արհատիքտ, որով զարհուրիճ փոխ զարհուրիճ: — Ուրիշ բառերուն վրայէն հետզհետե ասմիկը վերուցած է՝ չ ձայնը. այսպէս են հին ձեւով՝ Մրտի, տարիւ, արիւ, շարտ, արիւ, գրտու, Գանդարհ, Եւայլն:

Բայց սմանց արմատական չէ չ՝ այլ յաւելուած. ինչպէս՝ Բարտ. Գարշոն. Բարտիւ, (կամ ասորածեա Բարիւ) փոխ Բարտիւ, որ կը գրուի նաեւ ըստ յուն. Բարտիւս:

*** Ըսած ենք թէ շատ անուանց վերջին ձայնաւորն ի- էր

ասեղն: Պճիղն, պճեղն: Ըտտաւիւ, շառաւեղ: Ըիղլ, շեղլ: Խիղճ, խեղճ: Ծիղ, ծեղ եւ բնծիւղ, (բնձիւղ.) եւայլն: — Օտար անուններէն՝ Ըփիլայ, փեղայ, փիւղայ: Զփիլն, զմեղին, (զմելին) Պղպնդ, պղպեղ: Ըտտաւիւ, շառաւեղ, շաւիւղ: Զաճիւղ, զամբեղ, բիւղ: Կօխորդիլոս, գեղոս: Փիղ, փիւղ, ևն: Բարսեղ, Կիւրեղ, Նեղոս, Իլիան կամ Եղիան*: Բաթիլան կամ Բարեղան**:

Տերփիլոս, Տերտիւղոս: Պիլափոս, Պեղատոս. եւայլն:

Ասոնք հոլովման եւ անանցման մէջ՝ կորուսման կանոնաւ վերջին ձայնաւոր գիրը կը թողուն. եւ կը մնայ՝ Ասեղն, աս'ղան, աս'ղանի, աս'ղեգործ. պճեղն, պճ'ղանի, պճ'ղեաւոր. ուղեղ, օղ'ղայ. Կիւրեղ, կիւր'ղի, կիւր'ղոս. Բարսեղ, ար'ղի, եւայլն. — որ յայտնապէս կը ցուցնէ՝ թէ ասոնց բնական ձայնաւորն է՝ ելի դարձած, (քանի մը հատի բացառութեամբ):

Այս կանոնիս հետեւութեամբն է՝ 1. օտար բառերուն ալ եղ գրուիլը փխկ իղ. եւ 2. ի բնէ իղ կամ իւղ հայերէններուն ալ նոյնպէս եղ գրուիլը, ինչպէս՝ իեղճ. զիղլ: — Բայց նաեւ հոլովման մէջ երկու կերպը կը գտնուի. շառաւիղ եւ ի շառաւեղի. գիւղից եւ փեղից. երիւղն եւ երիւղի, երիւղած, եւայլն:

ԹԱ. Ընդհանրապէս շատ բառերու ուղղագրութիւնը ղ եւ լ գրերու մէջ կ'երերայ, մանաւանդ յ գրի քով. — ըստ նախնեաց առ հասարակ ղ գրուած, եւ

ըստ նախնեաց, որ փոփոխման կանոնաւ իւ կ'ըլլայ. (երես 189.) բայց երիւղ, իւղ, եւ նմաները՝ կ'երեւայ թէ զատին պատճառաւ օրինաւոր եղած էր նաեւ ի հնուց գրել երիւղ, իւղ, եւայլն: Ասոնց նման՝ կրկին երեքպատիկ ձեւ առած են՝ Ագիւր, ագիւր, ագիւր. Եղ՝ Աւր, Աւր, Աւր. Գիւղ, (նաեւ Գիւղ.) փիւղ, փիւղ:

* Չնէք գիտեր թէ ինչ օրինօք իբր հին սիւլ գտաւարաւուած է գրել մը մէջ՝ այս Եղիան գրութիւնը նախնեաց:

** Նախնեաց զտար լիւնի դարձուելէն ետեւ՝ ալ անդի չունի ի փխկ ի. զորօրինակ՝ Աղ. Բաւիւ. որ Աւ. Բաւիւ ալ կը գրուին՝ կայ նաեւ Աղ եւ Բաւիւ գրուած. բայց սիւլ կ'ըլլար Աւ կամ Բաւիւ գրութիւնը կամ Նիլոս փխկ Նիլոս. նոյնպէս Բաթիլան, որ վերջոյնեալ կանոնաւ Բաթիլան եղած էր, լիւնով գրուելու սկսելէն ետեւ հարկ էր որ մնար Բաթիլան, եւ ոչ թէ Բաթիլան, Բաթիլայի. ինչպէս յառաջներն անգիտութեամբ սկսուած եւ ցայսօր ընդունելի եղած է:

նոր գրութեամբ՝ ըստ մեծի մասին և։ Այսպէս են՝ Այլ, ալ. գայլ, Կայլ. Թոյլ, (Թող,) Լոյլ. ծոյլ, յոյլ, ձոյլ, արձոյլ. ծոյլ, եւ այլն. զոյլ, Լոյլ, Լեւլ, Լեւլ. գիլ, գղեմ, Էիլ, Էլեմ, եւ այլն։ — Իսկ օտար բառերու, մասնաւորապէս յատուկ անուանց՝ այս օրս մէկ մասն այսպէս եւ միւսն այնպէս կը գրուի առանց որոշ կանոնի, եւ երբեմն ազատօրէն ըստ կամի։

Ղ եւ Լ աննման ձայներուն՝ մեր հնութեան մէջ իրարու հետ նոյնանայուն տարօրինակ երեւոյթը շատերուն մտադրութիւնը գրաւած է։ Այս կրկին տառից բնիկ հնչմանցը վրայ յուզուած տարապարտ պայքարներն անճիշտ եւ կիսկատար հետեւեանքներ միայն յառաջ բերած են, եւ արդի ուղղագրութիւնը վայրագար այլայլած։ Ոչ մեզի աւանդուածին վրայ յեցած կեցած, եւ ոչ անգիտութեան դարուց առաջնորդութիւնը պինդ բռնած՝ կրնանք հնութեան վրայ անսխալ վճիռ տալ, մինչեւ որ ըստ կարելոյն նոյն իսկ հնութեան չհասցընենք մեր հետազօտութիւնները։ — Թող որ բուն նախնեաց ուղիղ գրութենէն զմեզ խտորեցընողն է՝ գլխաւորաբար զատին այժմեան թանձրութենէն խորշումն որ ունինք. — զգածում մ'որ երեք բանասիրական արժէք չի կրնար ունենալ։ Բայց հին իւր հնութեան մէջ փնտաւելու էր, ինչպէս ըսինք։

Ղ գիրն ի բնէ միատեսակ է եւ ոչ երկատեսակ. եւ այն ոչ «ձայն խաժ եւ կոկորդային» ինչպէս մերն, այլ տեսակ մը փափուկ և «նուրբ եւ լերկ» եւ այս է երկու — ղ եւ Լ — լծորդ բաղաձայններուն տարբերութիւնը կամ նմանութեան չափը։ Աներկրային է այս՝ հայերէնի բնութիւնն, ազգային հնութիւնն, եւ բազմազգի օտարաց հնութիւնքն աչքի առաջ առնողին, եւ բարոյսին համեմատ՝ գրոյն գիւտէն երկու դար ետքն աւանդուած վարդապետութեան։ Ոչ ցոյց եւ ոչ նշան մ'ունինք ի հնութենէ՝ Մեսրոպեան զատին եւ մեր գիտցած դատին փոքր նմանութեան. այլ ճիշտ անոր հակառակը։ Բայց՝ թէ դարեր զարմանալի փոփոխութիւններ կընեն եւ ըրած են հնչմանց մէջ՝ մեր լեզուն չէ միակ օրինակ. վկայ են ուրիշ ազգաց ալ լեզուները։

Հայերէն զատին յիշեալ միազգի միակերպութեան պատճառաւ է որ մեր մատենագրութեան սկիզբէն շատ դարեր անարատ ղ գրէն ուրիշ գիր չէր փոխանցուեր՝ հիմայ խնդրոյ եւ տարակուսի տակ ձգուած բառերուն, մինչեւ որ նոյն զատի բնիկ հնչմանն այլ-

այլելուն հետ կրկին ուղղագրութեան ալ սկիզբ եղաւ.* որուն՝ աւելի ետքերը (ԺԳ դարուն մէջ) դարման մ'ընելու մտօք « զատի գլխով լիւն » կամ մտացածին « ղիւն » անուամբ ու ձեւով նորահնար տառ մը մէջտեղ նետուեցաւ՝ իբրեւ մեծին Մաշթոցի գիւտ եւ անոր այբուբենքին մասն. եւ դարձեալ զիւն՝ ճշգրտով եւ ուղղելով երաւ շորորդ մ'ալ՝ « լիւն », որով ունեցանք երկուքի տեղ չորս, Վ, Լ, Ղ, Լ՛:

Իսկ ԺԲ, ԺԳ դարերն, (որոնցմով կ'ուզուի հիմայ Մետրոպեան այբուբենքը մեկնել.) այնչափ հեռացած էին Ե դարէն, որ հայերէն զատը Մետրոպեան գիտի տեղ կ'անցընէին համարձակ, — մեր հիմակուտան հնչմամբ գրելով Ալփն, Ալփյն, Բալփոք քաղաք, (փխկ Ափնա, եւ այլն) — Ըսել է թէ լիւնէ մինչեւ Ի գիմ՝ հեռաւորութեամբ երկու ժամանակները բացուած էին իրարմէ:

Սոյն տեսութիւնն արգի խուզարկուաց տեսակէտէն գուրս բլլալով՝ մեր օրերը խնդրոյս վրայ թերթեր գրուելէն ետեւ ալ՝ դեռ անմեկնելի կը մնար նոյն ապշեցուցիչ երեւոյթը — թէ ինչ մտօք արդեօք բուն հին նախնիք միաբաներ են օտարաց փոփուկ լիւնը « կոկորդային թաւ ու խաժ » աննման շ ձայնիւ խանգարելու. — դեռ անլուծանելի կը մնար թէ ինչո՞ւ եօթներորդ դարուն հայ քերականը լբիչ նայն կարգն է դասեր հայերէն զատը. եւ կրկին Ղ (եւ ոչ կրկին ղիւն) մէկ լիւնի հաւասար գրեր է: — Այս երկու խնդիրներն էին լուծուելու, եւ ոչ այլ ինչ: Խնդիրը մնաց խնդիր. բայց հետեւութիւնն եւ որոշումը գործնական եղաւ Առով՝ լիւնն որ հայերէնի մէջ քիչ պատահած գիր, եւ գլխաւորաբար բայերու ածանցմանք ձեւացընող է, մեծ առաւելութեամբ գործածութիւն մ'ունեցաւ մեր օրերը. որով տեղ տեղ գծուարաւ կը համաձայնի հայերէն յարմարագրութեան նորելուկ տառադարձութեանց մէջ լիւնին առած գիրքը: Ոչինչ զարմանք է դարձեալ՝ որ ուղիղ տեսութեան պակասութենէն դեռ հաստատ կը մնան ծուռ գրութիւններ, եւ դեռ « զատ Իէի լծորդատատոռ բմբռնելով՝ ցայտօր կը շարունակուին երբեմն մուտ գատած այլան-

* Կ'երեւայ թէ հնչման փոփոխութեան դարերուն կամ կանխազոյն ժամանակներու վերպակներէն է՝ շատ հին գրութեանց մէջ նաեւ բնիկ լիւնի հետ զատի շփոթութիւնը (մանաւանդ Ի ձայնի քով.) ինչպէս՝ Ոմանք յեղեղոցն անգր. յաղեաց ծփանաց. փխկ. յիլիւնցն. յալփաց:

զակութիւնները՝ գրելով Բազդ, աջարտ, աճիւտ, (փեկ՝ Բուր, ախարտ, աճիւտ կամ աճիւտ ըստ նախնեաց.) եւ հաւասարապէս՝ Էղբուր, Գիբուր, Գիբուր*:

Յիշեալ աճիւտ եւ աճիւտ հին գրութիւնն, ինչպէս նաեւ Էղբի եւ Գիբի, — աղարտ եւ ախար (երկուքն ալ ազմ արմատէն) եւ նմաններն ըստ բաւականի կը ջուլընեն՝ Թէ զառ լիւնի՝ է լծորդատառ, այլ ոչ Թէ Իէի:

Արձառուտ տեսութեանս վերջապէս արդիւնքն է՝
1. Թէ մեր գիտցած դասը կոկորդային հնչմամբն իբրեւ կակուղ Ի՝ անծանօթ էր մեր հին նախնեաց.
2. Թէ իրաւացի էր եւ բնական՝ որ նախնեք երկու տեսակ՝ նուրբ եւ Թանձր՝ և ձայներէն նուրբն բնարէին օտարաց նուրբ և դրին տեղ փոխադրելու, այսինքն զգաստ. **3.** Թէ Ի՝ դարու հին քերականը միբան իւր նախնեացն՝ այն երկու և ձայներուն Թանձրը (զլիւն) կրկնակ գրերու, եւ նուրբը (զգաստ) նայից կարգը դասեր է իրաւամբ. եւ **4.** Թէ զլիւն եւ լիւն ստորին դարերու գիւտ են եւ ոչ Ե՝ դարուն:***

ԺԲ. Ո՛ր դրին վրայ ալ կը տեսնուի երբեմն, ինչպէս դատի վրայ, նախընթաց ի եւ իս ձայնաւորով գրութիւնը. Սփիւ եւ սփիւ. Գանձիւն եւ Գանձիւն:

ԺԳ. Այն ուրիշ բառեր ալ կրկին ուղղագրութեամբ. ինչպէս՝ աշոխման, աստիճան. Գեղ, գէճ. Բլլլ, բժիժ. Յիյի, ծկոյթ. Պապալ, ծաւալ. փոք (Թաշուն), պոր. Իերծում, գերծում. Վոպ, չարայ. Իոյ, հոյ. արպ, երազ. եւայլն, եւայլն. — որոնց երկատեսակ գրութիւնը քերականական օրինաց տակ չէ. եւ ոմանցը շատ կասկածելի է. (տես եր. 486, ծան. վերջը):

Ուրիշ ձայնաւոր եւ բաղաձայն գրերու երկու կերպերը զանց կ'առնենք նշանակել, որ որոշեալ կա-

* Ատեն մը նաեւ ոզալ, (սիալ.) սիարիլ, (սղարիլ.) սոպիձ, (սասողի.) եւ այսօր Յփիւ, (Յփղիւ):

Այս կարգէն է յետին դարուց սովորութեան մասորդը՝ Իէի քով զ եւ զառ քով ի կրկնու. Բուլ. Բուլի. — սիլի. Հալիբուր. փիկ սիլ, Հալբար, եւն:

** Դարուս կէտէն յառաջ եղած քննութիւններն այս իրականութիւնը յայտնած ըլլալով, յաջորդ քառասուն տարեաց յարտաւ գիտողութիւնները ասկաւ հաստատութիւն տուին այն տեսութեան:

նանի տակ չեն, եւ բառարաններէն կը սորվուին, միտ
գնելով միանգամայն գործածող հեղինակաց եւ օրի-
նակագրաց ընտրութեան :

Յ Օ Գ Ա Ի Ա Ծ Գ .

Յ Ր Ո Հ Ո Ի Թ Ի Ի Ն

Ուղիղ գրութեան արուեստին կը վերաբերի
նաեւ Տրոսոս-իւն, որ բաժանումն ըսել է. այսինքն՝
խօսքի մասունքն ու բառերու վանկերն իրարմէ կանո-
նաւոր կերպով բաժանել :

Երկու մասն ունի Տրոսոսութիւնը. 1. Ախտագրու-
թիւն եւ 2. Տողագարձ :

1. Ախտագրութիւն :

Ա. Խօսքի այլեւայլ մասունքն իրարմէ պատ-
շաճօրէն զատելու համար այլեւայլ նշանակեցներ կը
գործածուին, զորոնք ընդհանուր անուամբ Այտ կը կո-
չենք, եւ անոնց գործածութիւնը՝ Այտագրութիւնն :

Բ. Ախտագրութեան նշաններն այս չորսն են.
Բոսի՝ — Սորոսիտ , — Միջակիտ . — Ախրիտիտ :

Գ. Բոսի () շատ տեղ կը բանի. բայց ընդհան-
րապէս՝ ցուցնելու թէ բառ մը յաջորդ բառին չի
վերաբերիր. ինչպէս .

Անմասն են այլոց կեանք նորա, եւ այլազգի՝ շաւիղք
նորա : Եղիցին առաջինք՝ յետինք, եւ յետինք՝
առաջինք :

Երբեմն կը դրուի նաեւ երկու իրարու կապակ-
ցեալ կարծ խօսքերու մէջ որ քովէ քով են. ինչպէս .

Յոր տուն մտանիցէք՝ անդ ազլիք : Եթէ բարի ա-
նիցես՝ դիտեա ում առնիցես : Ասելով լուսիցես՝ եւ
մի իմացին : Որ մերձենայ ի ձիւթ՝ շաղախեացի : Ա՛յդ
եղցի նշան՝ եթէ ելանիցես՝ ի տունն :

Բութէն ետեւ շատ քիչ կանգ կ'առնուի :

Դ. Սորոսիտ () կը դրուի երկու կամ աւելի
նախագասութեանց մէջ՝ որ նոյն ձեւով իրար կը յա-

Ջորդեն ամբողջ խօսք կազմելու համար, եւ ուր քիչ մը կենալ պէտք է առանց երկար շունչ առնելու. ինչպէս.

Աժ զնա յԵրուսաղէմ, եւ կացոյց զնա ի վերայ աշտարակի տաճարին, եւ ասէ ցնա. եթէ որդի ես Աստուծոյ, արկ զքեզ աստի ի վայր:

Գարձեալ կը դրուի կոշականներու քով եւ իրար միակերպ յաջորդող կարճ խօսքերու եւ միեւնոյն կարգի բառերու միջանդը:

Այր դու, ս'կացոյց զիս գատաւորի վերայ ձեր: Ժուժեա, հայրիկ, եւ համբերեա: — Ա՛ղէ հարցէք, քննեցէք, տեսէք: Զի՛ կաս, զի՛ չգործես, չէք քո ձեռք: Ի պողոյ ցորենոյ, գինւոյ եւ ձիթոյ:

Այս կարգի բառերն՝ եթէ է՛նով, կ՛մով կապուած են, ստորակէտի պէտք չունին. ինչպէս վերջին օրինակիդ մէջ՝ Գինւոյ եւ ձիթոյ:

Ստորակէտը բուժէն՝ քիչ մ'աւելի հանգիստ կու տայ ձայնին:

Ե. Մ'իջակեա (.) որ պարզապէս կեօ ալ կ'ըսուի, այն տեղեր կը դրուի՝ ուր երկու երեք լրացեալ խօսքեր իրար պիտի ամբողջացընեն. եւ ուր քիչ մը կանգ առնելու է. այսպէս:

Որդի իմաստուն ուրախ առնէ զհայր. որդի անմիտ տրտմութիւն է մօր:

Զ. Ա՛ իջակեա (:) կը դրուի՝ երբ ամբողջ խօսքը կը լմննայ, ուր մեծ հանգիստ կամ երկար շունչ պէտք է առնուլ:

Բուժ եւ ստորակէտ՝ կարգացողին ձայնը վեր կը թողուն. միջակէտ ու վերջակէտ՝ կ'իջեցընեն:

Է. Ի՛այց շատ անգամ՝ բուժ եւ ստորակէտ, ստորակէտ եւ միջակէտ, միջակէտ եւ վերջակէտ իրարու տեղ կրնան դրուիլ՝ ըստ խօսքին յարմարութեան:

Ը. Խօսքի սկիզբը, յատուկ անուանց եւ պատուոյ անուանց առաջին գիրը Գլխօրէ կը գրուի, որ Տանկլուի ալ կ'ըսուի: — Գլխազիրներն Երկաթէր ըսուած մեծ գրերն են՝ Մեսրոպեան այբուբենքի ձեւով:

2. Տողադարձ:

Ա. Տողադարձն անուամբ կ'իմացուի՝ տողին ծայրը հասած բառին մէկ մասը յաջորդ տողն անցընելու կանոնը:

Բ. Տողադարձին շանն է Ենթամայ՝ այս - ձեւով զորօրինակ՝ Մար-դիկ. վայր-կեան. բե-րան:

Գ. Տողադարձի ուղղութիւնը կը կայանայ բառերը վանկ առ վանկ բաժանելու վրայ, որ կը կոչուի Հեֆել. զորօրինակ պարբերաբար բառն ուղիղ հեգելու համար իւրաքանչիւր վանկին կը լուծուի կամ կը բաժանուի, այսպէս. պա-տե-րալ-մա-տեր:

Դ. Տողադարձի կամ Հեգելու կանոնները հետեւեալներն են:

1. Միավանկ բառերը չեն բաժնուիր: Այսպէս անբաժին են՝ Կի, սի, սի, սի: Եւ ոչ սուղ ը վերջաւորութիւնները. մարդն, բան, ծանր, թանջր, արիւ, դրօշեալք:

2. Նոյնպէս անբաժին են երկբարբառները, վասնզի միայն մէկ վանկ են. զորօրինակ. ծայր. գոյն. սի-ն. ան-ցեալ. չո-նիմ. վայր-կեան. եր-կայն. շա-ղագ. նա-քով: Տես եւ Ե:

3. Երկու կից ձայնաւոր՝ որ զատ զատ վանկ կը կազմեն, իրարմէ կը բաժնուին. ինչպէս Ժ-աբան. լի-ազօր. Մարի-ամ.* Սամարի-ա. Բելի-ար. Ուրի-ել. տի-եզերք. առնո-ն. լտե-ն:

կայ նաեւ ուի երկբարբառ անբաժին. տես Ե. 1:

4. Եթէ երկու ձայնաւորի մէջ մէկ բաղաձայն գիր կայ՝ յաջորդ վանկին կ'անցնի. զորօրինակ. հո-գի. դա-րի. կա-րա-րե-ցաւ:

5. Եթէ երկու ձայնաւորի մէջ երկու բաղաձայն գիր իյնայ, բաղաձայններն իրարմէ կը զատուին, այսպէս. ար-դար. գոր-ծոց. դառ-նալ. բաշ-խել. հան-գիստ:

* Զգուշալէ է Մարիամ, Եղիս եւայլն անուանց եւ հնչում ապա, որ շատերու սովորական եղած է: — Բայց առաջինը կ'երեւայ թէ գրոյն գիւտէն յառաջ ասորերէնէ առած՝ Մարիամ հնչել ալ սկսուած էր, ինչպէս հռոմէերը կը ցուցնեն՝ Մարիա Մարիա, Մարիան:

Բայց եթէ այն երկրորդ բաղաձայնը չ կամ Ե, նախընթաց բաղաձայնն ալ մեկտեղ վար կ'առնուի. ինչպէս. մա-տրեմ. Ե-դրեմ. շաղա-կրատ. պա-պրանք. պա-պրուակ. մա-պուակ. ա-գրաւ. ծա-ղբալից:

Նոյնպէս եթէ կից բաղաձայններն երեք հաստ են եւ վերջինն է ջ, ր, շ, առաջին բաղաձայնը մինակ կը մնայ, եւ վերջին երկուքը կը զատուին. այսպէս. եր-կրորդ, բեր-կրեմ. ըն-պրեմ. առ-պալից. կար-ճու-թիւն. քաղ-ցրանալ. բար-ձրացն:

6. Եթէ երկու ձայնաւորի մէջ երեք բաղաձայն ըլլայ, միայն վերջինը — եթէ թոյլ գիր չէ, — յա-ջորդ ձայնաւորին կ'անցնի. ինչպէս. հանդ-պիմ. թարգ-ման. Մուրդ-ի. — այսինքն այնտեղն ուր երեք բա-ղաձայններուն մէջ սուղ ը ձայնաւոր չի լսուիր:

7. Եթէ բառ մը իւր ձայնաւորացը համբանքէն աւելի վանկ ունի. այսինքն՝ ձայնաւոր գրէն զատ զօրու-թեամբ դրուած ը, նոյն ը ձայնը տողազարձի մէջ կ'աւելցուի ներգործութեամբ, — եթէ բառին սկիզբն ըլլայ եւ եթէ վերջը: Չորրորինակ. աը-կար. թըշ-նա-մի. ջըր-մուղ. մը-կըրտել. ըն-կըզմել. աըր-աընջել. քըթ-մընջել. ըզ-գաստ. ըզ-ձեզ. ըս-տրուկ:

Բայց ը չի մտներ՝ ուր որ գլխաւոր բառն անփո-փոխ մնալով՝ նախընթաց նախգիր կամ մասնիկ ունի կամ բարդ է. զորորինակ. ըզ-նշնամին. ան-զիդշ. ան-պօուղ. ապ-սփամբ. վաստ-նշան. նորտ-հնար. նա-խա-վիպ. ձեռն-տու. ահն-կալութիւն. ունին-գիր. (եւ ոչ՝ ըզ-թըշնամին. ձեռն-տու. ան-պըտուղ. են):

Ե. Հեզելու եւ տողազարձի մէջ երկբարբառ-ները պարզ ձայնաւոր համարելու է անբաժին: Ուստի՝

1. Ա-, Ե-, Ի-, ՈՎ, այ, ոյ՝ թէեւ վերջին ծայրը բաղաձայնի նման հնչէ, պէտք չէ քակել, նոյնպէս օա, օի, օեայ, օոյ. եւայն: Այսպէս կը բաժնուի՝ զօրա-որ. ցա-ալից. երե-ակ. բով-անդակ. Յով-աթամ. վկայ-ել. հայ-երէն. (եւ ոչ՝ զօրա-որ. վկա-յել. բով-անդակ. հայ-երէն.) ա-նոսոց. պա-տո-ի. կը-ուս-եալ. դը-գո-եաց. պա-տո-եմ. պըր-տո-եայ:

Ասոր հակառակ՝ բարդութեանց մէջ կը բաժնուի՝

քարա-յատակ. մրկա-յոյլ, եւայլն. վանդէ հոն , գիրն երկբարբաւ չի կազմեր :

2. Բաղաձայնի նման հնչմամբ սկսող սա, սե, սե, սե, սե, եւայլն երկբարբաւներուն նախընթաց բաղաձայնն իրենցմէ անբաժին է: Ջորօրինակ՝ Գը-բո-ի. ա-նուամբ. վա-գը-եան. Յե-սոսայ. ըս-տս-եր. պա-տուեր. վայր-կեան. յաւի-տեան. շարու-նիան. յա-տեալ. դար-յեալ. (եւ ոչ՝ ըստ-ուեր. արդ-եօք. յաւիտ-եան. շարուն-իւն. դարձ-եալ):

3. Ու երկբարբաւն ըս գրելով կը բաժնուի՝ ուր որ իրօք ըս հնչում կը ըսուի. զորօրինակ՝ Լը-աց. տը-իչ. — տը-աւ. տը-եալ. չը-եաց. երկու երկբարբաւներն իրարմէ զատելով:

4. Ի եթէ նախընթաց ձայնաւոր գիր չունի՝ բաղաձայնի կանոնաւ կը բաժնուի. տար-աց. բար-ուք. գին-ոյ. լեզ-ոյ. հայեւ-ոյ. հո-հոյ. որ-գոց:

Ջ. Բնդհանրապէս ընտիր եւ աւելի քերականական կը համարուի սողադարձը՝ եթէ բառերուն կազմութեանը համեմատ ըլլայ: Ըստ այսմ՝

1. Ածանցմանց մէջ՝ կորուսման կանոնին համեմատ կը բաժնուի՝ (Եր-կնք) եր-կնք. կըն-ճաեալ. աղ-կան. դար-քնութիւն. նա-նրութիւն. պա-տրեմ: Բայց ոչ՝ թոյլ գրերը. ի լեւ-նէ. Եզ-կնքի:

2. Բարդ բառերն իրենց յօդիչ մասանցը կը վերածուի. եւ կը բաժնուի՝ Ինն-եւտամն սի-ու-տասն. այր-ուձի. փոք-եւառ. այլ-ազգի. նոր-ընծայ. յոյն-արձակ. ըդ-ուենայն. հօր-եղբայր. կիւր-ընկալ. աղ-ստամբ. աղ-երախտ: *

Միտադրութեան եւ Տողադարձի օրէնք ու կանոնն չունինք նախնեացմէ, որոնց կիտադրութիւնն ամենազարգ էր, իսկ սողադարձ ամենեւին չունէին:

* Ինքնին յայտնի է որ այս կանոնիս զեղծում կ'ըլլայ եւ սեալ՝ եթէ բաժանեալ որ-անլան. գործ-ակց. շար-սո-նիւն. ութ-երօր. ապա թէ ոչ՝ հարկ կ'ըլլայ բաժանել նաեւ՝ արկ-անի՝ գործ-իցի. որ բացայայտ սեալ են:

Է. Վանի մ'ուրիշ նշաններ՝ նոր (արեւմտեայ) ազգաց ուղղադրութենէն առնուած կը գործածուին. որ են՝ Ազախարց՝ — Չախերո՝ — Փակախի՞ն () :

Ը. Ազախարց (') կրճատման նշանն որ երկու կից ձայնաւորներէն մէկը պակասած կը ցուցընէ, դրաբարի մէջ շատ քիչ գործածութիւն ունի, այսպէս : Ի դեռնի՝ ջրուն լինել : Սեպուհ մ'ի Մամիկոնեան առհմէ. (տես եր. 451.) Ապ' եթէ. նա՛ւանիկ. (փիկ՝ ապա ելիէ. նա առանկի) — որ առանց ապաթարցի ալ կրնան գրուիլ :

Թ. Չախերո (") կոչման նշանը կը գրուի՝ ուրիշի խօզքն յառաջ բերուած տեղ՝ նոյն խօզքին սկիզբն ու վերջը. այսպէս.

Եթէ գիտէիք դուք զինչ է " Զողորմութիւն կամ մի՛մ եւ ոչ զգոհ, " ապա ոչ գատապարտէիք դուք զանպարտսն : Նա աւանիկ բամբասէ զնոսա եւ ասէ. " Կատարեցից ի վերայ ասնն Իսրայէլի ուխտ նոր. " արդ ասելովն " նոր " հնացոյց զառաջինն :

Ժ. Փակախի՞ն () միջանկեալ խօզքի կամ բառի մ'երկու կողմը կը գրուի, որ յաւելուած է կամ մեկնուածութիւն, առանց որոյ խօզքը դարձեալ ամբողջ կը թնայ : Նա աւանիկ որով կարողն էպք անմահական զորութեանցն յաղթել, (զառաքինութենէն ասեմ,) այն զմեզ ի հպարտութիւն ասնի : Յարուցեալ Պետրոս ի մէջ եղբարցն, ասէ. (եւ էր անդ բազմութիւն առնուանց իբրեւ հարիւր եւ քսանից.) արք եղբարք, պարտ էր կատարել գրոյն :

Յետնագոյն դարերու մէջ այլեւայլ ուղղադրական նշանախնցներ ալ կան հնարուած, որոնց մեծ մասն այս օրս խափանեալ է : Գլխաւորներն որ ըստ մասին դեռ գործածութիւն մ'ունին՝ ասոնք են.

Մակախո՝ — Փլի՛ կամ՝ — Պարի — — Երխիտի՛ "

Մակախո (') ի նախդրին նշանն է՝ որ յառաջ յաջորդ բառին միշտ կից կը գրուէր, այսպէս. Իմանի կամ՝ Իմանի. Իսկիբանն (որոշելու համար ի՛նչ զբանն

* Չախերո անունն առած է հին ձեւէն՝ որ բոլորգիբ լայի գլուխ էր, այսպէս : Հիմակուանն եւրոպական ձեւ է :

խօսքէն)։ Այս օրս որ է նախդիրը զսա կը գրուի՝ որտէջ նշանի պէտք չունի։

Փշի (') նշանը կը գրուէր զսաէն ղիւն հանելու համար. ինչպէս յառաջ տեսանք. (եր. 491)։ Այլ իսրայէլէ կը թօյր զհեռ օրինացն։ — Ամժ հակառակ ձեւով՝ Այլ իսրայէլէ։

Պոտի (-) համառօտութեան նշան է՝ որ բառին վրան կը գծուի՝ քանի մ'էական գրերը միայն ղնելէն ետեւ. այսպէս. Տր, (տէր.) ան, աւն, (տեսան.) ամ, (ամենայն.) նր, (նորա.) զժ, (զմա.) եւ այլն։*

Երէտի (") կամ Ջոյէ րի, որ նոյնպէս համառօտութեան նշան է, կը գրուի բառի մ'առաջին կէտը միայն նշանակելէն ետեւ. այսպէս. Յովհ'՝ Ոսկեր'։ (Յովհան Ոսկերեան)։ — Հիմայ պարզ կէտ մը բաւական է զոյգ գծի տեղ։

Յ Ը Ի Ե Լ Թ Ի Ը Թ

Վերծանող/թիւն եւ Մոռանող/թիւն։

Ուղղագրութեան հետ սերտ կապակցութիւն ունի Վերծանող-թիւնն՝ որ է բառերն անսխալ արտաբերելու եւ գրուածքն ըստ օրինի կարգալու արուեստը։** Եւ այս երկուքն իրարու լրացուցիչ են, ըստ որում ուղղագրութեան համեմատ արտաբերել ու կարգալ պէտք է, եւ օրինաւոր արտաբերութեան համեմար ուղղագրել, կիտադրել եւ այլն։ Ուստի

Ա. Վ՝ երծանութիւնը կը սորվեցնէ ընդհանրապէս ուղիղ եւ ըստ օրինի կարգալ՝ ուղղագրութեան եւ տրոհութեան կանոնաց համաձայն. այսինքն՝ 1. բառերն ուղիղ հեգել եւ իրենց յատուկ գրոյն ար-

* Պոտի անուն արուած է այս նշանին, զմանր յառաջները միայն աստուածային անունաց համառօտութեան կը գործածուէր՝ զանոնք պատուելու եւ արարածոց անուններէն զանազանելու համար. տան այ. յն. քն, եւն,

** Վերծանութիւնն որ ընթերցումն, կարգալ ըսել է։ Հին քերականն այսպէս կը սահմանէ. «Վերծանութիւն է մասն՝ քերթածոց եւ շարագրաց անվթար յառաջներութիւն. » այսինքն, Վերծանութիւնը քերականութեան մէկ մասն է, որ անսխալ կ'արտասանէ թէ՛ իրեանք՝ (ստանաւոր խօսք) եւ թէ՛ շարագիր՝ (արձակ գրուած պարզ խօսք)։

տասանել, եւ 2. կիտաղրութեան համեմատ՝ բառերն ու խօսքերն իրարմէ քիչ կամ շատ զտանել:

Հայերէն ընթերցման գլխաւոր գծուարութիւնն երեք կէս կամ սուղ ձայնաւոր գրերուն վրայ է, որ են՝ ը, յ, ա: — Ասոնց գիտելիքներն հետեւեալներն են՝ ըստ մեր այժմու հնչման:

Բ. Այս երեքէն՝ ը միայն կրնայ առանձին վանկ կազմել, երբեմն ներգործութեամբ կամ իրօք դրուելով, եւ երբեմն լուելեայն իմացուելով՝ այսինքն երկու երեք կից բաղաձայններու մէջտեղը: — Բայց՝ եթէ ը գրուած ըլլայ եւ եթէ չըլլայ՝ միշտ սուղ ձայն է եւ անշեշտ:

1. Բառի մը սկիզբն ուր երկու կամ երեք բաղաձայն կից է, առաջնէն ետքը ը կը հնչուի. ինչպէս. (Տղայ,) տըղայ. վըկայ. դընեմ. ծընաւ. զըլանալ. ժըլատ. ժըխոր. հըմայք. նը-ժար. գըզուէ. թըթու. չըկամիմ. ցըվախձան. — թըշնամի. կըսկիծ. — գաղտա-հնաց. կարա-յճեռն. ան-կշիւ. եւայլն: Բայց ոչ՝ եթէ վերջինը ը կամ ա է ձայնաւորաւ. ինչպէս. Գրացի. հրատտ. հրեհիկ. Բրամիմ. ճշ-հրիտ. ան-յրեւ:

Նոյնպէս բառին կամ վանկին վերջը. Գոձըն. թանձր. ի բանա-կըն. զքաղա-քըս. ընդ որըս. — մատըն-տու. ստըն-դիաց. ճակըն-դեղ:

Ար զարտուղին՝ 1. նայ գրերն որ նախընթաց են. Յանկ. ունգ. յարդ. որս. խոնարհ. նիւհ. եղծ. քաղց. թամբ. ամպ. եւ ուրիշ թուլաձայնները՝ Ապախտ. ուխտ. տոհմ. 2. Հայցականով բարդերը. Բանսարկու. Բեղաբեր. յեփոսամիտ. 3. միաս, եւ օտար բառեր՝ ստամոփո. դուսո. Կեկրոփո. եւն. — որոնց մէջ ը ձայն չի մտներ:

2. Բառի մը սկիզբն որ ա, զ, շ գրերէն ետքն այս ո, ֆ, ք) է, ք, ր) ո, ո, ք համը գրերէն* մէկն հանդիպի՝ սուղ ը կը հնչուի. ինչպէս. (Ապաս,) ըսպաս. ըստոյգ. ըսքանչանք. ըսթափել. ըզբաղեալ. ըզգայի. ըզարիմ. ըշտեմարան: Իսկ զ նախգիրն ամէն տեղ. ըզցորեան.

* Բուն բաղաձայն օքս համը գրերն են, որ առանց ուրիշ (ձայնաւոր) գրի օգնականութեան ձայն չեն կրնար հանել: Ասոնց կարգն են նաեւ ծ, յ, ց եւ ճ, լ, շ:

ըզկտաւ. ըշոսա.* — միայն ը ձայնով սկսածները՝
(զապաս,) զբապաս. եւայլն. ձայնաւորով սկսած կը
համարուին:

Աւրիշ գրերու քով՝ օը, զը, ըը, ըստ Թիւ 1 կա-
նոնին. արխալ. զըրոյց. շընորհ. շըսայլ. եւայլն:

Յ. Այլեւայլ դեպքերու մէջ ը ձայն կը մտնէ
կամ չի մտնէր՝ հնչման վայելութեանն ու սովորու-
թեան համեմատ. ինչպէս. ճարդ-կան. զոսարի-նոց.
որդ-նութիւն. ճըք-նիմ. ճըլքը-տեմ. եւայլն. կամ
բառին կազմութեանը համեմատ՝ օըտեմ. օըզամ. զը-
տեմ. զըքեղ. յեան-ունայն. օին-ունիմ. օօին-եւտասն:

Գ. Յ գիրն երեք գիտելիք ունի. 1. երբեմն
բոլորովին անձայն է. 2. երբեմն կը լսուի. եւ 3. եր-
բեմն հոյի նման կը հնչէ:

1. Անձայն է բառերուն վերջն այ, ոյ երկբար-
բառներուն մէջ. Աբբայ. վկայ. ի վերայ. հաճոյ. դշնոյ.
Նոյ. — Աբշակայ. հայեցայ. մարդոյ. որդւոյ. (մա-
տոյ, տես եր. 477:)

2. Անձայն չէ՝ երբ յիշեալ բառերուն վրայ եկա-
մուտ գիր մը կ'աւելնայ. Աբբայք. զվկայս. ծառայն.
տղայասպան. եւայլն: Նոյնպէս քանի մը միավանկ բա-
ռերու վերջը. Հայ. խոյ. այ. վնայ: Գարձեալ՝ այ, ոյ
կից բաղաձայնով մը. Ծայր. հայթայթեմ. — ողջոյն.
գոյն. սնգոյր. լոյծ. որդւոյդ. ցաւոյս. եւ այս վերջնա-
ներուս մէջ * գիրն ու ձայն կ'առնու:

Յ. Բառերու սկիզբը յ գրին հոյի նման բաղաձայ-
նի հնչում կու տանք. Յեսու. յանդուզն. յ-որժամ.
յ-արքայէ.** յապողեմ. — ան-յոյս. վերնա-յարկք.
հողմա-յոյզք:

Դ. Ի գիրն որ ի բնէ սուղ ու ձայնաւոր է,**

* Յետին դարերն սկսած են շ նախդրին ը կցել. սյսպէս.
զգնացս իմ. զմարդիկ. եւայլն:

** Ձայնաւորէ յառաջ է նախդիրը կը սղէ կ'ըլլայ յ. յոր-
տայի փոկ իտրտայի, այն կերպով որ ըշ նախդիրը ձայ-
նաւորէ յառաջ կը սղէ կ'ըլլայ զորտայ փոկ ըզորտայ:
Իսկ օսար անուանց մէջ միշտ սուղ է գրի սեղ կը
բանի յ գիրը. Յուգա. Յովբամ. յովազ. յունին:

